

15599

ՄԵՂԵԴԻՆԵՐ.

ՄԵՂԵԴԻՆԵՐ...

(ՀԷՔԵԱԹ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ)

ՋԱԻԱՐԸ ՆԱՐԴՈՒՆԻ



ԼԱՏԵՆԱԿԱՆ « ՀԱՅՈՒՆ » ԹԻՒ 1

ՓԱՐԻԶ 1933

891.99

Գ-40

6 NOV 2010

891.99

Կ-40



ՄԵՂԵԴԻՆԵՐ,

ՄԵՂԵԴԻՆԵՐ...

(ՀԷՔԵԱԹ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ)

ՀԱԽԱՐՉ ՆԱՐԴՈՒՆԻ



ՄԱՏԵՆԱՇԱՐ « ՅԱՌԱԶ » ԹԻՒ 1

ՓԱՐԻԶ 1933

15599

ՄԵՂԵԴԻՆԵՐ, ՄԵՂԵԴԻՆԵՐ...

Գիշեր, տաճարի մը պէս խորունկ ու լուսաւոր:
Երկինքին վրայ կարծես նետուած ըլլայ խաղողի
սակահատիկ ողկոյց մը, ցե'րուցան, որուն գինին կը
կաթկթի, տեղ տեղ:

Անկիւնը՝ սրարտէց մը, որուն հովը բռնուած
աղուոր կուրծքի մը պատրանքը կուտայ, ջերմ ու
դողուն:


Ու լուսնկան, որ կը բխայ, վերէն:

Վարդի փոքրիկ թուփ մը, ստուերին մէջ, եօթը
սկիհներով անհունին կը դրկէ իր բուրումը անմահա-
կան ու անսպառ:

Սկսած է, կուշտի դղեակին սրատղամը պառկած
զարդատ աղջկան մը քունին հետ, կէ'ս գիշերէն յետոյ,
սոխակին մեղեդին:

— Օրհնութի'ն, օրհնութի'ն...

Երջանիկ՝ լոյսին պէս, որ ազնուաբոյր օծու-
թեամբ լուծեալ ջուրին նման կը սահի ճերմակ մեր-
կութիւններու վրայ, ու քա'ղցը՝ ինչպէս մթութիւնը,
որ անտառներուն սեղմուող դողին մէջ խորհուրդի
աստուածուհիներուն երգը կը մտմտայ, ես եկայ՝ քե-
զի' բերելու աստուծոյ մը փառքը: Աչքերս թարթիչ-
ներուս տակ կը պահեմ, ու մսկոտ ճիւղի մը վրայ,
մթնշաղին մէջէն, քունի գացող պղտիկ աղջկան մը
աղօթքին նման, քեզի կը դրկեմ իմ երգս, — ընդունէ',
վասնդի ես կը հաւատամ քեզի ու չեմ տրտնջար, կը
ցանկամ քեզի ու տենդ չունիմ, կ'ընդունիմ քեզ՝



678-2002

առանց հարցնելու: Խաղա՞ղ է քունդ, ու երջանիկ՝ իմ
երագս: Օրհնեա՞լ ըլլայ այս պահը:

Պերճաղիճը, որ պառկած է արծաթ թմբիին շու-
քին տակ:

— Ինչո՞ւ չեն դար դեռ տղաքը: Ահա մերկ է
կուրծքս, ու, վերցուած շապիկիս տակ, որովայնս
սատախէ սկուռեղի մը կը նմանի, պատրաստ՝
մատուակելու գինովութեան բաժակը: Օ՛, կ'ատեմ
ծերունիները: Անոնց մարմինը այնքան պաղ է, որքան
սա մարդագետինին մէջ ծաղիկներուն մօտեցող որդը:
Վարը, տախակ քաղաքը կը փռուի եղալարի մը պէս,
որուն վրայ հիրիկներ կ'աճին: Չանձրոյթը, հեռուէն
երեւցող սեւ ամպի մը նման կը սարսափեցնէ զիս:
Ահա, նեղուած, աենդազին շարժումով մը, ոտքերս
լրարու կը միացնեմ ու երանքներուս վրայ կը սեղմեմ
ուժգին: (Երագելով) Ես կ'ուղէի գլուխիս վրայ կախ-
ուած ունենալ քու աչքերդ, այս մանեակիս թանկագին
ու կախարդ քարերուն բոցէ՛ն ալ ուժով, ու կ'ուղէի
իմանալ անյագ կիրքիդ ցաւը, որ ջերմութեամբ կը
լողցնէ մարմինդ: Որպէսզի յետոյ օծուած միսէս ծո-
րող ծաղիկի մը բարկ բոյրովը մեռցնե՞մ քու առնական
գիմազրող եսդ: Այն ատեն, խելօք պատկերի մը նման
քեզ կուրծքիս վրայ բռնած, ինչպէս աղջիկները իրենց
սիրականներուն պատկերը, գիշերը, կը դնեն իրենց
սրտին վրայ, քեզի պիտի պատմեմ հէքեաթը շատ
ապրած թաղաւորի մը, իմաստո՞ւնը պատմութեան,
հաճոյքի աստուածին, դոր քու մէջդ, բռնել կ'ուզեմ
ես:

Անտառի մը մէջ:
Լուսնամ-չլուսնամ, բարա՞կ, աւաղանի նման
թախանցիկ մթնշաղ է:
Հովն է, կ'անցնի:
— Ըսէ՛, ըսէ՛
 ըսէ՛ք, ըսէ՛ք,
 դո՛ւն ալ, և դո՛ւն...:

Ի՞նչ կայ ծոցդ...
Մանանան եղեամբի պէս սառեր է:
Օ՛, ծիրա կը հոտիս, կուզիկ կնճնի:

Իսկ դո՞ւն, քոսոտ այծի մարմին ունիս, պառաւ
կաղնի, ու հետկերդ վար են ինկեր, չոր մամուռն է որ
կը թափի, ալ ինչո՞ւ ես թաւշեայ մարմինս ցաւցնեմ
սեպ վարակներուդ մէջ:

Եկո՛ւր, սրափո՛ւշ, ծաղիկներդ լողցող բաղիկնե-
րու պէս խաղցնեմ:

Ի՞նչ փոշի է այս, ինչո՞ւ կ'արտասուէք, ա՛յ
խենթ ուռենիներ, կասկենիներ, հաւատացի՞ք թախա-
ռական թռչուններուն սիրերդին, — ա՛յ դեղացի ապուշ-
ներ, ինչե՛ր ինչե՛ր կը յիշէք, ա՛յս, մոռնալն ինչքա՞ն
անուշ է:

Հագար երդ սորվեցայ, հագարն ալ մոռցայ, նոր
բան գիտէ՞ք:

Վա՛յ անոր, որ յաճախուած երագներու կը բանայ
իր աչքերը, և դօղօջին նման, յաւիտենապէս, չոր
կաղնիներու ազոտ փոքրին մէջ կ'ապրի, — աշխա՞րհն
է լայն, աշխարհն է բաղմազան, թող որ երթամ, մար-
մանդը հիմա ջուրի փոշիի կը սպասէ, աղջկան մը
պատուհանն ալ՝ ծաղիկներու բոյրին...:

**

Գառնուկ մը կեցեր՝ կը նայի անտառին մթու-
թեան:

— Կը վախնամ: Սա եռատերեւ առույտին հա-
մար դաշտն ինկայ: Ո՛րքան աղէկ էր մնալ ախոռին
մէջ, ուր ծնայ: Այնքան սարսափելի է հոս, բաց դաշ-
տը: Աստուած, վախէս՝ քեզ խկ վայրի այժ մը պիտի
կարծէի այս ժամուս, թէ եւ կոտոր ալ չունիս: Կ'ուզեմ
ես դառնալ, ախոռին ջերմութիւնը պիտի քնացնէ զիս,
ու կը մոռնամ բաց դաշտին վախն ու անօթութիւնս:
Մա՛յր, մա՛յր, պտուկներդ լօլիկի պէս լեցուցած՝
եկո՛ւր, եկո՛ւր...:

**

Այժմ չափազանց արագ կը սահի համայնապատ-
կերը: Կ'իմացուի արտոյտին անհոգ գուարթութիւնը,
— կ'անցնին կենդանիները, որոնք կը խօսին ու չեն
խօսիր, — դաշտի մը մէջ արփախանձ մամուռով սրտ-
տած սապատող ահագին քար մը, որ ճղնաւորի նման
իր տառատոկին տակ պոպոզիկ նստած՝ կը խոկայ ու
կը հեգնէ խաղերը կեանքին ու ժամանակին, — կը
լսուի մեղեդին ջուրին, որ, ահա, յանկարծ, փայտէ
ակօսէ մը վար կը թափի, ոսկեպատ դենջակի մը նման
բացուած, փէշին վրայ փրփուրի աղուոր ժանեակ մը:
Անհամար խիճերուն չհասած, ուր համրիչի մը թան-
կագին քարերուն նման ցան ու ցրիւ կ'ըլլայ, կը կենայ
ու կ'երգէ:

— Երկինքն ամպոտ է անդին,
ինչպէս մութը անտառին:
Լեբան կողերուն վրայ,

Գառ կը մորթեն, ջուրս վկայ:
Ծառերուն տերեւները, մեռած թռչունները շալ-
կած՝ կը տանիմ,

ցօղ կը նետեմ ու փայլ կուտամ ծաղիկներուն
մտերիմ:

Ինկած կոճղերուն տակ կը քնանամ,
ու մարդին մէջ կ'արթննամ:

Այսպէս երգերն ալ այս աշխարհին,

կը նուաղին, կը կորսուին և յետոյ նորիցանոր
կը շինուին:

Բո՛ց տուր, ցօղիկ, ծա՛փ տուր, ալիք, հոսի՛նք
երթա՛նք, մինչեւ ինա՛նք

աւաղանը խաղաղիկ:

**

Անիկա, որ մեղեդի կը հաւաքէր, այժմ եկեր
հասեր է պարտէզ մը, որուն ծառերուն խորքէն կ'երե-
ւի, խելօք խրտուիլակի մը նման, մարդկային արձան
մը: Կարճ արձանադրութիւն մը ունի: Գրուած է
անունը և, իր ծնունդին ու վախճանին թուականներուն
տեղ, «անուանի փիլիսոփայ, մեծապայծառ իմացա-
կանութիւն»:

— Կեցի՛ր, տղաս: Յոգնած ես:

Իմացա՞ր կեանքին իմաստը: Իրերու իմաստու-
թիւնը: Թող որ երբեք չիմանաս: Վասնդի ճշմարտու-
թիւնը, որ կը ծածկուի խորհրդանշանի մը ձեւին մէջ,
կնկան մը միսին չափ դայթակղեցուցիչ է՝ երբ կը
յայտնուի: Գեղեցկութիւնը, որուն եզակիան դողով մը
չրթներդ հասան, նման է այլեւս հարձին, յոգնած
դիչերներու քրտինքով օծուն, կամ մշկաբոյր կեռասին,
որուն միսը կը վտի այլեւս իր ճեղքուած մաշկին տակ:

Սիրէ՛ խորհրդանշանը դեղեցկութեան և ճշմարտութեան, բայց մի՛ ուզեր տեսնել, այնքան ազեղ սլիտի դասնես ու դարհուրելի: Թող որ, աղուոր նշաններու և խարսղ ձեւերու մէջէն միայն, խորհուրդը վառէ կիրքդ ու տենդերդ: Ահա տե՛ս, այս մարմարեայ նիւթին մէջ, ես ալ, ձերմակ ու սղաղ շրթներուս վրայ, իմաստութեան խօսքին ձեւն առած եմ, բայց չսլիտի ըսեմ դայն երբե՛ք, երբե՛ք:

ԼՃԻՆ ԺԱՄԸ

(ՀԵՔԵԱԹ)

Շատոնց է, ձեզի հէքեաթ չեմ պատմած:

Հաւաքուեցէք շուրջս, ծունկի եկէք, դրէք ձեր տաք ձեռքերը ձեռքերուս մէջ, թօթիկեցէք ձեր մաղերը դէպի ետեւ, բարձրացուցէք ձեր երեսը ինծի, աչքերուս մէջ թափեցէք ձեր աչքերու ոսկին: Եւ սպասեցէք որ դողա՛մ, ու աչքերս անշարժանա՛ն հին օրերու տեսիլքին դէմ:

Ու մտի՛կ ըրէք, մտի՛կ ըրէք:

Կա՛ր ու չկար:

*

**

Գիւղը քառասուն տուն ունէր և եօթը ճամբայ:

Տուները, սեւ տանիքներով, ծունկի ինկած արեգաններու նման, եօթը կարգի վրայ կ'ուղղուէին դէպի ժամ: Անոնց վրայ երկինքը կը փռէր իր կապոյտ քղամիզը:

Երկու տեսակ արեւ կը ճանչնար գիւղը:

Թուղթէ արեւը՝ բարակ ու ձերմակ, որ, բարձր բլուրին վրայէն, հսկայ թռչունի մը պէս, թեւ կ'առնէր ու կը մխրձուէր երկինքին մէջ, լողնալու թափանցեկ ամպերուն ետին:

Ու կրակէ արեւը, որ հրաչէկ դերանի մը պէս կ'երկարէր բլուրէն մինչեւ ժամուն դանդակատունը:

Երբ զլուսը զտէր սիւնածեւ զանդակատան, փշուր փշուր կ'ըլլար ու կը թափէր վար: Այն ատեն, ժամուն տանիքներէն մեղրի դոյն բան մը կը հոսէր, զանգա- կատան արտեւանունքէն դոյնդոյն ուլունքներ կ'ըլնա- յին, սիւներուն վրայ անտեսանելի յաւերժահարսեր իրենց մաղերը կը փոփէին, զմրէթը բուստի թաղար կը դառնար, խաչին բոլորութիւնը դոյնդոյն դերձաններ կը դառնայի՛ր ու նարօտ կը կասկէին, պատուհաններուն վրայ ոսկեղէն ուղաափուէր կը բուսնէին, վար կը թոփէին ու կը դարնուէին տուներուն, որոնց պատերը կ'արիւնէին երա՛կ, երա՛կ: Այդ պահուն, ճիշդ այդ պահուն, ժամուն զանգակները կը սկսէին զօղանջել, վճիտ ու թա՛ւ, ու խա՛ռն ձայներով: Այդ ձայները կը պտըտէին դիւղին վրայ, երկինքին մէջ, մինչեւ հեռուները, — սուլումներ, որ թելի պէս կ'ոլորուէին բամբ ու մետաղեայ հնչիւններուն հետ: Եւ միամիտ դիւղացիները երկինք կը բարձրացնէին իրենց զլուսը, տեսնելու համար բիւրաւոր ճնճողակներ, որոնց կը վերադրէին ձայնի այդ փոշին:

Բարի և երջանի՛կ էին դիւղացիները, այդ սեւ տնակներուն մէջ:

Ազլիկները, երեսներ ունէին փուռը դրուած անուշ կարկանդակներու նման: Իւրաքանչիւր ազլիկ ծոցին մէջ ունէր իր պահապան հրեշտակին երկու բռունցքնե- րը. ահա թէ ինչո՛ւ կոյս էին մնացեր անոնք, որոնց կուրծքին տակ, հագուստին ներքեւ, կը ցցուէին թըռ- չունի երկու գլուխներ:

Նոյնքան դեղեցիկ էին մանչ տղաքը: Անոնց աչ- քերը կը նմանէին մոլոշ ծաղկին կոկոններուն: Անոնց ուտերը կը լընէին, ինչպէս կ'ըլլար թաղաւորին ոսկի մականին գլուխը:

Իւղով ու մեղրով կը սնանէին անոնք, դիւղացի-

ները: Հողը կնոջ պէս կը ծնէր և իր բարիքները կը բաշխէր անոնց:

Գիւղը քառասուն տուն ունէր և եօթը ճամբայ:

Եւ այդ ճամբաներէն երբեք չկրցաւ անշնի մեղ- քը, և չկրցաւ մտնել տուները:

Իրիկունը, երբ դիւղացին դրացիին կնոջը հետ տուն կը դառնար ասըլումի պէս երկարած ճամբէն, չէր չարչարուեր մեղքով: Գիւղին լաճը, որ մէկ շա- պիկով կը պտըտէր իր տարեկից աղջկան հետ, երբ կը միղէր առուին մէջ՝ մատը անցուցած իր ջրփողին, գլուխն ետին կը դարձնէր ու կը խօսէր աղջկան՝ միայն խաղի մատին, առանց մեղքի սարսուռին:

Գիւղին սիրտը յստակ էր լճին նման, որ ժամուն ետեւ կը տարածէր իր թափանցիկ սպակին: Այնքա՛ն անայլայլ էր լիճը, առանց երբեք ալիքի, որ օտարա- կան մը սլիտի փորձուէր քալել վրայէն: Առտուն, երբ հովը փչէր, նուրբ փոշի մը կը պտըտէր ջուրին վրայ: Յորեկին, արեւը հարաւէն կը դարնէր ծառերուն, որոնք եղերքն էին բոլորուեր, ճառագայթները գլծի պէս կ'ըլնային լճին վրայ և դունաւոր ոտայն մը կը կադ- մէին ջուրին երեսը: Վերջալոյսին, լիճը կը նմանէր լեղակաղոյն շուրջառի մը: Գիշերը, երբ լուսնկան սուրբի մը գլուխին պէս կը հանգչէր լերան կատարին, աստղերը կ'ըլնէին լճին յստակը, այնքա՛ն հոծ, այն- քա՛ն բազմաթիւ, որ կուտար ոսկի անձրեւի մը պատ- կերը:

Ու լճին եղերքներուն վրայ կը փուռէին արտերը: Ծաղկած անանուխը փշրուած կրակի պէս կը սփռուէր ամէն կողմ: Ծաթրինը ծիւծիւ կ'ոտտոտէր կանաչու- թեան մէջ: Եւ այս ախորժաբեր հոտերը ծծելով, դիւ- զանցիները կ'ուտէին աւելի հաճոյքով, կ'աշխատէին աւելի ուժով: Անոնց վաստակին մէջ եւս մեղք չկար:

Գիւղին սիրտը յստակ էր լճին պէս :
Հիմա չկա՛յ նման գիւղ :

*
**

Վասնդէ, չեմ գիտեր ինչպէս, մեղքը մտաւ գիւղ :
Գիւղացի մը շատ հարստացաւ : Հարստացաւ ու
ամբարտաւան դարձաւ :

Ունէր աղջիկ մը և մանչ մը, երկուքն ալ աղուոր :
Հայրը կը պարծենար. — «Աղջիկս կը նմանի ժամուն
մեծ ջահին, որ լոյս կուտայ կանգնած տեղը : Մանչս
կը նմանի մարմար սիւնի մը, որուն վրայ եթէ հանգչի
եօթը տուն՝ նորէն քիչ է» : Ու մերժեց ամուսնութեան
բոլոր թեկնածուները : Բայց որո՞ւ պիտի տայ, կը
հարցնէին գիւղացիները իրարու :

Հարուստ գիւղացին լուր հանեց թէ քաղաքէն
նշանած մըն է բերեր իր տղուն : Ու հարսնիք բացաւ :
Հաւատացին, նոյնիսկ ուրախացան պարզամիտ գիւղա-
ցիները : Ելան հարսնիքի դացին :

Կրակէ արեւը, հրաշէկ գերանի մը նման ինկեր
էր զանգակատան վրայ : Վերը, միջոցին մէջ առկախ՝
խոշոր յակինթի մը նման, արիւններ էր ժամուն խաչը :
Չանգակները կը ղօղանջէին : Գիւղէն գինիի և ծաղիկի
հոտ կ'ելլէր :

Այն պահուն էր, երբ հարսն ու փեսան դուրս
կուգային ժամէն : Պղտիկ ժամու մը կը նմանէին անոնք :
Հարսը, սպաղուն շղարչին տակ, արծաթափայլ գմբէ-
թի մը պէս, — փեսան սլացիկ հասակով, ոսկեգարգ
զանգակատան մը նման, քով-քովի, քահանային խաչին
տակ, կը քալէին ծաղիկներու և դորդերու վրայէն :
Հետաքրքիր պառաւի մը աչքը ծակեց շղարչները : Դի-
տեց հարսն ու փեսան, և վախէն պոռաց. —

Վա՛յ մեր գիւղին,
Բուր ւ՛աղբար ին...

Լսեց Աստուած, կ'ըսէ հէքեաթը, և բարկացաւ
սաստիկ :

Հարուստ գիւղացին, իր աղջիկն ու մանչը չկա-
մենալով աղքատին, դանոնք սասակել էր տուեր իրարու
հետ :

Կ'ըսեն թէ տղան ալ, նոյնքան մեղաւոր, ցանկա-
ցեր էր իր քրոջ :

Եւ իջաւ աստուածային պատուհասը արդար գիւ-
ղին վրայ :

Հողը բացուեցաւ, ու եկեղեցին հարսնեւորներուն
հետ իջաւ լճին յստակը :

*
**

Այն օրէն ի վեր փրփրած է լիճը : Ալիքները կը
դարնեն ափերուն, և փրփուրը ճերմակ ամպի մը պէս
կը տատանի լճին հսկայ տաշտին մէջ : Ալիքներուն
կատաղութեան մէջէն, կ'ըսեն մօտակայ գիւղին բնա-
կիչները, դեռ կը լսուի ղօղանջիւնը ջրամոյն ժամուն
ջուխտ զանգակներուն :

Հաղուադէ՛ս է որ խաղաղի լիճը : Այն ատեն, կը
սլաւեն թէ, բիւրեղ ջուրին մէջ կը տեսնուի ժամը,
սպիտակ աշտարակի մը նման, ու դրան առջեւ՝ հարսն
ու փեսան, բուստի բարունակներու պէս, հարսնեւոր-
ները, իրենց գինովութեան մէջ, և քահանան՝ խաչը
ձեռքին :

ԱՆՁՐԵՒԻՆ ՁՈՐԸ

(ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ)

Երբ խեղճ բուսաւ, տուաւ վր առաջին ծաղիկը, որ սէրն էր:

Որո՞ւ սիրահարուած էի:

— Գիւղիս:

Վասնզի, իմ գիւղս, — անո՞ւնդ սիրեմ, Արմա՛շ, — բլուրի մը պորտին վրայ բանուած կանանչ-կարմիր ասեղնագործութեան մը պէս, նմա՛նը չունէր շրջակաները: Երկինքը, վրան, խորունկ ջուրերու դոյնն ունէր: Հորիզոնը կանանչ դօտիի նման կը դառնար բոլորտիքը: Մամիկս կ'ըսէր թէ Աստուածածնայ գիւղերը, երբ աստղերը կը հասուննան խաղողի պէս, մեղր կը թափի երկինքէն և առտուն, յանկարծ կ'անուշնան մեր այգիներուն ողկոյցները. (ահա թէ ինչո՞ւ համար արգելած էր ինծի խաղող ուտել Աստուածածնայ գիւղերէն առաջ...) Ու կը պատմէր նաեւ թէ հեթանոս թագաւորը Աստուածածնայ մեղր ուղեր էր, բայց Արմաշ մերժեր էր.

— Ձեմ խար, ըսեր էր:

Արեւն իսկ սիրահարած էր մեր գիւղին: Առտուն կանուխ կանուխ, կ'ելլէր Մեղրաժայռին դադաթը ու կը խնդար, աչք կը խաղցնէր, սակի կը ցուցնէր, կը կրքոտէր, կ'անուշնար: Եւ սակայն Արմաշի հոգն անդամ չէր: Շա՛տ սիրահարներ տեսած էր:

Միայն դիս կը սիրէր ան: Մամիկս կ'ըսէր.

— Դուն այս գեղին միակ սիրականն ես:

Եւ իրաւ, այնքա՛ն շատ կը սիրէի զայն, որ երբ քաղաք երթայի, տունը կնիկ ունեցողի պէս՝ չէի դիմանար կարօտին ու ետ կը դառնայի: Հեռուէն, ծառերուն մէջէն, կը տեսնէի ժամուն փորը, որ դառան պէս ճերմակ էր, և կը կանչէի.

— Արմա՛...ա՛...շ...

Ձայնս կը վաղէր անտառներուն վրայէն, դօտիի պէս կը քակուէր այգիներուն մէջ, եօթն անգամ կը համբուրէր վանքին պատերը, շան մը պէս, հեւ ի հեւ, կը դառնար ետ, ախանջս կը մտնէր ու կը մտմտար: Եւ ես կը սարսուայի:

Գիւղ դալուս, Արմաշ ինչե՛ր չէր ըսեր ինծի: Պատմած է բոլոր հէքեաթները, ըսած է ամբողջ երգերը, համբուրել տուած է, — գաղտնի, թթենիներուն տակ, — տաքուկ աղջիկները, ցոյց տուած է իր դեղեցկութիւնները, գիւղերային պատկերներէն սկսեալ՝ երբ երկինքը ոսկեղէն բոռերով ծածկուած կ'ըլլայ, մինչեւ Արգեւին Ձորին գաղտնի տեղերը: Այս ձորը հրաշքի պէս բան մըն է:

Կեցէ՛ք, նկարագրեմ ձեզի:

**

Ապակիի պէս ջուր մը ունի այս ձորը, որ գիւղին եղերքէն կ'իջնէ վար, և կը ցատկէ Ջաղջին ձորին մէջ, ճիշդ կենդանիի մը նման:

Նիհար ու մսկոտ ջուր մըն է, երբ պարզ է օդը: Իսկ երբ օդը անձրեւի է, բարկութեան դոյն մը կ'առնէ: Գիւղացիները կը հասկնան այդ դոյնէն և կ'ըսեն.

— Արգեւ տի դայ:

Մէկ ժամ, երկու ժամ յետոյ, մշուշը կը ծածկէ Հէլէճին սուր բարձունքը, ամպերը անտառներուն կը

648-2002



քսեն իրենց միւր, և միջոցին մէջ կը լսուի վիթխարի քշոցներու ձայն մը: Երկինք կը պատուի: Զրհեղե՛ղ:

Մենք, գիւղին լաճերս, այդ պահուն, ճամբաներուն բերանը կանգնած, յիմարի պէս անձրեւ կը ծծենք, դիտելով աղջիկներն ու նոր հարսերը, որոնք տուն կը փախչին արտերէն: (Ի՛նչ հեշտանք է դիտել թրջած աղջիկները, որոնց բարակ հագուստները կը փակին միտին՝ ցոյց տալով բաղարջի պէս ստինքներ:)

Քիչ յետոյ, անձրեւէն վերջ, տուն կը հասնինք, փառաւոր ծեծ մը կ'ուտենք: Ու մինչդեռ մենք սուտ լաց մը կ'արձակենք բարձրաձայն, մամիկները փողոց կը թափին ու սլոռալով կը պատմեն թէ Արգելին Զորը յորդեր է, ջաղացքին անիւը խորտակուեր է, Աստուծոյ կը՛րակէ սուրը վերէն վար ճեղքեր պատուեր է Բող Թագուկին ընկուղենին:

Աւանդութիւն մը կը պատմէ թէ Անձրեւին Զորը կը հասնի մինչեւ երկինք: Արեւոտ օր մը, մեր գիւղին բարձրաւանդակէն դիտած եմ, որ երկինքէն կ'իջնէր դետ մը, մշուշի պէս ճերմակ, երբ անձրեւ կուգար հեռաւոր քաղաքին վրայ: Ու խորհեցայ, որ, թերեւս նման ճամբով մը, մեր Անձրեւի Զորն ալ ջուրը կ'առնէ ամպերէն:

Նոյնիսկ, մամիկս կը պատմէր թէ ինք գացեր է Արգելի Զորին մինչեւ բիման տեղը, ամպերուն մօտ:

Անձրեւին Զորը, գիւղին ետին, կը նեղնայ կնկան մը մէջքին չափ, կը կորսուի երկու բլուրներու միջեւ, յետոյ կը մտնէ կրակի պէս կարմիր արտ մը, հարսնուկներով լեցուն: Քիչ անդին կը ճեղքէ պարսպածեւ լեռ մը, որուն կռթնած է երկինքը: Այդ լեռան վրայ

երկինք դուռ մը ունի, որուն մարմարեայ աստիճաններուն վրայ կը փռուի Աստուծոյ ջուրը, կը խաբուիս ու կ'ըսես՝ ուշացած մէլէքի մը շրջագգեստին փրփրուն քղանցքն է: Զուրը, դեռ լեռնէն վար՝ ձորը չթափած, կ'իջնէ աւաղան մը, որ լեցուն է օձերով, շրթներնուն մէջ գոյգոյն ծաղիկներ:

Զուրին հոսանքն ի վեր, կարելի է բարձրանալ մինչեւ աւաղանը: Սակայն անկարելի է երթալ մինչեւ երկինք, անցնելով աւաղանէն, ուր կը հսկեն օձերը: Ամպ մը կը ծածկէ երկինքի դուռը, որ գոց է, երբ անձրեւ չպիտի գայ: Միայն թէ բարակ թել մը ջուր կը հոսի շարունակ: Այդ ջուրը հետզհետէ կը շատնայ և գոյն կը փոխէ, երբ հրամայուի որ անձրեւ գայ:

Իմ մամիկս յաջողեր է երթալ մինչեւ այդ տեղուանըը, տեսնել այս բաները, բայց չէ՛ր կրցեր տեսնել Աստուծոյ երեսը:

ԱՍՏՈՒԱԾ ԻՋԵՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

(ՀԱՅԿԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ)

Եւ տես դրումք երկնից բացեալ էին (ՅԱՅՏ. ՅՈՎ. 1):

Եւ տեսի այլ հրեշտակ գորաւոր զի իջանէր յերկնից, եւ գգեցեալ էր ամպ, եւ ծիածան ի գլուխ նորա (Անդ, Գլ. Ժ. 1):

Տարօրինակ էր երկինքը:

Ամպերը կը բարախէին և մեծ թիթեռնիկներու նման կը թեւածէին երկինքին վրայ: Արեւը, դե՛տ դարմանահրաշ, կը թրջէր Հայաստանի լեռները հալած մանանայով:

Առաւօտ էր, արքունական դարպասի մը պէս գեղազուարճ և հաճելի:

Ինչո՞ւ, ինչո՞ւ, այդ առտու, ամպերը կը բարախէին տարօրինակ թրթռացումով և երկինքի կտաւը կը դողար տերեւի պէս: Քրքում ամպիկ մը, թարթիչի նման կորնթարթ, վար կ'իջնէր յամբարթեւ:

Եւ ամպիկը, ի վերջոյ, հանգչեցաւ Սուպհան լեռան վրայ: Այն ատեն երկինքէն կախուեցան ապրջում շողեր և նարօտ կապեցին Սուպհանի դադաթին: Պահ մը ամպերը քաշուեցան, և բիւրաշող լեռան վրայ երեւցաւ գեղազէմ երխասարդ մը:

Աստուած իջեր էր Հայաստան:

Անիկա պարթեւ էր հասակով և հագուած էր իշխանի մը նման:

Ետեւը վանայ ծովը, փղոսկրի պէս: Առջեւը Պաղնոսի տափաստանը, մանիչակադոյն միսով: Դէպի աջ, հեռուն, Ալաշկերտի դաշտը, ուր քրիստոնեայ ճգնաւոր մը, Հայոց թագաւորին օժանդակութեամբ, յաջողեր էր դրաւել ու քանդել հեթանոսական մեհեանները: Սակայն ձախին՝ Քարքէ լեռան վրայ դեռ կը դիմադրէ՛ր Վահէվահեան մեհեանը: Աստուած նայեցաւ յաղթ մեհեանին, որ, արեւէն բոցավառ, հրեղէն նիղակներ կը նետէր ու կը ձեղքէր կանանչութիւնը:

Պահ մը յետոյ Աստուած իջաւ լեռն ի վար, և քալեց դէպի Արեւելք, դէպի Հայկական Լեռնապարը: Սպիտակ վտակներ խաղ կանչելով Երասխ կ'երթային: Նախշուն բաղեր կը լողնային արծաթէ ջուրերու մէջ:

«Ի՛նչ գեղեցիկ երկիր», կը մտածէր Աստուած:

Երբ Երասխի հովիտին մէջ, կամուրջէ մը կ'անցնէր, դէմն ելաւ ձիաւոր աղջիկ մը, մանկամարդ և շողաթուրմ:

— Ո՞վ էք դուք, հարցուց աղջիկը դարմանալի համարձակութեամբ:

— Թողէք որ նախ ե՛ս հարցնեմ ձեզի, աղուո՛ր աղջիկ, որովհետեւ ամօթ է ճամբորդին անցնիլ երկրէ մը՝ առանց սորվելու անունը այդ երկրին ամենագեղեցիկ աղջկան:

— Իմ անունս Աշխէն է. աղջիկն եմ Հաշտենից նախարարին, որ Հայոց թագաւորին սիրականն է: Այս առաւօտ որսի ելայ հօրս և իր հարիւր մարդոց հետ, որսաւոր համար այժեամ մը, որուն եղջիւրները կրակի

դոյն և եօթնամատն աշտանակի ձեւ ունին, — այսպէս
 կը պնդէր իշխան մը սեղանին վրայ, տեսած ըլլալով
 Կետեղքի մօտ: Ես որսկանները կորսնցուցի Բուղայ
 քաղաքին մօտ, որ 3200 տուն ունի, 1040 ձիաւոր, 840
 նիզակաւոր և 200 պարսաւոր: Հիմա ըսէք դուք եւս,
 իշխան, ո՞ր երկրէն էք և ո՞վ էք:

— Իշխանուհի՛, այնքա՛ն գեղեցիկ է ձեր երկիրը,
 որ ես արդէն մոռցայ իմս: Իսկ դուք մի՞թէ չպիտի
 մոռնաք իմ անունս, երբ այնքա՛ն արքայադն անուններ
 իրենց փառքը կը շնչան ձեր ականջին տակ:

— Տէ՛ր, ես չտեսայ դեռ ձեր նմանը: Ձեր ձայնը
 անուշ է և ձեր աչքերը՝ իմաստուն: Ու երբ կը նայիմ
 ձեր դէմքին, տաք բոյր մը հոտոտելու պատրանքը
 կ'ունենամ: Բռնեցէք ձիուս սանձէն, կ'ուզեմ խօսիլ
 ձեզի հետ, մինչեւ որ եղբայրներս դան զիս դտնելու:
 Այն ատեն ձեզ պիտի տանիմ մեր պալատը, իբրեւ հիւր
 և յետոյ պիտի պտըտցնեմ մեր երկրին մէջ, որ ուրիշ
 որեւէ դաւառէ աւելի ձիաւոր կուտայ Հայոց թաղա-
 դաւորին:

— Երջանիկ եմ, որ, ճամբորդութեանս ընթաց-
 քին, հանդիպեցայ հայ իշխանուհիի մը: Գիտեմ թէ ան
 ինծի պիտի նկարագրէ իր երկրին հարստութիւններն
 ու գեղեցկութիւնները: Ասորուհիները տգէտ են, և տե-
 դեկութիւն իսկ չունին իրենց երկրին բաներուն մասին:

— Օտարակա՛ն, դուք Հելլէն էք, որովհետեւ
 խորամանկ կը թուիք և կը հեզնէք հայ իշխանուհիներ-
 րուն պարծասիբութիւնը:

— Երբե՛ք, իշխանուհի: Ընդհակառակն հաճոյք
 կը դգամ՝ տեսնելով որ դուք պչրանքի անօթ մը չէք:
 Դուք լեցուն էք նաեւ իմաստութեան ծաղիկներով...

— Տէ՛ր, տէ՛ր, նայեցէք հաղարջենիին: Զար-
 մա՛նք, ի՛նչպէս կը հասուննան հատիկները, կատուի

աչքի պէս կը մեծնան՝ քանի կը մտնէք իր թուփին
 շուքը: Ու ծաղի՛կ կ'արձակէ սրափուշը, երբ կը մօտե-
 նաք իրեն: Վայրի խնձորը, որ ահա ձեր այտին կը
 դպի, կը մեծնա՛յ, կը կարմրի ու կը քաղցրանա՛յ:
 Ըսէ՛ք, ըսէ՛ք, ո՞վ էք դուք: Կախա՞րդ էք: Դո՞ւք ալ
 կը հետեւիք այն ճգնաւորին, որ հիմա կ'ապրի Հայոց
 արքունիքը: Անիկա քանդեց բոլոր մեհակները, և կը
 խօսի քաղցր անուևով մարդու մը մասին, որ հրաշքներ
 է կատարեր հեռաւոր երկրի մը մէջ: Ըսէ՛ք, դո՞ւք ալ
 հրաշք կը դործէք: Ըսէ՛ք, ինչո՞ւ կը հասուննայ խնձո-
 րը, երբ դուք կը մօտենաք ծառին: Ըսէ՛ք, ինչո՞ւ կանդ
 առի ալամայ, երբ դուք կամուրջին կ'երթայիք: Կ'ա-
 դաչեմ, վար իջեցուցէք զիս ձիէն: Տէ՛ր, դուք անօրի-
 նակ դօրութեամբ էք լեցուած: Ես պիտի համբուրեմ
 ձեզ...

— Իշխանուհի՛, շփոթեցուցիք զիս: Ձեմ դիտեր
 թէ ինչո՞ւ կը սիրեմ մտիկ ընել ձեզի, հակառակ որ քիչ
 կը հասկնամ ձեր լեզուն: Ձեմ դիտեր թէ ի՞նչ հրաշք
 կը պատահի խնձորին և ձեր սիրտին մէջ: Ինչո՞ւ կը
 հասուննայ խնձորը և ինչո՞ւ կը յորդի ձեր սիրտը, երբ
 կը մօտենամ: Եւ դարձեալ չեմ դիտեր թէ ինչո՞ւ այս-
 քան հաճելի դտայ ձեր երկիրը, և չեմ ուզեր բաժնուիլ
 ... ձեզմէ...

— Տե՛ս, հրաշալի օտարական, թռչունները տօն
 կը կատարեն ձեր դլխուն վերեւ, — կարծես անծանօթ
 ձեռք մը կը վարէ դանոնք և միջոցին մէջ մանեակներ
 ու ծաղկաթուփեր կը կազմուին անոնցմով: Հունա՛,
 դիմացը, անտառին կանանչ պատին վրայ՝ եռանկիւ-
 նաձեւ քիււի մը պէս վեր կը բարձրանան: Ու երգի
 դետեր կը շրջին միջոցին մէջ: Թիթեռնիկներ՛րը, ծա-
 դիկներէն փրթած շփրակներու նման, կ'անձրեւեն
 առանց հանդէլու: Ու բոյրեր, ու բոյրե՛ր, կարծես

Անահիտի մեհեանին անուշահոտութեանց կաթսաները պարպուած ըլլային: Տէ՛ր, դուք աստուած մըն էք ասպնուլարար, աւելի դեղեցիկ՝ քան Բաղաւան աստուածաքաղաքին ամենահոգ արձանը:

— Ո՛չ, ո՛չ տաժանելի է աստուած ըլլալ: Կը նախընտրեմ մնալ երկտասարդ մահկանացու մը, սիրելու համար ձե՛զ, իշխանուհի՛դ սքանչափայլ:

— Կը սիրե՛մ ձեզ, իշխա՛ն, միայն ձե՛զ: Կը սիրեմ ձեզ սէրով մը, որ չի քնացներ և ուտելու ախորժակէն կը զրկէ:

— Կը սիրե՛մ ձեզ, իշխանուհի՛, ահա թէ ինչո՛ւ մոլորեցայ իմ ճամբէս: Թերեւս դարձեալ ձեր սէրը կանչեց զիս այն անծանօթ երկրէն, զոր լքեցի ու եկայ, ես՝ սիրահարներուն սիրահարը...:

*
**

Աւանդութիւնը կը պատմէ թէ Աստուած և Աշխէն, մահկանացու սիրահարներու նման, գրկեցին իրար և շրթունք շրթունքի եկան: Այն ատեն ամբողջ հովիտը ծաղկեցաւ: Գետը, ալամանդակուռ ուրարի նման, կ'երկարէր դաշտերու ծաղկեալ նախորտին վրայ, — կամուրջին մեռած փայտերը ծիւլ արձակեցին, — ջուրին մէջ նախշուն խեփորներ կ'ոստոստէին ու կ'երգէին, — անտառն ամբողջ դունազարդուեցաւ, — թռչունները կ'երգէին և հովը ձայն կը քաշէր, — օր ցորեկով աստղերը անհունէն վար կախեցին իրենց լոյսերը, — երկինքէն ու երկիրէն քաղցրաքաղցր անուշահոտութիւն մը կը բխար:

Աշխէն նուազեցաւ Աստուծոյ շրթներուն մէջ: Հեռուէն որսկաններու փողերը կը հնչէին և կը հասկցուէր որ կը մօտենային: Այն ատեն Աստուած, սար-

սափահար, փախա՛ւ՝ իշխանուհին լքելով շահասպարամներու վրայ:

Երբ Աշխէնին եղբայրը եկաւ, իրիկուն էր արդէն: Իշխանուհին, կէս սթափած, լացաւ՝ կանչելով անծանօթը, որ փախեր էր դէպի Արեւելք: Որսկանը, քոյրը ձգելով նաժիշտին թեւերուն մէջ, վաղեց բլուրն ի վեր, կատաղի շունչով վիչեց մէջքէն առկախ փողը: Սարերն սկսան պոռալ: Երկու դէմէ դէմ լեռներ դափեր էին կարծես, և գնդակ մը ուժգնութեամբ կը դարնուէր այդ դափերուն: Զոյգ մը բաղէներ նստեր էին կարծես երկու բարձր լեռներու վրայ և սլաքարի կը հրաւիրէին դիրար՝ կռնչելով, հոնչելով ու պոնչելով: Օտարական մը անպատուած էր Հայոց իշխանուհին: Եւ ձիերը քառասմբակ արշաւեցին դէպի Արեւելք, մինչ ասդին Աշխէն կուլա՛ր, կուլա՛ր, կուլա՛ր:

— Տեսնէ՛ր, Փառանձի՛կ, Վահէվահեան քուրմերը անոր չափ հոգը և իմաստուն չեն, ոչ ալ գեղեցիկ, ոչ ալ գեղեցիկ...:

— Տիրուհի՛ս, կ'աղաչէր նաժիշտը, մոռցի՛ր դայն պահ մը, ու պիտի տեսնես որ իշխան Բարուլա աւելի գեղեցիկ է, աւելի՛ գեղեցիկ...:

— Գնա՛ց իշխանը, զոր սիրեցի, գնա՛ց, և ալ երբե՛ք չպիտի վերադառնայ, որովհետեւ եղբայրներս թոյլ չպիտի տան...: Զպիտի վերադառնա՛յ...:

Եւ Աշխէն կուլար անմխիթար:

*
**

Աստուած չէր կրնար երկինք համբառնալ՝ առանց լերան մը վրայ բարձրանալու, որովհետեւ ամպերը չէին իջներ Հայոց դաշտերուն մէջ: Եւ կը վազէր դէպի Արարատ: Այն ատենները Արարատ կանանչ լեռ մըն

էր, ոչ ձիւն կար դադաթը, ոչ ալ մշուշ: Գեղեցիկ տուն մըն էր ան, բա՛րձր ու երկնամբարձ: Ջուրի աղուոր բազուկներ վար կ'իջնէին անոր կողերէն: Եւ Արարատ, խորունկ դաշտերուն մէջ կանգնած, հպարտ ու ամբարտաւան, մտիկ կ'ընէր միա՛յն ամպերուն խօսքը: Երբ Աստուած մօտեցաւ լերան, ըսաւ.

— Մե՛ծդ Արարատ, ապաստան տուր ինձի:

Լեռը նայեցաւ օտարականին, որ թաթխուեր էր ճամբուն փոշիին մէջ և կը նմանէր մուրացիկի: Ու պատասխանեց.

— Հեռացի՛ր ինձմէ:

Այն ատեն Աստուած, տրտում բայց երկիւղալի, դարձաւ ետ և փախաւ դէպի արեւմուտք: Ճամբուն տաք փոշիին հոտը կը խեղդէր զինք: Եւ սակայն վաղե՛ց, վաղեց ու վաղեց: Արածանի դետին հետ՝ զնաց Արենջիկ, հիւսիս ծոցեցաւ ջուրին ծունկին վրայէն: Ասողբերդ ելաւ և հասաւ Բիւրակն լեռներուն: Հոն ջուրերը կ'երգէին անուշ սրինգներու նման հովուածայն, մինչ վարը, խճաքարէ քղանցքին վրայ, փրփրոտ ալիքներ, ճերմակ դառներու պէս, կը վազվզէին ժայռերուն բազմութեան մէջէն: Վերջալոյսը արդէն սկսեր էր իր ծաղկի թաղարները շարել անոր արտեւանունքին վրայ:

— Բիւրա՛կն, ապաստան տուր ինձի, աղաչեց Աստուած:

Եւ լեռը հրաման ըրաւ ջուրերուն, որ կենան: Աստուծոյ առջեւ բացուեցաւ, անմիջապէս, ցամքած ջրվէժի մը անկողինին խորը, քարայրի մը բերանը: Արտօրալով, ներս մտաւ Աստուած: Եւ ջուրը նորէն սկսաւ հոսիլ, փրփրեղ առագաստով մը ծածկելով քարայրին բերանը: Աստուած, յողնաբեկ ու տկարացած, ինկաւ դետին ու քնացաւ:

**

Կէս գիշերին արթնցաւ Աստուած: Երկիրը կը դղրդար: Կարծես հսկայ ժայռեր կը թաւալէին լերան դադաթէն: Հարցուց լերան.

— Բիւրա՛կն, ի՞նչ աղմուկ է:

Եւ լեռը պատասխանեց.

— Հայոց բանա՛կն է, որ կ'անցնի:

Արդարեւ խորունկէն կը լսուէր ձիերուն դոփիւնը, գէնքերուն շկահիւնը, հետեւալ գինուորներուն ռազմերգը.

Յոլան ցայտեն փառք աստեղն Հայկայ,
Տան Սասանայ հաս օր վրիժուց,
Յարեւմտից դիմէ Պապ արքայ,
Լծեալ ելլեն ջախ առիւծուց:

ՅԱնուշն 'ի բերդ յուշ տուք Արշակայ,
Վերականգնին վաշտք վասակայ,
'ի ներմակ փարտուկ, պացեալ արծուապէս,
'իմէ սկայաքայլ դիմօք բոցակէզ,
Քաջակորովն Մուշեղ,
Յառեալ ի Պարս ահն 'ի շեղ:

Ո՛վ Հայաստան, բախտ քո յերկին կայ,
Ագահ բռանց անձեռնհաս:
Ա՛րկ գէն գէւ կանգնեաց իբր հսկայ,
Սասանեցան Տարոս, Կովկաս:

Մարն և Ասուր ի քէն նետահար,
Զիշխեն շարժել շիրմանց գփար:
Ընթացուք 'ի գէն, 'ի մարտ և 'ի յազք,
Հայրենեաց հիմունք ամբասցին անխախտ:
Հայոց հաւատք, Հայոց տուն,
Կացցեն ազատ, հաստատուն:

Ու ջրամբարի պէս՝ գիշերը կը գոռար: Դոփիւնը չէ՛ր վերջանար:

Առաւօտեան դէմ Աստուած հարցուց լերան.

— Բիւրա՛կն, հեռացա՛ւ Հայոց բանակը:

— Տէ՛ր, Հայոց բանակը շատոնց անցա՛ւ սահմանը, և այժմ կը պատերազմի արեւելեան սահմանակից երկրին դէմ:

Աստուած դարմացա՛ւ, ասպնեցա՛ւ և վիշտի մէջ ինկաւ: Տարօրինա՛կ երկիր և հրաբորբ ժողովուրդ: Առանց մեղքն ու յանցանքը քննելու, ամբողջ երկիրը պատերազմի էր ելեր սահմանակիցին դէմ:

Առաւօտուն, Աստուած, խոր տրտմութեան մէջ, բարձրացաւ լերան դադաթը:

Ամպերը սկսան բարախել, երկինքի կտաւը դողաց տերեւի պէս, և դողաւոր ամպիկ մը վար կախուեցաւ, իջա՛ւ, իջա՛ւ և հանդէսեցաւ լերան վրայ:

Աստուած, ամպին մէջ մտնելէ առաջ, նայեցաւ խրոխտ Արարատին և ըսաւ.

— Անիճեա՛լ ըլլաս, ամբարտաւան լե՛ռ, թող այսուհետեւ ձիւնն ու բուքը անպակաս ըլլան գլխէդ:

Յետոյ դարձաւ և օրհնեց Բիւրակն խոնարհ լեռները.

— Օրհնեա՛լ ըլլաս, Բիւրա՛կն, թող ծիծաղն ու երգը անպակաս ըլլան վտակներուդ մէջ, ու ծաղիկն ու թռչունը՝ թռփերուդ մէջ:

Եւ այդ օրէն ի վեր փոթորիկը կը զարնէ Արարատի գլխին, ձիւնն ու բուքը կը ծածկեն դադաթը, մինչ անդին Բիւրակն կը խայտայ արեւուն բոցերուն մէջ, կը ծիծաղի՛ իր ջուրերուն հազար շրթներովը և հազար աչքերովը:

Ա Ս Տ Ղ Ի Կ

(ՀԵՔԵԱԹ)

Ջրեղերքն եմ, կայներ եմ: Ալիքները կուգան հեռուէն, ճորորալէն, ճորորալէն, և խատուտիկ խճաքարերը կը շղշղացնեն. յետոյ, քրքրջալով կը փախչին: Բան մը գիտեն, որ չեն ըսեր. մանուկներու պէս, որ ծունկերուդ կը զարնեն, մազերուդ կը դպին, ախանջիդ կը ծռին, բայց բան մը չեն ըսեր:

Ալիք մը, սակայն, մեծ քարի մը ետին ինկաւ, բլրերդի պէս փշրուեցաւ, և աւազին վրայէն, թաւշային ու նման դեղնամորթ գեղուհիի մը մխսին, վար հոսեցաւ, դէպի լճակը լեզուն երկարեց, երեքուց, և պատմեց.—

Հայերը, ժամանակին, Աստղիկ անունով սիրոյ դիցուհի մը ունէին, զոր փրփուրներուն մէջէն գտեր էին: Անիկա կը սնանէր նեկտարով ու ամբրոսիայով, մեղրէն եօթն անգամ աւելի քաղցր: Առջեւդ որ կենար, կ'ըսէիր՝ ճրագալոյցի խորան է, հարուստ լոյսերով, խունկի բոյրերով և ջեռեալ՝ աստուածային բոցով: Առաջ աստուածները կարմիր կը հագնէին, սակայն Աստղիկ կանաչ կը հագնէր, դաշտերուն գոյնովը, մատղա՛շ ու միշտ երիտասարդ: Բարակ նափորտ մը, այնքան բարակ, որքան արեւէն զարնուած փոշիի պատառ մը կ'ըլլայ, ուսերն ի վար, ետեւօքը, կը ծփար: Կուժ մը ունէր, երախայի մը փորով ու նմանօրէն կոնաճեւ: Անով ջուր կ'առնէր, ջուր կը տանէր, երկու-

ձեռքը ձախ մէջքին վրայ օղակ շինած և կուժը կախած :
Կանո՛ւխ, շատ կանուխ, երբ դեռ արեւածագը աշնան
տերեւի մը չափ հաղի՛ւ դեղնոտած կ'ըլլար :

Առտու մըն ալ եկաւ : Զուրերը երկինքի պէս էին :
Ապրչում արեւը լերան վրայ ծառի մը փաթթուեր
մնացեր էր :

Աստղիկ ջուրին վրայ կախուեցաւ . որքա՛ն գեղե-
ցիկ էր : Կուրծքն էր, ջուխտուորեր, գնտուորեր, մա-
գերը հոսեր, թափեր, թելթել՝ ցնցուղի նման : Անիկա
յարդարանքի համար եղերքը նստաւ, յանկարծ սանտրը
ձեռքէն ինկաւ :

Ալիքները քրքջացին, փրփուր հանեցին, — յաջո-
ղե՛ր էին կախարդել աստուածուհին : Վասնզի Սրա-
նուշները կը ցանկային դրկել անոր մարմինը, եղեամի
պէս մաքուր : Կանչեցին հովիկը, որ կը քնանար վար-
դին ծոցը .

Հովիկ-ֆուրիկ, շունչիդ մատաղ,
Հեւա՛, հասի՛ր մեզի շուտով,
Համբուրէ՛ մեզ, որ ծփալով
Երթանք պագնեմք հարսը չֆնաղ :

Հովիկը արթնցաւ ու վարդին բարիլոյս տուաւ :
Յետոյ, թուաւ գնաց, ջուրը լղեց, համբուրեց : Ալիք-
ները խնդալով՝ փախան եկան, փախան եկան, սանտրը
տարի՛ն :

Այն ատեն Աստղիկ մէկդի նետեց կանանչ շղարչը,
ոտքը մխրճեց ջուրին մէջ : Ալիքները փախան եկան,
փախան եկան, ոտքի տակի քա՛րը տարին :

Եւ Աստղիկ ջուրն ինկա՛ւ : Ալիքները շուրթէ շուրթ
երգեցին, ջրանուշները աստուածուհին դրկեցին, համ-
բուրեցին, կրկին համբուրեցին :

Հովիկն ալ աստուածուհին շղարչն առաւ, այգին
մտաւ : Ծառերն ու մարդերը արթնցուց, բանբասանք

ըրաւ : Գիւղ գիւղացի, իրենց ձեռքերը ետեւօքնին կա-
պած, վազեցին ջուրին եղերքը :

Աստղիկ, յուսահատ, լացաւ, ու կանչեց ամպերը :

Աստուածային հրամանով, լերան գլուխէն ճերմակ
ամպ մը վար կախուեցաւ, լճակին վրայ մշուշ ըրաւ :
Եւ Աստղիկ անով ծածկուեցաւ ու դնաց :

Երբ ջուրերուն վրայ մշուշ կայ, աւանդութիւնը
կ'ըսէ թէ մայր-աստուածն է որ ծածկեր է ուշը մնացած
իր մեղապարտ աղջիկներուն մեղքը :

Հա՛, տեսա՞ծ էք, որ գիշերները, լուսնկային
տարտամ շողերուն տակ, ծովին վրայ կը փալիլին, կը
ծաղկին ու կը վառին գեղազան գարդարանքներ, ոսկի
գնդասեղներ, բոցարձակ օղեր, խուրճ խուրճ թելեր :
Ատոնք ալ Աստղիկին արցունքներն են, գորս թափեց
ան ջրանուշներուն գիրկը, և երգեց ողբ մը, որ կը
լսուի, երբեմն, գիշերուան լուսթեան մէջ, ջուրերուն
եղերքէն :

Այդ սիրուն ողբը ալիքները դոց գիտեն :

ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵՐ

(ՀԵՔԵԱԹ)

Աստուածուհին Աստղիկ կորսնցուցե՛ր էր իր սիրականը:

Եւ, արտասուագին, զանիկա փնտռելու ելեր էր Նփրատի ափերն ի վար, յետոյ Ասորիք էր իջեր, ու յետոյ՝ մինչեւ Լիբանան:

Կուլար ու անունը կը կանչէր իր սիրականին, զոր ընտրեր էր աստուածներուն մէջէն: Անմահ երիտասարդները կը հաւատային թէ ամէնէն աւելի աստուածուհին Աստղիկ գիտէ սիրելու արուեստը, և ճանճրանալով յաւերժահարսներու սէրէն՝ առանց հանգոյցի, սակաւիկ ու անայլայլ, անմահութեան պարտէզին մէջ անոնք երկար դարպասեցին Աստղիկի, որպէսզի իրենց ցոյց տայ բո՛ւն սէրը, մութ ինչպէս Վանայ ծովին յատակը, անհաստատ ինչպէս երկինքը, ցաւատանջ ինչպէս Հայուն սիրտը, և վերջապէս անիմանալի՛, անիմանալի՛: Սակայն աստուածուհին մէկն էր ընտրեր միայն այդ գեղեցիկ աստուածներուն մէջէն, ա՛ն որ երիտասարդ էր նորընծայ քուրմի մը պէս, ու գեղահասակ՝ Լիբանանի մայրիներուն նման: Ու այս սիրականն էր կորսնցուցեր ան՝ այն օրերուն:

Երբ Լիբանանի մէջքին հասաւ, կանգ առաւ, պահ մը: Հովը կը լցէր իր կանանչ քղամիտը, որ կ'լինար ուսերն ի վար: Նախաճիւղները, տխրունակ, չէին համարձակեր մխիթարել աստուածուհին, որ կուլար:

Ա՛խ, ինչ աղուոր էին լացող աչքերն Աստղիկի: Ա՛յ աստնուոր, մէկ օր լացուր սիրականդ ու գիտէ աչքերը, եթէ հոն գեղեցկութիւն տեսնես, տեսակ մը բոց, տեսակ մը արեւ, հաւատա որ բուն սէրը կը դիմաւորես, և երջանիկ կ'ըլլաս: Այդպէ՛ս աղուոր էին լացող աչքերն Աստղիկի, որ իր սիրականը կը փնտռէր: Անիկա նայեցաւ հեռուն, ուր Թարոր լեռը ճերմակ հարսնցուի մը պէս ծունկի եկեր, գլուխը հակեր, կ'երկրպագէր իրեն: Աստուածուհին հարցում մը ըրաւ, բանիվրայ հովն ալ հարցումը առաւ ջուրն ինկաւ, թուփերը մտաւ, փնտռեց, փնտռաւ ըրաւ. է՛հ, ո՞վ չէ մտիկ ըրեր աղուորին խօսքը:

— Չկայ, չկայ, — վարէն հովն է կուլայ:

Նորէն լացաւ Աստղիկ, ու աղուոր մայրիներուն մէջէն վեր բարձրացաւ:

Յանկարծ ճերմակութիւն մը: Կ'ըսես՝ սպիտակ պատմուճան մը լեբան գլխէն վար կը սահի: Ի՞նչ է, — ճերմակ վարդի առուակ մը:

Աւանդութիւն մը կը պատմէ թէ «ի սկզբանէ» վարդերը ճերմակ էին: Եւ Լիբանան լեռը այսպէս սպիտակ վարդերու դօտի մը ունէր. անոնք, կարծես աղանիներ էին, թառ էին եկեր ու կը սրսփայլին հովին դէմ: Շատ աղուոր էին, ուս ուսի, բերան բերնի, չրթունք բացած, ոմանք թեւ կ'առնէին, ոմանք կ'ընդօրցող, գոցուելու մօտ՝ ափի պէս էին, հեռուն ալ ուրիշներ՝ բուռ բուռ փոշիի նման:

Երբ Աստղիկ կը մօտենար վարդերուն, ուղտափուշ մը մտաւ աստուածուհին գարշապարը: Ճչաց Աստղիկ ու մարդագետնին վրայ նետեց ինքզինք: Հասան նախաճիւղները և տեսան որ անպիտան եօթնաստղ ուղտափուշ մը խածեր ու փակեր էր աստուածուհին գարշապարին:

Նախնիքները հանեցին փուշը: Աստուածային արեան կաթիլները ստուգ ստուգ ինկան վարդին թուփին վրայ, և, հրա՛ջք, բոլոր վարդերը կարմրեցան յանկարծ:

Այնուհետեւ կարմիր վարդեր ալ բուսան երկրի վրայ:

Ով որ յիշէ կարմիր վարդերուն հէքեաթը, թող չմոռնայ աստուածուհիին ցաւն ալ, որուն պատճառաւ վարդերը կարմրեցան. բայց մանաւանդ չմոռնա՛ք երբեք Ասաղիկին լացող ու սիրող աչքերը:

Ի՛նչ աղուոր էին:

ՓԱ՛ՌՔ ԿԵՌԱՍԻՆ

Կեռասը հասեր է:

Զգո՛յշ, աղջիկներ, այս օրերուն մանչերը փափաքներ կ'ունենան կարմիր շրթունքներ համբուրելու:

Որովհետեւ իրարու կը նմանին սէրն ու կեռասը: Կեռասը հասեր է ու ես տենդ ունիմ նորէն:

Ես ձեզի կը նայիմ, բայց ձեզ չեմ տեսներ: Ես բացեր եմ ահանջներս ձեզի, բայց ձեզ չեմ լսեր:

Հիմա, իմ ահանջներու մէջ կը լսուին այգիներու կեռասենիներուն տակ սկսած խօսուըտուընները և իմ աչքերուս մէջ կը բռնկին բոցի ողկոյցները մեր կեռասենիներուն: Սա տուները կեռասենիի անտառներ են, կեռաս կը թափի երկինքէն, իմ կերած հացս կեռաս է, ջուրը կեռասի գոյն ունի, աղջիկներն ինծի կեռաս կը նետեն, պատերուն վրայ կեռասներ կը խաղան, ես կը քալեմ կեռասի ճիւղերու մէջէն, կեռասները կը զարնըւին իմ մարմինիս, և ես, ա՛յ կը սարսռամ:

Ես մերկ եմ և բարձրացած՝ կեռասենիին վրայ: Կեռասենին առտուան ցօղերով բեռնաւորուած է և իմ մարմինս հրաշալի զգայութիւն մը կ'ունենայ, քանի թաց կեռասները կ'արցունքոտեն կուրծքս:

Ես, այս պահուս, կ'ուզեմ հայհոյել ձեզի, որովհետեւ դուք կը ծիծաղիք և կեռասի սէր չունիք:

Ես գրկած եմ կեռասի ճիւղ մը: Արցունք կայ
աչքերու մէջ և արցունք՝ տերեւներուն վրայ: Ճիւղը
կը սարսուռայ թեւերու մէջ և իմ մխիթ թիթեռնիկներ
կը դարնուին: Ծրթներու մէջ՝ կեռա՛ս մը, հրեշտակ
մը իր մա՛տն է դրեր բերնիս:

Ի՛նչ քաղցր է գրկել կեռասի ճիւղը, այսպէս,
անձրեւէն թրջած: Իմ երեսներս պուտ պուտ կ'արծը-
թին, ու սիրտս, կեռասահատի պէս, կը դարնէ կուրծ-
քիս:

Կեռասին գոյնը կ'այրէ աչքերս, և արիւնո՛ւլ կը
լեցնէ:

Այնքա՛ն լեցուած եմ, որ չեմ կրնար պարպուիլ:

Արթնցի՛ր, ո՛ւլ իմ սիրականս, արթնցի՛ր:

Կեռասը հասեր է, և իմ աչքերս կը դարնուին
պատուհանիդ:

Լուր բերին թէ այգիին բոլոր կեռասենիները
խոպոպ խոպոպ բոցեր կախեր են իրենց ճիւղերէն:

Արթնցի՛ր, ահա աչքերս կը նետեմ ներս քու
պատուհանէդ:

Հա՛, կեռասենիները կարմիր անձրեւի էին բըռ-
նուեր. տեսնե՛ս, կարմիր կաթիլները, հատիկ հատիկ:

Արթնցի՛ր, ահա կեռաս կը նետեմ պատուհանէդ
ներս:

Կեռասենիներուն վրայ կրակ թափած էին և կտոր
կտոր կը շողային:

Երթա՛նք այգի: Տօնէնք կեռասին տօնը:

Կը տեսնե՞ս:

Աւելի քան երկնքի աչքերուն թիւը, աւելի քան
աստղերուն կրակը և աւելի քան գիւղին բոլոր հարսն-
ցուններուն ոսկին:

Իմ կեռասենիներս հարսնեւոր:

Ասոնք, ամէ՛նքը, իմս են: Անոնց վրայ պահապան
եմ դրեր մեծ-մայրս: Մեծ-մայրս ինծի «Թազաւոր»
կ'ըսէ, և ես իրեն միա՛յն «պահապան» կ'ըսեմ:

Զգո՛յշ, խիստ է պահապանս: Զի թողուր որ
կեռաս քաղենք, մինչեւ որ, կ'ըսէ, Աստուած օրհնէ
ծառին վրայ:

Բայց չէ՞ որ ես թազաւոր եմ, կ'արտօնեմ քեզի,
ո՛ւլ իմ սիրականս, քաղէ՛:

Դէմքդ դէմքիս՝ կեցիր ուղիղ առջեւս: Ես պիտի
գրկեմ քեզ մէջքէդ և պիտի բարձրացնեմ՝ ճիւղերուն:
Դուն պիտի քաղես և նախ օղ պիտի կախես ահանջներէս
ու ահանջներէդ: Յետոյ պիտի թափես մարգագետինին
վրայ: Գեղեցիկ պիտի ըլլայ այդպէս, ինչպէս ոսկին՝
կանանչ շրջագետին վրայ:

Բարձրացի՛ր հիմա: Քաշէ՛ ճիւղէն: Անձրեւի պէս,
ցօղերը փշրուեցան դէմքիդ վրայ և ծոճրակէս վար:
Հունա՛, ճիւղին ետեւը երկու «աղբարիկներ», աչքե-
րուդ պէս կ'ըր և անուշ: Ինկա՛ւ:

Սիրականս, կը հարցնեմ քեզի, իրաւունք ունի՞մ
ձեռքովս աճնելու ծոցդ ինկած կեռասը:

Ա՛յ, ճիւղը ծոցեալ և կը շոյէ երեսներս: Ու
կեռաս մը կը մտնէ բերանս: Հօ՛յ հօ՛յ, հրեշտակ մը
ծիծ կուտայ ինծի:

Սիրականս, ես ուրախ եմ. ըսէ ինծի ճիւղերուն
մէջէն, թէ որ դուն ալ ուրախ ես:

Գիտես ի՞նչ: Քեզ բարձրացուցեր եմ և դէմքս

հիմակ հազիւ կը հասնի կուրծքիդ: Թող ներէ՛ ինծի ժամուն քահանան՝ եթէ խաբուիմ... և շրթունքներս վալին կուրծքիդ վրայ բուսած ու կարմրած կեռասներուն, որոնք, ահա, բերնիս դէմ եկեր են:

— (Չայն մը հեռուէն) Թագաւո՛ր...

Ա՛յ, մեծ-մայրս տեսա՛ւ գողութիւնը որ ըրինք և կը պոռայ: Թաշկինակդ նետէ՛ քաղուած կեռասներուն վրայ: Նստէ՛ և շրջագրեստիդ քլանցքը երկարէ կեռասներուն:

— Պահապա՛նս, լաւ պահպանութիւն կ'ընես:

— Մե՛ղք է չօրհնուած կեռաս ուտելը, Թագաւորս:

— Ես ալ կ'ըսեմ քեզի պէս: Կեռասներն այնքան վար կախեր է բագուկները, որ թերեւս, դուն հեռուէն կարծեցիր թէ կեռաս կը քաղենք:

— Հասկա ո՞վ քաղեց սա ցանուցիւր կեռասները:

— Թռչունը ձգած է:

— Հասկա տերեւնե՞րը:

— Հովը թափած է:

— Աղջի՛կ, դուն ըսէ, դուն շիտակ կը խօսիս:

— Նշանածս իրաւունք չունի իր ապագայ ամուսինին ծնողքին հետ ձայնով խօսելու: Օրէնք է:

— Ուրեմն, ըսէ թէ ի՛նչ կայ Թաշկինակին տակ:

— Թաշկինակին տա՞կ... ա՞յս Թաշկինակին տակ... մետաքսէ՛ աղուո՛ր Թաշկի... գիտե՞ս, նշանածս նուիրեց ինծի: Մեծ-մայրիկ, Թերեւս ջուրդ տաքցած է, կ'ուզե՞ս որ Լուս-աղբիւրէն պաղ ջուր բերենք քեզի: Մի՛, մի՛...

— Կեռա՛ս... Թաշկինակին տակ:

— Այո՛, կեռա՛ս, ընտիւր կեռաս է: Նշանածս երբ շատ փափաքեցաւ, հովէն թափածները հաւաքեցինք...

— Մեղք է, պտղամո՛լ:

— Լա՛ւ: Եթէ Թագաւոր եմ, ո՞վ կ'արգիլէ ինծի: Երբ կեռաս կ'ուզեմ, պէտք է որ ուտեմ: Ապա թէ ոչ Թագաւոր չեմ ըլլար:



Ափսո՛ս:

Հիմա մեծ-մօրս «մեղքին» արգելքը չէ՛ որ զրկած է դիս կեռասէն:

Ես հիմա Թագաւոր չեմ:

Ես հիմա կեռաս չունիմ: Իսկ նշանածս ալ մեռաւ, ու իմ շրթներուս մէջ կորսուած է համը իր կեռասներուն:

Եւ արի՛ւն կուգայ աչքերէս, կեռասի այս տօներուն:

ՍՈՒՐԲ ՇՈՒՐՋԱՌԸ

Աւանդութիւնը(*) կը պատմէ թէ եօթը քոյրեր էին անոնք, եօթը ծաղկատի աղջիկներ, որ, թեւթեւի, հնարժէք գօտի մը կը ձեւացնէին: Եւ անոնք հիւսեցին սրբազան շուրջառը:

Ինչպէ՞ս հիւսեցին, ոչ ոք գիտէ: Ծարիր ու հինայ, դառիկ ու ոսկի, ապրշում ու ծամթեւ ունէին անոնք իրենց ձեռքը, և ուրիշ ոչինչ: Սակայն, Հայաստանի բարկ սիրովը լցուած, անոնց սիրոյն մէջ ծորեցաւ կենդանի պայծառութիւնը, զոր սրսկեցին շուրջառին վրայ, և անոնց հոգիին մէջ բխեցաւ կախարդական դողը, զոր տուին սրբազան պաստառին: Ահա թէ ինչո՞ւ մեհենական այդ պատմութեանը սիրելի է Հայոց:

Անոր վրայ քովին է ինկած ողկո՞յց մը, աղջկան մը մերկ ուսին պէս գեղեցիկ, և հատիկները՝ պորտ պորտ:

Եօթը քոյրեր էին անոնք, եօթը գեղատի աղջիկներ, որոնք այսպէս կը կոչուէին.— Անահիտ, Կիւլնար, Շահսէնէ, Սաթենիկ, Լուսնազան, Սուլթանիկ ու Տենջալի:

(*) Աւանդութիւնն է սա՛ դեղակերտ, թանկագին շուրջառի մը, որ եօթը Հնդկահայուհիներու կողմէ հիւսուած ու նուրբուած է Ակնայ Ապուզէիս գիւղին եկեղեցիին: Ինծի կ'ըսեն որ այժմ Գուսմ-Գափուի մայր եկեղեցիին մէջ պահուած է, և անով կը զգեստաւորուի պատարագաւոր Պատրիարքը դատկական տօներուն:

**

Հայաստանի արեւափառ այգիներէն կ'թուած ողկոյցն է ան, Յուլիսի մեր անձրեւները միւսո՞ն են լեցուցեր վրան, ո՞վ է յօրիներ այդ ողկոյցն աստղաուստ, նարդոսեղէն իւղերու թափանցկութեամբը, կոյսերու աչքին ողջութեամբը, կրակներու շարժուն փայլերո՞վը, կանանչ նայուածքով շուրջառին վրայ, որ նման է մեր լա՛յն լա՛յն այգիներուն: — Տէ՛ր, ես այդ հայրենի այգիներուն մէջ գինովցող ցեղին գաւա՛կն եմ, ասա թէ ինչո՞ւ, կը դողա՞մ:

Ու վերէն, լոյսի աղբիւր մը բարակ ծամբրու խորձ մը կը նետէ վար, և կը գդուէ ողկոյցին պատկերը՝ ծուկի մը կլորութեամբը, որ Անահիտինն է:

Երկինքը, քնացող աղջկան՝ Կիւլնարի երեսին նման, հաճելի ու խաղաղ: Այգին կապոյտ է Շահսէնէի աչքերուն պէս, և խո՞ր, և խո՞ր: Ողկո՞յցը, մատմատ լոյսերուն պէս մոմին՝ խիտ ստեղներով աշտանակի մը վրայ, նման Լուսնազանի դուրսի սիրտին: Սաթենիկ կը քրքրայ ոսկիին ու շողերուն մէջէն, Սուլթանիկ կ'ըլնէ քեզի, ու կը կախարդէ, երբ պատկերը կամարի նման կ'իջնէ մօտենալու տենչերուդ, շօշափելու ցանկութիւններուդ և համբուրելու ծարաւիդ վրայ:

Հեթանո՞ս պատմութեանը կանանչ ջուրերու նման կը դողայ, ծուփ ու դող կ'առնէ, և քաղցր, յաւիտենական, անկորնչելի բոյր մը շունչի նման կ'ելլէ, քեզ կը գինովցնէ, կ'ուժաթափէ, և դուն աղօթողի պէս, տկա՞ր ու լալկան, ծունկի կուգաս, աչքերդ կը վերցնես երկրիդ կարօտներուն դէմ, զի, երկրիդ մէկ պզտիկ յիշատակը աւելի հոգի է քան մարդոց բոլոր ըմբռնութեաները, հեթանոս և քրիստոնեայ: Եւ Տենջալի շուրջառին

է տուեր իր հեռաւոր երկրին քաղցր մէկ ծաղկին
խաղաղարար շունչը, որ անոր վրայ կը ծփայ յաւէտ,
ինչպէս Եհովայի հողին կը շրջէր նորաստեղծ իր աշ-
խարհին վրայ:

40 ԱՍՏԻՃԱՆ ՏԱՔՈՒԹԻՒՆ

... Եւ յանկարծ թիթեռնիկ դարձայ:

Շուրջս փոխուած էր ամէն բան: Երկինքին երեսը
կարծես սերկեւիլի ծաղիկ փուեր էին: Արեւը կը նմանէր
խոշոր թիթեռնիկի մը, արեան դոյն: Ու գետինը, գոր
գիշերուան անձրեւն էր թրջեր, բոց կ'առնէր կուտար:
Շէնքերուն սլատերուն վրայ, ճամբաներուն մէջքին
վրայ, վերջապէս ուր որ արեւն էր դպեր, թիթեռնիկ-
նե՛ր, որոնք թեւ կը գարնէին, բայց չէին թռիր: Զատ-
կական զանգակներուն ճա՛յնը,— աներեւոյթ ման-
տրտիկ բոժոժներ կախուեր էին երկինքէն և անծանօթ
գորութիւն մը կը շարժէր զանոնք:

Թի՛ռ,— միջոցին մէջ ծաղիկներ դժեցի և յետոյ
թառեցայ ցանկապատի մը վրայ: Պարտէզէն ներս սա-
լորենինե՛ր, սալորենինե՛ր, գումարեմ-գումարեմ՝ չի
հատնիր: Սպիտակ թիթեռնիկներ են թառեր, ըսի,
սալորենիներուն վրայ: Թի՛ռ,— մօտեցայ: Ո՛չ, սա-
լորենիները ծաղկե՛ր էին, թիթեռնիկ չկար անոնց
վրայ:

— Մտածումի կճեպը ճեղքեցի, դուրս ելայ: Հի-
մա թիթեռնիկ եմ, ա՛լ մարդ չեմ: Այժմ կը զգա՛մ
միայն, բայց երբեք չեմ մտածեր: Եւ երջանի՛կ, շա՛տ
երջանիկ եմ, ուրախութիւնս աստիճան առ աստիճան
կը բարձրանայ, որովհետեւ զգայարանքներս կը բանին:

Այսպէս խօսեցայ սալորենիին: Նոյնիսկ, բարե-
կամութիւնս հաստատելու համար, համբուրեցի իր մէկ

ծաղիկը: Սակայն պատասխան չտուաւ, որովհետեւ անիկա դեռ լմնցուցած չէր առտուան աղօթքը:

— ... Գիշերը բացի աչքերս անհամբերութենէս: Թո՛ւլթ ցաներ էին երկինքին վրայ: Հոտոտեցի հեռաւոր լեռան մը ծաղիկներուն բոյրը, — պա՛ղ էր դեռ: Սարսուացի: Այնուհետեւ չկրցայ քնանալ: Բաց աչքերով երազեցի քեզ, արե՛ւ, աղբի՛ւր ջերմութեան, եղջի՛ւր առատութեան: Առաւօտ է արդէն, և ես, սլճնուած, թեւերս տարածած, քեզի՛ կ'ուղղեմ իմ առաջին ողջոյնս: Ձատիկ է, հունտը, որ հողին տակ թաղուեցաւ անցեալ աշնան, ճեղքեց կճեպը, պատուեց դետինը, և դուրս ելաւ խաւարէն՝ բոլորովին կերպարանափոխուած: Դո՛ւն, ամենազօր արեւ, դո՛ւն յարութիւն տուիր մեռած հունտին, արթնութիւն՝ քնացող բոյսին: Շուրջս թիթեռնիկները կը պտուտքին ձիւնի դոյնդդոյն փաթիլներու նման, ծառերուն վրայ այնքան շատ են ծիւլերը, որ կը խարուիս անձրեւի կաթիլ կը կարծես: Փա՛ռք քեզ, արե՛ւ, որ կը դինովցնես զիս: Կը զգա՛մ ջերմութիւնդ, երբ կը դրկես զիս: Ու տարօրինա՛կ զգայութիւններ կը պտըտին ճիւղերուս մէջ: Փա՛ռք, հագա՛ր փառք քեզ:

— Աւարտեցա՞ւ, հարցուցի սալորենին:

— Անհամբեր, չե՞ս դիտեր, որ աղօթքի պահ է: Տե՛ս, բոլորը կ'աղօթեն, խօսակցութիւնը արգիլուած է: Յետո՛յ յետո՛յ: Այժմ մտիկ ըրէ՛ սա պատիկներուն աղօթքը:

Անուշ մրմունջ մը կ'ելլէր դետնէն: Սալորենին ըսաւ.

— Հունտերն են, որ անցեալ տարի ցանուեցան: Խեղճերը գէշ տեղ են ինկեր: Ձատիկի առտու է, և դեռ չեն կրցած դուրս ելլել իրենց գերեզմանէն:

— Ուրեմն անոնք արեւ չպիտի՞ տեսնեն, անոնք այս տօնական օրը չպիտի՞ վայելեն:

Պիտի լայի, եթէ սալորենին չըսէր.

— Ուշ կանուխ, անոնք ալ կը պայթեցնեն հողը: Մե՛ծ է գօրութիւնը արեւին:

Այն ատեն թառեցայ դետինը, թեւերս հանգրիճեցի, և աղօթեցի պատիկ ծաղիկներուն հետ համասփիւռ արեգակին:

— Դոհուցի՛ւն քեզ, արե՛ւ: Դուն որ բազմեր ես երկինքի դրանը մէջ, և աչքերդ յառեր ես աշխարհի վրայ, պատիկ բոց մը ղրկէ, ճեղքէ՛ հողը, պատուէ՛ բոլոր գերեզմանները: Որպէսզի մեծ ու պատիկ վայելեն ուրախութիւնը, որ կը սփռես երկրի վրայ: Շնորհակալ եմ, որ ինձի տուիր ամէն վայելք: Մարդկային մտածումը չի կրնար այլեւս կապտել զիս, ես ձերբազատուեցայ մտածման բռնութենէն: Թիթեռնիկ մըն եմ հիմա: Կ'ապրիմ զգայարանքներով, ինչպէս ծաղիկը, զոր դուն ստեղծեցիր: Սակայն, ո՛վ ամենազօր, տո՛ւր որ ոչ ոք մնայ անմասն Ձատիկի տօներէն: Թող բոլո՛րն ալ ուրախանան ինձի հետ: Ես ի՛նչ ընեմ մինակս, իմ ուրախութեամբս:

Երբ աղօթքս աւարտեցի, զգացի որ շատ դոհ եմ: Տարօրինա՛կ ուրախութիւն մը լեցուած էր ներսի դիս: Յանկարծ լսեցի, որ սպիտակ սալորենին կը կանչէր ինձի.

— Թիթեռնի՛կ, տե՛ս դետինը, ծիւլերով ծակծակուած է: Բոլո՛րը, բոլո՛րը պիտի ծաղկին հետզհետէ: Արեւը տաքցաւ: Եւ պարտէզը անուշահոտութեամբ կը յորդի: Հասաւ պահը, որ ամէնքը զուարճանան, երգեն ու խայտան: Դէ՛հ, թռի՛ր:

Թռչուն մը երկինքի մարմարազեղ տախտակին վրայ երկրաչափութիւն կ'ընէր: Ուրիշ թռչուն մըն ալ

Թուրի մը մէջ Օմար-Սայեամ կ'արտասանէր: Ես ի՛նչ եղայ, ի՛նչ չեղայ, ալ չեմ գիտեր: Ուրախութիւնս անեցաւ, և տաք բան մը անցաւ ներսէս: Սլացայ վե՛ր, դէպի վե՛ր:

Չատկական դանդակները մեղուի ձայնով լեցուցեր էին միջոցը: Գորշ ինքնաշարժ մը սնդիկի նման կը քալէր ճամբու մը մոմին վրայէն: Մօտեցաւ պարտէզին: Սալորենին ինքնաշարժ նստաւ: Հեռո՛ւն քաղաք մը, Թուրքանական խառն հաշիւի մը պէս իրար անցած: Շողեկառքի մը ճերմակ ծուխը արագ արագ կը վազէր ազուաւի մը ետեւէն: Դաշտին մէջ, պտուտակ մը հետդհետէ կը կարճեցնէր ծառերը. խումբ մը կաղնիներ արդէն նստած էին դետինը: Հեռուն եկեղեցի մը, գրմբէթին վրայ խաչը արիւններ էր: Տան մը տանիքէն թիթեզի կտոր մը փրփուր կը նետէր:

Բարձրերը ելած, կը թեւածէի անհունին մէջ: Անուշ ջերմութիւն մը կը դգուէր դիս, երբ սկսայ խօսիլ.

— Ուրախութի՛ւն, ուրախութի՛ւն, ի՞նչ ես դուն: Լեցուցիւր զգայարանքներս ու հոգիս: Կերպարանափոխեցիր դիս մէկ վայրկեանի մէջ: Եւ հիմա ամէն բան զգայախարութիւն կուտայ ինձի, զի առա՛տ են բնութեան տպաւորութիւնները, և ընկալուչ գործիքներս սուր: Շարունակ կը թրթռամ՝ դողացող տերեւի մը պէս, կը լեցուիմ ձայներով՝ ջրամբարի մը նման, կը յորդիմ անուշահոտութիւններով՝ տաճարի մը հանդոյն: Կը նմանիմ տօնախմբութեան սեղանի մը: Կամ այն կոչնականին, որ ոտքի կը կանգնի պտուղի սահառներուն և դինիի փարչերուն մէջ, աչքերը ժպիտով լեցուն և շրթները քաղցր հեղուկէն վառած, մազերը ցրիւ ու խօիւ և շապիկին կոծակները քակուած, ու, ձեռքը դողալէն և դինին թափելէն, կ'երգէ, ձայնը սրինգի պէս անուշ և բառերը կիսատ ու պռատ.—

Հարբել եմ ու չեմ գիտով,
Ես կ'այրիմ ու չեմ կրակով:
Հագել եմ սիրուն շապիկ,
Աղուտի դուռը կայնելու:
Աղուտն ալ ներսէն ի դուրս,
Ծոցը լի կարմիր խնձորով:
Ասի քէ հատ մը առնեմ,
Թունդ ելաւ քուխ աչքը լալով:
Լացաւ ու լալով ասաւ.
— Եա՛ր, ինձ խաղֆ արիւր ցերեկով,
Բռնեցիր գօռով փօռով,
Պագ արիւր հագար նագերով:

Ե Լ Ա Կ Ը

(Ա.Ի.ԱՆԴՈՒԹԻՒՆ)

Մեր գիւղը, կարմիր լուսնկայի մը նման՝ այգիներուն մէջ ինկած, աւանդապահ բեկորն է ցրիւ ցրիւ եղած փառապատում ցեղիս, որ «մեծերուն» և «իմաստուններուն» նման՝ կրցաւ հազնիլ պատմութեան թանկագին պատմուճանը:

Հեթանոսական սքանչելարուեստ գեղեցկութենէն ու քրմական խորհրդանուշ Բանէն, և այն բոլոր ստեղծադործութիւններէն, որոնցմով մեր նախնիքը գինովացան, հեւք մը միայն, թաքնուած իր հոգիին զեղումներուն մէջ, ի՞նչ հրաշատեսիլ երանդներով ու դողերով կը թրթռայ դեռ իր աւանդապահ շրթներուն վրայ:

Հայերէն մեծ բառգիրքերու մէջ, գործածուելէն մաշած բառերու տակը սեղմուած ու լքուած, ժամանակին դոյներով բռնաբարուած՝ հարի՛ւր բառեր գիտեմ, որ մեր գիւղին մամերուն հոգիին մէջ զեղեցիկ աւանդութիւններու հեթանոս արուեստին հիւսուածքները կը բերեն, բայց մեղանշումի վախով կը յամենան դուրս թափել մեր անցեալին մեծութիւնը: Հայ անեղծ գիւղերու մէջ ուխտեր կան, առածներ ու երգեր, ասութիւններ ու բառեր, որոնք թել կ'առնեն այնքան հեռաւոր և այնքան փառաւոր անցեալին իմաստութենէն:

*
**

Մեր գիւղերը, իրար դրկած իրենց տուներէն դուրս կը ձգեն ժամը, քիչ մը ծառ կուտան անոր, անոնցմով ծածկուելու համար, (ինչպէս հին ատեն մեհեանները կը հիմնէին սօսիներու թաւուտքի մը մէջ): Ու ջուրի զուարթ ու բիւրեղ աւազաններու վրայ կ'իյնան, անապակ և անմահական ակունքներ կը բանան այգիներուն ետին: Գիւղին կողքին, կանանչ փոռածքի մը մէջէն ջուրի արծաթացայտ հոսում մը, անոր նկարչական բանաստեղծութեան վրայ նոր գեղեցկութիւն մը կ'աւելցնէ: Առանց ջուրի մնացած գիւղերու անունները կը մեռնին, որբացած և օտարացած: Ջուրը գիւղին սրբութիւնն է: Մեր տուներուն տակ հորեր ունինք, որոնց մէջ մէլէքներ կը բնակին, ու մեր պարտէզներուն մէջ՝ աւազաններ, որոնց մէջ նոնենին արիւն կը թափէ ամէն դարուն:

Վա՛յ այն գիւղին, որ ակունք չունի, վա՛յ այն գիւղակին, որուն հովիտներէն ջուրի կարկաչ չի լսուիր: Աստուածները չպիտի ուզեն այցելել այն գիւղը, որ ակունք չունի, այն տունը, որ աւազան մը չունի: Որովհետեւ բոլոր աստուածութիւնները ջուրէն կը ծնին և ջուրին մէջ կը բնակին: Ու ջուրերը սրբազան օրհնութիւններ են, դեղ՝ հիւանդին: Բոլոր կրօնքները իրենց սրբութիւնը ջուրէն կ'առնեն. հայ քրմերն իսկ Արեւը (Վահագնը) «ծիրանի ծովին երկունք»էն կը բարձրացնէին երկինք: Հայաստանի մէջ ջուրի օրհնութեան տօնը կայ, մեր լուսադրիւրներուն մէջ հաւատաւոր իրենց ստիւնքները կը լուան, տեսակ մը հաւատաւոր հայցում ջուրի աստուածութիւններէն իրենց բեղնաւորութեան համար: Լճակներուն և աղբիւրներուն ծոցը բնակող աստուածութիւնները այնքան անուշ երգեր ու

կանչեր են, որ, օր մը, լուսնկան մոլորեր՝ ջուրն է ինկեր: Իմ գիւղս կը պատմէ թէ մէլէքներու հարսնիքին ծաղիկներն են փրփուրները: Եւ ջուրերու մէջ լողացող նուսուֆարներն ալ այն ծաղիկներն են, որոնցմով կը ծածկեն հրասլոյրը Անահիտի՝ մշկաբուրեան մերկութեամբ և ոսկեկըծիկ ծիծերով՝ այց տուած ատեն մեհեաններու մէջ սիրահար աղջիկներու և հերատուկներու արարողութիւններուն:

*
**

Մեր գիւղին այգիներուն ոտքը, հովիտին մէջ, պայծառ ու անսպառ ջուր մը կը հոսի, և մաքուր խիճերու վրայ փշրուելով կը սահի: Տեղ մը այնքան մօտեցեր է այգիին, ու կորացեր՝ խորացեր որ, կը թուի թէ, գիշերին մէջ աստուածութիւնները կ'ըլեն ջուրին աւաղանէն, մերկ ու գեղեցիկ, այգի կը մտնեն՝ օրհնուած խաղողահատը ճաշակելու: Անոր համար է որ, կը կարծէ գիւղացին, այգիին այդ մասին մէջ խաղողը աւելի շուտ կը հասունայ: Բայց Բաղոս, որ նիզակը ձեռքը գինարբուքի կը կանչէ իշխանները, առանց համբուրելու այդ անմահ գեղեցկուհին, չպիտի արտօնէր խաղող քաղել, և գիշերին մէջ այդ համբոյրն է լսեր միամիտ գիւղացի մը:

Այդ հովիտին մէջ արեգակը առտուընէ մինչեւ իրիկուն կը խաղայ, առտուն Բարձունք լերան վրայ բարձրանալէ յետոյ կը թօթվուի, կը տարածուի բլուրն ի վար, մինչեւ մացառներուն ոտքը երկարիլ ուզած ատեն, յանկարծ, ջուրը կ'իյնայ: Ու, խաղաղութիւն: Կ'ըսես, ա'լ իրիկուն չպիտի ըլլայ, միշտ լոյս և միշտ պայծառութիւն: Իրիկունը, երբ վերաւոր թեւերը կը տարածէ այգիներուն վրայ, այնքան ոսկի և այնքան

հինայ կը թափէ, որ յանկարծ կը գունաթափուի ծաղիկի նման և լերան ետին, կ'ըսեն թէ, ծառէն ինկող կարմիր նուռի մը պէս, գետին կ'իյնայ:

Հեռաւոր թուականի մը, գիւղին այգիներուն տակը, հովիտին մէջ շա՛տ գեղեցիկ, աննման հրեշտակ մը այգիներէն խաղող քաղած՝ աւաղան կ'իջնէ: Կտրիճ մը, որ իր սիրականին կը սպասէր, կը տեսնէ ու կը հմայուի: Լոյսի նման սպիտակ, ցօղ աչուրներով, աստղիկի մը չափ բերան և ի՛նչ անո՛ւշ ստինքներ, սկիհի նման դողաւոր: Կտրիճը կը սիրահարուի: Ամէն առտու այգիին վարը կը սպասէ անոր անցքին: Ու այդ մանուկ և անփորձ աստուածութիւնը, օր մըն ալ, կը խաբուի ու կ'ընդունի կտրիճին ձեռքէն խաղողի ողկոյց մը, իր աչքերուն նման պճլտուն հատիկներով: Աւանդութիւնը կ'ըսէ թէ անոնք շատ հեղ, առտունները, իրարու զերիկի մէջ համբուրուեր են, մոռնալով լոյսին իսկ մերձեանալը: Բայց սէրը անուշութիւններ ունի, որ չեն հատնիր: Հրեշտակը ժամ մը կ'ուշանայ, երբ մայր աստուածութիւնը կասկածելով կը լրտեսէ: Օ՛հ, ասեղասատ ցասումն անդուժ աստուածամօր: Կը հրաւիրէ Լոյսը՝ մահկանացուի մը նման պատժելու համար գոյն: Ու մամիկս ի՛նչ մեծ տխրութիւնով կ'աւելցնէր թէ հրեշտակը կը հալի լոյսին մէջ երազի մը նման, ստինքին պտուկը կտրիճին շրթներուն մէջ անմահբուրիկ ելակի մը կը փոխուի, շառագունած՝ ծիրանեթոյր արիւնով:

*
**

Մեր հովիտներուն մէջ ելակը ինչքան առատ կ'ածի, գետինին վրայ, շրթունքի պէս նուրբ երկու տերեւի մէջ սեղմուած, ստինքի մը պտուկին նման: Մէկ գիշերուան մէջ կը հասունայ և լոյսին մէջ շուտով գետին կ'իյնայ:

ԱԶՔԵՐՍ ԽՈՒՓ

Զատիկը մեր գիւղին վրայ կը բացուի գարնան դուռի մը պէ՛ս:

Մեր գիւղը չորս մեծ տաղաւար ունի:

«Խաչ»ը արար-աշխարհի համար է: Հեռաւոր քաղաքներէն, մինչեւ Հինտիսթանէն, ուխտաւոր կուգար մեզի: Ու մեր գիւղը կը պոռայ կենդանիի նման, որ երկունքի ցաւերով բռնուած է: Մեր աղբիւրներուն ջուրերը կը հատնին: Մեծ պաղար է: Աստուած մոմի մը փոխարէն բողին «Թողութիւն» կը ծախէ, լուսարարը տասնոցի մը փոխարէն հիւանդին «խաչի ջուր» կը ծախէ, մէկը ընկոյզի մը փոխարէն գիւղին տղուն սուլիչ մը կը ծախէ: Եւ կը պոռան, կը գինովնան, մեր ժամն ու տօնը հարամ կ'ընեն մեզի:

«Աստուածած»ը Ատափագարցիներուն համար է: Երբ գիւղին վարի գիւն կառքերով, լանտոններով, խառնիխուռն, ձմերուկ, դդում և Ատափագարցի կը հասնի, կ'ըսենք.— «Աստուածած է»:

«Ծնունդ»ը մենք մեզի, մինա՛կ կը տօնենք: Ես, աւանդութիւնը չխանդարելու համար կարծես, «Ծնունդ»ի օրերուն, քաղաքէն գիւղ կը դառնայի ձիով, դանդաղ դանդաղ, հեռուէն ձիւնին տակ թաղուած գիւղիս պատկերը գիտելով ու չկշտանալով:

«Զատիկ»ը կը տօնենք դրացի Խասկալցիներուն,

Խաչգիւղի Հայ-Լաղերուն ու դիմացի թուրք գիւղացիներուն հետ: Խասկալցիները քթանի ձէթ կ'ուտեն, և ես այդ ձէթէն կը դանիմ, ու աչքերս ասդին կը դարձնեմ: Խաչգիւղը վաթսուն տուն ունի, բլուրի մը վրայ կարգի կեցած: Տուներուն տանիքը ծածկուած է փայտէ քառակուսի խոչերով, ձուկի թեփի պէս վրայ վրայի: Ես ամրան արձակուրդ մը անցուցած եմ այնտեղ. մէկ հատիկ երգ ու մէկ հատիկ հէքեաթ չգտայ, շատ մը բա՛ն գտայ, ու շատ աղուոր աղջիկներ տեսայ: Անոնց աղջիկները իրենց ճակատին վրայ, ու իրենց կուրծքին վրայ, շարք շարք ոսկի կը կախեն, ինչպէս աչքերը սիրամարգին պոչին վրայ:

Որքա՛ն գեղեցիկ են անոնք, ներդաշնակ արձանացմանը մէջ իրենց սիրահրաւէր գիծերուն: Ինչո՞ւ, Զատիկին, մեր ժամուն մէջ կը պոռան անոնք, այնպէ՛ս ուժգին, լուսնոտի պէս խեղդուկ, յետո՛յ սուր, եղբրակա՛ն, ինչպէս անտառին մէջ ծառը կը պոռայ, երբ իր հին ճիւղերէն մէկը ճեղքելով, սրտուելով կը փրցնեն:

Այդ ցաւի ճիւղերով կը լեցուի մեր ժամը, Զատիկին:

Բայց մեր Զատիկը դարնան տօնն է, ճմարիտ:

Յանկարծ, կը տեսնես, ծառերը իրենց մատներուն ծայրովը գոյնգոյն փաթիլներ են բռներ: Մեր ժամուն ամպանման մեծ դմբէթը կը հանգչի այդ ծառերուն վերեւ ու գիւղին վրայ կարմիր կարմիր ասեղներ կը նետէ՝ երբ արեւն ելլէ: Այն ատեն, ծիծեռնակները, մեղմէ առաջ, ժամժամ կը խաղան: Անոնց օրհներգութիւնը քաղցր ձայներու փոթորիկի մը կը նմանի, եղանակը կ'ելլէ կ'իջնէ, անձրեւի կը փոխուի, ձայնի կա-

Թիւները վարէն՝ վեր կը նետուին, ու վերէն՝ վար: Յանկարծ ձայնաւոր փոշի մը կը դառնայ, խաղաղօրէն կը ծփայ, վանքին պարիսպներուն կը դարնուի, կը ծեփէ դայն, ու կը հոսի՛, ու կը հոսի՛: Յետոյ, երբ ծիծեռնակները, այս մանրանկար սեւուկ արեղաները, լմնցնեն իրենց երգը, կը սկսի մեծ արեղաներուն «գարթիք»ը:

Թաղման անտուկին համար, թաղար թաղար, աղջիկները ծաղիկ են հասցուցեր, ու դրեր են իրենց պատուհաններուն առջեւ: Ծահոքրամեն՛ր, շահոքրամեն՛ր, որոնց շունչը մուշկ ուտող աղջկան մը ձայնին հովին պէս է, որ կարմիր շրթներու մէջէն կը փախչի: Ռեհա՛ն, անուշի՛կ ուհան, իր տիրուհիին արծաթ ատամներուն կը նմանին ջրի ուլունքները: Հրեշտակին աչքը վրան, բարի մեխակը եղջերափողը լեցուցեր է շերտ շերտ յակինթներով: Ա՛յ, կոնկենին ականջ է լարեր, ահա, հովին ձայներուն:

Ո՛վ Զատիկ, կարմի՛ր առաւօտ:

Աղջիկները, կարմիր հագած, երբ կը խնդան փողոցներուն մէջ, դարուն կը կաթի ամէն դի: Անոնց ծաղիկ աչքերուն մէջ սէրը գոլ է տուեր, և անոնք, երբ կենան առջեւը, հնարժէք ծառերու արձանի կը նմանին, որոնք երկու վարակ ունին, լաւ կտրուած:

Ահա պարտէզները:

Կանո՛ւխ, խատուտիկ նշենիները արթնցեր(1), մեղան են քսեր իրենց դապուն մատիկներուն: Լեւակենին ալ իր աչքերուն կապը կը քակէ, և առաջին տերեւները, մանտրտիկ ու անգոյն, կը դողդղա՛ն արդէն, թռչնիկներու նորափետուր թեւերուն նման: Անկիւններ ալ կան, ուր աճապարանքով, լեւակենին գնդասեղի դոյնդոյն գլուխներէ կազմած ողկոյզը կախած է արդէն:

(1) նշենի, երբայերէն կը նշանակէ արթուն:

Այծտերեւուկը փտտած խոնձանի մը պէս Արսէն վարդապետին պատին է նետուեր: Նախ կը կարծես ուր սպաննուած է, սակայն կը սխալի՛ս, անիկա կը խորհի որ իր դեղնաւուն թելերը,— կ'ըսես՝ կատուի պէս է, — ո՞ր երկնցնէ: Մեր սերկեւիլի ծառերը բուստի ճիւղերու կը նմանին:

Ու Զատիկը ման կուգայ դաշտերուն մէջ:

Հետզհետէ ձորի ջուրերը կը կանանչնան. (մեր ջուրերը ծաղիկ ալ կուտան, ետքէն): Տէրտէրին էգիլին ճամբան Վառլառ հարսը ծուր՝ ծունկն է բացեր. չէ՛, սխալ էմ տեսեր, լուսաղբիւրին երեսն է ան...:

*
**

Արմա՛լ, Արմա՛լ, գունաւո՛ր, պսպղուն, հրաշատի՛ւլ, քե՛ղ կը դիտեմ, քե՛ղ, յիշողութեանս պրիսմակին մէջէն, այսպէ՛ս, աչքերս խուփ:

ՈՎ ԿԱՂԱՆԴ

Ա.

... Եւ կարմիր հողաթափներս ալ կը հանեմ, անկողին կը մտնեմ: Քնանալէ առաջ՝ ուղերձ մը կը սկսիմ, միամիտ բարբառով և պաշտողութեամբ՝ ինչպէս աղօթք մը, ողջոյնով ու հայցումով՝ ինչպէս նամակ մը: Հիմա մանուկ մըն եմ, արդար թեւերովս՝ կուրծքիս վրայ դրած, խելօք աչքերովս, աղաչող շրթներովս, կաքաւի պէս տոտիկ փոխող սրտիկովս՝ մանուկ մը, ես՝ որ կը խօսիմ:

— Ո՛վ Կաղանդ, հօր պէս քաղցր, Յիսուսի պէս բարոյախօս, հէքեաթի շրթունքով, աղքատի տոպրակածեւ գրպաններով, բարեկամ՝ ամէնքին, Քէնընան Պետիկին, ու Մօրուքենց Քաջիկին, ու Շարային, ու Արտակին, ու Սաթոյենց տան կատուներուն:

Ես, ահա, քուն կը մտնեմ՝ երբ դուն, գիշերուան մէջէն, պիտի դաս: Լսէ՛:

Հերու, ի՛նչ դարմանահրաշ տարի էր: Մեր պարտէզը, Մայիսին, բռնկած հնոց էր դարձեր, ամբողջ: Զօպանենց շան լակոտները աճեցան, մեծցան, և, նոյն իսկ, աղբիւր գացող աղջիկները հալածեցին:

Ես ալ աճեր էի: Մինանենց հարսը, իրենց փուռին առջեւ, երեսս համբուրեց: Երբ «ինչո՞ւ երեսս կը պագ-

նես» ըսի, ըսաւ. «Դուն նման ես դարձեր Այանտուզի թափանցիկ խնձորներուն, որոնց մէկ հատը երբ արեւին դէմ բռնես, բաժակ մը լեցուն գինի կ'ըլլայ. ու բարակ աղուամազը շարմաղ ալիւրի է նման. աչքերուդ մէջ եօթը սէր կայ, և աննմանակ փառքի մը պատկերը»:

Մեր գիւղացի հարսին խօսքը պիտի կատարուի՛: Որովհետեւ այս տարի շարագրութեան դասին մէջ ցոյց տուած կարողութեանս համար մրցանակ ստացայ: Դպրոցիս մէջ զիս արտակարգ մանուկ կոչեցին, ինչու որ, հէքեաթներուն իմաստութիւնը բացատրող մեր պատկերուն պէս՝ կը նկարագրէի անտառներուն անհաս երգերն ու շարձարանքը, երկինքի նշանները, ժամին գիշերուան կոչնակահարութիւնը: Կ'ըսէի. «Ինչ որ տեսած ըլլալ կը կարծէք, պատրանք է, ձեզմէ ոչ ոք պիտի ընդունի իսկութիւնը, երբ գոյներուն ողջութիւնը և ազունքը չի ճանչնար»:

Վասնզի իմ պապերէս կուգայ ուսումը այս իմաստութեան: Անոնցմէ՛, որ գօրացան յուռութեովը գոյներուն, խորհուրդովը ջուրերուն և երկինքին: Անոնցմէ՛, որ ճանչցան և աներեւոյթ կենդանութիւնը պաշտեցին նշաններով:

Ու դուն, ո՛վ Կաղանդ, պապենական ժառանգութի՛ւն, հայրենի աւանդութի՛ւն, եղծուած նշանա՛կը Գողթան աստուածներուն, ո՛վ Վանատուր, քու պատմութի՛ւնդ կ'ուսուցանէ ինծի՛ պահել, խաղերու և գոյներու մէջ, Խորհուրդը, ընդհանրակա՛ն, պաշտելի՛...
m

Դուն եղա՛ր, նաւասարդեան առաւօտներուն, բո՛ցը, որ ծովերուն վրայ կը թափէ պարը կրակ առած տերեւներուն Սօսեաց անտառին, և հերատուկներուն

ստինքները, ծայրէն, կը թաթխէ փոշիին մէջ երկինքի ծիրանիին :

Ո՛վ քաղցր Ամանոր, օծութեան տօն, ծանրազին իւղերու հանդէս, երանելի աւանդութիւնը մեր ազատանի ցեղին, Կեսարներու բոցածեփ ու կարմրամշուշ կեղծ պատմութեանին ճշմարիտ օրինակը, հնութեան բուրում :

Նաւասա՛րդ...

Ո՛վ մեծ տօն, տօներուն տօնը, արարողութի՛ւնը արի արանց բազմութեան, հեթանոս ու ազատ :

Վանատո՛ւր...

Ո՛վ ոգի, ո՛վ վերանորոգ գօրութիւն, որ ծնունդ կուտաս, մէկ տարիով, աղջկան կոնքերուն մէջէն կաւէ խմորին կենդանութեան :

Օրերո՛ւ Աստուած...

Հանդէս ժամանակին, ո՞ւր է երբեմնի հրայրքդ, որ Աշտիշատի հողերուն վրայ ուռճացած որթատունկէն կը կախէր արեւախայծ խաղողները, և գինովութիւնը, որ փողահար աղջիկներու առջեւէն, իւղով օծուած ընտիր մերկութիւններու փաղանդ մը, պարելէն, կաքաւելէն բխող Լոյսին ու Ջուրին հարկ մատուցանելու կը տանէր :

Դուն եղա՛ր, քրիստոնէական գիշերներուն, երազի պապուկ մը, որ իր բարեպաշտօն պատմութեանին տակ պահեց հեթանոս իմաստութիւն մը : Ու դուն եղար բարտապուշակ ծերունի մը, որ, եբրայեցի Մովսէսին տգիտութեամբը, սխալ մեկնեց խորհրդանշանները, սուտ համարեց ոգիները և անիմաստ առակներ պատմեց. ու քեզ ստիպեցին խամաճիկներ բաշխել մարդոց : Լսէ՛ :

Անարդա՛ր է բաշխումը, ու կշիռդ՝ սխալ : Կո՛յր ես դուն, և իմաստութիւնդ՝ պառաւցած :

Ձի

Արդա՞ր է որ, այս տարի ալ, նուէր ստանան Ջրմզըմենց մարազին շուները. չէ՞ որ ամէն գիշեր կը հաչէին լուանկային դէմ, և ամբողջ տարին կռիւ ըրին Օձին Աղբիւրը նետուած դիակի մը վրայ, ազուաներուն հետ : Արդեօք նորէն նուէր բերի՞ր Հարոնենց մանչուն, որ վառած լուցիկ կը նետէր յարդանոցներուն վրայ : Կ'ըսեն թէ Ադա Բաբելին տղուն վրայ խենթութիւն եկած է. պղտիկուցը դպրոցին մէջ երեսին միշտ մեղան կը քսէր, հիմա ալ իրենց տանը ճակատը դառնուկի արիւնով է ծեփեր :

Մէլէնենց աղջիկը... — անունը ըսելու համար կ'ամչնամ, ո՛վ Կաղանդ, — Մէլէնենց աղջիկը հասակաւոր դարձաւ, ժամին մեծ մոմերուն պէս : Երեսը թափանցիկ է, (մտածելէ յետոյ,) ու թիթեռնիկի պէս դողդղո՛ւն : Շատ բարակ է հագածը. հեղ մը, շունչս բռնած, աչքս տնկեցի, կուրծքին նայեցայ, հոն, աջ ու ձախ, խայծուն թութով շինած մեր մեղանին դոյնովը երկու կոճակ ունէր : Նայեցա՛յ, նայեցա՛յ, աչքէս արցունք եկաւ : Ո՛վ Կաղանդ, բերած նուէրներուդ ամէնէն թանկազինը անո՛ր տուր, Մէլէնենց աղջկա՛ն, ա՛խ, չմոռնաս : Թերեւս դալ տարի անոր նուէրները ա՛լ ես իմ ձեռքովս կ'ընեմ...

Լսէ՛ :

Բայց լսէ՛, բուն ըսելիքս դեռ չըսի : (Լուութիւն) : Գիշեր է. Կաղանդ-գիշեր. երկինք թօթիկեր է իր աստղերը. աղջամուղջը կը թափի ծանրահոս տղամուտի պէս :

Սաղաղութի՛ւն, քարանձաւներու թաղաւորու-
թեան նման խորունկ ու ահաւոր:

Ո՛վ Կաղանդ, պարզկայ գիշեր՛ը, իջի՛ր մարդոց
հոգերուն վրայ, իջի՛ր շուրջառի մը նման, իջի՛ր
թմրաբեր բոյրերու նման, իջի՛ր մոգական խօսքի
նման, ու թող քու առաւօտեան պարզեւդ ըլլայ,—
կտորէ՛ վախցնող խրտուիլակներդ, ստահակ պաճուճա-
պատանքներդ, մսավաճառի դործիքներդ,— ա՛խ, թո՛ղ
մեզի քու պարզեւդ ըլլայ՝ նո՛ր կշիռ մը, իբրեւ նշա-
նակը խաղաղութեան: Ես կ'ողբեմ շնորհը երանութեան,
հաշտութի՛ւն և հարանութի՛ւն, ամէնո՛ւն ամէնո՛ւն,
ու վերջը՝ տո՛ւր մուրատը, իմ և Մէլէնենց աղջկան...

(Քունէն տարուած՝ կ'ընդհատուի ուղերձը: Կը
սկսի երազը):

Բ.

... Ու մարդ մը, որ մազաղաթ էր հազած, ներս
մտաւ ու ըսաւ ինձի.

— Լսեցի աղօթքդ, դոր արտասանեցիր գիշերուը-
նէ, քուն մտնելէ առաջ: Հիմա եկուր որ քեզի ցոյց տամ
Կաղանդի աշխարհը, ուր են հիները՝ հասած իրենց
մուրատին, և նուէրները, որոնք պիտի տրուին նոր
տարուան «արժանիներուն»: Եկո՛ւր:

Վախով ու դողով, վարանելով ու չուզելով՝ հե-
տեւեցայ անձանօթին, որովհետեւ, այդ պահուն, յան-
կարձ ցաւ մը գարկաւ ձախ ականջս, դոր Հարոն պատ-
ւելին սաստիկ կը սեղմէր, երբ դպրոցին զգաստարանը
առաջնորդէր դիս, հակառակ դիմադրութեանս: Հին
ցաւի մը սովորութիւնը, որ, դատապարտեալներու
յատուկ, ինքնիրեն կ'արթննայ երբեմն:

*

**

Անցանք Օձին Աղբիւրին դարվար փողոցէն: Ուրուկ
Մամային տանը առջեւէն, գերեզմանին ճամբայէն, և
հեռացա՛նք, հեռացա՛նք:

Մեր ճամբուն վրայ տեսանք՝
Չօպանենց մեծ շունը, Ֆինօն, որ կանո՛ւխ պառ-
կեր էր տէրոջը փուռին քիւնքը. անուշ քուն մըն էր
մտեր, ու քունին մէջէն կը խնդար, վստահ որ՝ Կա-
ղանդի առտուան նուէրները առատ կ'ըլլան իր չար
բերնին համար:

Էֆէ Սուրէնենց գէշ կատուն, որուն կռնակը բարկ
կրակէն քիչ մը խանձած է ու դեղնոտած՝ խնձորի
թափած տերեւի պէս, դեռ չէր պառկած սիրական Նու-
նիկին ծոցը, ու կը թուէր որ միտքը կը չարչարէր
ընտրելու համար իր սիրած նուէրը, որուն համար
աղօթքի մտնէր պիտի: Իր ութը ձագերը, բոլո՛րն ալ,
կը քնանային Աւետիս Պապային կարմիր ու լա՛յն գօ-
տիկին մէջ: Միայն իններորդը, ան որ իր կռնակին վրայ
հինգ բծանիշ ունի թուրթի պէս, Ֆէսին մէջ մտեր,

Ուրուկ Մաման պէտքարանի ճամբուն ճրագը մա-
պլորուեր էր:

րեց երեք Փ'ուխով և եօթն անգամ մղրտալով:

*

**

Ուր ճերմակ տնակներ կային, քառակուսի դամ-
բարաններու պէս, դմբէթաւոր ծառեր կային, գատ-
գատ, թիթեռնիկներու խիտ պարի մը պէս, անհամար
թափանցիկ վրաններ կային, տակը լուսիկ աղջիկներ՝
լուսարգելով մեծ դամբարներու պէս, կարմի՛ր կար-
մի՛ր ծաղիկներ, կ'ըսես՝ բարկ ու շող կրակ են ցաներ,

Իսկ, անդին, խաթուն հաւը, նորէն սճնուած, կրիճի մը եղերքը թառեր անուշ անուշ կը դարգճէր: Կրակի պէս փետուրները կը պսպղային:

Յանկարծ մենծ հայրս տեսայ: Կարօտի կրակ մը իջաւ վրաս: Նուէր չունէր, ու տխուր էր ան, պէմուրա՛տ մենծ հայրս: Սակայն ինչո՞ւ չի կանչեր դեռ զիս, չկանչէ՞ պիտի զիս... տակաւի՞ն... տակաւի՞ն... զի՞ս...:— Պապա՛...

— Մի՛ հեծկլտար, լռէ՛, սաստեց ընկերս:

— Անիրաւ մարդ, պատասխանեցի պոռալով և արցունքս սրբելով:

— Ես եմ Կաղանդը, որուն կ'աղօթէիր գիշերը: Ու խաղաղութիւնը, զոր դուն կը հայցէիր, այն վիճակն է, ուր կ'ապրին մարդիկ, անտրտունջ ու առանց ցանկութեան, անդիմադրական և հլու:

— Ո՛չ, ո՛չ, մի խօսիր այդպէս: Տո՛ւր ինծի մանկունակ օրերս, տո՛ւր ինծի, ո՛վ Կաղանդ, իմ շարութիւններս, հոգիս՝ երեւակայութեամբ առ լցուն, սիրտս՝ ջերմութեամբ թրթռուն, տո՛ւր ինծի անհանդարտ տարիքս, որ տրանջամ ու բողոքե՛մ, որ չհաննի՛մ ու ցանկա՛մ, որ ուզե՛մ ու խլե՛մ, տո՛ւր ինծի, ո՛վ Կաղանդ, մանկութեանս կարողութիւնն ու շարութիւնները տո՛ւր...
**

Կաղանդը չէ՞ր լսած արդեօք. սենեակիս մէջ կը պոռայի: Մայրս կ'ըսէր ինծի.

— Այս տարի ալ Կաղանդը նուէրդ չպիտի տայ, որովհետեւ միշտ խռովահար ես, գիշեր ցերեկ:

Սերորենց աքաղաղը և Պաճանին տղան, մէկ բերան, փողոցէն կը պոռային: Կաղանդի առտուն կը լուսնար, արդէն:

Գ.

Ձէ՛, ալ նուէր չեմ ուզեր:

Ինչու որ ես մեծ եմ հիմա: Ու բոլոր նուէրներդ ալ տեսեր եմ, Կաղանդ:

**

Առաջին աղօթքս ըրեր եմ քեզի, նուէրներուդ ցանկութեամբ, իմ գիւղիս դպրոցին մէջ, երբ դեռ սլոտիկ էի: Ու, տակաւի՛ն, կը յիշեմ թէ ի՛նչ խնդրեցի, ի՛նչպէս խնդրեցի. բառերը, ահա, կը պտըտին լեզուիս վրայ:

Իմ Երազիս մէջ, հրեշտակներ փոքրիկ Հարցուցիմ ինծի. «Կ'ուզե՞ս խաղալիկ»: Լեգո՛ւ մ'ուզեցի, շատ պե՛րն բառերով, Որ յայտնեմ ձեզի իմ սէքս ու գորով:

Կաղանդի գիշեր էր: Բեմին վրայ, նոճիի, ձիթենիի, տալապի և փշոտ խոզկաղինի ճիւղերուն մէջէն, որոնք թրջուած էին լոյսերուն արցունքով, դուն եկա՛ր, դո՛ւն, ո՛վ Կաղանդ, ամանորի առաջին ու ճերմա՛կ հրեշտակ, և սուիր ինծի այդ նուէրը:

**

Յաջորդ տարին, ձանձրացած, ես՝ յաւիտենակա՛ն ցանկացող, նոր աղօթք մը ըրի քեզի:

Մեր գիւղին եկեղեցիին մէջ, թմրեցնող խունկերու բուրումներէն հիւանդացած հոգիս՝ հիւսեր էր նոր երազ մը:

Ամանորի ժամերգութիւնը կը կատարուէր դեռ օրը չլուսցած: Եկեղեցին հնոցի պէս էր: Կրակէ մատներու

նման բոցերը կ'երկնային ջահերուն վրայ: Անթիւ պրիսմակներու մէջէն լոյսը կը կտարտուէր, և ջահը, դռնաւոր մեղուախումբի մը պէս, կը կախուէր միջոցին մէջ: Պղտիկ բոցավառ ամպ մըն էր ան: Պատերուն վրայ շուքը կը սահէր ու կը խաղար մեղաւոր աղջկան մը մագերուն նման: Աղօթող դիւղացիները օձացաւէ վարակուած հիւանդներու պէս էին: Խորանին առջեւ, վարդապետները գոմէշի նման կ'որոճային ու կը շարժուէին: Տիրացուները, կ'ըսես՝ գսպանակաւոր խամահիկներ, անդադար կը պոռային: Զիւնը ճերմակ ընքուիներ կը շինէր պատուհանին աչքերուն: Հովը դուրսէն ներս կը վազէր, մոմավաճառին սրունքներուն մէջ կը մտնէր ու կը խածնէր, յետոյ կ'երթար մոմերուն բոցերը ծռելու և շուքերը արթնցնելու:

Իմ մարմինս կրակներու մէջ կ'ըլլար այդ ժամուն: Եւ Ամանորի այդ առտուն, ըսի քեզի, ո՛վ Կաղանդ, նոր ցանկութիւնն իմ սրտիս:

— Բանաստեղծ ըլլամ:

Ու դուն նուէր ըրիր ինձի այդ պատանին: Եւ ես բանաստեղծութիւններ գրեցի գիւղիս լուսիկ ջուրերուն, անտառի գինովցնող ծաղիկներուն, գինիի պէս քաղցր մեր արշալոյսներուն վրայ:

**

Չանճրացայ, շուտով, բանաստեղծէն ալ: Մնտուկ գրի այդ նուէրդ և գացի քաղաք: Չար հետաքրքրութիւն մը բռներ էր հոգիէս: Իմանալ մարդոց թաքուն կեանքը, աչքերս մխրճել անոնց դանկոսկրէն ներս ու սրտին մէջ: Գաղտնօրէն քակել անոնց հազուստները, գիտելու համար մերկութիւնը, երբ անոնք պիտի կարծէին թէ պաշտպանուած ու ծածկուած են աչքերէ: Մի-

ծաղի՛ր, ո՛ր ծիծաղիլ միամտութեանը վրայ բոլոր աղաւնակերպ այդ գիշակերներուն: Ի՞նչ քաղցր է դիտել, մութ սենեակէ մը, լոյսի առուակի մը մէջ բռնուած մարդիկը. դուն կը տեսնես դանոնք և անոնք չեն տեսներ քեզ: Ո՞վ է ունեցեր այս հաճոյքը: Ես մթութեամբ հազուեցայ, և աչքերուս մոմերով նայեցայ մարդոց: Ես տէրվելին մորթն առի, և հեզնանքով գիմադրեցի մարդկային թշնամութեանց:

Ես եղայ վարդապետ փիլիսոփայութեան և ախտաբանութեան: Դո՛ւն նուիրեցիր ինձի, ո՛վ Կաղանդ, այդ պատմուճանն ալ վարդասղետի: Ու ես տեսայ մարդոց ա՛ղտը:

**

Այսօր, երբ կուգաս, ո՛վ Կաղանդ, գիտցիր որ նոր ցանկութիւն մը չունիմ այլեւս: Մե՛ծ սկեպտիկ մըն եմ հիմա: Ոչ աղօթք կ'ուզեմ ընել քեզի, ոչ ալ տրամադիր եմ նուէր ընդունելու: Պղտիկներո՛ւն տուր, և դուն հրճուէ՛ տեսնելով միամիտ ու նորահաս լաճերուն հաւատքին բոցերը:

**

Փափա՛ք մը ունիմ, սակայն, եթէ կը հարցնես: Կատարէ՛ր դայն, եթէ հաճոյք է քեզի:

Տա՛ր դիս իմ գիւղս, գէթ մէ՛կ վայրկեան, Կաղանդի այս առաւօտուն: Ա՛խ, կ'ուզեմ վայրկեան մը տեսնել կեանքը գիւղիս:

**

... Կը տեսնե՞ս, մեր գի՛ւղը. անունը անուշ, ինքը՝ քաղցրայուշ: Ի՛մ գիւղս, ինչպէս մատներս են իմս: Կլորի՛կ կըմխնարներով, կը ծխա՛յ կրակը ձգուած

խունկի կտորներու պէս: Այժմ ձիւն է հազեր: Իմ տունս հարաւի ճամբաներուն վրայ է: Բայց տե՛ս, ժամուն դմբէթը, ճերմակ, ստինքի մը ձեւով: Նօսր արեւ մը կը խտխտայ: Գիրուկ են ծառերը և բամպակներու մէջ են փաթթուեր: Մեր տանը առջեւ, Հիլոսենց խոշոր թղենին հարսնցուի պէս աղուոր է, ճերմակ թեւերը բացեր՝ կ'ըսես պիտի թռչի: Լոռիթի՛ն: Երգ մը վերի թաղէն: Անո՛ւշ է երգը ձիւնին վրայ, որովհետեւ աւելի յստակ ու վճիտ կը դառնայ ձայնը: Երբ երգողը շունչ կ'առնէ, ծառերը կտոր մը ձիւն կը թափեն վար, սարփինան արցունք մը կը կախէ, հեռաւոր ձորէն կեռնեխ մը մսկոտ ճիչ մը կ'արձակէ, և դուն կը կարծես թէ այս ամէնը երգին մաս կը կազմեն:

Ձա՛յն տուր, ո՛վ գիւղակ, ինչո՞ւ տրտում ես, Լուռ ու մուկ նստած, երկա՛ր սգում ես:

Բարակ արեւը թիթեռնիկ կը ծնի ձիւնին վրայ:
Հիլոսենց թղենին կը սարսուռայ ու մատները կը թօթվէ:
 Ելլե՛մ իմ տանս հարաւի պատուհանը ու ներս նայիմ:

Սատուտիկ կապերտներուն վրայ կըսկարանին բոցն է ճառագայթեր: Անուշաչուի կատուս այդ բոցին առուակին մէջն է պառկեր: Կրակարանը կը խնդա՛յ ինծի: Մինչդեռ կը մսի՛մ ես պատուհանին առջեւ, դուրսը: Որքա՛ն յուզուած եմ: Կը լսե՛մ հօրս ու մօրս խօսակցութիւնը, բայց չեմ կրնար տեսնել դանոնք: Օ՛, կարօտը կ'այրէ՛ գիս:

Կաղա՛նդ, Կաղա՛նդ, ձգէ՛ գիս, այսպէս, պատուհանիս առջեւ, ձիւնին վրայ պառկած, աչքերս տունէն ներս: Ի՛նչ փոյթ, թող տանիքը արտասուէ վրաս, թող ձիւնը սառեցնէ քիթս, թող հովը թթու քսէ ականջներուս: Կը բաւէ՛ որ նայիմ ներս, կը բաւէ որ

կատուս ինծի նայի, կը բաւէ որ լսեմ իմ ծնողքիս ձայները: Ձե՛մ ուզեր ոչ մէկուն նուէրը, չե՛մ ուզեր տխրոսներն ու փառքերը: Հիմա յոգնած եմ, հիմա տկա՛ր եմ, հիմա հիւա՛նդ եմ: Կ'ուզեմ դառնալ մանկութեա՛նս: Հին օրերո՛ւ ջերմութեան: Կ'ուզեմ բուժուիլ գիւղական խաղաղութեան հրաշքովը: Գիւղը կը բուժէ գիս: Թո՛ղ որ մնամ, թո՛ղ որ մնամ հոս, տխո՛ւր ու երջանիկ, երջանի՛կ ու տխուր...:

ԳԻՒՂԻՍ ՍՈՒԳԸ

Եթէ մոռացայց զքեզ,
Երուսաղէմ, մոռացել զիս աջ
իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս
իմ՝ թէ ոչ յիշեսցից զքեզ, թէ ոչ
նախ նուազեսցից զքեզ, Երուսա-
ղէմ, սկիզբն ուրախութեան
իմոյ:

ՍՍՂՄՈՍ, ԳԼ. ԾԼԶ, 5

Ապրիլ ամսուն իմ զիւղս ալ մեռաւ:

Ու հիմա զիւղ չունիմ ես:

Ինչեր եմ օտար գետերու ափը, ուռենիներու
վրայ կախեր եմ ջնարս, և կուլամ՝ միտքս բերելով իմ
զիւղս:

**

Գի՛ւղ կ'երթամ:

Իմ զիւղս հինայ է քսուեր և Բարձունք լերան
կողքին թիթեռնիկ կը թռցնէ: Ժամուն մեծ գմբէթը
չուրջպար բռնած աղջիկներու կը նմանի: Խաղ կանչե-
լով՝ ձորերը կ'իջնեն բարձունքէն և ալիւրոտ ճամբա-
ներուն վրայ ապակի կը կոտրեն: Այգիներուն մօտ
կայներ են զիւղին կլորցող աղջիկները, որ դառնուկի
պէս բրդոտ են ու կակուղ: Կապոյտ ծուխեր, զիւղին
տուններուն վրայ, թեւ կ'երկարեն, իրարու կը պլլուին
ու խաղի հանդուցներ կը շինեն:

Գիւղէն դուրս ելլող ճամբաներուն բերանը, իմ
տունս ինձի կը սպասէ:

**

Իմ տանս տանիքը կրակի փոշիով ծածկուած է և
իմ տանս բոլորտիքը որթատունկը կանանչ է սլատեր:
Հողը կը հեւայ և տանս դուրսի պատերուն վրայ կա-
նանչ թիթեռնիկներ կը բացխփեն իրենց թեւերը:

Բաց է պատուհանս, որ կը նայի Գէլ-Թէիէի
ձիւներուն:

Տակը, ցանկապատին վրայ, թառած է Պատառիկ
Մամային արխնի գոյն աքլորը, որ խելօք է ու չի
չարժիր: Կարմիր շաքարէ շինուած սուտ-աքլորի կը
նմանի:

— Քը՛չ, ըսի, մօտէն անցնելով:

Թեւերը լարեց հովանոցի պէս և ժիր ձայնով
երեք վանկ կապեց իրարու: Չայնը դարձուեցաւ տու-
ներու պատերուն և հազար կտոր եղաւ:

Յանկարծ պատուհանիս մէջէն երեւցաւ պատանի
մը, կատուս՝ իր կուրծքին:

— Ե՛ս... Սատու՛ճ իմ, ես ի՛նքս էի:

Իմ պատանեկութիւնս պատուհանը նստեր՝ ինձի
կը նայէր:

Արցունք եկաւ աչքիս, ուժս հատաւ և ցանկապա-
տին կռթնեցայ՝ անո՛ւնս կանչելով:

— Ինչո՞ւ կուլաս, ըսաւ իմ պատանեկութիւնս,
պատուհանէն դուրս կախուելով:

— Կուլամ որովհետեւ կարօտցա՛ճ եմ քեզ, կա-
րօտցա՛ճ եմ տունս: Գիտե՞ս, հիմա զիւղ ալ չունիմ,
տուն ալ չունիմ: Չե՞ս տեսներ, հեռաւոր ճամբաներու
փոշին եմ հագած, ու պեխերս ալիւրը թաթխուած են
կարծես: Կը թափառի՛մ, աղուո՛րս, կը թափառի՛մ.
Ոչ ոք կ'ուղէ տեղ մը տալ մեզի: Աճեցանք, մեծցանք
ու դեռ հանդիստ թառ մը չունինք:

— Ա՛խ, ես շա՛տ սպասեցի ձեզի: Ես մնացի տունը, պահուըտեցայ տունին գաղտնի տեղերը: Գե-
րեզմանի պէս լուռ էր մեր գիւղը: Սակայն ես մնացի՝
ամէն բան պահելու համար իր վիճակին մէջ: Որպէսզի
կարօտն ունենաք չին յիշատակներուն ու դառնաք ես:

— Պղտի՛կս, չես գիտեր թէ ինչքա՛ն տառապա-
գին եղաւ մեր կարօտը: Օտար ճամբաներու վրայ մենք
կանանչ խոտերը հոտուըտացինք՝ յիշելու համար մեր
դաշտերը, անտառները կ'երթայինք և գիւղի երգեր կը
կանչէինք՝ միտք բերելու համար մեր գիւղի աղջիկ-
ներուն ձայները:

— Ես ալ կը տառապէի, որովհետեւ չին մեռել-
ներուն գովքն ըսող չմնաց, ու գերեզմանը այլեւս չէր
ծխար:

— Նոր մեռելներուն բախտն աւելի գէշ: Մեծ
մայրիկը թաղեցինք Հոռոմաց երկիրը, մօրքուրիկը՝
Պուղարին երկիրը: Կորեկի պէս ցանեցին մեզ հովե-
րուն, ա՛յ անուշ իմ օրս:

— Ուժաթափ ես ու միտք հատեր է:

— Ի՛մ մատաղ, ո՞վ է ապրեր այն օրերը, որ
մենք ապրեցանք: Ո՞վ է գիմացեր մեր ցաւին, երբ զլա-
ցան գիւղի մը տան ծխանէն բարձրացող ծուխին նա-
յելու հաճոյքն անդամ, թէեւ մեր հազուատները ծուխի
պէս բարակ ու թափանցիկ դարձան. բայց ցրտահա-
րութենէն չէ՛ր որ ուժաթափ եղանք, այլ որովհետեւ
կը պապակէինք գիւղին քաղցրութիւններուն համար:
Հոգ չէ՛, մէյ մը որ մեր այգին երթամ և եղեմական
սալորները ուտեմ, շուտով կը կէնճընամ: Ի՛նչ, վեր-
ջապէս, ո՞վ իմ պատանեկութիւնս, բա՛ց դուռը, ներս
մտնեմ:

Հագար ափսո՛ս, երկինք, գետին, ծո՛վ ափսո՛ս:
Իմ պատանեկութիւնս շարժեց գլուխը, արցունք մը

գլորեցաւ աչքերէն ու ինկաւ վրաս: Յետոյ ինք ներս
քաշուեցաւ և ա՛լ չերեցաւ:

Ես տակաւին գիւղ չունիմ, իր սուգը ունիմ:

Գիւղ չունիմ, գիւղս մեռաւ, իր սուգն ունիմ:
Թափառական՝ ժուռ կուգամ մեր գիւղացիներուն
մէջ:

Քնարիս վրայ կ'եղանակեմ անէծքի երգեր:
Ու Կոկան մաման ինծի կը նեղանայ.

— Մե՛ղօք է, տղաս, վրէժինդիր ըլլալ և անէծք
կարդալ:

— Չորնա՛յ մեղքդ:

— Քրիստոս ըսաւ:

— Կոնծի՛ Քրիստոսդ:

— Եղբայրութիւն...

— Գրո՛ղը տանի եղբայրութիւնը: Ես գիւղս
կ'ուզեմ, ես ամեհի դարձած եմ այլեւս:

— Դուստր Բաբելացուց թշուառական, երանի՛ որ
հատոյց զհատուցումն քո զոր դու մեզ հատուցեր:
Երանի՛ որ կալաւ դմանկունս քո և եհար զքարի
(ՍԱՂՄՈՍ, Գլ. ՉԼԶ, 8):

ՋԱՆ ԳԻՒԼՈՒՄ, ՋԱՆ...

(ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ)

Այն ատենները, հազար հազար տարիներ առաջ, սէրը սարսուռի ողբերգութեան մը պէս էր Հայոց բովանդակ աշխարհին մէջ:

Հայ պատանիները, թիթեռնիկներու նման, կ'այրէին սիրոյ բոցէն ու հող կը մտնէին՝ դեռ կեանքը չվայելած:

Ամբողջ երկիրը կը հեծկլտար ու կը կոծկոծէր: Իրիկունները, երբ պլպուլն իր ձայնը կը ձգէր պարտէզներուն մէջ, միջոցը կը դողար ցորենի անձրեւահար արտի մը պէս: Եւ վարդերը արցունք կը թափէին: Աղբիւրները գիւղերուն մէջէն կ'անցնէին թաղման փողերու պէս տխրաձայն: Պառանները, պատուհանը նստած, կուլային: Եւ գերեզմաններուն մէջ հողաթումբերը կը շատնային քով քովի, ամէն օր:

Հայոց մատղաշ պատանիները, բարկ արեւէն թօշնած ծաղիկներու նման, կը ցամքէին, կը չորնային, կը դօսանային և, գիշեր մը, հրեշտակը կուղար ու կը դարնէր զանոնք:

Ասպուզանի մորթը մեղրի դոյն ունէր, և աչքերուն բիբերը մանիշակի պէս էին:

Տասնեւեօթը տարեկան էր այն ատեն:

Հովիւ էր և դառ կ'արածէր գիւղին արտեւա-

նունքներուն վրայ: Ախոս՝ս, սէրը մտեր էր անո՛ր ալ երակներէն ներս:

Եւ Ասպուզան կը նստէր գիւղին վերեւ, ընկուզենիներուն տակ, կը նայէր գիւղին, որ կարմիր ցօղի մը պէս ինկեր էր հովիտին մէջ, կանանչ արտերուն վրայ: Այնտեղ էր իր սիրականը, — գեղանի աղջնակ մը, որուն կապոյտ շրջագեւատին մէջէն միտը կը փախչէր ձիթենի բռնկած ճիւղի մը բոցին պէս:

Ասպուզան կը նայէր գիւղին ու կ'երագէ՛ր, կ'երագէ՛ր, երկա՛ր կ'երագէ՛ր:

Իրիկունը, երբ երկինք այնքան կը ցածնար որ իրեն կը դաչէր կարծես, սիրահար պատանին կը քաշուէր վր ողորահիւս խրճիթը, որ շինուած էր մակաղիքին կեղրոնը, ծառի մը դադաթը: Իր թառին վրայ կծկտած թռչունի մը պէս, աչքերը կը կախէր վար, հեռուն, գիւղակին վրայ, պահ մը կը մտածէր, յետոյ սրինգը շրթներուն կը տանէր ու կուլա՛ր սրինգին հետ:

Չայնը այնքա՛ն անուշ և այնքա՛ն տխուր էր, որ կարծես գիւղը վարէն կը պատասխանէր հովիւին: Ամբողջ հովիտը կը լեցուէր սիրոյ ողբասացութեամբ: Յանկարծ կը պայթէին աստղերը, վարդաստանի մը պէս կը ծաղկէր երկինքը, և աստուածուհի մը նման՝ լուսնկան կուզար կը նստէր բլուրին վրայ, ձեռքը կրակին կը դնէր ու մտիկ կ'ընէր:

Ո՞վ էր ան, որ չպիտի լար այդ պահուն:

Երկինք գետին կ'արտասուէին անձայն ու լռիկ:

Մշուշը կը պատէր գիւղ ու բլուր, երկինքը քօղ կը փոխէր շարունակ, գիշերը կը խորունկնար տխրութեամբ և գեղեցիկութեամբ, — այն ատեն հովը, և առուն, և պլպուլը կը փղձկէին ու կը նուաղէին:

Առտուն, երբ հորիզոնը, քթանի արտի դոյն առած, կը փախէր ու կը հեռանար, Ասպուզան սրի՛նք

կը նուազէր տակաւին, ծծումբի պէս դեղնած, աչքերը արցունքէն այրած, խոտի պէս դողահար:

Ամէն գիշեր այսպէ՛ս հիւծեցաւ ու հալեցաւ ան: Ու գիշեր մըն ալ, երբ սրինգը շրթներուն՝ գիւղ իջաւ, և սիրականին տանը դիմաց, մեծ թղենիին տակ իր սէրը կ'երգէր, անհանդուրժելի վիշտ մը կը թրթռար արդէն իր սոյլերուն մէջ: Փշաքաղ կ'ըլլային գիւղացիներուն միսերը, և պառաւները պատուհան կ'ելլէին ու կուբային: Գիտէին, որ երկնային ցաւ մըն է այդ, և դարմանը անկարելի:

Ասպուզան, այդ գիշեր, այնքա՛ն ուժասպառ և այնքա՛ն յոգնած էր, այնքա՛ն կը սրսփար և այնքա՛ն կը տառապէր, որ հրեշտակը շեշտակի իջաւ երկինքէն, գարկաւ և սպաննեց:

Պատանին ճիչ մը արձակեց ու դետին ինկաւ: Վերաւոր կաքաւի մը նման՝ դալարուեցաւ պահ մը, մատները նորէն երկարեց սրինգին, շրթները անգամ մըն ալ սեղմեց պարապին մէջ՝ նարկիսի պէս, ուժպի՛ մը պէս, համբուրելո՛ւ պէս, յետոյ երկու արցունք դլորեցան աչքերէն: Ու մեռաւ:

Թղենին թօթվեց իր ծանր ճիւղերը և արցունքներ ինկան դետին: Պատուհանները գոցուեցան ուժգին և լացի ձայները խեղդուեցան ներսը:

Այդ պահուն, ճի՛շդ այդ պահուն՝ երբ դեռ հրեշտակը չէր հեռացած թղենիին շուքէն, քաղաքէն հասաւ եկաւ գիւղին քաջը, քաջն Չարեւանդ: Ձին կը խաղար լուսնի լոյսին մէջ: Հայ քաջը տեսեր էր թէ ի՛նչպէս հրեշտակը գարկաւ սպաննեց պատանին ու կը հեռանար հրեղէն սուրը ձեռքին:

— Կեցի՛ր, պոռաց Չարեւանդ:

Հրեշտակը գարմացաւ ու շփոթեցաւ:

— Կեցի՛ր, քաջերուն վայել չէ հեռանալը: Սուր

կը կրես, սուր ունիմ ես ալ: Սպաննուած պատանիին արեան ձայնը կը լռէ միա՛յն ու միայն սուրի կռիւով: Կռուի՛նք:

Ու Չարեւանդի ձին ոստումով մը նետուեցաւ հրեշտակին առջեւ: Հայ քաջին սուրը կը շողար, ձեւացնելով դեղեցիկ շատրուան մը, — ձին ետեւի ոտքերուն վրայ կանգնած, Չարեւանդ անվեհեր ռազմիկի մը նման սուրը բարձրացուցած: Ձիուն ոտքերուն տակ, պատանիին արիւնը դետինը թափուած վարդի փուռջեւու կը նմանէր:

— Ինձի այդպէս էր հրամայուած, — պատասխանեց հրեշտակը վախն ի վախ, — որովհետեւ սիրոյ ցաւն ունէր ան և արդէն ուժասպառ էր եղեր:

— Սէ՛րն էր մեղքը այս պատանիին, որ սուրով սպաննեցիր: Բայց անգթութիւն չէ՞ սուրով սպաննելը: Մենք, Հայոց քաջերը, չե՛նք ներեր անգթութեան: Ու եթէ սէրը եւս անգթութիւն է, այն ատեն Աստուծոյ վայել չէ այդ նուէրը...

Հրեշտակը անձրկեր էր ու չէր կրնար փախիլ: Դաջը կը սպառնար իր սուրովը և ճարտուկ ձին՝ ոստումով:

Այդ ատեն էր, որ թղենին դողաց, տերեւները շարժեցան ու սօսափեցին: Հասուն թուղ մը խոշորցա՛ւ, խոշորցա՛ւ, ճեղքուեցաւ, բացուեցաւ և յանկարծ մարդկային անո՛ւշ դէմքի մը փոխակերպուեցաւ: Ամբողջ թղենին բոցավառ ամպի պէս կը շողար: Տերեւները կը նմանէին սպիտակ ափերու, գորս բացեր էին հազարաւոր ծնրաղիւր հրեշտակներ, կարծես սկուտեղի մը նման վե՛ր բարձրացնելու համար աղուոր գլուխը, որ կազմուեցաւ յանկարծ, — մաղերը կապոյտ, ինչպէս ամրան երկինքը կ'ըլլայ, ճակատը շրջուցիչ, ինչպէս փայլակը կ'ըլլայ, աչքերը փարփառ, ինչպէս լուսաստ-

դը կ'ըլլայ, շրթները կրակի դոյն և մօրուքը մարդա-
րիտով հիւսուած:

Աստուած էր, որ օգնութեան կուղար հրեշտակին.

— Զարեաւ'նդ, քաջդ Հայկազանց, ըսէ՛, ի՞նչ
կ'ուզես:

Զայրացկոտ ձին, երբ լսեց երկնային այս ձայնը,
վար դրաւ ոտքերը և դլուխը կախեց: Զարեաւ'նդ սուրն
իւր տեղը դրաւ, աչքերը խոնարհեց: Ու դիտելով պա-
տանիին փրփրուն արիւնը, ըսաւ.

— Տէ՛ր, քաջի իմ սիրտս չի՛ դիմանար, երբ
պատանի մը կը սպաննուի սուրով և այսպիսի անգթու-
թեամբ: Եթէ, տէ՛ր, կոյսը նուիրեցիր պատանիին առ
ի բերկրութիւն անոնց սիրտերուն, ինչո՞ւ խառնել
այսքան դառնութիւն անոնց սէրերուն: Տե՛ս, Հայոց
աշխարհի պատանիները կը հիւժին ու կը հալին, և
երկիրը ծածկուած է տխրութեան ամպով մը:

Աստուած մտածեց իր կարդադրութեան վրայ, և
համոզուեցաւ որ մեծ անգթութիւն մը կատարուած էր:

— Զարեաւ'նդ, և թող այսուհետեւ ձեր երկրին
պատանիները վայելեն սէրը այնպէս ազատ և երջանիկ,
ինչպէս կը փափաքին:

Այնուհետեւ սէրը անուշ հովուերգութեան մը պէս
էր Հայոց բովանդակ աշխարհին մէջ:

Փոխուեցա՛ն երգերը:

Ձուրերը ջրվիժելով կ'իջնէին լեռանց լանջերէն ու
կը կանչէին.

Ձա՛ն, ջա՛ն, գիւր՛ւմ ջան...

Աղբիւրները կը կարկաչէին ու կը քրքջային.

Կանչի՛ր, կանչերուդ մեռնե՛մ...

Ձա՛ն, ջա՛ն, ջա՛ն գիւրւմ...:

Սոխակը պարտէզներուն մէջ դովքը կ'երգէր վար-
դերուն.

Իմ եարը քանց քեզ չիչակ,
Ձա՛ն, ջա՛ն, ծաղի՛կ ջան...:

Սիւիան լեռը քղանցքը կը վերցնէր, տոտիկ կը
փոխէր, կ'ոստոստէր ու կը պարէր վանայ ծովուն
եզերքը.

Կանաչ տեղը բաղում եմ,
Պարի միջին խաղում եմ,
Կախալի պէս սորալով՝
Տըղաներին դաղում եմ:

Պինկէօլը ոսկի կը նետէր դաշտերուն և դինովի
պէս կը կանչէր.

Ձա՛ն, ջա՛ն, գիւր՛ւմ ջան...

Արարատը իր հարսին վրայ կը ծռէր ու կը
մրմնջէր.

Ձեր բաղի դուռը բաց ա,
Ոտներըս շաղով քաց ա,
Ինձանից հեռացել ես,
Աչքերըս լի՛ք լաց ա:

Հայոց աղջիկները կը հրճուէին իրենց սէրէն ու
կ'երգէին.

Ես աղջիկ եմ, ա՛լ կ'ուզեմ,
Բողջաս ծալէ՛ծալ կ'ուզեմ,
Երբոր եարիս տուն երբամ,
Գօտիկս քիրմա շալ կ'ուզեմ:

Ու պատանիները, խնդապարար, կը փոխերգէին.

Կանգնել ես բարձր հովին,
Փրփրոտում դօշէդ մովին,

Էրնէկ ծոցըդ քննողին,
Շամամ ծըծերդ բռնողին:

Ու աղջիկը կը պատասխանէր.

Ես լիաստղ եմ երկնքին,
Շողքըս տըւած գետինքին,
Դեռ շա՛տ կարօտ ման կը գամ
Էս իմ չալ աչք, կեռ ունքին:

Սիրահար պատանին կ'ողոթէր.

Պունո՛ւր աղջիկ, լաւ աղջիկ,
Դու ինձ համար ցաւ աղջիկ,
Ես քեզ քա՛հուն սիրեցի,
Էս ո՞վ արաւ, չա՛ւ աղջիկ:

Պչրոտ աղջիկը կը ծիծաղէր.

Չափարի տակ չափ կը տամ,
Քիսով ռսկի քափ կը տամ,
Էս իմ պգտիկ տեղովս
Քեզ պէս շատին լսար կը տամ:

Պատանին.

Քա՛հուլիդ կալին մեռնիմ,
Երեսիդ լսալին մեռնիմ...

Աղջիկը.

Նախքատափին խընկի ծառ,
Խնձոր գըցեմ, արի՛ տար,
Ուրբաք-շարաք քեզ մօհլաք,
Լոյս կիրակի առ գիս տար:

Պատանին.

Թուշդ դէսն արա՛ պաչեմ,
Վազի՛, գնա մօրըդ ասա:

Գիւր՛ւմ, գիւր՛ւմ, գի՛ւլ չիչակ,
Ես-դու մտնեմք մի դօշակ,

Ու երկուքը մէկ բերան.

Մինչեւ լոյսը քըչփըչանք,
Լոյսից յետոյ կըչկըչանք:

Եւ այսպէս ամէն օր հայ գիւղերուն մէջ կը լսուէր սիրոյ երգը դէմէ դէմ.

— Զա՛ն, ջա՛ն, գիւր՛ւմ ջան...
— Զա՛ն, ջա՛ն, ջա՛ն գիւր՛ւմ...

Այդ օրերէն ի վեր է, որ Հայոց աշխարհին մէջ սէրը ամէնէն քաղցր հովուերգութիւնն է, և մեր աղջիկներն ու պատանիները՝ ամէնէն երջանիկ սիրահարները:

Այսպէս է, որ Հայաստան մեր աշխարհը դրախտըն է սիրոյ և գեղեցկութեան երգին:

ՄՈՐԹ ԿԸ ԳՆԵՄ

Կանգ առի քաղաքին հիւսիսային կողմը .

— Մո՛րթ-կը-գը-նե՛մ . . .

Եւ, ուր տափարակ պողոտան ափի մը նման յանկարծ կը բացուի և եօթը փողոցներով կը պատուի, ընտրեցի վեցերորդ փողոցը աջիս վրայ, որ մինչեւ քաղաքին պարիսպները կ'երկարի, ինչպէս կը բացատրէ ինծի անկիւնի ծաղկավաճառ պառօաւը:

Եւ մտայ, դարձեալ, փողոցին առաջին մուշտակի վաճառատունը:

Ի՛նչ տարօրինակ ճաշակներ ունին մարդիկ: Ներսը վարդի, յամպարի և կոնկենիի անորոշ բուրուժ մը, որ չի հանգչիր երբեք ու կը ծփայ, ինչպէս կ'ըլլան օրերո՛վ գիւղերու փուռերը, որոնց դաղջ փորին մէջ ամէնէն քաղցր ու դմուտն պտուղները կը խորովուին: Եւ որքան ներշնչուն են, արարողութեան մը նման, սա շարժումները աղջիկներուն ու վաճառորդուհիներուն, որոնց խաղաղ բազմութեան, վերէն, ապակեդարաներէն կը նային, անո՛ւշ անո՛ւշ, յաճախ սպառնադին, սրածուճապատանքները աշխարհի բոլոր անտառներէն որսացուած գեղեցիկ կենդանիներուն:

Մարդ մը — կ'ըսես սահելով — կը գիմաւորէ զիս:

— Նոր (և գեղեցիկ) կենդանիի մուշտակ մը, — կը հարցնեմ:

Սեղանին վրայ, ահա, կը լեցնէ՛, կը լեցնէ՛ . . .

— Ո՞ր կենդանին կը սիրէք: Յովա՞դ, սամո՞յր,

քարա՞յծ . . . : Թերեւս նշանած մը ունիք, կամ պզտիկ բարեկամուհի մը, որուն կ'ուզէք նուիրել ամէնէն գեղեցիկ մուշտակը: Այն ատեն, ձեզի կ'ուզէի ցոյց տալ, նախ, սա սամոյրը, սեւ մուշտակ մը, հրաշալի՛ է, հրաշալի՛ է, հրաշալի՛ է, հալած նաւթի պէս սեւ ու փայլուն, ինչպէս գիշեր մը, որուն վառայ, բարա՛կ, ձիւնն է կը ծփայ, — ահա այժեղջիւրի մուշտակ մը, որ վզին վրայէն կը սահի ջերմ հովի մը նման, և մուշկի բարկ բոյր մը կ'ելլէ . . .

Տարտամ է երեւոյթս . ձեռքերս ետիս կը կապեմ, ինչպէս սովորութիւնս է:

— Յովաղի մուշտա՛կ մը, աղջկան մը մորթին պէս քնքուշ և հաճելի, — ահա արջունը, որքա՛ն շէկ է, ու լա՛յն, ու լա՛յն, արեւէն հասած ցորենի դաշտի դոյնով, — սա՛ մշկերէի մորթ մըն է, որ հայկական գեղին կաւով ծեփուած ազնիւ պաստառի մը կը նմանի . . .

Յանկարծ ձեռքերս կուրծքիս վրայ կը ծալլեմ՝ Նափուլէոնի պէս:

— Լիւբիական մուշտա՛կ մը, առիւծին հրաշալի կոնակն է, անապատի կայծկլտուն աւաղին պէս, որուն մէջ արեւը տակաւին կը շարժէ կարծես իր կենդանի դոյները: Փարսիստանէն վազրի մուշտակ մը, արուեստական ներկ մը տրուած է անոր, որդան կարմի՛ր, թափանցիկ մթութեան մը տակ, այնքա՛ն ճարտարութեամբ, որ կ'ըսես, Որմիզդի դորջ ջուրերուն մէջ հրեղէն շղա՛րջ մը կը ծփայ: Ընծիւղտի մը մուշտա՛կը, բնական ժապաւէններով զարդարուած, — ասիական սկի՛ւռ մը, որ խատուտիկ է, և փայլուն աչքերը կը փոխարինեն սարդիոնի երկու պտուղներ, իւրաքանչիւրը եօթը ցորենի ծանրութեամբ, իսկ ցուկը, թուխ սաթէ շինուած, ծծկան մօր մը պտուկին պէս է: Հազ-

ուազել'ւտ, (կը ժպտի), անտառի կատու մը, դեղնաւուն մորթով, ինչպէս յղկուած սատափը՝ արիւնի բարա'կ երակներով: Սկիւթական աղուէս մը, մրկած հողի գոյնով, ինը պիտակներ շնորհալի տեսք մը կուտան անոր...

— Իսկ սա՞...

— Այծեամ մը Հայաստանէն, դժբախտաբար երեք վէրք ունի...

Յանկարծ կը նայիմ իրեն, հարցուփորձելու երեւոյթով մը. խորշովի խուրձ մը ճակատիս վրայ, ինչպէս փոթփոթած ճակատը Պիզմարքի:

— ... Կապարի գոյն ունի... տխուր ու վախկոտ աչքեր: Կենդանիներն ալ, մարդոց նման, դարմանալի յարմարութիւններ կը փնտռեն: Այծեամը, կ'ըսեն, չի սիրեր Պաղեստինի կլորցած լեռներուն խոնարհութիւնը, սիւրբական անտառներն ու տափաստանները, որոնք ամբան օթէն հրդեհի վախեր կուտան: Անիկա կը բնակի ասիական ներքին բարձրաւանդակներու վրայ, որոնք անկիւնաւոր, սեպաձեւ դիրքեր ունին: Շատ դժուար է որսորդութիւնը: Այսպէ՛ս կ'ըսեն Արեւելքի վաճառականները, այս հազուադէպ ու սուղ մուշտակին համար: Մե՛ղք որ, վէրք ունի: Ընտրեցի՞ք, ո՞րը...

— Մարդու մորթ ունի՞ք...

Մարդը կարծեց որ սխալ լսեց, յետոյ, մեծամիտ փորձառութեամբ մը, ճանչցաւ զիս, անհասկնալի լռութենէս, իբրեւ «գորտերու փիլիսոփայ»՝ ըստ իր դաղտնի բարբառին, ուղեւով արհամարհել: Բայց պըշրանքով որսալու համար զիս, թարմադեղ վաճառորդուհի մը կանչեց:

— Թո՛ւխ տղայ, ըսաւ աղջիկը բոց թափելով, թո՛ւխ տղայ, — օ՛, միշտ երջանիկ են եղած թուխ

տղաքը, — սիրականիդ համար ընտրէ՛ այս երենոսագոյն մուշտակը, որ տասնեւվեց տարեկան աղջկան մը մազերուն չափ խորունկ է և շունչին պէս հաճելի: Սակայն ես կը նախընտրէի, սա դայլին մորթին տեղ, որ դունաթափ մամուռի պէս է, — սիրականդ շատո՞նց է տեսած չես, — մահոն յամոյրը, որուն վրայ, պարահանդէսներու լոյսերուն տակ, կայծեր ու բոցեր պիտի ոստոստեն, — ո՞ր երկիրէն կու դաս, — հրաշալի՛ է, ճերմակ ծոծրակի մը համար, սա քարայծենիէ քրքմադեղ վզնոցը, պորտի մը պէս կախարդական, որ մէկ պիտակ ունի, — երանի՛ քեզի, հարսնոց՝ աղջիկ, — ասոր բարկաճայթ գոյնը կը սպաննէ նախանձը...

Առաջին անգամ ըլլալով, խօսեցայ, այսպէս, երկա՛ր.

— Ես եմ հէքեաթին տղան: Իմ սիրականս հեռաւոր լեռներուն վրայ բուրդէ հիւսուած վրաններու մէջ կը բնակի, և ոչխարի մորթ կը հագնի: Այն հեռաւոր սարերուն վրա՞յ... բարձրութիւնները կ'աղօթեն ամպերուն, ու բլուրները լեղակ կը զգենուն՝ իրիկուան արեւէն: Այնտեղ, հայրս, իր նեղ կապալին մէջ մարմինը թարչամած, ուղեց որ փնտռելու ելլեմ հարսնիքին խաթը, աւանդական մուշտակը սիրականիս համար: Օրհնեա՛լ ըլլայ այն օրը, երբ պիտի գտնեմ այդ մուշտակը, — դժուար յոյս: Ու պիտի ուշանա՞յ հարսնիքը, այնքան ատեն որ չեմ գտած մուշտակը: Վասնզի երազուած մուշտակը հէքեաթին հրաշալի մուշտակն է, և մարդիկ ի գո՛ւր կը քերթեն կենդանիները, ծածկելու համար իրենց մերկութիւնը վայելչօրէն: Ախո՞ո՛ս, անթափանց պահպանակներ կը պատեն մարդոց հոգին: Ու դեռ պէ՛տք է քերծել և իրենց հոգին հաստ կեղեւներէն, քերթել մարմինները՝ կապտող վարչամակներէն, որպէսզի Մուշտակը հանդէի, երա-

նաբեր ջերմութեան մը և բժշկութեան մը նման, անոնց արիւնքները ուտերուն և մարմինին վրայ:

Ու դուրս ելայ ասլահար բաղմութենէն և վաճառատունէն:

Փողոցէն կը պոռար մուրացկան երեւոյթով մարդու մը դէշ ձայնը.

— Marchand d'habits..

Սաչաձեւեցի անոր ճամբան և պոռացի փողոցներն ի վար.

— Մո՛րթ-կը-դը-նե՛մ . . . :

ԼԵՐԱՆ ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ

(ՀԵՒԵԱԹ)

Ձառիթափն ի վար, խուճապի են մատնուած գիւղին տուները, որոնք, ձորին մօտ, կրեաներու նման, կարծես ջուրին կը վազեն: Ու դառիթափն ի վեր, երկինքը կը խոստանայ ցոյց տալ եօթը թաղաւորներու երկիրներն ու հարստութիւնները: Պահ մը հողը, որ կը թաւալի, յողնած՝ կ'երկնայ ու կռնակ կուտայ: Այնտեղ կանանչ ցորենները ջուրերու պէս են, իսկ անտառներուն վրայ, կ'ըսես, մելան են թափեր:

Երկի՛նքը, իւղով, մեղրով և խունկով:

Արեւը ոսկի փուշեր կը բուսցնէ թրջուած մարմանդին մէջ, ուր, ճերմակ ամպի մը նման, կը պտըտին գիւղին դառները:

Ոչխարները, երբեմն, սպիտակ հագուած արեղաներու նման, ծունկի վրայ, յամբարար կը բարձրանան վե՛ր, լե՛ռն ի վեր, մինչեւ որ անդունդն սկսի: Այնտեղ լեռը, ժուտտ պառաւի մը կղակին պէս, կը կախուի անդունդին պարանոցին վրայ: Առտունները գիւղուկ մշուշ մը կը ծածկէ այդ պարանոցը: Սակայն յետմիջօրէին այնքա՛ն յստակ կը տեսնուի անդունդին պարապը, որ, յաճախ, ոչխարները եղերք կուգան հասկնալու համար թէ ջուր կա՞յ վարը: Պահապան շուներն ալ, որոնք ամէն շարժում նմանցնել կ'ուզեն, նոյնպէս եղերք կու գան, վար կը նային և, առանց բան մը հասկնալու, մարդու լրջութեամբ, դունչ կ'ե-

րերցնեն ու ետ կը դառնան: Վարէն, փայլուն թիթեղի պէս՝ բարակ ու ճերմակ ջուր մը կը վազէ: Զուրին եղերքը ծաղիկներու ժապաւէն մը կը պարծենայ իր հազուադիւտ դոյներով: Խճաքարերը կը կամթեն ջուրը, որ կը դողայ: Ժամանակին, ես այնպէս եմ հաւատացեր, թէ անոնք ջրանուշներ են, որ իրենց ստինքին պտուկները կը խաղցնեն, անցորդներուն աչուկ կ'ընեն, մինչեւ որ խենթեցնեն անդունդին եղերքէն վար նայողը, հրաւիրելով ցատկել պարապին մէջ:

Ի՞րաւ ալ, աղջիկ մը ցատկեց այդ անդունդին մէջ, բայց խենթ չէր ան:

Ահա թէ ի՞նչպէս պատահեցաւ:

Ծծումբի դոյն շրջագրեստ մը կը հագնէր. այդ դոյնը, կ'ըսէ գիւղացին, չար նախանձէն կը պահէ աղուտները: Արդարեւ աղուտը էր ան և երինջի պէս ոստոստուն: Հազիւ տասնըվեց տարեկան, կուրծքին վրայ ստինքները բուսեր էին դարձան առաջին սունկերուն նման, դունդ դունդ և ճերմակ: Ծրթները կրակի դոյն ունէին և աչքերուն մէջ սէրը կը պղպղար: Հասունցեր էր արդէն, ինչպէս պտուղ մը:

Գիւղերուն մէջ, երբ աղջիկներուն մէջքը կը լեցուի երիտասարդ ծառերու նման, սէրը դեռ կ'ուշանա՛յ իշխանի մը պէս, որուն կը սպասէ հարսնետոներուն գուարթ տունը: Անսպասելի ժամու մը, յանկարծ ներս կը մտնէ ան: Աղջկան մարմինը կը սարսրոայ, կարծես կը ճարճատի այրող դերանի մը պէս: Քաղաքներուն մէջ հակառակը կը պատահի, դեռ աղջիկներուն մէջքը չլեցուած՝ սիրոյ կիրքը կը մտնէ ներս և վաղաժամ հասունութիւն մը կուտայ անոնց:

Բացառաբար այդպէս էր գիւղացի աղջիկը՝ որ ծծումբի դոյն շրջագրեստ մը կը հագնէր և երինջի պէս ոստոստուն էր: Ո՞վ կը սիրէր, ոչ ոք գիտէր:

Լեռներուն վրայ ոչխար կ'արածէր: Ամբողջ օրը կը գրօսնուր սրինգով կամ գառներու հետ խօսելով: Երբեմն իր դաղտնիքը կը պատմէր սիրական գառնուկի մը, որ քրքում բուրդ մը հագած էր և անուշ նայուածք մը ունէր: Ոմանք կը պնդէին թէ անիկա գառնուկին կը պարծենար իր գեղեցկութեան մասին: Գովքը կը հիւսէր իր աչքերուն, իր շրթներուն, իր ստինքներուն և իր միտին: Յետոյ, կարծես ինքզինքը դիտէր, աչքերը կը խփէր և անօրինակ գեղեցկութեան մը տեսիլքէն գինով՝ կիսովին կը նուաղէր և կը փուռէր կանանչ հողերուն վրայ: Գառնուկը կը լիզէր անոր շառագունած կրակը, յետոյ մէկ ծիծը՝ որ շապիկի ճեղքէն կ'երեւար մաշած կրակի կտորի մը պէս. յետոյ կը հեռանար:

Ժամ մը ետքը ոտքի կ'ելլէր խաչնարած աղջիկը: Սրինգը կը տանէր շրթներուն: Եւ դաշնեղ ու սըլուլուն մեղեդին կը տարածուէր միջոցին մէջ, հոսելով ու հոսելով անընդհատ: Ապահովաբար այդ եղանակն ալ դովքն էր իր աննման գեղեցկութեան:

Ո՛չ, անիկա չէր սիրեր այրերը: Կը պժգար ու միշտ հեռու կ'ապրէր անոնցմէ: Երբ պատանի՛ հովիւները վեր քէնին իրենց հօտը, ինք ոչխարները կը հաւաքէր ու կ'երթար գիւղին ընկուզենիներուն շուքին տակ:

Ու երբեք իր սրբափառ միսերուն չհասաւ այրերուն գրգռիչ ու տաք շունչը:

**

Երկինքը ձիթենիի դոյն ունէր :

Լերան դադաթէն կարելի էր համրել այն կարմիր երակները, զորս արեւն էր դժեր ժամուն դմբէթին վրայ : Այնքա՛ն անթերի էր առտուան յատակութիւնը : Հորիզոնը փախեր հեռացեր էր և երկինքը՝ անհամեմատ խորունկցեր :

Գեղուհին լերան կատարն էր բարձրացեր, առտուն կանո՛ւխ : Եւ հիացումով կը դիտէր լուսաթաթախ այգիները : Օդոստահաւերը թղենիներուն մութ շարքին վրայ պար բռնած՝ օրհներգ կը կարդային : Գիւղին կուզի տուներուն պատուհաններէն արծաթ կը հոսէր : Զաղացքին ետեւ՝ արտե՛ր, արտե՛ր, թաշկինակի պէս քառակուսի և նախշուն : Հեռո՛ւն, ձորը ցոյց կուտար իր ջուրը, որ ժամուն մոմերուն դոյնն ունէր, այնքա՛ն սպիտակ :

Գեղուհին յանկարծ իր ետեւը տեսաւ երկու անծանօթ երիտասարդներ, որոնք յարձակեցան վրան և գրկեցին, ուզելով փախցնել : Եւ երիտասարդներուն քրտինքը, որ սեռային կիրքի պահուն տարօրինակ հոտ մը կը ստանայ, անհուն ընդվզում մը արթնցուց աղջկան մէջ : Աճեցա՛ւ ատելութիւնը, որ ունէր այրերուն դէմ : Կռուեցաւ կենդանիի նման և, առեւանդիչներուն շուարումի մէկ պահուն, ցատկեց ետեւ, սկսաւ վազել, խելայեղ վա՛ղք մը դէպի հեռուն : Երիտասարդները տեսան, որ դէպի անդունդը կը վազէ, իսկ գիւղին ճամբան՝ փակ : Բռնելու յոյսով՝ հալածեցին զայն :

Ու կը սուրար աղջիկը երինջի նման, առանց մտածելու թէ փախուստի ճամբայ չունի : Ու կը հալածէին զայն առեւանդիչները իրենց կիրքէն մրրկավար :

Աղջիկը կանգ առաւ անդունդին եզերքը : Առեւանդիչները կը վազէին դեռ :

Աչքերը ծաղիկի նման հակեց կուրծքին վրայ, և դիտեց իր գեղեցկութիւնը : Ետ նայեցաւ, վայրկեան մը դիտեց երկու երիտասարդները, որ կը մօտենային : Պժգանքէն սարսուաց : Եւ առանց առջեւը նայելու, փակեց աչքերը, ծալեց ձեռքերը, նետուեցաւ անդունդն ի վար :

Երկու երիտասարդները տեսան զայն, որ, ճախրելու պահուն դնդակով դարնուած օդոստահաւի մը պէս, դահալիժեցաւ անդունդին մէջ : Եւ սարսափահար, դարձուցին իրենց կրունկները ու փախա՛ն :

Լեռը, սակայն, շարժեց իր անտեսանելի թեւերը, գրկեց աղջիկը և յամբարար իջեցուց վար, ձորին եզերքը : Աղջիկը զարմացա՛ւ, ապչեցաւ՝ երբ, թիթեռնիկի պէս թրթռալով և օրօրուելով, հանդէցաւ գետինին վրայ : Ծաղիկները գլուխ հակեցին իր ոտքերուն տակ : Յօղերը վեր ցատկեցին և մուճակներուն վրայ աչքեր բացին : Իրա՞ւ էր, դեռ կենդանի՞ էր : Նայեցաւ ջուրին, որ կը հոսէր անարատ իւղի պէս . սինձի ճիւղ մը, քիչ անդին, կը պատէր զայն՝ ինչպէս շղարը մը :

Քայեց եզերքն ի վար :

Երբ ձորն ի վար բաց դաշտը հասաւ, գեղուհին փնտուեց իր գիւղին ճամբան : Հունա՛, գի՛ւղը . իր գի՛ւղն էր ան : Սիրտը բարախեց : Հրճուանքով լեցուած՝ ծափ դարկաւ և ոստոստեց : Ահա վերը, լեռան կողերուն վրայ, իր հօտը, ճերմակ ծուխի մը նման, վար կը սահէր արդէն :

Ուրեմն հրա՛ջք էր :

**

Գիւղ մտաւ և պատմեց ամէնուն : Պատմեց թէ ի՛նչպէս երկու անծանօթներ ուզեցին

առեւանդել զինք, բայց անոնց ձեռքէն վախելով՝ զնաց անդունդին մէջ նետուեցաւ: Սակայն, ո՞վ հրաչք, ողջ մնաց:

Չհաւատաց զիւրը:

Այն ատեն, սնապարծ գեղուհին, համոզելու համար, և վստահ իր գեղեցկութեան վրայ, որ աստուածներն իսկ հրապուրեր էր, հրաւիրեց բոլորը միասին լերան բարձունքը երթալ, որպէսզի անգամ մըն ալ ցատկէ:

Գիւղացիներն ամբողջ լեռ բարձրացան: Անդունդին եղերքը շարուած՝ սպասեցին, որ կատարուի հրաչքը: Եւ աղջիկը, ժպտալ աչքերուն մէջ, իր հրաշափառ գեղեցկութեան զօրութեան ապաւինած, ցատկեց անդունդն ի վար:

Գիւղացիները ցաւի աղաղակ մը արձակեցին: Աղջիկը գահավիժած էր արագ և ջախջախուած՝ քարերուն վրայ:

Լեռը, բարկացած, վրէժն էր լուծեր աղջիկէն, որ զինք փորձելու էր ելեր:

ՆՈՐ ՀԷՔԵԱԹ

Փոքրիկներու իմացական տագնապին առթիւ

Այգիներ՝, այգիներ՝, նորէ՛ն այգիներ: Կանանչ ջրհեղեղ:

Օխիկ մաման:

Իր փոթիոթ մորթին տակ՝ կը նմանի տարիքոտ ու խոցոտ ծառի մը:

Շամիրամ, թոռնիկը:

Եօթը տարեկան, որ գլուխ մ'ունի ողկոյզի պէս աղուոր:

Թօթօ, սիրուն շնիկ մը:

Այգիին կանանչ պաստառին վրայ՝ խրճիթ մը, մանուկի մը դծազրութեան պէս պարզ: Ինը գիծով շինուած տնակ մըն է ան:

Հեռո՛ւն մեծ տուն մը, որ շինուած է գունաւոր քարերով: Առջին՝ աւազան մը, բոցերով լեցուած:

Հորիզոնը ծաղկած քթանի պէս գեղին է:

Օդը կը բաբախէ՝ նմանօրէն յաւերժահարսի մը անդայտ միսին:

Արեւ կը թափի երկնքէն:

Ամպերը, անհասկնալի գոհաբերութեամբ մը պատուած են իրենց միսը և կարմիր խաղող կը նետեն լեռներու բազինին:

Թռչունները աստղերու պէս տարածեր են իրենց երգը երկինքին վրայ:

Երկինքը խնձոր մըն է:

**

— Օխի՛կ մամաս, Օխի՛կ մամաս...

Մարտինային տակ՝ շուքը աղուոր ասեղնագործութեան մը պէս է: Կեդրոնը՝ լոյսի ողկոյց մը, որ կը դողա՛յ: Խրճիթին պատտակը, տաշտին մէջ, մերկ նստեր էր Շամիրամ: Ու տաշտը կը նմանէր մեծ ոստրէի մը, ուր Շամիրամ կը բանար իր թեւերը: Օխիկ մաման տոլով ջուր կը լեցնէր թոռնիկին գլխուն ու կը լուար անոր խնձորի պէս միսերը: Թօթօ, պոչը խոշոր Թոյի մը նման ոլորեր, դունչը վեր բռներ, դդուռա քրոջ մը աչքերով՝ կը դիտէր մերկ Շամիրամը:

Շամիրամ, դիտելով իր մերկութիւնը, կը կարգար մարմնին բնախօսութիւնը և կը հարցնէր.

— Օխի՛կ մամաս, Օխի՛կ մամաս...

— Ըսէ՛:

— Ասոնք ի՞նչ են, ասոնք ի՞նչ են:

— Ծիծիկ, ծիծիկ, ոսկի կըծիկ:*)

— (Կը քրքջայ) Խղունջի ոսկի օղերուն կը նմանին, հիւլին հիւլին:

— (Կը ծիծաղի) Մտուտ չամիչներ:

— Օխի՛կ մամաս, Օխի՛կ մամաս...

— Ըսէ՛:

— Ասիկա ի՞նչ է, ասիկա ի՞նչ է:

— Պորտիկ, պորտիկ, լերան մորմիկ:

— (Կը քրքջայ) Կոյր Գագիկին աչքին կը նմանի:

— (Նախապաշարուած, կը նեղանայ) Մի՛ ըսեր այդպէս: Ըսէ՛՝ միւռոն քսող Աստուած պապան մատն է կոխեր:

— Օխի՛կ մամաս, Օխի՛կ մամաս...

— Ըսէ՛:

— Դիմացի մեծ տունին մաման ալ Շամիրամ ունի՞:

— Դիմացի մեծ տունին մաման ալ Արամ թոռնիկ մը ունի:

— Ինծի կը նմանի՞:

— Չէ՛, Շամիրամս, դուն իմ հոգևոյս աշտանակը, նմանդ չունիս դուն: Բայց Արամն ալ աղուոր է: Անոր հասակը կը նմանի սուրի մը, և նայուածքը եղէգի մը պէս ուղիղ է: Աչքեր ունի, պարո՛յկ պարո՛յկ, որոնք խելքդ կ'ոլորեն ու կը մոլորեն: Ճակատը նման է իմաստութեան գերքին փղոսկրէ կողքին: Անիկա քու կրկին տարիքդ ունի:

— Ծիծիկ ունի՞, պորտիկ ունի՞:

— Ո՛չ, Շամիրամս: Մենք ծներ ենք տարբեր բախտերով, մենք ստեղծուեր ենք տարբեր ձևերով, որպէսզի մեր մէջ ծլի նախանձին հունտը, ծնունդ տալու համար անանուն ցանկութիւններու:

է՛հ մտիկ ըրէ, պատմեմ: Կ'ըսեն թէ, առտու մը, կարապ մը եկեր իջեր է ծիրանի մշուշներուն մէջէն: Կարապին վրայ հեծած էր Արամ: Անիկա թեւերովը կը բանար ամպերը, որոնք կը ծռէին հասուն ցորենի որաներու նման: Գնաց դիմացի նախշուն տան մօտ, գարկաւ պատուհանին ու մտաւ ներս:

Ուրիշ առտու մըն ալ, աղաւնիները քեզ դրին մեր թղենիին ճիւղերուն վրայ: Գրկեցինք քեզ ու տուն տարինք:

Պիտի հասնի առտու մըն ալ, երբ այդ բարձրահայեաց դղեակէն, (մտտովը ցոյց կուտայ, և Շամիրամ ու շնիկը կը նային այն կողմը,) Արամ պիտի իջնէ վար: Հեծած իր ձիուն վրայ, որուն կողերը պիտի ծեծէ իր աղուոր սրունքներովը, ողորկ ինչպէս տօսա-

խին փայտը, և իր կիրքէն մոլեղնած, պիտի սուրայ
հողերուդ վրայ, փնտոելով քեզ:

Շամիրամ ուրախ է:

Օխիկ մաման տխուր է:

Շամիրամ կը հարցնէ, միշտ կը կին բառերով:

— Ե՞րբ, ե՞րբ:

Օխիկ մաման լուռ է:

Շամիրամ տխուր է:

— Օխի՛կ մամաս, Օխի՛կ մամաս...

— Ըսէ:

— Այլ չե՞ս սրատներ...

— Չէ՛, յետոյ կը հասկնաս:

Շամիրամ վիշտի մէջ է:

— Օխի՛կ մամաս, Օխի՛կ մամաս...

— Ըսէ:

— Գի՛րկդ առ դիս, գլուխս ծա՛նր ծա՛նր կը ցա-
ւի, կ'ուզեմ լա՛լ, լա՛լ... (կուլայ):

— Չորնա՛մ ես քեզի համար, ինչո՞ւ պիտի լաս
եղեր դուն:

— Ինչո՞ւ ազատ չես ձգեր դիս...

Օխիկ մաման, տխուր, կը մտածէ ըմբոստ հրեշ-
տակին մասին:

— Օխի՛կ մամաս, կ'ուզեմ որ այդ պահուըտող
տղան գայ և ինծի դարպաս ընէ: Խաղող չեմ ուզեր,
ալ վէճ չեմ խաղար: Ես կ'ուզեմ ծաղրել անոր սրունք-
ները, որ աղուոր են, և աչքերը, որ կը մոլորեցնեն:
Կ'ուզեմ որ ան իմանայ ինչ որ չունի ինք: Կ'ուզեմ
գերի վարել զինք: (Երբեք չիտար անունը Արամին,
որուն հանդէպ ունի էգի արհամարհանք):

Օխիկ մաման դրկեր է Շամիրամը, և կը պոռայ
հեռաւոր դղեակին դէմ: Ծերուկ կինը ատելութեամբ
է լեցուած ժամանակին դէմ, վախնալով որ կը խլեն

իր խաղընկեր թոռնիկը, Շամիրամ: Ծերունիի եսասաշ-
տութիւն:

— Չա՛ր են ժամանակները, ու կը խլեն ծոցէս
քունիս միակ բժժանքը:

Շնիկն ալ, նոյնպէս, գլուխը դղեակին դարձու-
ցեր՝ ոռնալով կը սպառնայ, համաչափօրէն Օխիկ մա-
մային բարկութեան ելեւէջներուն:

Շամիրամ տաղնապի մէջ է:

Մոգ մը կ'ըսէ:

— Հասուն են իր ուժերը, — անխոցելի սիրտ ու
կախարդ աչքեր: Վէճ խաղալու սահմանուած չեն
Արամագրի արարածները, ոչ ալ խաղալիկներ են ծե-
րունիներու: Թող որ երթայ ասպետը դերել: (Ու ժըպ-
տելով կ'աւելցնէ) է՛հ, միջոցին մէջ կանխահաս կա-
րողութիւններ կը ծփան հիմա:

*) Արմաշի բարբառով, կը ընել կը նշանակէ խածնել
մանուկի մը պէս, երկու ակոսով: Ու ոսկեկըծիկ կը կոչուի նըշ-
խարքին կտորը, զոր կը ստանան մանուկները, իրենց երկու
ակոսներուն մէջ, իրրեւ կրօնական հաղորդութիւն:

...ԱՄԷՆ ԲԱՆԷ ՎԵՐ

Անթելով երաժշտութիւն կ'ունենդրեմ բարեկամ բժիշկի մը տունը:

Խաղա՞ղ է սենեակը,— Ֆրանսական ոճին վրայ տարաշխարհիկ ճաշակն եկեր՝ նուազում է սլատճառեր: Կակուղ են գիծերը առարկաներուն և անկիւններուն: Եւ բոլորն ալ ականջ կուտան երաժշտութեան,— ահա գիւրքը, որ բաց է, խեցեղէն անօթները, որոնք պրկեր ու երկնցուցեր են իրենց վիզերը, գիրուկ բարձր, որ բազմոցին վրայ կատուի մը պէս մէկ կողմ է ինկեր:

Լոյսը հալած մեղր է, որ կը քամուի ձեղունէն: Ահա թէ ինչո՞ւ համար անուշ են գոյները սենեակին:

Հայելին, սլատին մօտ, սեղանին վրայ, արծաթէ բոց մըն է, լա՛յն տերեւի մը պէս: Ճենապակեայ անօթներու մէջէն ծաղկազարդ ընձիւղներ կը ժայթքին, մանրանկար շատրուաններու նման, որոնք ծաղիկ կը ցայտեն դուրս: Ճափոնական սլարտէղ, այնքա՞ն բնական, որ ոչ ոք, այս խաղաղութեան մէջ, պիտի փորձուէր ելլել քննելու: Խնձորենիի ու նշենիի ծաղիկներ են, որ շինուած են դաղտակուրէ շերեփուկներով: Գաշնամուրը արեւադարձային երկրի մը կնոջ մորթն ունի:

Ծաղիկ եմ, ես ալ: Գրասեղանին վրայ հակած, հոգիս լո՞ւս կուտայ: Երգը կը հանդէ՛ի վրաս գիշերուան ցօղին պէս: Եւ ես երջանի՛կ եմ, շա՛տ:

Մեր անթելը կը հաղորդակցի Պերլինի հետ: Այս ժամուս, Գերմանները նուազահանդէս են սարքեր:

Գիշեր: Փարիզ հետզհետէ կը խելօքնայ: Ու մենք, հոս, խաղաղութեան մէջ ընկղմած, հիւանդի պէս ուժաքամ, մտիկ կ'ընենք հեռաւոր Գերմանացիներուն:

Այժմ կ'աւարտի նուազահանդէսը: Փակումը կը կատարուի գերման ազգային երգով:

Գերմանիա՛, ամէն բանէ վեր...

Ի՞նչ քաղցր է: Հողին մէջէն լսուած ձայնի մը պէս, հեռաւոր ու նուազուն: Անտառներու մէջ հովածիւնն մեղեդիի մը նման, որ կ'երթա՞յ ու կուգայ, կ'օրօրուի ու կը կախուի, կը բարակնայ ու կ'երկարի:

Գերմանիա՛, ամէն բանէ վեր...

Անո՞ւշ է, անո՞ւշ, անդրշիրիմեան այս ձայնը: Թաւի՛շ է, որ կը սահի:

Ա՛խ, հոգի՛ս կը փրցնեն կարծես:

Ու, վիրաւոր, դիս կը բարձրացնեն բարձր լերան մը կատարին վրայ: Ա՛յ, վար նետեցին դիս: Կը թաւալի՛մ, կը թաւալի՛մ...:

Վո՛ւ-ո՛ւ-ու-ո՛ւ...:

Երկու ականջներս ձգեցի գրասեղանին վրայ: Առի երկու աչքերս և ճամբայ ելայ դէպի Պերլին: Ջերմեա՞նդ ժողովուրդ: Լո՞ւս, կը խմէ երաժշտութիւնը, որ անուշ է, միստիկ և բարկ:

— Ո՛վ Գերմանացիներ, պատերազմ ըրիք ու

յաղթուեցաք: Բայց, այս իրիկուն, դարձեալ, հաւաքուեր էք՝ ամբաստանեալ ու ամբաստանող, քով քովի, և կ'երգէք:

Գերմանիա՛, ամէն բանէ վեր...

Ամենագոր այս երաժշտութիւնը կը լռեցնէ ձեր կիրքերը և յոյս կը ներշնչէ ապագայ երջանկութիւններու:

Իսկ մե՞նք: Բզկտեցի՛ն մեզ՝ ուրիշները, փրցուցին մեզ՝ մեր հողէն, ինչպէս ծաղիկը՝ թաղարէն: Նետեցին մեզ ամպավարիկ երկիրներ: Ու հիմա, ափսո՛ս, մեր ժողովուրդը ինքզինքը կը բզկտէ, եղբայրը եղբոր արիւնը կը գողնայ, զի չունի՛ իր «... ամէն բանէ վեր»ը, որ լռեցնէր, խոնարհեցնէր ու ներշնչումի նստեցնէր:

Որքա՛ն դժբախտ ենք: Ա՛յ, արցունք մը մատիս վրայ, արիւնէ դերձան մը կայ մէջը:

Ընդվզում մը կը սարսէ զիս:

Ո՞վ կայ վերը:

Սա երկինքէն վեր, անհունէն վեր, մեր կարողութիւններէն վեր, անհաս ու անսկիզբ, ո՞վ կայ վերը:

Ո՞վ կայ հոր ու ամենագոր:

Աստուած, Եհովա՞, Բէեղղերո՞ւղ, Սաղայէ՞լ:

Ով որ կայ, թող մտիկ ընէ:

— Իմ սիրտս լեցուած է. հիմա ա՛չ աղօթքի կու դամ, ո՛չ ալ աղաչանքի: Նետած եմ սկեպտիկ վիլիստիպայի գօտիս, զգայապաշտ բանաստեղծի դրէչս և միամիտ քրիստոնեայի հողաթափներս:

Եկած եմ հարցնելու. — Ե՞րբ պիտի ունենանք մեր

«... ամէն բանէ վեր»ը: Պիտի ունենա՞նք: Ի՛հ, Աստուած ես թէ ոչ: Չե՛մ ուզեր հասկնալ, ո՛չ. ի՞նչ կ'ուզես եղիր, Եհովա կամ Բէեղղերուղ: Բայց լսէ՛...: Յոգնած էի, և արհամարհեցի քեզ. ձանձրացած էի, և հայհոյեցի քեզի: Եղայ հպարտ և եսպաշտ, սանձեցի զգայութիւններուս լիճը, սաստեցի դիւրագգած նուազարանս: Չյաջողեցայ: Վերջապէս մարդ եմ, ես ալ: Կը տեսնե՞ս, դարձեալ՝ կակուղցայ, և աղօթող կնոջ մը պէս կը կլորնամ նորէն առջեւդ: Եւ ըսելիքս աղերս մը դարձաւ շրթներուս վրայ: Բայց լսէ՛:

Ե՛ս ալ կ'ուզեմ ազգի զաւակ ըլլալ, ե՛ս ալ կ'ուզեմ ազգ ունենալ, երկի՛ր ունենալ: Որպէսզի, ո՞վ իմ Աստուածիկս, — մի՛ նեղանար իմ սրամտութեանս համար, տանջուած աղա՛յ եմ, — որպէսզի ե՛ս ալ կ'ըտանամ այն ուրախութիւններով, զորս օտար ազգեր ունին, ե՛ս ալ ոգեւորուիմ այն յոյսերով, զորս հարուստ ժողովուրդները ունին: Ե՛ս ալ կ'ուզեմ «... ամէն բանէ վեր» մը, որովհետեւ կը զգամ պահանջը, ունիմ կարօտը, և արժանի եմ: Տո՛ւր ինձ «... ամէն բանէ վեր» մը, որպէսզի առտուն աղօթքս անով սկսիմ, օտար ազգերու երիտասարդներուն մէջ որբի պէս չըլլա՛մ, խորթ քայերդներ մնամնջելով սրտիկս չարիւնի՛:

Վերջին ըմբոստութենէ մը առաջ, բոլո՛ր սրբութիւնները դեռ չանարգած, սկիզբին ու վախճանին տակաւին չհայհոյած, անդա՛մ մըն ալ կուզամ քեզի: Լսէ՛ աղաչանքս, աղօ՛թքը մեր կլորիկ աղջիկներուն և ընձիւղ երիտասարդներուն, մեր անուշբերան մամիկներուն և հողասէր պապիկներուն, խունկ ծխողին և արտհերկողին, լսէ՛, մե՛նք ալ կ'ուզե՞ք երգել «... ամէն բանէ վեր»: Ամպածրար այն լերան կատարէն, ամպրոպին ու փոթորիկին մէջէն, Եհովա՛, սկսէ՛ և տուն տուր, տող առ տող: Եւ թող մեր ժողովուրդը հետեւի

ձայնիդ, բոցի պէս ժայթքի երգը թռքերէն ցնծութեամբ
և արցունքով, դղրդապէն ու ահեղ, կիրքերը դադարած,
կարգապահ ու սիրալիր. ե՛րգը, տէ՛ր, մեր երգը,
տո՛ւր, որ երգենք մեր երգը.

Հայաստան, ամէ՛ն բանէ վեր...:

ՍԵՆԵԱԿԻՍ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(ՊԱՏԿԵՐԱԻՈՐ ՈՒ ԳՈՒՆԱԻՈՐ)

Ո՛վ չի դիտեր, ո՛վ չի դիտեր,
Սենեակս չորս պատ ունի: Ասիկա գիւղի իմ սենեակս
չէ, — օ՛, այն սենեակս, ի՞նչ պատ ունէր, քանի՞
պատ ունէր, լաւ չեմ յիշեր, միայն կը յիշեմ որ, երկու
պատուհան ունէր, և անոր մէջէն կ'անցնէր դաշտին
սոյն ալ, ծաղկին շուրթն ալ, լոյսն ալ ու շողն ալ,
և ծիծաղը վարէն անցնող գիւղի աղջիկներուն, որոնք
խաղողի դոյն երեսներ ունէին: Պատուհաններէն մէկը
ծառերուն մէջ կը բացուէր, միւսը՝ երկինքին մէջ: Եւ
երկինքը աւազանի պէս թափանցիկ էր, ու ծառերը
կիրակնօրեայ աղջիկներու պէս ծաղկուոր: Հա՛, ձոր
մը, վարը, իր սպիտակ մէջքը կը ծռէր, կը պռուկէր,
կ'ըսէիր՝ ճիտը հազար բոժոժ անցուցած՝ գիւղին հօտն
է կ'անցնի, գըլգըլէ՛լ, գըլգըլէ՛լ, սը՛լ, սը՛լ...:
Չէ՛, այս սենեակս ան չէ: Այս սենեակս, դարիպի՛
սենեակ է:

**

Արեւելեան պատին մէջ փորուած է, հասակո՛վս,
պատուհան մը: Ատտուն կը կենամ հոն, և, պատուհանէն,
որ լուսաւոր ճամբու մը պէս դապուն երկինքին
վրայ կ'իյնայ, կը դիտեմ Արեւելքը: Ա՛խ, դէմս չկա՛յ
լեռ մը, որ դլուխը խօթէ երկինքի թասին մէջ: Եւ

(այս երկրին) արեւն ալ մէկ տեսակ է, ու կաթը փախած կնկան մը տո՞ղոյն ծիծիին կը նմանի: Հապա մեր երկրին արեւնե՛րը. թուելն իսկ դժուար է.— Երուսաղէմի կարմիր կո՞ւժը, որ լուսաղբիւրին մէջ շրջուելու ու մոռցուելու է,— Շամիրամի թա՞ղը, որ հիւսուած է արցունք թափող աղնիւ քարերով,— Յովհաննէս Մկրտաւիչին գլո՞ւխը, տաքուկ արիւնով,— Աստուծոյ ահեղ ճակատը, ամպի մը եղերքին,— Մեր ժամուն միւռոնին փա՞րջը, բռնկած՝ աշտանակի մը եօթը հրեղէն մատներէն,— Մենծ մօրս հարսնութեան շապիկին մէջքի կա՞պը, բռունցքի մը չափ խոշոր,— Լերա՛ն արեւ, որ կը ճարճատի կրակ առած թուփի մը պէս, շառաւիղները կը ճըղէ ոսկեղէն եղնիկի մը եղջիւրներուն պէս,— Ա՛յ, գիւղի արեւը, գունդ ու կլոր, լճակի մը պէս աղուոր, տակաւին անեղծ, որ կը հանգչի հողիս մէջ: Ո՛վ իմ Արեւելքս, պատմութեանդ ջերմութեամբը կենդանի՛ իմ աչքերս կը գիմադրեն դեռ սա վիրաւորիչ բոցերուն, ինչպէս ելակի նմանող հասուն աստղերդ կը գիմանային առտուան արեւին:

Ես, այս ժամուս, կը ճեմեմ սենեակիս մէջ, երկա՛ր կը ճեմեմ, արեւելքէն արեւմուտք, արեւմուտքէն արեւելք, ինչպէս թափառական ամպ մը կը քալէ մէկ լեռէն միւսը: Յանկարծ կը կենամ արեւմտեան պատին մօտ, ուրկէ, պղտիկ լուսանցքով մը շրջանակուած, վարի քաղաքը կ'երեւի:

Անիկա նման է փեռեկտուած ասպառածներու, սրածայր, անկիւնաւոր, տափակ ու առապար: Մէջերէն ու եղերքէն հերձուածքի մը գիծը կը քալէ սեւ օձի մը պէս. և իրա՛ւ, հունա՛ր, ողջ իժ մըն է, որ ժայռերուն

լեսուկին մէջէն հարած նաւթի ախօսի մը նման կը սողայ: Գեհե՛ն, մարդիկ սեւ բոցերու պէս կ'երերան:— Վո՛ւյ... — մօրս ձայնն է՝ ետեւէս կը կանչէ:

**

Հարաւային պատէն կախած եմ օրացոյց մը: Աստուծոյ գիրքին պէս սիրելի է: (Կը քղթատեմ) Ես շատ կը սիրեմ կիրակիները.— Կիրակին սէ՛ր է, կիրակին տա՛ք է, աղջկան մը շողակաթ աչքի՛ն պէս, որ կը քնացնէ, կիրակին կ'երգէ, խունկի նման կ'այրի, կիրակին տուն մըն է, ուր միշտ հարսնիք կայ: Անդին օրե՛ր կան, սակայն, անանուն ու լայն, օրե՛ր ալ անուշ՝ համբոյրով դոցուած, օրե՛րը՝ աղատ, օրե՛րը՝ սգոտ, անանուխի պէս զօրացուցիչ, աղաւնիի պէս թռչտուն: (Կը քղթատեմ) Ա՛յ քեզ, օրացո՛յց, հազարակն պահարան, քու բոլոր խորշերէդ ցեղիս բոյրն ու դոլը կը բարձրանան: Տօնե՛րն հեթանոս, ծէսե՛րը շքեղ, պարե՛րն երջանիկ՝ երկար շարքերով, կոյսերն արեւոտ, հօ՛յ, լարուած աղեղի նման ծիծերով, հարաւէ՛ն կուգան, հարաւէ՛ն կուգան, կարաւա՛ն կարաւան: Տարեղարձնե՛ր: Փետրուար 13: (Կը կեցամ) Ես ծնած եմ ֓ետրուար 13ին, այդ իրիկունը մեր գիւղը Տէրընտաս կը վառեն, հեթանոս հաւատքի մը յիշատակին, յանուն Գրող կամ Տիր շաստուածին: Հազար փոսո՛ս, որ մայրս հեթանոս կրակներու այդ օրը գիս աշխարհ բերաւ, ու (փորձանք մը եւս), գրող ըրաւ: Ա՛հա՛ Մայիսն է, ամիսը կենդանութեան. ձմրավերջիկ նշենիներու ծառաստանին մէջ աչուկները կրակներ կը բանան, հեռաւոր լեռները մեր գիւղին ողջոյն կուտան, կանանչ թեւեր կ'երկարին գիւղէ գիւղ, ու կը միանան, ձամբաները կը ծածկեն: Լորամարգին, գորշահար տե-

րեւի մը պէս, դաշտին վրայ թառ կը փնտռէ, անդին պուսպուտիկին ձայնն է, արտին մէջ դռած ցօղերը բարձր ձայնով կը համբէ,— պո՛ւթ, պո՛ւթ պո՛ւթ... : Հօրա՛րա՛, երկինքէն թռչնիկները կը կաթկիթին մարդին վրայ: — Փա՛ռք Օգոստոսին, վասն Նաւասարդեան ազատ տօներու տնօրինութեան: Փողը կը հնչէ՛, անտառները ձայն կուտան, հովիտները ձայն կը կրկնեն ջրամբարին ջուրին պէս, որսկան շուներուն աղաղակը ժայռերուն դէմ կը շաչէ: Զուրը կը կայտօնէ, ճամբէ մը վար կը ցատկէ, ջրվիժակը բարակ ու լայն թերթի մը ձեւը վճռոնէ, ցորենի ցօղունի չափ նուրբ ձողիկներու կը բաժնուի ջուրը, և վանդակ մը կ'ըլլայ, մէջն ալ արեւին լոյսը խատուտիկ թռչունի մը պէս կը թըրթռայ ու կը դառնայ: Տօ՛ն է, սենեակիս մէջ կաքաւէ՛, հա՛րս, կաքաւէ՛: Հարաւն անո՛ւշ է մեղրով հացի պէս, հարաւը տա՛ք է ողջ մարմինի մը պէս:

**

Հիւսիսային պատին վրայ կը տարածուի Հայաստանի քարտէսը: Տաճարին պատին պէս նուիրական է հոս:

Ո՛վ չարչարուած ոստայնը տարականոն դիժերու, որոնցմէ կը կախուին, շիթ առ շիթ, հայ քաղաքներու անունները: Հայաստա՛ն, կը սիրե՛մ քեզ: Դուն քանդակուած ես այս պատին վրայ, ու ես քեզի կը նայիմ ներշնչումով,— բլուրներու կողերուն վրայ, դիւղերդ, լուռ, աղօթարկու և ծխուն, ջուրերու ճամբաներուն վրայ քաղաքներդ, առադաստանաւի պէս բեռնաբարձ, ցանուցրիւ անտառներդ՝ կանանչ աղջիկներու պարի մը պէս ոստոստուն, ու պսպղուն լճակներդ՝ պերճ շրջազգեստներու պէս տարածեալ, Անի՛ն՝ թանգարան,

Երեւա՛նը՝ կանանչ, վա՛նը՝ հայելիի մէջ, Արարա՛տը՝ Աստուծոյ պէս, հրեշտակներու սանդուղին պէս, ճերմակ փոշիի ամպի մը պէս, ձիւաւոր ճերմակ Սուրբ Սարգիսին պէս, արձանադէմ, մարմարափայլ: Օ՛, պիտի տրուե՞ ինձի բախտը, ո՛վ լեռներուն լեռը, առտու մը, հիւսիսային պատուհանիս մէջէն դիտելու քու պատկերդ՝ տաճարաձեւ, քե՛զ, Արարատ, դիւային երկնախոյզ, ահեղատիպ բուրդ, երկրաչափական անլուծելի հանդոց, պարիկներու խաղ, Արարա՛տ... :

Բարեկամներ՛ր, չեմ կրնար աւարտել այս պատկերը, ներեցէ՛ք ինձի, որովհետեւ ես միշտ անգոր եմ եղեր, և, Հայոց Արշակ թագաւորին պէս, այս «անյուշ» սենեակին հիւսիսային պատին դէմ՝ սարսուցե՛ր, սարսուցե՛ր ու հեծեր:

ՋՐՈՅՑ ԿՈՎԻ ՄԸ ՀԵՏ

Չիւն էր նստեր գիշերը:

Բացի դուռս, որ պարտէզ կ'իջնէ: Ի՞նչ գեղեցիկ է բնանկարը, պա՛րզ ու շնորհալի: Սպիտակ է պարտէզը, ինչպէս կ'ըլլայ ծաղկած խնձորենիներու եղանակին: Հրա՛ջք, ծաղկած են բոլոր թուփերը, նոյն խակ ձմրան այս առաւօտուն: Տանիքս ալ ծաղիկ բացեր է, ճերմակ խեփորներ կը կախէ:

Ամպի մը աչքին մէջ արեւը կը հալի կարագի պէս: Նիհար ճառագայթները, դունաւոր ու մանտրտիկ օձերու նման, կը խաղան քնքուշ ձիւնին վրայ:

Կը սիրե՛մ, կը սիրե՛մ ձիւնը: Կը սիրեմ պտըտիլ ձիւնին վրայ, երբ տաք են ոտքերս:

Չգայարանքներու պէս են ոտքերս. իշխանի երջանկութիւն և տարօրինակ քմայքներ կ'արթնցնեն ներսս՝ երբ կը քալեմ ցուրտ հովերուն դէմ: Երագնե՛ր կ'անցնին աչքերէս, երբ տաքցած են ոտքերս: Ու հիմա տաք ոտքով քալելու հաճոյքն է, որ իրեն կը կանչէ դիս: Աչքերս յառած կաւիճէ տուներուն և ծառերու ճափոնական գծադրութեան, կը թափառիմ՝ զգայարանքներս բացած:

Կը թափառիմ միայն զգայախաղեր ունենալու համար: Այս պահուս կ'արհամարհեմ սկիզբը և վախճանը: Անձնատուր եմ վայրկեանին:

— Նարդունի՛, տիմա՛ր, ունա՛յն է նաև վայրկեանը:

Կը պոռայ ձայն մը: Ու այդ ձայնը պահոււրտած է միսիս, ուղեղիս, զգեստներուս մէջ: Կը ճանչնամ զայն, որովհետեւ ինծի կը յաճախէ յոգնութեան հետ, ամէն օր: Սկեսպտիկն է ան, որ կը մտնէ հողիիս մէջ, զգացումներուս մէջ, և կը հեզնէ ամէն բան: Չեմ կըրնար վանել զայն, վասնզի հզօր է մահուան չափ: Այդ ձայնը յագեցումն է ճշմարտութեան, յափրացո՛ւմն անոր:

Հիւանդանոցին ագարակին առջեւն եմ:

Թրիքին հոտը դադրեցուց կուրը, գոր կը կատարէին զգայարանքն ու իմացականութիւնը: Սաւկայն, սկսաւ ուրիշ կուր մը: Այդ հոտը ինծի յիշեցուց մանկութեանս օրերը, դիւղի կեանքը: Գիւղէն հեռանալէս ի վեր, քաղքցի դարձած եմ: Բայց պզտիկ յիշատակ մը փոթորիկ կը հանէ հողիիս մէջ: Գիւղը կը կուռի քաղաքին դէմ:

Մտայ ախոռէն ներս:

Ամէն բան հեզնելու և ծաղրելու քաղքենի ցանկութիւնը բռնեց շրթներս: Միւս կողմէ, բնաշխարհիկ զգայարանքներս պրկեցին մարմինս:

— Սարսափելի կուր մը պիտի պատահի, ըսի մտովի:

— Հիւանդանոցին հերթապահ բժիշկն եմ:

— Հիւանդանոցին կաթնտու կովն եմ:

— Ուրեմն միեւնոյն գործին կը ծառայենք: Ես դեղ կուտամ հիւանդներուն, ու դուն՝ կաթ: Երկու պաշտօնակիրներու միջեւ խօսակցութիւն մը հաճելի է միշտ:

Կովը չպատասխանեց ինծի: Թերեւս վիրաւորուեցաւ պաշտօնակցութենէս: Խօսակցութեան նոր թել մը կը փնտռէի արդէն, իսկ աչքերս թրթեռնիկի նման կը պտըտէին խօսակիցիս ճակատին վրայ:

Երկկողմնադոյզ եռանկիւն մը կը ձեւացնէր կովին դէմքը: Խոշոր աչքեր, որոնք, ժայռի մը խոռոչին մէջ նստած դորտերու նման, կը նայէին ինծի: Ափ մը ճանճ, սեւ աւաղի պէս, կ'աղտոտէր ականդղիքին մէկ անկիւնը: Թանճը թրիքը ծեփեր էր մէջքը:

— Այս տարի ձիւնը կանուխ եկաւ, դեռ ճանճերը չմեռած, ըսի՝ գոցելու համար խօսակցութեան ծակուծուկերը, վիպասանի ճարտարութեամբ:

— Կովին փորը միշտ տաք է ճանճ մը պահելու աստիճան: Ճանճը կը մեռնի այն ատեն, երբ կը մեռնի կովը, պատասխանեց ան և պոչովը խաչակնքեց կոնակը, ուր կառչեր էր երկարակեաց ճանճ մը:

— Կ'ուղէի իմանալ թէ կովը ստեղծուած է ճանճի՞ն համար, թէ ճանճը կովին համար:

— Մարդու որդի, մեծամտութիւն կը կաթկթի վրայէդ: Նո՛յն ցանկութիւնը դատելու և կշռելու, նո՛յն մարմաջը դասակարգելու և նո՛յն հեղնանքը տկարին հանդէպ:

— Կո՛վ, ներս մտայ լսելու համար գրոյցդ: Նպատակ չունիմ իմաստութիւն ծախելու: Ես յողնած տղայ մըն եմ, կուշտ է հողիս, և իմացական ամէն կերակուր ինծի զգուանք կը պատճառէ հիմա: Երկտասարդ մըն եմ, որ կը ծիծաղիմ մարդկային բոլոր մուրացածոյ ստորոգելիներուն տողրակին վրայ: Ելեր եմ ճամբորդելու, որոնելով նորօրինակ գգայութիւններ: Ես ալ կ'ատեմ մարդը, որ խորհրդանշանը դարձաւ տեսակ մը նարսիսիամի: Ի՞նչ է մարդը, ախաւաւր «ես» մը, որ կ'ուրանայ կենդանական ու բուսական

ստորոգելիները, կ'ապրի ինքզինքին համար, կը պաշտէ ինքզինք: Մարդը մարդուն համար: Արդ, ինչ որ կը կոչուի մարդկութիւն, հիւանդութիւն մըն է:

— Ի՞նչ կը դաւանիս:

— Կ'ուրանամ ընդհանրական եսը (moi) և կ'ընդունիմ միայն անհատական եսը (je): Ահա թէ ինչո՛ւ չեն հետաքրքրեր զիս դասակարգերն ու իրենց չափերը: Մարդը առնուած է իբրեւ միութիւն (unité), չափելու համար տիեզերքը:

— Երևտասա՛րդ, անմիջապէս ըսեմ, որ կարելի է խօսիլ հետը: Առաջին կենդանին եմ, որ կը խցեմ լուսութիւնը և կը խօսիմ մարդու մը հետ, որովհետեւ դուն պատուեր ես մարդկային սնտիառութիւնը: Սակայն դեռ մեծ տարակարծութիւններ ունինք, որոնք կը բաժնեն մեզ իրարմէ: Որպէսզի կարելի ըլլայ շարունակել մեր խօսակցութիւնը, գգուշացնեմ քեզ, որ լրագրողի պէս շմօտենաս այս տեսակցութեան: Գնչուները արջ կը խաղցնեն և կը շահագործեն հետաքրքրութիւնը տղէտ ու սնտիառ մարդոց, որոնք կը սիրեն խնդալ կենդանիին վրայ: Ու կան մարդիկ ալ, գրողներ, որ կը փորձեն կով խօսեցնել, շահագործելու համար ընթերցողներուն հետաքրքրութիւնը...

— Կո՛վ, հեռո՛ւ ինձմէ մարդոց հաճելի երեւալու ցանկութիւնը: Մեր խօսակցութիւնը միայն մեղի համար: Արդէն մարդիկ չեն հասկնար նման «մութ» խօսակցութիւն մը: Եւ յետոյ հելլենական ճաշակը չէ, որ կը մղէ զիս փրկիստփայական գրոյց մը կատարելու: Եկեր եմ լսելու քեզ, որովհետեւ երկար լուսութեան մէջ կայ հասունցած բան մը, զոր չեմ ճանչնար: Եւ որ պիտի գարմացնէ զիս աւելի քան Սամարացի կիներ Յիսուսի առջեւ:

— Յիսուսի և Սամարացի կենջ խօսակցութիւնը

Թատերական է: Կինը մարդկային աշխարհի մէջ դրուած է իբրեւ հետաքրքրութիւն, կամ իբրեւ դարդ՝ ուշադրութիւն հրաւիրելու համար: Մարդիկ (և բոլոր ձեր վիպասանները) կին մը կը դնեն խօսակցութեան կամ պատմութեան մէջ, երբ տկարացած է ընդհանուրին ուշադրութիւնը: Մեր մէջ տարբեր է կինը:

Այդ պահուն ակտին լուսանցքէն ներս կախուցաւ աղջկան մը շիկահեր գլուխը: Ծաղկի փունջ մը կարծեցի նախ:

— Եկո՛ւր, եկո՛ւր, ձիւնազնդակ կը խաղանք:

Յետոյ վաղեց գնաց քրքջալով:

— Կինը, ըսի կովին, սատանային սէս է, երբ յիշես՝ կը վազէ կը հասնի:

— Խորքին մէջ բնագանցական է այդ դաղափարը: Դուք չէք ճանչնար կինը: Չէք ճանչնար աշխարհը: Այժմ ատեն է, որ բացատրեմ «մեր» վարդապետութիւնը, որ կը նպաստէ ճանչնալու ամէն բան:

Կը տեսնե՞ս սա թրիքը, որ լուսնկայի մը ձեւով տեղ է գրաւեր տախտակամածին վրայ: Գիծերը քանդուած չեն, դեռ ոչ ոք դպած է անոր: Այս է հայելին աշխարհի: Այս թրիքի կտորին մէջ է մեր վարդապետութիւնը: Անոր մէջ բացատրուած կը տեսնես ամէն բան: Երկրաչափական կառուցուածք մը ունի, բարդ և անլուծելի: Ծրջանակներ են, որ կը դառնան իրարու մէջ: Ոչ ոք կրնայ ըսել, թէ քանի՞ շրջանակէ բաղկացած է այս դմբէթը, և իւրաքանչիւր շրջանակ ի՞նչ մեծութեամբ շառաւիղ ունի: Ո՞ւր կը սկսի, և ո՞ւր կը վերջանայ: Լուծելու համար, սակայն, կը բաւէ որոշել կէտ մը, իբրեւ սկիզբ: Այդ կէտը ինքն իր մէջ շրջանակ մըն է: Սակայն նման կէտերու գումար մըն է երկրաչափական այս ձեւը:

Նոյնը կեանքի մէջ: Սակայն դուք ձեր զգայու-

թիւններուն, ձեր դաղափարներուն կուտաք բարի և խորհրդաւոր հանգամանք մը: Դուք իւրաքանչիւր հարց կը կապէք մեծ հարցի մը լուծման: Մարդիկը կ'աշխատիք հարցերը ոչ թէ լուծել, այլ անլուծելի դարձնել: Մարդուն մէջ վախ մը կայ անդոյ հզօրէ մը: Այդ առեղծուածային հզօրը, Աստուած, պատճառ եղաւ, որ մարդիկ գրողին հանելուկներ շինելով: Ի՞նչ էր Աստուած, — հանդոյց մը, հանելուկ մը: Ու ամէն մարդ սկսաւ հանդոյցներ ու հանելուկներ շինել իր հոգիին մէջ: Ընդհակառակն, սէտք էր քակել ամէն հանդոյց: Ատոր համար կը բաւէ որ սարսափէ հաւատքի աւելորդ շտեմարանը: Մարդիկը կ'երթաք հանդոյց շինելու, զոր իմաստութիւն կը դաւանիք, իսկ կովերս՝ հանդոյց քակելու, — իմաստութեան ուրացումին: Քանի՞ քանի՞ հանդոյցներ մարդոց մէջ: Եւ որքա՞ն տառապանք յանուն այդ հանդոյցներուն:

— Կո՛ւյ, ես շատոնց քաշած եմ մատս այդ հանդոյցներէն: Ահա թէ ինչո՛ւ նուազ կը տառապիմ: Ի՞նչ է տառապանքը: Մեր մէջ կուռք է դարձած այս զգայութիւնը, որ տարօրինակ պատմութիւն մը ունի: Ասիոյ մէջ ճգնադեպներու վարդապետութիւնը, զօրացնելու համար մարդկային կամքը, միջոց ընտրած էր տառապանքը: Յիսուսի մէջ տառապանքը միջոց մը չէր, ոչ ալ պաշտամունք մը: Այլ վարագոյր մը մեծամոլիկ ցանկութիւններու վրայ: Յիսուս չտառապեցաւ իսկ: Իր հետեւորդներուն մէջ, քրիստոնէական վարդապետութեամբ, տառապանքը դարձաւ կուռք մը:

Մենք, եպիկուրեաններս, կը դաւանինք որ տառապանքը ունի բազմաթիւ երեսներ, 1) տառապանք-ձեւ, 2) տառապանք-նպատակ, և այլն: Հայոց մէկ օրաթերթին մէջ ուժղնութեամբ ծաղրեցի այդ տառապանքները: Ի՞նչ աղմուկ էր, որ բարձրացուցին քրիս-

տոնեաները: Այդ ծաղրով միայն մէկ հանդոյց չէր, որ
կը լուծէի: Ես դէմ եմ բոլոր քրիստոնէական հանդոյց-
ներուն:

Ահա մօր հանդոյցը: Զգո՛ւ յը, այս հարցին մասին
սլէտք է խօսիլ աւելի եւս մութ: Փարիսեցիները մտիկ
կ'ընեն:

Այս հարցը նախաքրիստոնէական ծաղում ունի:
Սակայն Յիսուսի վարդապետութիւնը իւրացուց զայն:
Այսօր կողմը դարձած է այն զգացումը, որ մօր հա-
մար կը զոհարեքէ դաւակնեցող անկախութիւնը: Դժ-
ւար է նոյն իսկ հողերանական քննութեամբ վերլուծել
ծնեալին հանդէպ ծնողին զգացումներուն գիտական
իմաստը: Եւ սակայն որքա՞ն կը շահագործուի այս
զգացումը կեանքի մէջ: Քանինե՞ր ենթակայ են այդ
զգացումին գերիշխանութեան, անոնց՝ որ սպրած են
իրենց օրերը, և յանուն երախտիքի՝ կեանք կը ծծեն,
որովհետեւ կեանք պարզեւած են:

— Իրբեւ կով, սլարդ է ինծի համար այդ հարցը:
Բայց լռէ՛, դեռ կանուխ է խօսիլ այդ հարցին մասին:
Քիչ առաջ կը խօսէիր զգայութեան մասին: Ի՞նչը մղեց
քեզ դէպի զգայարանքի վարդապետութիւնը: Մարդ-
կային քաղաքակրթութիւնը յողնեցուց իմացական ար-
տը յաճախակի հերկումներով: Այդ յողնութի՞ւնն է,
որ կը մղէ քեզ դէպի զգայարանքը, վայրկեանի զգա-
յութիւնները:

— Կո՛վ, յողնած մարդը կը լինուէ մէկ բան, —
հաճոյքը, խաղաղեցնելու համար իր հողին:

— Բայց վա՛յ այն քաղաքակրթութեան, ա՛յ
երիտասարդ, որ զգայական ճարտարապետութիւն մը
ունի: Մարդուն իմացականութիւնը յողնեցաւ և դօսա-
ցաւ: Իսկ եթէ զգայարանքնե՞րը յողնին, անհանդուր-
ժելի պիտի ըլլայ ձեր տառապանքը: Հիմա «դարու

ցաւը» ճնշում մըն է միայն, շնչահեղձութիւն մը:
Վաղուան զգայական դարու ցաւը Փիղիքական անբու-
ժելի տառապանք մը պիտի ըլլայ:

— Ուրեմն, զգայարանքնե՞րն ալ...:

— Երիտասա՛րդ, խօսեցաւ կովը բանալով իր մեծ
աչքերը, կը տեսնե՞ս աչքերուս մէջ քու պատկերդ:
Երկու պատկերներ են, բայց ես մէկ կը տեսնեմ քեզ:
Կեանքն ալ երկուքի դումար մըն է: Երկու աղեղներ,
զգայական ու իմացական, իրարու զօրուելով կը կազ-
մեն մեծ շրջանակ մը: Իւրաքանչիւր աղեղ, առանձին
մղում մը ունի. երբ կը միանան իրարու, մղումը կը
դադրի: Շրջանակը պատկերն իսկ է լուսութեան և յա-
ւիտենականութեան: Աղեղը անկատար է, շրջանակը
կատարեալ:

Թող քու հողոյդ մէջ զգայութիւններդ ու մտա-
ծումներդ շրջանակ մը դծեն: Թաթխէ այդ անկատար
աղեղներդ լուսութեան մէջ, ուր անոնք պիտի դառնն
իրար: Լուսութիւն մը, որ կենդանիները միայն ունին:
Լուսութիւնը կը հասունցնէ ամէն բան և պաշտամունքի
կը կանչէ:

Եղիպտացիները կը պաշտէին լուսութիւնը, և լուս-
սորվեցնելու համար, կով կամ եզ, վերջապէս կենդանի
մը դրին իրենց մեհեանին մէջ:

ՄԵՐ ԳԻՒՂԻՆ ԼՃԱԿԸ

(Հ Է Ք Ե Ա Թ)

Ահա մեր գիւղը, — Արմա՛շն է :

Պէլէնի սարէն իջնող դառիթափին վրայ, մեր տուները կը կենան ուխտաւորի կառքերու նման : Մէկ կողմէն խորունկ ձոր մը, — որ դե՛հ վերէն, կը ճեղքէ Հէլէճի կատարը, — ու միւս կողմէն Չէթլինի ձորը, — որ Մեծ-Կամուրջին տակէն կ'անցնի ու թըջէ Գարուն Արտերուն փէշերը, — կը թափին գիւղին առջեւը կաղմուած աւազանի մը մէջ ու կը կորսուին հեռուն, դէպի Մեղրաժայռ :

Բայց հիմա լճակ չունի մեր գիւղը :

Յամքած աւազան մըն է ատիկա, որ կը կազմուի գիւղին տակը Դիւրտիւրի սլառկուկ դաշտին վրայ : Քովերէն կը բարձրանան Խասկալ հայ գիւղին ու հանդիպակաց բլուրին գառերը և առջեւէն մինչեւ Մեղրաժայռին հեռաւոր մշուշոտ բարձունքը, դաշտը կը լայննա՛յ, հա՛ կը լայննայ :

Ու Պէլէնի սարէն վար նայող մը կը տեսնէ ահա՛ դին դաշտ մը, որուն յատակին վրայ իրարու կ'ընդեւուրուին եօթը ձորեր, եօթը օձերու նման :

Ես, պղտիկուց, ջուրի լայնալիր աւազան տեսած չունէի : Ալանտուղի կռնակին վրայ, աշնան, երբ ան-

տառներուն մէջ կը մաղէինք հազորանիւ և զղեարի ծառերը, թուրք գիւղին մէջէն անցած ատենս, վախն ի վախ, տուներու արանքէն, կը տեսնէի փառքը Ալանտուղի պառկած ջուրերուն, տեղ մը՝ ժամու տաշած քարերու նման մաքուր, ուրիշ տեղ մը երիցուկի արեւ առած դաշտի պէս, ու երկու տունի մէջ սեղմուած մաս մըն ալ՝ զոր կը գծաւորէին եղէգները, ինչպէս փղոսկրեայ սանտր մը :

Ես շա՛տ կը սիրեմ ջուրին լայն երեսները :

Գիւղին մօտիկ ուրիշ բարձունքէ մը դիտեր եմ իզմիթի ծովը, որ մեր հեռաւոր հորիզոնին վրայ սարէ սարէ քաշուած չունի մը կը նմանի :

Ես, պղտիկուց, երբեք չեմ տեսեր երկնքի պէս բացուած ջուրեր : Ու ինչ որ պիտի պատմեմ հիմա, կը պատկանի հեռաւոր թուականի մը, երբ անսուրբ մարդ մը դեռ չէր ցամքեցուցած մեր գիւղին անուշ լճակը :

Մեր գիւղը, ներկայիս, ունի ցամքած աւազան մը և անոր հէքեաթը :

Գեղեցի՛կ, գեղեցի՛կ լճակ մըն էր ան :

Կ'ըսեն թէ առտուն տեսնողը գայն պիտի նմանցնէր գիւղին մակաղած ճերմակ գառներուն, իրիկունը տեսնողը՝ մահիճի մը, նոճիի նրբաթել խարտեաշ ծաղիկներ վրան : Գիշերը լուսնկայ մը ունէր, որ կը կենար ճիշդ կեդրոնը, հրաշագեղ սիւնի մը նման, մէկ ծայրը՝ ջուրերուն մէջ լողացող յաւերժահարսի մը իրանին պէս ազուր, միւս ծայրը՝ լերան կամ երկնքին կռթնած թագաւորի գլխու նման, ոսկի շաղով թրջած : Վերը, երկնքին վրայ, թափուած աստղերը նման էին բիւրաւոր ճնճղուկներու :

Ու, դարձեալ, կը պատմեն թէ հովիւ մը, գիշեր մը, լճին եզերքը քնանալու պահուն՝ ջուրին խորը տեսեր է, որ հազա՛ր հազա՛ր ճերմակ շուշաններ վեր վեր կը բարձրանան, իրենց շրթներէն դուրս նետելով ոսկի պղպջակներ, տալապի գնդիկներու պէս մանտրաիկ:

Ու, ի՛նչ օրեր էին, ի՛նչ օրեր, կ'ըսէին ինծի պատմողները շարունակաբար:

Օ՛ր գիւղս իմ արքայավայր:

Երկինքէն կը թափէր սուրբ նաշիհը, ճերմակ ու թափանցիկ ամպի մը նման լճակին արտեւանունքը կազմող անտառին վրայ: Ու մարդիկ սաղարթներուն վրայէն կը քաղէին քաղցրաքաղցր մանանան, լեցնելով իրենց բոլոզները երկնապարզեւ խորխոխով:

Իարե՛ր էր երկինքը, գեղեցիկ էր լճակը ու երջանիկ էին գիւղացիները բոլոր: Յաւերժահարսերը իրենց սնունդը կուտային գիւղացիին, որպէսզի չուտէ պիղծ կերակուրներն օտարին:

Չուլալ ջուրով, ջրանուշները կը բուժէին բոլոր ախտավարակները, որոնք օտար չէին ու կը պաշտէին գերեհը:

Եւ մեր ձորին ու անտառին վրայ միշտ կախուած կը մնար առտուան մշուշը՝ սրբազան ամպի մը նման:

Մակայն, ո՛վ դժբախտութիւն, օր մը գիւղին տղան բորոտած կը վերադառնար օտար աշխարհէն: Պժգալի ախտը վարակեր էր դայն, որովհետեւ օտար աշխարհ գացեր՝ անսուրբ կերակուր էր կերեր: Աստուածներուն տուած ախտը չի բուժուիր, կ'ըսէ իմաստութիւնը գիւղացիին: Ու տղան, գիւղին համարբոյժ ջուրով մաքրուելու համար, մտաւ լճին մէջ:

Աղտոտեցա՛ւ ջուրը, պղծուեցաւ ջրանուշներուն մահիճը:

Եւ իջա՛ւ պատուհասը:

Եօթը ձորեր բացուեցան աւազանին յատակին վրայ և լճակին ջուրը, աղջկան մը մերկ թեւերուն նման, խոյս տուաւ ձորերուն մէջէն, դէպի անծանօթ ու մաքուր գիւղաշխարհներ: Այն ատեն լճակը դարձաւ ճախճախուտի ծաղիկ մը, որ թօշնեցա՛ւ, թօշնեցա՛ւ ու չորցաւ:

Այժմ ցաւը սրտիս վրայ՝ ասոր անոր կը պատմեմ հէքեաթն իմ հարուստ գիւղիս և իր երնէկ օրերուն, որ դացին:

Լճակին տեղը կը մնայ տակաւին աւազանը, որուն յատակին վրայ եօթը ձորեր, եօթը օձերու նման իրարու ընդելուզուած, կը ձեւացնեն տղու խաղի մը պատկերը: Դիւրտիւրի դաշտն է ան, ուր ցանք չ'ըներ գիւղացին, ու ցանքը յաջող չ'երթար հոն, — հո՛ղն ալ պատժուած է: Միայն ձորին անկիւնը մեծ ջաղացք մը կայ, որ պոռալով ու դոռալով, տքնելէն ու քրտնելէն, ցորեն կ'աղայ և ալիւր կը շինէ գիւղին: Վասնզի ա՛լ երկինքէն չիջաւ սուրբ նաշիհը:

Հիմա, երբ Պէլէնի բարձունքէն առտու մը վար նայիս, կը տեսնես որ ճերմակ ու թափանցիկ մշուշ մը, մանանայի պէս, կը դողայ լճակին տեղին վրայ ու ձորերուն վերեւ, արցունքի նման ցօղեր կը նետէ, յետոյ կը հալի ու կ'երթայ, իսկ ձորին մէջ, քարերուն արանքը անշարժացած ջուրը կը կանանչնայ, կը բորբոսի, կը հոտի ինչպէս բորոտը, որ օտար աշխարհ գնաց և անսուրբ եղաւ:

Ջ Ա Տ Ի Կ (*)

Ա. — ՊԱՐՏԵՋԻ ՄԸ ՄԵՋ

Գիշեր է: Լուսնկայ: Երկիրը կը քնանայ: Երկինքը փռշի է, մաշած արծաթի գոյն: Աստղերը ծլեր են առատ, այնքա՛ն մանորտիկ:

Քուռի մէջ է պարտէզն ալ, բայց կը սարսռայ շամանդադին տակ գովանուշ: Արթուրն է միայն սախակը:

ՍՈՒՍԱԿԸ. — Երջանի՛ր կ եմ, երջանի՛ր կ եմ: Որովհետեւ թառեր եմ կողքիդ, ու կը շնչեմ քեզ: Գիշերը կը պտըտի սրարտէզին մէջ, մատները դրած իր շըթներուն: Եւ խաղաղութի՛ւն կը բաշխէ քնացողներուն: Բայց ի՞նչպէս քնանամ ես, ո՛վ վարդ: Իմ սէրս չի քնանար, և իմ կտուցներս չեն ուղեր լուել: Վասնզի իմ կեանքս սէր է միայն, և ես կ'ուզեմ հաւատարիմ մնալ ճակատագրիս: Երջանկութեանս համար՝ բաւական է մնալ քովդ, դիտել քեզ և օրհնել, անդադա՛ր օրհնել...:

ՎԱՐԴԸ. — (Քուռին մէջէն) Երգէ՛, երգէ՛, ո՛վ

(*) Հին երբայեցիները, Ապրիլ ամսուան սկիզբը, երբ դարնան առաջին տերեւներուն հետ սերմը կը ծլի եւ կ'ազատուի հողէն, կը տօնէին կանանչութեան տօն մը: Բայց յետոյ, մովսիսական կանոնադրութեամբ, այդ տօնը դարձաւ Զատիկ, ի յիշատակ այն օրուան՝ երբ Եհովա, գառելով եւ խնայելով երբայեցիները, սղաննեց միայն Եզրայտացիներու զաւակները:

իմ սիրականս, քու երգը կը գինովցնէ զիս, որովհետեւ անուշ է լեռներու ծաղկահամ և անսպառ աղբիւրներուն կարկաչին նման: Երգէ՛ անդադար, քու ձայնդ զիս յղի կը դարձնէ, որովհետեւ կը թափանցէ ամբողջ մարմինս: Քաղցր է քնանալ սիրականին ձայնին մէջ, զի այսպէս միայն կը մարին երկունքի ցաւերս: Հողը տաքցաւ ոտքերո՛ւս տակ և կարմիր արիւնս կը խուժէ կոկոններու մէջ, զորս անհամար մատներու նման բարձրացուցեր եմ վեր: Ձերմ ունիմ, կը զգամ որ ուշ չէ երկունքս: Սոխա՛կ, ըսէ ինծի պահը գիշերուան...:

ՍՈՒՍԱԿԸ. — Ծաղկամա՛յր, լուսնկան ծոած է հորիզոնին, և կը նմանի սպիտակ վարդի մը: Աստղերը չափազանց փայլուն են, և կը նմանին ոսկի առույտներու: Դղեակին աղջկան պատուհանին մէջ լոյսը մարեկէն ի վեր՝ ինը մեղեդի երգեցի և երեք անգամ սրնդահարեցի: Ուրեմն, մօտ է առաւօտը: Բայց ի՛նչ գերահարաչ գեղեցկութիւն մը դժուած է այս պահուս, աչքերդ բանայիր ու տեսնէ՛ր, ո՛վ իմ սիրելիս: Երկինքին վրայէն շամանդադը շղարչի մը պէս կը սահի, բայց չի վերջանար: Երկինքի պտուկներէն կը կաթկթի պարիկներուն կաթը, և հրթիռներ կը կաղմուին միջոցին մէջ: Դղեակին տանիքը օձուած է ազնիւ իւղով մը...:

ՎԱՐԴԸ. — Մեծ տաղաւարի մը գիշերն է այս, գուշակեցի՞ր, սիրականս:

ՍՈՒՍԱԿԸ. — Օ՛ր երջանկարեր պահ, ուրախութեանէս կը վախնամ որ երգս հեծկտուք մը դառնայ: Ահա կը սկսիմ եօթներորդ տաղս: Ո՛վ իմ վարդս, կը սիրե՛մ քեզ, կը սիրե՛մ քեզ ամէն ժամ և ամէն պահ, վիշտերուս մէջ և ուրախութեանս մէջ, գիշերուան մէջ և ցորեկուան մէջ, հեռուն ըլլաս կամ մօտիկ ըլլաս, սպասասխանես ինծի կամ չպատասխանես...:

ՊԱՐՏԵՂԸ .— Լուսթի՛ւն, լուսթի՛ւն, յաիշտա-
կութեան մէ՛ջ է սոխակը, մտի՛կ ըրէք իր անմահ դե-
ղօնը . . .

ԳԻՇԵՐԸ .— (Հեռուէն) Խաղաղութի՛ւն ամէնուն,
խաղաղութի՛ւն . . .

ՍՈՒՍԿԸ .— . . . Եթէ դատաւարտուիմ լուսթու, դի-
տեմ որ վիշտս պիտի շատնայ, բայց սէրս սէր է, խո՛ր
և անսպառ, անջնջելի և անմահ: Ոչինչ կրնայ փոխել
դայն: Զի՛դուն գեղեցիկ ես և հաճելի, դոյնդ հալած
մեղրի պէս, պատկերդ՝ վառած ջահի պէս, հասակդ՝
արքայական վրանի պէս: Շունչդ գինեւէտ է, և խո-
րոված խնձորի չափ տաք . . .

ԳԻՇԵՐԸ .— (Մօտեցալով) Խաղաղութի՛ւն ամէ-
նուն, խաղաղութի՛ւն ամէնուն, խաղաղութի՛ւն: Վաղը
Զատիկ է, պիտի ծաղկի՛ երկիրը, պիտի ծիա՛ն ան-
տառները՝ կանանչ լճակներու նման, արտերը՝ զըմ-
բուստէ երկինքի մը նման: Զուրերն իսկ պիտի գունա-
ւորուին, և երկինք պիտի ստանայ ամառնային հասուն
պտուղի մը դոյնը: Թաղարները ոսկի ընծիւղներ պիտի
արձակեն, ծաղիկները պիտի բանան իրենց դոյնզգոյն
շրթները, թիթեռնիկներու պարը պիտի վէտվէտի դաշ-
տերուն վրայ: Գինովցնող բո՛յր մը պիտի բարձրանայ
միջոցին մէջ . . .

ՍՈՒՍԿԸ .— Ո՛վ վարդ, յաւիտենական սիրականս,
կը լսե՞ս . . .

ԳԻՇԵՐԸ .— Պիտի բացուի վարդն ալ, ամէն կոկոն
պիտի դառնայ կըտր բաժակ մը, ինչպէս կորնթարդ
ծիծերը նորահաս աղջկան: Բայց խաղաղութի՛ւն, խա-
ղաղութի՛ւն մինչեւ առաւօտ: Քնացէ՛ք, քնացէ՛ք . . .

Ընդհանուր աղմուկ մը: Արթնցած են բոլորը,
պարտեգիւն մէջ: Կէս-փուն, կէս-արթուն, կը խօսակցին:

ՍՈՒՍԿԸ .— Փա՛ռք հրաշքին: Ո՛վ կրնայ տրտում
ըլլալ այս սրահուն, ո՛վ կրնայ զրկուած ըլլալ սէրէ:
Սէ՛ր, սէ՛ր, դո՛ւն որ կը լեցնես միջոցը և յարութիւն
կուտաս ամէն բանի, փա՛ռք քեզ: Ո՛վ կ'ուզէ, որ եր-
գեմ իրեն համար: Վա՛րդ, պիտի հսկեմ մինչեւ առա-
ւօտ, պիտի երգեմ անդադար, որպէսզի քու երկունքդ
ըլլայ դիւրին և երջանիկ:

ՎԱՐԴԸ .— Կը զգամ, որ սիրտս կը պատուի և
արիւնս բոցի նման կը տարածուի:

ՍՈՒՍԿԸ .— (Սկսելով նոր մեղեդի մը) Օրհնու-
թի՛ւն, օրհնութի՛ւն . . .

Բ.— ԲՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Առաւօտ: Մեղրի նման արեւ մը: Նշեցին արիւնի
գոյն շղարշով մը ծածկուած, սալորեցին ծաղիկներու
սալխակ ձիւն մը հագած:

Ընդհանուր է ուրախութիւնը ցառագայթի մը
պէս: Երգի և ծիծաղի աղբիւրները կը յորդին դաշտե-
րէն ու գիւղերէն:

ՀՈՎԸ .— (Արագ վագելով) Զատի՛կ է, ծաղկե-
ցան, այս առտու, ջուրերն ու թուփերը: Թոյլ տուէք,
որ երթամ պարծենալ թէ ինչե՛ր տեսայ ես: Աւետի՛ս
ամէնուդ, Զատիկ է, — իմ շղարշս վարդի ջուր թաթ-
խած է, — եօթը կութ ծաղկի ցօղ խմեցի, — գինովցայ,
խենդի պէս պարեցի, — աղջրկան մը բերնէն երգ մ'ա-
ռի, — շունչն անուշ անոր մէջ կը բուրէր, — ու տարի
մանչու մը յանձնեցի, — մօրն ըսի. «Այս տղուդ հարս
մը բեր» . . . օ՛հ, օ՛հ, օ՛հ . . .

ՍՈՒՍԱԿԸ.— (Բնութեան ճայներուն մէջ անոր երգը կը լսուի կտրատ կտրատ) Շառագոյն վա՛րդ, քու թուփդ կը նմանի ոսկեղէն տնակի մը, որուն տանիքին վրայ կրակի դոյն լուսամտիփններ դրուած են:

ՎԱՐԴԸ.— Գիւղին բոլո՛ր սիրահարները, ծծեցէք իմ շունչս, և ձեր սէրը պիտի աւելնայ, ու ձեր արեան մէջ պիտի պատրաստէ ջերմութիւն մը, համբոյրի ակտորժակ մը, և երանելի գիրկընդխառնումներու կարօտը:

ՍՈՒՍԱԿԸ.— ... Ձի միայն սէրն է սկիզբը կեանքին: Սէ՛ր, պատճառ՝ վշտի և ուրախութեան, կեանքի յարատեւութեան, երկունքներուն և յարութիւններուն:

ՁԱՆԳԱԿՆԵՐԸ.— Փա՛ռք յարութեան, առտուան, իրիկուան երգն այս է անվախճան: Կը ծնին, կը մեռնին— կը մեռնին, կը ծնին,— միշտ կ'երթան ու կուգան,— երգն այս է անվախճան: Փա՛ռք յարութեան:

ՍՈՒՍԱԿԸ.— ... Ձի սէրը անմահ է, կենդանարար և ստեղծիչ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ.— Եթէ կեանքը Ձատկի արարուած մըն է, տո՛ւր մեզի ալ, Տէ՛ր, առաւօտն այդ Ձատկին: Կը յորդի՛ մեր սէրն ու կարօտը, յօժար ենք երկունքի ցաւերուն, և պատրաստ՝ վերջնելու գերեզմանաքարը: Տո՛ւր մեզի կոչել. «Փա՛ռք յարութեան»:

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Եկայք շինեցուք մեզ աշտարակ, որոյ լինիցի գլուխն մինչեւ յերկինս, եւ արասցուք մեզ անուն յառաջ քան գալտեյ ի վերայ երեսաց ամեհայն երկրի:

ԳԻՐԲ ԾՆՆԴՈՅ, ԳԼ. ԺԱ. 4.

Ու Սենաարի դաշտին պատկերն այսպէս էր.

Բաբելոնի Հովտաց դռնէն մինչեւ Սոկքովթի ձորը, և արեւմուտքէն՝ մինչեւ կղզիներու ծովը, լայնարժրը այս տարածութեան մէջ, որուն շառաւիղը երեք անգամ եօթը «չարաթ օրուան ճամբայ» երկարութիւն ունէր, տնկուած էին ճերմակ վրաններ, ինչպէս փիւնիկեան առաջաստանաւեր: Պարպուած էր սպիտակ Բաբելոնը, որ, ջուրերու երկու արծաթ բաղուկներու վրայ, կարծես կ'օրօրուէր գեղեցիկ լաստի մը նման՝ ձիւնէ ամպհովանիով մը դարդարուած: Ոչ ոք կ'երեւէր պատուհաններուն մէջ, ուր ժամանակ մը կը նստէին պերճաղիճները և, թարթիչի պէս կորնթարդ նարնջագոյն վարագոյրներու ետեւէն, հաճոյքի կը կանչէին ասորի վաճառականները: Բոլո՛րը, բոլո՛րը մեկնած էին Սենաար, ուր եօթանասուն և եօթը թագաւորներ հաւաքած էին ժողովուրդը՝ կանգնելու համար աշտարակ մը, բա՛րձր, բա՛րձր և դարձեալ բարձր, մինչեւ այն աստիճան, որ ջուրերը չհասնին երբեք:

Այնտեղ էին Ամոհրացիները, Եդոմացիները, Բա-

բելացիները, Կարիաթարբացիները, Արուադացիները, Սամարացիները, Ջուզեցիները, Քասղուքացիները, Ամաթիացիները, Քոռեցիները, Ղուզացիները, Սովմացիները, Ելամացիները, Սիլիսթացիները, Փոնդիացիները, Սերոյիմացիները, Կապադովկիացիները, Գոմորացիները, Սոգոմացիները, Յերուսացիները, Սաղեմացիները, Քեռացիները, Մարերը և Հայկազունք:

Քողոզազոմոր թագաւորը, որ կ'իշխէր Ելամի ժողովուրդին վրայ, կը նստէր Գողան դետին եզերքը, Բեքէմի մէջ: Գետը կ'անցնէր նշեններու անտառէն, որ իր ծաղիկները խատուտիկ փոքրիկ ճրագներու պէս կը վառէր ջուրին յատակը, դարնան առաջին օրերուն: Պարտէզի մը մէջ, ուր թագաւորը իր վրանն էր դարկած, կար լայն աւազան մը, որուն յատակը տաւիղ մը կը ձեւացնէր: Գետին ջուրը բարակ խողովակներով կուգար կը կաթկթէր աւազանին մէջ, տաւիղի թելերուն վրայ, ստեղծելով հրաշալի երաժշտութիւն մը: Թագաւորը օրն ի բուն կը նստէր նշեններուն շուքին տակ, և իր պերճադիճներուն շաղիաղփին մէջէն՝ մտիկ կ'ընէր այդ տաւիղին երաժշտութիւնը, մինչ իր ժողովուրդը աշտարակին շինութեան համար բեւեկնի կը կրէր Եդիստանի ձորէն և մայրի՝ Լիբանանի լեռներէն:

Աստարովթ թագաւորը, որ կ'իշխէր Կարիաթարբացիներուն վրայ, կը նստէր Սիդամի մէջ: Ամառ առաւօտներն այգի կ'ելլէր և ձիով լորամարդի ու կաքաւ կ'որսար: Կաքաւները կը թռչէին, կը յիսխիտէին և իրենց յոգնութենէն թուփի մը մէջ կը մտնէին ու կու լային: Յաղթահասակ թագաւորը կը մօտենար, մանուկի մը հրճուանքով ձեռքը կ'երկարէր և ողջ ողջ կը բռնէր յոգնած կաքաւը: Յետոյ կը նստէր ծառամբարձ որթատունկերուն տակ և լորամարդի ու կաքաւ կը խորովէր՝ ճաշակելու համար մեղրահամ խաղողով,

մինչ իր ժողովուրդը, բոլորն ալ յաղթանդամ գիւղացիներ, ուսերով քար կը կրէին Սէլը լեռան քղանցքէն:

Սաղմանասար թագաւորը, որ կը տիրէր Ասորեստանցիներուն, կը նստէր Թիբոնի մէջ, դիցաշունչ քաղաք, որ, Յիուէլի լեռը բարձրացող ճամբուն վրայ, կը նմանի սլառկած վագրի մը՝ ահարկու աչքերը Սաղէմի յառած: Թագաւորը ամէն օր կը գլինովնար նուազներով, յետոյ կը մտնէր իր հարուստ կանանոցին մէջ հաճոյք ընելու, մինչ իր ժողովուրդը տակառնեցով նաւթ կը բերէր Սիդիլիմի ձորէն:

Արտաւաղը, թագաւորն Հայկազանց, կը բնակէր բլուրի մը վրայ, կապտաւուն ասուիէ վրանի մը տակ, որուն վարազոյրին սարդիոնէ եօթը ճարմանդները կը փողփողէին սպառնացայտ պահակներու աչքերուն պէս: Ու մինչ թագաւորը ներսը կը մրափէր քաղցրաբոյր ու տաք մուշտակներու վրայ, իր ժողովուրդը աղլուս կը շինէր աշտարակին համար:

Եւ աշտարակը կը բարձրանար եօթնանկիւն հսկայ շէնքի մը պէս:

Երեք հազար եղէգ բարձր էր արդէն գետնէն, և շրջագիծը՝ եօթանասուն ասպարէզ երկայն: Իւրաքանչիւր հինգհարիւր եղէգ բարձրութեան վրայ, աշտարակը կը վերջանար բոլորչի պատշգամով մը, որուն կեդրոնէն կը սկսէր նոր աշտարակ մը քիչ մը աւելի նեղ:

Բարեւալի գիտուն մը, Գամաղիէլ, այդ օրերուն կը յայտարարէր թէ երեք լուսնային ամիս յետոյ աշտարակը պիտի հասնէր երկնքի սահմաններուն: Այն ատեն Ոքոթիասի նետաձիգները, Հայոց աղեղնաւորները և խիզախ Քոռեցիները յառաջ պիտի անցնէին, պիտի ճեղքէին երկնքի կապոյտ պաստառը՝ դերի վարելու համար Եահվէն: Մարդիկ կ'ընդվզէին Եհովային դէմ, որ մահուամբ կը սպառնար իրենց: Կուզէին ապրիլ

ընդերկար, վայելել կեանքի բոլոր հաճոյքները և քաղցր մեղքին ծաղիկները: Կուղէին, որ իրենց անունը տեւէր սերունդէ սերունդ:

Ու ժողովուրդը կը տքնէր ու կ'աշխատէր առանց երբեք տրտնջալու: Երբ գիշերը կ'իջնէր, աշտարակին պատշգամներէն կը կախէին նաւթով լեցուն բոցավառ անօթներ, որոնք կը լուսաւորէին Սենաարի ամբողջ դաշտը: Եւ յողմած բազմութիւնը փոխանակ հանդէս-լու, ճաշէն յետոյ դուրս կ'ելլէր վրաններէն և կը պարէր ու կը զուարճանար: Խորոված ձուկին ճենճերն ու Եգիպտոսի սխտորին հոտը կը գրգռէին անոնց ունդերը: Այն ատեն, երբայցի աղջիկները, գրեթէ մերկ, կը պարէին ու կը կաքաւէին, մինչ ծերերը, սպիտակ ասուիէ իրենց լայն պարեգօտները հանդրիճած, դափ ու փող, սրինդ ու ծնծղայ, եղջիւր ու դանդակ և բազմաղի տաւիղներ բռնած՝ կը նուազէին կամ կ'ոստոտէին աղջիկներուն ետեւէն: Ասորիները երկարաձայն ու հեկեկուն երգեր ունէին, և անոնց աղջիկներուն պարը աւելի դալարումի կը նմանէր քան թէ ոստոտումի: Տխո՛ւր էր անոնց «Լուսնի պարը»: Եղոմացիներուն մորթը այրած աղիւսի դոյն ունէր. այնպէս որ երբ մթնշաղին մէջ պարելու կ'ելլէին, յայտնի չէր թէ ինչով ծածկած էին իրենց մարմինը: Անոնք չափազանց աշխոյժ էին և միսը կը խաղար իրենց վրայ: Անոնք միշտ զոյգերով կը պարէին և անպայման կիրք կար իրենց շարժումներուն մէջ: Օ՛ անոնց «Գիշերային փոքորիկ»ը — այրը գետնահակ, կաքաւի մը պէս՝ թեւ բանալու անկարող, խռովահար կը դառնար, իսկ էգը բարձրահայեաց ու թեւատարած, սարփինայի մը պէս կախուած, միշտ քօղ կը փոխէր իր կուրծքին ու դէմքին վրայէն, ու քօղին հետ դոյն կը փոխէին կուրծքն ու դէմքը: Կաքաւը կուլար փոթորկոտ երկնքին տակ,

ամպերը կը սահէին արագօրէն մերթ ծածկելով, մերթ երեւան հանելով լուսնկան:

Այսպէ՛ս կը զուարճանար ժողովուրդը գիշերուան խաղաղութեան մէջ, մինչեւ որ փողերը հնչէին աշտարակին բարձունքէն: Այն ատեն, կը մարէին բոլոր լոյսերը և քուն կը մտնէր ժողովուրդը:

Լոյս մը կը մնար միայն աշտարակին դադաթը, երկինքէն կախուած ծաղիկի մը պէս: Երբեմն կը բոցավառէր այդ առկախ ճրագը, լեզու կ'երկարէր երկնքին, կը խածնէր հողմավար ամպերը, բայց երբե՛ք, երբե՛ք չէր մարեր: Յաճախ այնտեղ կը հսկէր վարպետը, Բարուլա, երջանիկ երագներու մէջ թաղուած:

Կապտալիճ աչքեր ունէր ան, խորհուրդով և զգայնութեամբ լեցուն, և քրմական շրթներ, որ կ'արտայայտեն իմաստութիւնը աստուածային և հաճոյքը մարդկային:

Թաղաւորները իրեն յանձներ էին շինութիւնը աշտարակին, որ պիտի խրէր դարերու և պատմութեան մէջ՝ յաւերժացնելու համար արքայական անունները: Ու Բարուլա, քանի՛ կը բարձրանար աշտարակը, կը հրճուէր ու կարծես կը նայէր, ժամանակին մէջէն, պատմութեան հեռաւոր հորիզոններուն: Զուրերը չպիտի կարենան քանդել անոր հիմերը, փոթորիկը չպիտի կարենայ շարժել անոր յաղթ հասակը, ո՛չ ալ Եահվէն պիտի յաջողի դայն յանձնել կրակին: Մարդկային կամքը, աստուծոյ մը պէս, պիտի տիրէ ժամանակին վրայ:

Բարուլա կը սիրէր աշտարակը, և կարծես կ'ապրէր միայն աշտարակին համար: Սակայն աշտարակաշինութեան եօթներորդ տարին Բարուլայի հողին լեցունեցաւ նոր սէրով մը: Սկիւթացիները, երբ հիւսիսային երկիրներէն շինութեան նիւթեր կը փոխադրէին, ան-

նման աղջիկ մը նուէր բերին իրենց ճարտարագետին :
Բարուլա շատ սիրեց դայն և անուանեց Սիւլան, անու-
նովն այն ամսուն, երբ իրեն նուէր տրուեցաւ :

Գեղեցիկ էր Սիւլան, ամպի սիւնի մը պէս : Իր
կապտաւուն նախորտին վրայ մաղերուն հիւսկէնը կը
թափէր հաւամբդի ղեղին ծաղիկներուն նման : Լանջը
սկուտեղի մը պէս, վրան արքայական երկու թաղեր :
Բարուլա կը գզար թէ կը տկարանար ղեղանի աղջկան
առջեւ և իր հոգիին մէջ կը սրբուէր կ'անհետանար
պատկերն երկնամբարձ աշտարակին :

Գիշեր մը խոռվահար երազ մը տեսաւ : — Վրանի
մը տակ կը մրափէր : Երբեմն կը բանար աչքերը և ղի-
մացը կը նայէր : Վրանին վարադոյրը վերցուած էր և,
հեռո՛ւն, կը տեսնուէր ճերմակ աշտարակը, ձիւնապատ
լերան մը պէս աղուոր : Սիւլան կանգնած էր վրանին
առջեւ և նախանձով կը նայէր աշտարակին : Յանկարծ
լսեց, որ Սիւլան բարձրադաղակ կը խօսի աշտարակին
հետ .

— Գեղեցիկ եմ ես, տե՛ս, գեղեցիկ եմ և ցան-
կայարոյց : Ծրթները, որ կը հպին ինձի, կը տառապին
անուշ կիրքով մը : Իմ մորթս կ'այրէ հոգիները : Եւ ոչ
ոք կրնայ սնդեւ, երբ աչքերս կը յառեմ իրեն, թէ
յաւիտենականութիւնը աւելի կը նախընտրէ քան վայ-
կեանը : Ո՞վ է աւելի երջանիկ, իշխա՞նը, որ տաք թե-
ւերուս մէջ կը գինովնայ ու կը խայտայ, թէ թաղա-
ւորներդ, որոնց անունը կը պտըտցնես պատմութեան
մէջ, դո՞ւն, ցուցա՛նք...

— Գեղեցիկը ան է՝ որ կը տեւէ...

— Երջանիկը ան է՝ որ կ'ապրի...

— Ես կ'ապրիմ դարէ դար...

— Յոգնած մուրացիկի մը պէս, ձանձրացած
կենդանիի մը պէս... Մինչդեռ ես, գեղեցիկն Սիւլան,

դող կուտամ երիտասարդին, երա՛զ կուտամ բոլորին...

Սիւլան կը խօսէր ցասումով ու կիրքով, իսկ աշ-
տարակը կը պատասխանէր քրմական հանդարտու-
թեամբ : Ի վերջոյ փրփրեցաւ Սիւլան և քարեր նետեց
աշտարակին : Եւ յանկարծ, ո՛ սարսափ, աշտարակին
ամենաբարձր պատշգամբ փրթաւ, վար ինկաւ : Դողա-
հար արթնցաւ Բարուլա և տեսաւ Սիւլանը, որ խաղաղ
կը քնանայ՝ որթատունկի մը պէս իրեն փաթթուած :
Լուսնկան, իր դլխուն վերեւ, նունուֆարի կը նմանէր :
Ինքզինքն ապտեց Սիւլանի մերկ թեւերէն, պատշգամ
ելաւ և հաստատեց, որ աշտարակը յաղթահասակ կը
կանգնի Սենաարի դաշտին վրայ : Դարձաւ իր մահիճը
և Սիւլանի ստինքները փնտոեց :

Եւ սակայն Ծերոց Ժողովը նկատե՛ր էր, որ նոյն
թափովը չէր շարունակուեր այլեւս աշտարակաշինու-
թիւնը : Զանազան զրոյցներ կը խոռվէին Ժողովուրդին
միտքը : Եհովա ամպեր կը հաւաքէր Մէիլ լերան վրայ :
Տեղատարափ անձրեւը կը նեղէր գործաւորները :

Եւ Ծերոց Ժողովին կողմէ, Բարուլայի մօտ եկաւ
իմաստուն Մելքիրաս, որ թելադրեց արագացնել աշ-
տարակին շինութիւնը : Բարուլա նայեցաւ Սիւլանի աչ-
քերուն, ուր կարգաց կարծես. — «Ես եմ աշտարակը,
միայն դիս պիտի սիրես» :

Ինչո՞ւ, ինչո՞ւ Բարուլա չի կրնար այլ եւս աշ-
տարակը շինել այնքան ամուր և գեղեցիկ, որքան
առաջին օրերուն : Ու Բարուլա կը խոռվէր, քանի կը
տեսնէր որ փխրուն կը դառնան նոր շինութիւնները :
Սակայն ի՛նչ գեղեցիկ է Սիւլան :

Ժողովուրդը անհանգստութիւն ցոյց կուտար և
թաղաւորները կը յուսահատէին : Կարելի չէր իրենց
անունները բարձրացնել մինչեւ ամպերը, գրեւ երկնքի
պատառին վրայ, արհամարհել Եհովային օրէնքները,

հասնիլ յաւիտենականութեան ու տեւել զարերու և պատմութեան մէջէն: Կարելի չէ՞ր աշտարակը հասցնել աստղերուն:

«Ես եմ աշտարակը», կ'ըսէր Սիւվան, և Բարուլա հետզհետէ մոռցաւ միւս աշտարակը, որ կը կանգնէր Սենաարի դաշտին վրայ և երեք հազար եղէգ բարձր էր գեանէն: Կորսնցուցած էր իր ճարտարութիւնը և շինածը կը փլէր յաջորդ օրը, առաջին հովին ու անձրեւին: Ու վարը՝ ժողովուրդը, սրտնեղութեան և յուսահատութեան մատնուած, կը կռուէր անընդհատ: Շատեր կ'ուզէին իրենց երկիրը վերադառնալ:— «Զո՛ւր է, զո՛ւր է, աշտարակը պիտի այլ եւս չբարձրանայ»: Բարուլա հիմա կը հաւատար թէ լաւադոյն աշտարակն է միայն իր Սիւվանը:

Եւ փոթորկոտ առտու մը, ամպերու որոտումին և հողմերու կոծումին տակ, շարժեցաւ ու փլա՛ւ հսկայ աշտարակը: Եօթանասուն և եօթը թաղաւորներն ու աղբերը գիւհաւարի պէս փախան ու ցրուեցան երկրի չորս կողմերը:

Ս Ո Ւ Ա Կ Ն Ե Ր Ը

(Հ Է Ք Ե Ա Թ)

- Մա՛յր, մա՛յր, ի՞նչ անուշ կ'երգէ սոխակը:
- Այո՛, նուան հատիկս, անո՛ւշ կ'երգէ սոխակը:
- Ի՞նչ կ'երգէ:
- Մտիկ մի՛ ըներ, գաւա՛կս, դի՛ր գլուխդ բարձին վրայ և քնացիր: Երբ մեծնաս, կը հասկնաս:
- Ինչո՞ւ չի քնանար, ինչո՞ւ միայն գիչերը կ'երգէ:
- Քնացի՛ր, անմե՛ղս, քնացի՛ր: Նայէ՛, մո՛ւշկ կը հոտի վերմակիդ տակ: Ներս առ գլուխդ, որպէս զի քաղցր ջերմութիւնը օրօրէ միտքդ և քնանա՛ս, աղուոր երազնե՛ր տեսնես:

**

Մեր գիւղին պարտէզներուն մէջ ընտանիք մը սոխակներ կան, որոնք, մայիսի գիչերները, անընդհատ կ'երգեն, շատ քա՛ղցր կ'երգեն: Անոնց երգը այնքա՛ն անուշ է, որ նուազում կը պատճառէ մտիկ ընողներուն: Եւ մեր գիւղացիները կը հաւատան թէ սոխակները այդպէսով կը հմայեն ու կը կախարդեն գիւղին պատանիները, որոնք, թափանցելէ յետոյ մեղեդիին իմաստը, կը փոխակերպուին սոխակներու: Ահա թէ ինչո՛ւ մայրերը, դարնանային գիչերները, կը հսկեն իրենց քնացող գաւակներուն վրայ, որպէսզի չարթնան

անոնք, մտիկ չընեն սոխակներուն ու չկախարդուին: Վա՛յ ան մօրը, որ խոր քունի մէջ կը մտնէ, վասն զի իր տղան, քաղցրախօս սոխակին ձայնէն արթննալով, պարտէզ պիտի իջնէ, թռչուններուն մեղեդիին ունկընդէր՝ պիտի կախարդուի և սոխակ պիտի դառնայ նոյն գիշերը:

Մայրերը կը վախնան նոյն իսկ պատմութիւնն ընելու այն պատանիներուն, որոնք, հազիւ արբունքի հասած, գիշեր մը սոխակի փոխակերպուեցան:

Մամիկս ինծի պատմեց, սակայն:

Գանգուր կը կոչուէր տղան, և աղջիկը՝ Ամպեր: Զաւակներն էին երկու դրկից տուներու: Փարթամ թգենի մը կը բաժնէր անոնց տուները, որոնց ետեւ կը տարածուէին ջուրի պէս խորո՛ւնկ պարտէզներ:

Գիշեր մը սոխակները կ'երգէին, քա՛ղցր, քա՛ղցր, շա՛տ քաղցր:

Գանգուր արթնցաւ և անմիջապէս ելաւ անկողինէն: Գիշերադպեստով իջաւ պարտէզ: Այնտեղ էր Ամպեր, ժամ մը առաջ արթնցեր՝ հասկնալու էր եկեր սոխակին երգը:

— Գանգո՛ւր, կը հասկնա՞ս թռչունին երգը:

Տղան դլուխով պատասխանեց թէ չէր հասկնար:

— Եկո՛ւր մտիկ ընենք:

Գանգուր ձեռքը տարաւ Ամպերին, և ցանկապատին վրայէն իր կողմն անցուց գայն: Քանի մը ճիւղեր, որոնց դպեր էր Ամպեր, բուռ մը ոսկի թափեցին դեպտինը և կրակի պէս այրեցին մթազոյն մարգագետինը:

Նախ շատ էին սոխակները: Կարծես թէ բոլոր ծառերն ալ սրինգ շիներ էին իրենց ճիւղերը, որոնք

կը սուլէին, ջուրի ձայներ կը հանէին, յետոյ տաւիղի թելերու պէս կը թրթռային ամէնը մէկ:

Գանգուր և Ամպեր նստան քով քովի, և իրենց ձեռքերը դրին իրարու ուսի վրայ: Յետոյ դրուխները բարձրացուցին ծառերուն և մտիկ ըրին:

Խո՛ր էր գիշերը: Վարդերը բացուէր էին հնոցի պէս: Լուսինը աղջկան մը պէս կը լողար սպիտակ երկինքին մէջ:

ԳԱՆԳՈՒՐ. — (Պահ մը մտիկ ընելէ յետոյ) Ի՞նչ անուշ է երգը, ափսո՛ս որ չենք հասկնար:

ԱՄՊԵՐ. — Պէտք է հասկնանք: Մտիկ ընենք ու շաղրութեամբ:

ԳԱՆԳՈՒՐ. — Բառարանը...

ԱՄՊԵՐ. — Լռէ՛, կատակ մի՛ ըներ:

Մտիկ կ'ընեն, լուռ և երկիւղած: Հետզհետէ ձայները կը հատնին: Պահ մը յետոյ երկու սոխակներ մնացին, միւսները լռեցին: Մէկը կարծես կ'երգէր ջութակի վրայ: Զա՛յնն է, որ կը բարձրանա՛յ, կը բարձրանա՛յ, յետոյ երկար սարսուռներ կը յօրինէ և, յանկարծական լացի մը պէս, ձայնի այդ բարձրութիւնը կը փչրուի, կը թափի, կը տարտղնի: Այն ատեն, միւս ձայնը, լացող ու տերեւներուն մէջ փչրուող երգի խաղերուն հետ յարդարանք մը կատարելէ յետոյ, կ'ոստոստէ ծառէ ծառ, կը նետուի վեր, դէպի երկինք, և կը կարկաչէ աղբիւրի մը պէս միջոցին մէջ...:

ԱՄՊԵՐ. — Ի՞նչ անիմանալի մեղեդի...:

ԳԱՆԳՈՒՐ. — Կարծես թէ ես հիմա կը հասկնամ:

ԱՄՊԵՐ. — Ըսէ՛, ինծի ալ ըսէ՛...:

ԳԱՆԳՈՒՐ. — Կը թուի թէ գիշերուան քաղցրութեան մասին կը խօսին:

ԱՄՊԵՐ. — Թարգմանէ՛ր ինծի:

ԳԱՆԳՈՒՐ. — Սպասէ՛: (Ուշադրութեամբ մտիկ

կ'ընէ պահ մը: Յետոյ կը սկսի քարգմանել, ականջը տուած քոչուսին երգին և շրթունքները դրած՝ Ամպերի տաք քունքին մօտիկ:)

Խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն...:

Քա՛ղցր է գիշերը վարդի, սեփանի եւ անանուխի հոտերով:

Ո՛վ գարուն, երբեք չպիտի քնանամ՝ երգելու համար քու գիշերներդ:

Վասն զի անոնց ծոցին մէջ՝ ես կը գիտնուիմ ամէն վայրկեան:

Խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն...:

ԱՄՊԵՐ.— Ի՛նչ զգայուն են այս թռչունները:

ԳԱՆԳՈՒՐ.— (Կը քարգմանէ:)

Քնացող երկինքը իր սնդուսէ պատմուճանին բացուածքէն ցոյց կուտայ աղուոր ստինք մը: Աստուծոյ լոյսը փոշիի է վերածուեր, որպէսզի ոչ ոք տեսնէ ստինքը:

Սակայն փոշին ձիւնի նման հանգչեցա՛ւ գիւղին վրայ:

Ու երկրին վրայ եղողները կրնան տեսնել ստինքը, եթէ չքնանան:

ԱՄՊԵՐ.— Հէքեաթի կը նմանի: Իմ մամիկս երբեք նման հէքեաթ չի գիտեր:

ԳԱՆԳՈՒՐ.— (Կը դողայ, տաք է ձայնը: Կը շարունակէ քարգմանել):

Սակայն քու ստինքդ, ո՛վ իմ սիրականս,— ի՛նչ փոյթ թէ պզտիկ են — աւելի գեղեցիկ կ'երեւին:

Անոնք թաւշեայ քսակներու պէս են, եւնաչիհով լեցուն:

Իսկ քու այտերդ արքայական ոսկեղբամներու կը նմանին, քանի զանոնք կը համբուրեմ:

Երբ կը վազես մարդագետնին վրայ, մերկ կրունկներդ տեսնելով՝ կ'ըսեմ.—

Ահա երկու կաքաւներ, որ կը փախչին՝ ցածէն թռչելով:

ԱՄՊԵՐ.— Գանդո՛ւր կ'ուզեմ լա՛ւ, բարձրաճա՛յն լալ:

ԳԱՆԳՈՒՐ.— Ինչո՞ւ:

ԱՄՊԵՐ.— Որովհետեւ այս երգը շա՛տ քաղցր է:

ԳԱՆԳՈՒՐ.— (Գիւնով, ձայնը սարսուռի պէս արագ ու անուշ, կը շարունակէ քարգմանել):

Մօտեցի՛ր, ո՛վ իմ սիրականս, մօտեցի՛ր, կտուց կտուցի տանք:

Թափահարէ՛ թեւերդ, սարսու՛, հեծեծէ՛:

Տե՛ս, սիրոյ դողը ի՛նչքան նուաղեցուց իմ ձայնս:

Պահ՛ը անո՛ւշ է, հեշտանքով ու կիրքով լեցուն:

ԱՄՊԵՐ.— Գանդո՛ւր, այնպէս ըրէ ինձի, ինչպէս թռչունը կ'ըսէ:

(Կը համբուրուիմ):

(Սոյսակը կ'երգէ):

ԱՄՊԵՐ.— Հիմա կարծես թէ ե՛ս ալ կը հասկնամ: (Կը քարգմանէ, շրթունքը դարձուցած Գանգուրի

չրքներուն: Եւ անոնք, այսպէս, կը նմանին քոչուրներու, որոնք բաներ մը ունին իրարու խոստովանելիք):

Մէրն անո՛ւշ է, բայց իմ սիրականս աւելի անուշ է:

Ես անոր մօտն եմ ամէ՛ն գիշեր, ամէ՛ն գիշեր: Գիշերն անուշ է, բայց աւելի անուշ է այն գիշերը, երբ ես կը խօսիմ սիրականիս հետ: Խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն...:

ԳԱՆԳՈՒՐ.— (Փոխասացի պէս, կը քարգմանէ շարունակելով)

Գուն ուհանի տերե՞ւ ես ծամեր,
Գիշերը ուհանի հոտո՞վ է լեցուեր,
Այսքան անուշահոտութիւն երբեք չեմ առեր,
Ահա թէ ինչո՞ւ գինով եմ դարձեր:

ԱՄՊԵՐ.— (Կը քարգմանէ)

Ես սիրոյ աղբիւր դարձայ,
Կը հոսիմ, կ'երգեմ գիշերն ի բուն:
Մօտեցո՛ւր շրթներդ ու խմէ՛, Որպէսզի բերնիդ մէջ թափիմ ու կարկաչեմ:

ԳԱՆԳՈՒՐ.— (Կը քարգմանէ)

Կը մեռնիմ յօժար, չեմ ուզեր ապրիլ առանց սիրոյ...

ԱՄՊԵՐ.— (Իրարու բերնէ գողնալով երգը)

Գարնան ջուրերուն կը յանձնեմ մարմինս, եթէ սիրել արգիլեն...

ԳԱՆԳՈՒՐ.— (Նոյնպէս)

Վասնզի կեանքն առանց սիրոյ անվերջ տառապանք է...

ԱՄՊԵՐ.— (Նոյնպէս)

Մինչ սէրը քաղցր է, անո՛ւշ ինչպէս երազը:

ԳԱՆԳՈՒՐ.— (Ալ չի քարգմաներ) Ամպէ՛ր, նուաղում կը դրամ: Անծանօթ ուժ մը բռներ է զիս, և երգելու կը մղէ: Վախնամ սոխակ դառնամ...:

ԱՄՊԵՐ.— Մխասի՛ն, մխասի՛ն, մխասի՛ն...:

ՍՈՒԱԿԸ.— (Այս անգամ պատանիի ձայնով, աւելի մօտէն, աւելի մարդկային)

Օրհնութի՛ւն թող թափի բոլոր այն սիրահարներուն վրայ,
Որոնք քեզի կու գան, ո՛վ խաղաղ գիշեր,
մոգակա՛ն գիշեր, անձառելի՛ գիշեր:
Օրհնութի՛ւն, օրհնութի՛ւն, օրհնութի՛ւն...:

Ու այլ եւս չվերադարձա՛ն անոնք, կ'ըսէր մամիկս, որովհետեւ սոխակ դարձան:

Եւ անոնք, ինչպէս նաեւ բոլոր պատանի սիրահարները, որոնք սոխակի փոխակերպուեցան մայիսեան գիշերներուն մէջ, կուգան ու կ'երգեն մեր պարտէզներուն խորը, երբ մայրերը քնանան: Քաղցր տաղերով կը կախարդեն պատանիները, աղջիկ ու մանչ, որոնք արբունքի մօտեցած են:

Մեր գիւղին մէջ այսպէ՛ս կը շատնային սոխակները:

ԻՆՆԵՐՈՐԴ ՏՐՏՄՈՒԹԻՒՆ

Եկո՛ւր, երիտասարդ սիրտս, ա՛լ հեռանանք քաղաքէն: Աւարտեցաւ արձակուրդը, ժամ է մեկնելու:

Գիտե՛մ, շատ երիտասարդ ես, և ծարաւ՝ հաճոյքի առուակին: Ողջ կաքաւի մը պէս՝ կը դալարուիս ձեռքիս տակ: Կը հեծկլտա՛ս, կ'աղերսե՛ս, կ'ուզես որ ազա՛տ ձգեմ քեզ: Կը զգամ ցաւը, ո՛վ սիրտս: Խցեցի զգացումներուդ ծորակները, յորդահոս և բարկաճայթ, ուզեցի ցամքեցնել սիրոյդ աւազանը, ուր կը լողնար դիցուհի մը, փորձեցի բաժնել քեզ զգայալարիկ աշխարհէն, ուր են ընկերներդ, յուսացի որ դուն վերջապէս պիտի բարձրանաս իմաստութեան պարունակները, գերմարդերու սկեպտիկ մթնոլորտը, արհամարհելով տառապանքն ու երջանկութիւնը, որոնք կը ծաղկին զգացումներու ծովին մէջ:

Ո՛վ իմ տղայ սիրտս, ծալի դարկի ամէն անգամ, որ անցար, կեանքիդ մատղաշ օրերուն մէջէն, զսպուած ու զրկուած, սեղմելով տառապանքիդ բերանը, յուսալով հեռաւոր խաղաղութեան:

Կորովի՛ր սիրտս, յաճախ յաղթեցիր փորձութեանց: Բայց ինչո՞ւ կուլաս հիմա, ինչո՞ւ տկարացար քաղաքին մէջ, ուր եկար արձակուրդով: Կ'ըմբոստանա՞ս, զգացումներդ կ'ուռի՞ն նորէն, ալ չե՞ս ուզեր հնազանդել ինձի:

Դո՛ւրս, դո՛ւրս ելի՛ր քաղաքէն, անզգամ սիրտս, վասնզի քաղաք մտած պահուդ իսկ բանաստեղծ դար-

ձար նորէն: Աւարտեցաւ արձակուրդը, հեռանա՛նք, հեռանա՛նք քաղաքէն, հեռանա՛նք, երիտասարդ սիրտս:

*

**

Տե՛ս, վերջալոյսը հասունցած այգիի մը պէս է: Ամպեր կան, որթատունկի խոշոր տերեւներու նման, ամպեր՝ ողկոյղի պէս հիւսուած: Ու երկիրը, հորիզոնին մօտ, գինիի գոյն ունի: Երկինքին փորին վրայ անուշ աղուամաղ մըն է բուսեր: Քաղաքին դրան վրայ, արեւը կարմիր ու լեղակազոյն դրասանգներ է կախեր: Ահա, մեր մօտէն, աղջիկներ կ'անցնին:

Անոնց ստինքները դանդակներու կը նմանին: Անոնց նայուածքը կրակ կը ցանէ ճամբուն վրայ, երիտասարդ տղոց ոտքին տակ:

Բայց, տե՛ս, ես կը քալեմ անսայթաք: Հետեւէ՛ ինձի, խոցուած սիրտս: Գոցէ՛ աչքերդ, ծածկուէ՛ վերարկուիս տակ: Ահա դուրս կ'ելլենք քաղաքին դուռներէն:

Կը մերժե՞ս քալել, ուժ չունի՞ս քալելու, չե՞ս ուզեր հեռանալ: Օ՛ր, տրտմութի՛ւնը որ ամպի նման կ'արտահոսի աչքերէդ:

Ըսէ՛, ի՞նչ ունիս:

*

**

Այսպէս խօսեցաւ իմ սիրտս:

— Ո՛վ իմ երեսուն տարիներս, այն քաղաքին մէջ, ուրկէ կը հեռանանք, աղջիկ մը սիրեցի: Ու իմ սէրս այսպէս էր. բարկ թթուի մը պէս կը կսկծացնէր և քաղցրաքաղցր անուշեղէնի մը պէս կ'այրէր զիս, երեսներուս վրայ տաք բամպակ դրուած էր, աչքերուս մէջ

կը դողար մշուշ մը, հողիս երազներով բեղմնաւորուած էր: Երջանկութիւն և տառապանք խառնուած էին իրարու: Կեանքը ինծի կը թուէր հաղուադիւտ պտուղ մը, թթու և անուշ, զոր չէի կրնար քամել և հատցնել շրթներուս մէջ: Զգայնութիւնս սաստկացաւ և հասաւ հիւանդազին աստիճանի մը: Զգայարանական գործիքներուս կարգին, շրթներս չափազանց նրբացան, և դերագոյն վայելքներ կ'որոտային ինծի: Խորհեցայ թէ զո՛ւր է այդ զգայութեանց ճանաչումը: Զո՛ւր է այդ իմաստութիւնը: Զո՛ւր է հետաքրքրութիւնը: Ու սիրեցի՛, հիւանդի պէս սիրեցի: Հիմա հոս է անկիւս, զոր կը սիրեմ, հո՛ս, այս քաղաքին մէջ: Ու չեմ կրնար հեռանալ: Ներէ՛ ըմբոստութեանս, որովհետեւ չեմ կրնար հանդուրժել, որ զրկուիմ: Կը մերժեմ առաքելութիւնը, զոր կ'ուզեմ սորվեցնել ինծի: Կ'ուզեմ ապրիլ ես ինծի համար: Հաճո՛յք կ'ուզեմ, բարձրադադակ և լալազին, մանուկի մը նման: Պատմութիւնը այդպէս է աղաղակեր, սկիզբէն ի վեր: Թոյլ տուր, որ ե՛ս ալ հետեւիմ: Կ'ուզեմ սիրել,— դինովնալ սիրոյ խենթութիւններով, հիւանդանալ սաստիկ զգացումներով և կրակել մարմինս աղջկան մը շրթներուն բոցով: Մի՛ զրկեր զիս, տե՛ս, տրտմութիւնս բարձրացաւ մինչեւ իններորդ աստիճան: Արիւնս կը պղպղայ և աչքերս կ'այրին: Ո՛վ դուն, որ տարիներս կը հաշուես, ներէ՛ ինծի՝ եթէ կանգ առի կեանքիս ճամբուն վրայ և սիրելով զբաղեցայ: Ներէ՛ ինծի, որովհետեւ իմ սիրականս քաղցր աղջիկ մըն է և սիրուելու արժանի,— անոր մազերը մեղրի դոյն ունին, և մարմինը կարագի պէս է, անոր աչքերը ծաղկի կոկոններու կը նմանին, և բերանը տաք անուշահոտութիւնով մը լեցուն է:

Ո՛վ անգութ ուղեկից, ժամանակը հղօր է, աւելի քան մարդկային ամէն կամք: Ու ես զերին եմ ժամա-

նակին: Վտանգաւոր է սպաննել զգացումները, մշակ դառնալու համար իմաստութեան այգիին: Ուժովցո՛ւր զիս հաճոյքի գինիով, զի կ'թոտ է իմաստութեանս ծունկը: Խմցո՛ւր ինծի սիրոյ դեղը, զօրացո՛ւր հիւանդ հողիս, լեցո՛ւր սիրտս սարսուռով և կենդանութեամբ: Կանգ առ, ո՛վ անխոնջ ճամբորդ հետախոյզ, այս քաղաքին դուռներուն առջեւ, ուր կը բնակի իմ սիրականս, թո՛յլ տուր, որ արբենա՛մ, արբենա՛մ...:

**

Պատասխանեցի իմ հիւանդ սիրտիս.

— Յիմա՛ր սիրտ, կանգ մի՛ առներ երբեք հաճոյքի բուրբումնաւէտ տաղաւարներուն տակ: Զդէ՛ բանաստեղծութեան և ցնորքներու դաւիթը, հիւանդազին դալարումներու և երազակոչութիւններու դահլիճը, դուն բժիշկ ես, դուն դիտութեան և փիլիսոփայութեան մարդն ես՝ արու և կորովի:

**

Գիշերը, ուշ ատեն, ես ու սիրտս հասանք հիւանդանոց: Մութ ծառուղիին վրայ, ինքնաշարժը իր բոցավառ աղնոցները յառած դէպի յառաջ, ճչաց հիւանդանոցին դրան առջեւ: Դուռը բացուեցաւ: Մինչդեռ իմ երեսուն տարուան սիրտս կուլար, կուլա՛ր մանուկի մը պէս: Կուլար և կ'ուզէր դարձեալ բանաստեղծ դառնալ: Կուլար և իր սիրականին անունը կը կանչէր:

Ա Ն Դ Ա Ս Տ Ա Ն

Հիւսիսային կողմն աշխարհի.—

Աւ թո՛ղ դադրի սաստիկ քամին, որ, Բէեղղբուղի շունչին նման, բոյսերն ու մարդիկը կը դարնէ: Ու թո՛ղ կտրին անձրեւաբեր հողմերը, որ թաց կապայի պէս կը փաթթուին կենդանիներուն: Ծինուի՛ն տուները, ծխա՛ն դիւղերը, և հիւսիսի գապուն հողին վրայ երազատանջ հիւսիսականները թող դառնա՛ն իրենց միամիտ աշխատանքներուն: Զո՛ւր է յուսալ, որ կը տեսնուի (այս կողմի) հովերու թեւին վրայ կայծակներու ծաղկագեղ բանուածքը: Եւ լոյսը չի վառի՛ր թրջուած խուսներու ու թաց երկինքի վրայ: Հերի՛ք այդ յաճախանքը: Ու թո՛ղ մարդիկ նորէն իջնեն ձիւնաքաղաքներուն առջեւը, և եղբոր պէս խաղան սահին: Ու երկինքէն հրեշտակային շրթներու պէս, շափրակ շափրակ, սպիտակ ձիւնը թող իջնա՛յ, ու թո՛ղ իջնայ...:

Ալէլուիա՛, ալէլուիա՛, ալէլուիա՛:

Արեւմտեան կողմն աշխարհի.—

Ծնո՛ւնդ կայէնի, դիւահար երձամակ, կաւարոյր անդաստան, երիթացեալ մարմին, կծուահամ սնունդ, բիւրիցս մեղապարտ, հրաշագուրկ նազովրեցի, դիւածին արդանդ, անքաւելի աւազակ, հայհոյութեանց նշաւակ, անէծքի՛ գաս դու...:

Զի՛ք ալէլու, չի՛ք ալէլու, չի՛ք ալէլու:

Արեւելեան կողմն աշխարհի.—

Ծաղկեցէ՛ք նշենինե՛ր, ոսկեծոր աստղիկներով զարդարուեցէ՛ք, և թո՛ղ առատանան ծիրանն ու խաղողը վանտոսպեան աւազանին շուրջ: Պահլաւուհինե՛ր, կը կարծէ՞ք թէ չսիրահարեցան դեռ ձեզի երիտասարդները, տեսնելով ձեր ծոցին մէջ այն պատկերը, որ կը ներկայացնէ կտրիճի մը երկու բռունցքները, քնքուշ մորթով և թասի պէս կլոր, իւրաքանչիւրին վրայ թանկագին քար մը Ուիերի աշխարհէն, աննմա՛ն դորութեամբ: Ո՞վ կը թերահաւատի դեռ,— պիտի ըլլա՛յ անիկա իշխան, և մենք պիտի ծափողջունենք զինքը, ինչպէս մեր հայրերը ըրին, երբ բոցագոյն ջուրերուն վրայ, ուր հովը նշենի տերեւներ կը բանի, անիկա կանգնի իր ցուկանաւին մէջ, աչքերը ուղիղ՝ եղէգի պէս, հասակը շիտակ՝ սուրի պէս, սրունքները ողորկ՝ սոսախի փայտի պէս:

Կ՛երդուըննա՛մ ձեր աչքերուն վրայ, ո՛վ գեղեցիկ շուշանները երկրիս, ու կը համբուրեմ ձեզ, աւետելու համար թէ պիտի դա՛յ, պիտի դա՛յ...:

Ալէլուիա՛, ալէլուիա՛, ալէլուիա՛:

Հարաւային կողմն աշխարհի.—

Իմ նայուածքս, երկու մեծ դետերու պէս, այս բարձրաւանդակէն ուղիղ դարվար կ'երթայ: Կենդանի՛ ճանապարհ, ուր արեւին լոյսը կը պառկի յաւտ խայտաղեղ վազրի մը տաք մորթին պէս: Ու այս ճանապարհէն պիտի անցնի դարձեալ հեթանոս մեսիան, դէպի վեր, դէպի մեզ, բերելով փառքը մեր հին ազատ

օրերուն: Պիտի կենայ, այն ատեն, արեւը հարաւի
երկնակամարին վրայ, զգեստաւորելով ճանապարհը
խունկին ու ոսկիին, մեսիա՞ն, ճակտին՝ արմաւենիի
սանտրաձեւ ու աղեղնաւոր ճիւղ մը, Ժողովուրդին թա-
փօ՛րը, (ձերբադատուած լուծէն կրօնքին որ երկու
քաղաքակրթութեան բաժնեց,) կանչելով մեսիային,
ճանապարհ, ճանապարհ...:

Քեդ Ովսաննա՛, քեդ Ովսաննա՛, քեդ Ովսան...
նա՛ա՛ա՛...:

ԿԱՐՕՏ ՀԱՅ ԼԵԶՈՒԻՆ

ՀԻՆԳՇԱՐԹԻ

Երկար ատենէ ի վեր՝ հայերէն չեմ խօսած:

Ու, լքուած նուագարանի մը նման, հայերէնս
արդէն կարկամեր է միտքիս անկիւններուն մէջ: Խաչած
ոսկորներու պէս, միտէ զուրկ ու ճերմակ, կաւիճ են
դարձեր բառերս: Իրարու կը դարնեմ՝ գտնելու համար
հին ձայները: Ի զո՛ւր, ի զո՛ւր:

Գիշերը երազիս մէջ իսկ հայերէն չեմ խօսիր:
Վասնզի փոխուա՛ծ են մարդիկը, որ, երազներուս մէջ,
չուրջս կը դառնան, և նոր ընկերներս, որ, լուս-օրե-
րուն, հետս կ'աշխատին:

— Պիտի մոռնաս լեզուդ, կ'ըսէ մեր յիմարանո-
ցին այրերու բաժնին ներքին բժիշկը, որ, ծագումով
Յոյն, Փրանսական հիւանդանոցներու մէջ ապրելով,
արդէն փոխեր է իր ազգը:

Տիրութիւն կը դգամ, շրթներս կը պրկուին, կ'ու-
ղեմ լալ մանուկի մը պէս, որ շուրջը կը նայի՝ փնտոե-
լու համար պաշտպան մը:

Ու կը դիտեմ պարտէզը՝ պատուհանս ի վար:

Օ՛, հոգիիս մէջ պարտէզը, յանկարծ, կը փոխուի
բանաստեղծութեան մը, հայերէ՛ն, հայերէ՛ն: Կը
դգամ, որ կ'արթննան յիշատակները ներսս, բառերը
կ'ողջնան, գոյները կը վառին, ձայները կը թրթռան:
Կը հասկնա՛մ, լեզու է, որ կը թագաւորէ դեռ հոգիիս

մէջ: Այլելուիս, ո՛վ լամ լեզուս հայերէն, երկինքի պէս մաքուր, լոյսի պէս պաշտելի: Ո՛չ, երբեք չպիտի մոռնամ քեզ, երբե՛ք:

— Պիտի մոռնա՞ս լեզուդ, ու վաղը չպիտի ուզես իսկ լսել դայն...

Կատեմ պաշտօնակիցս, որովհետեւ շարունակ կը պնդէ և դող կը հանէ ներսս: Եթէ յանուն անողոք ճշմարտութեան մը կը խօսի ան, դարձեալ կ'ատեմ: Ու կ'ատեմ ճշմարտութիւնն ալ: Կը նախընտրեմ խարկանքը: Թողէ՛ք, որ յանձնուիմ սիրած պատրանքներուս, և երջանկանամ՝ մտածելով, որ հայերէնս չպիտի մոռնամ ես, իբրեւ բացառութիւն:

Չպիտի մոռնամ, չպիտի մոռնամ: Ամէն օր, հին նուազարանի մը պէս, դուրս պիտի հանեմ դայն միտքիս անկիւններէն: Պիտի նուազեմ դայն միմակս, անով պիտի լամ ու ծիծաղիմ, պիտի երգեմ ու կանչեմ: Ո՛վ լամ քաղցր հայերէնս:

Բայց... երկա՛ր, երկա՛ր ատենէ ի վեր՝ հայերէն չեմ խօսած:

ՇԱՒԱԹ

Այս դիշեր, երազիս մէջ, հայերէն խօսեցայ:

Նստեր էի պատուհանիս առջեւ: Արեւը ծառերուն մէջէն հոսելով կը թրջէր գլուխս: Ու գունաւորուեր էին գլիւքերս, որոնց մէջ ծրարած կը պահեմ աշխարհի բոլոր հիւանդութիւնները: Պարտէղին պատին վրայ սեւ կատու մը իր եղունգները կը սրէր ջղայնութեամբ: Յանկարծ ճանկը գարկաւ թուղթի կտորի մը, որ դալարուեր էր չորցած տերեւի մը նման: Կատուն մօտեցող միւս ճանկն ալ և բացաւ թղթիկը: Աչքերս հայերէն գիրերու հանդիպեցան: Սիրտս ամանի մը պէս

չրջեցաւ կուրծքիս տակ և տաք բան մը վազեց մարմինիս ամէն կողմը: Արագ, պարտէզ իջայ: Թղթիկը ազատեցի կատուն ճակէն և...

Եւ ես, որ, մեծ մարդոց յաւանոտութեամբ, սովորութիւնը ունէի կարդալու միայն նշանաւոր գրողներու յօդուածները, բացի թղթիկը և կարդացի: Պըզտիկ ազդ մըն էր, օրաթերթէ մը փրցուած, — հայ որբ տղեկ մը կը փնտռէր իր մայրը: Թուղթին միւս էջը, կար նաեւ հայ նպարավաճառի մը ազդը, զոր նոյնպէս կարդացի ամբողջութեամբ: Յետոյ նորէն կարդացի, որովհետեւ հաճոյք կը զգայի: Յետոյ գիրերը քննեցի, և անգամ մըն ալ կարդացի:

Ու նեղացայ կատուն:

— Ինչո՞ւ կը բղկտես այս թղթիկը, ըսի հայերէն: Ու կատուն պատասխանեց ինձի, նոյնպէս հայերէն.

— Որովհետեւ մուկի պէս պզտիկ էր և աղմուկ կը հանէր:

— Հայ տղեկ մը դրած է դայն, ըսի:

— Ինչո՞ւ հոս ինկեր է, հարցուց:

— Մենք հիմա ինկած ենք ամէն կողմ:

Յետոյ անոր նկարագրեցի մեր պատմութիւնը, մեր արուեստը, մեր պատերազմները, մեր դիւանագիտութիւնը, մեր յառաջապահ յեղափոխականներուն կացութիւնը: Նոյն իսկ ըսի թէ բուշեւիկներ՝ ալ տուած ենք աշխարհի:

Կատուն, փոխանակ հիանալու, պատասխանեց.

— Երկա՛ր պատմութիւն:

— Այո՛, երկար է: Ստիպուած ենք երկար խօսիլ, որովհետեւ անարդարութիւն պիտի ըլլար, եթէ չսկսէինք աշխարհի ստեղծումէն, երբ ստեղծուած է նաեւ մեր ժողովուրդը:

— Պօսքը ժամանակի կորուստ է, առարկեց կատուն, աչքերը բացխփելով: Եթէ կ'ուզէք յաջողիլ, մեզի պէս ըրէք:— Երբեք չխօսիլ: Եւ երբեք չխղճալ մուկերուն: Երբեք երախտադիտական զգացում չունենալ, ապերախտ ըլլալ նոյն իսկ տիրոջ հանդէպ: Երես դարձուցէք զգացումներուն: Եթէ մանուկի մը ձեռքը կարող կայ, բարեկամացէք: Ձեր կունակը քսեցէք անոր մերկ ոտքերուն: Մանուկը հաճոյք կը զգայ մուշտակէն և կը ձգէ ձեռքի կարագը: Յախտակեցէք, կերէք, և դացէք երազել տաք օճախին անկիւնը: Եթէ տանտիրուհին դոռայ ու պոռայ իր տղոցը, դուք փակեցէք ձեր աչքերը, քնանալ ձեւացուցէք: Սակայն միշտ արթո՛ւն եղէք, պատրաստեցէք ճանկերը՝ եթէ ծեծելու գան:

Ես, հայ տղայ, քրիստոնէական զգացումներով մեծցած տղայ, մտիկ չըրի կատուին: Բայց շատ դո՛հ էի, որովհետեւ հայերէն կը խօսէի և հայերէն կը լսէի:

— Ձգացումները կը մոլորեցնեն ձեզ, շարունակեց կատուն: Լաւ է, օրինակի համար, սիրոյ յատկացնել միայն մարտ ամիսը: Միւս տասնըմէկ ամսուան ընթացքին փրիխսփայ եղէք: Օ՛ն, քիչ մը չարութիւն ըրէք մարդոց, քիչ մը չարութի՛ւն...

Յետոյ երազս պղտորեցաւ, կատուն մարդ դարձաւ, ծառերը վարդապետ եղան, տուները սկսան ծփալ օդին մէջ, և ես արթնցայ:

Արթնցայ ուրախ սիրտով:

Ուրախ էի, որովհետեւ հայերէն էի խօսեր: Հող չէ թէ կենդանիի մը հետ:

ԿԻՐԱԿԻ

Այս առաւօտ, սակայն, աւելի քան երբեք կարօտն ունիմ հայերէն խօսելու: Կ'ուզեմ հայերէն խօսիլ բաց

աչքով: Հա՛յ մը, հայ մա՛րդ մը կը փնտռեմ, խօսելու համար հետը: Մուրացկա՛ն մը թող ըլլայ, աղտոտ սրիկայ մը թող ըլլայ, վերջապէս բերա՛ն մը, որուն հայերէն խօսէի և անկէ հայերէն պատասխան մը առնէի: Ո՛վ որ կը հասկնայ նոր ու տարօրինակ այս զգացումը, այս տառապեցնող զգացումը, կարօ՛տը լեզուին, թող օգնէ ինձի: Կ'ուզեմ, որ հայ գաղթական մը, հող չէ թէ լեզուն մոռցած ըլլայ, բայց գիտնայ միայն մէկ բառ, իյնա՛յ ճամբուս վրայ, և ես կարենամ ըսել:

— Հա՛յ ես:

Անիկա դիտով «այո՛» ըսէր ինձի: Եւ ես անմիջապէս, հօրս մօրս սորվեցուցած լեզուովը դռնէի, ամբողջ յուզումս ու հոգիս թափէի իր ահանջին մէջ սա մէկ բառով:

— Բարի - լոյս...

Ու ան ինձի պատասխանէր:

— Բարի - լոյս...

Տիեզերք վկայ, ասկէ աւելի քաղցր և ասկէ աւելի տխուր բան չկայ: Այդ բառին մէջ մեր ժողովուրդը ինչե՛ր է պահած: Այդ բառին մէջ մեր հայերէնը ինչե՛ր է դրած:

Ո՛վ իմ մեծ հայերէնս, ես քեզի կը հաւատամ այս բառիդ մէջ, ես քեզ կարօտցած եմ այս բառիդ խորունկ նշանակութեան ըղձանքովը:

Ո՛վ իմ ըղձալի հայերէնս, առաւօտեան պէս թարմ և գիշերուան պէս խորունկ, մանուկի մը պէս գուարթուն և տարեցի մը պէս իմաստուն, սիրոյ պէս հաճելի և դարնան պէս գեղեցիկ:

Ո՛վ իմ անուշ հայերէնս, գիւղացիի ու քաղքցիի լեզու, բանուորին ու թագաւորին բերնին յարմար, երիտասարդ և հուժկու, ալրա՛ծ մնաս դուն:

Ո՛վ իմ բրդոտ հայերէնս, աղօթքի մը պէս մխլ-
թարիչ, դեղի մը պէս օգտակար, եթէ մոռցայ մէկ
վանկդ, թող ա՛լ չդառնայ լեզուս մեղաւոր բերնիս մէջ:

Ես քեզ այնքա՛ն կը սիրեմ, որ, այսօր, կը փնտռեմ
նոյն խկ մանկապարտէզի հին «օրիորդ»՝ խնդրելու
համար կրկնել հայերէնի առաջին դասս: Քերականս
դնէի ծունկերուն վրայ, տառասխանքէն մարմինս փայ-
տացած, յուզումէն բերանս ծռած, արցունքը աչքե-
րուս մէջ կարմրած, լեզուս վախցած, ոտքերս երկրա-
շարժի բռնուած, մեղաւոր ձայնով մը ըսէի.

— Օրիո՛րդ, անգա՛մ մըն ալ կարդա դասս, ինչ-
պէս հին օրերուն, քու եղանակաւոր ձայնովդ,—
դ, ա, գա,— ա, ի, կ, տիկ,— գատիկ:

Ա՛խ, մեծ Աստուած, քեզի բնաւ չեմ հաւատար,
բայց ցաւը դիս մանուկ է դարձուցեր, և նորէն, ահա
նորէ՛ն ամպերուդ կը բարձրացնեմ ճակատս: Երկնքի
Աստուած, հայերէն լեզուիս ամէնէն գեղեցիկ բառերը
կուտամ քեզի, միայն թէ հրաման ըրէ, որ իմ լեզուս
դանէ իր երջանկութիւնը:

Ի՞նչ ընեմ, ի՞նչ ըսեմ: Այս պահուս շա՛տ յու-
սահատ եմ: Հոգիէս խկ կը վախնամ, որովհետեւ երի-
տասարդի հոգի է, կը խարուի՛ օտարին շքեղութիւն-
ներէն, կ'ելլէ կը մոռնայ լեզուս: Ուստի ապաւէ՛ն մը
կ'ուզեմ, պաշտպանելու համար լեզուս:

Աճեցա՛ւ, աճեցա՛ւ ցաւս: Հասաւ մինչեւ դառան-
ցանք:

Ելեր եմ դաշտն եմ ինկեր, որպէսզի չըլլա՛յ թէ
մարդ մը լսէ գառանցանքս և խենթ կարծէ՛ դիս:
Եկեր եմ, այստեղ, ազատ բնութեան մէջ, բարձրաձայն
հայերէն խօսելու: Պիտի ըսեմ այն բոլոր աղօթքներն

ու երգերը, զորս մայրս սորվեցուցած էր ինձի, պղտի-
կուցս: Պիտի խօսիմ ծաղիկներուն ու քարերուն հետ,
որոնք, ինչպէս իմ գիւղիս ողջութեանը, լեզու կը բա-
նան ու կը կանչեն անունովս: Ի՞նչ լաւ է այսպէս, խօ-
սիլ հին բարեկամներու հետ մեր լեզուովը:

Թիթեռնիկնե՛ր, նախշո՛ւն թիթեռնիկներ, որ կը
նմանիք իմ գիւղիս թիթեռնիկներուն, եկէ՛ք, եկէ՛ք
հայերէն խօսինք: Ձորեր ու անտառներ, հայերէն եր-
գեցէք, մտիկ ընեմ ձեզի: Հո՛ղ, հո՛ղ, յաւիտենական
հո՛ղ, պղպջա՛ այն հին վանկերը, զորս իմ նախնիքս
ցանած են երկրի վրայ: Ջրի՛կ, որ արծաթ տերեւներու
նման թափեր ես մարմանդին վրայ, թրջէ՛ լեզուս,
որպէսզի միշտ հին յիշատակներ խօսի:

Ահա կը ծռիմ, մանիշակի մը համեստութեամբ
կանանչ խոտերուն կը հաւասարիմ, ծունկի կուգամ,
ծաղիկի պէս՝ շրթներս կը բանամ ու կ'արտասուեմ:

Հայր մեր, որ յերկինս ես...

Թռչուն մը կ'անցնի գլխուս վրայէն. կը ցտակեմ,
կը վազեմ և յանկարծ, հոգւոյս մէջ կը լսեմ բազմու-
թեան մը քայլերը, երկաթի նման, և երգ մը գետի
նման: Ձայնս կը բանամ ու կը հետեւիմ երգին, մենա-
ւոր և ճերմակ ճամբէն կը քալեմ արագ արագ, ոտքերս
ղինուորական կշռոյթ կը ստանան, շրթներս այծի ձայնի
պէս կը կտրտեն երգս, աչքերս կը պղտորին, մենու-
թիւնը կը վախցնէ՛ դիս, յուզումը կը խեղդէ կոկորդս,
բայց կը գիմաղբեմ սարսուռներու և գառանցանքին
դէմ, շրթներուս վրայ պահելու յամառութեամբ
տխո՛ւր երգն Հայոց:

Մեր հայրենիք բշուառ անտէր,
Մեր բշնամեաց ոտնակոյս...

ԱՍԻԱ՛, Ո՛Վ ՄԵԾԴ ԱՍԻԱ...

Արեւելքն ամէն բան նախադուշակած
է եւ ամէն բան սկսած: ԿԻՕԹԷ

Պարզ մտածումը — թէ պիտի ճամբորդեմ դէպի
խորերն Ասիոյ, մտածում մը, որ հոգիիս մէջ նստած
է պատանեկութենէս ի վեր, — կը սարսուցնէ բոլոր
զգայարանքներս, ինչպէս շամբուշ հովը՝ ծառերն ան-
տառին: Եւ երկու ձեռքերս կզակիս տակ դրած, կատուի
աչքերով կը դիտեմ երկրագունդը, սրուն մօտն է
դուրսս՝ կարծես չափուելու համար:

Ասիացի եմ, հոգիով ու հաւատքով:

Ալ հիմա դիտեմ թէ ի՛նչ է ցեղը: Մասնաւորապէս
Ասիացին, իբրեւ ժողովուրդ:

735ին (Ք. Ա.), Ասորեստանի Տուքուլտիարալէ-
շարա Գ. Թագաւորը արշաւեց Հայաստան և ժողո-
վուրդը տարաւ բնակեցնելու փիւնիկեան ծովեզերքը:
725ին, Շալմանուշարիդ Ե. ասպատակեց Իսրայէլի
Թագաւորութիւնը և ժողովուրդը տարաւ բնակեցնելու
Մեղացւոց սահմանին վրայ, Սաբուր և Գոգան քա-
ղաքներուն մէջ: 940ին, Եգիպտոսի Շէսոնք Թագաւորը
կողոպտեց Երուշալայիմը և դերի տարաւ ժողովուրդը:
512ին, Ֆարսիստանի Գարայեալուս Թագաւորը զարկաւ
Հնդկաստանը և աւարեց երկիրն ամբողջ: 377ին, Ար-
տախշատրա հաւաքեց 200,000 Ասիացիներ ու 20,000
Յոյներ և ինկաւ Եգիպտոսի վրայ: 325ին Մեծն Աղեք-

սանդը իրար շաղուեց Ասորեստանի, Ֆարսիստանի և
Հինդուստանի ժողովուրդները: Աղեքսանդրեան ան-
թուելի զինուորները հրաման ստացած էին կին առնել
տեղացիներէն՝ աւելի արագ սորվելու համար երկրին
լեզուն: Եւ կը պատմուի թէ Բուքեփաղիայի արմաւե-
նիները բուսած են այն օրերէն ի վեր, երբ հելլէն զին-
ւորները հոն կուտ նետեցին: Հնդկական դիրքերը կը
հաւաստեն թէ Աղեքսանդրեան ճամբէն պուտոտայական
կրօնքը անցաւ Պարթեւաստան, Կապադովկիա, Փոլի-
զիա, Եպիրոս: Համաձայն հնդիկ կրօնական երգերու,
սուրբ Մահարախոհիւրոյի ջանքերով 150,000 հոգի դա-
ւանափոխ եղան Ելլադայի մէջ:

Վերջապէս Ասորիին երակներուն մէջ քալեց
Եգիպտոսի փարաւոնը, Հայուն արեան մէջ քնացաւ
պարսիկ զինուորը, Քաղդէացիին անկողինին մէջ պառ-
կեցաւ Հայը: Մշակոյթ և արիւն: Կամ Եհովային շունչն
և երկրին կաւը: Կարծեմ Ադամ այդպէս ստեղծուեցաւ:
Եւ այդպէս է որ ընդհանրական է արուեստը, միասնա-
կան է նկարագիրը Ասիոյ ժողովուրդներուն:

Ես Ասիացի եմ:

Եթէ չհասկցաք, պանիր փաթթեցէք այս էջով:

Կը քնանա՞ տակաւին, Մե՛ծդ Ասիա: Երկա՛ր
տեւեց քունդ: Մակայն վստահ եմ, որ դու պիտի արթն-
նաս առտու մը, առիւծի՛ նման: Գիտե՞ս, Ֆրանսացի
զբաղէտ մը, Քամիլ Մօքլէր, վէպ մը գրած է, և կը
նկարագրէ թէ ի՛նչպէս Եւրոպայի բոլոր ազգերը միա-
ցած, պատերազմ են յայտարարած Ասիոյ դէմ: Եւրո-
պական բոլոր ազգերու զինուորներուն ընդհանուր
հրամանատարը, Մեծն Աղեքսանդրիոյ խոյրը դլխին,
Հնդկաստանի սահմաններուն հասեր՝ ճա՛ռ կը խօսի:

Ասիա՛, երևտասարդութի՛ւնս վկայ, կ'ըղձայի տեսնե՛լ այդ սլատերագմը: Եւ վստահ եմ, որ, այն ատեն, դուն չսխալի դո՛հանաս խարարանելով Միջերկրականի ջուրերը: Այն ատեն, բայց միայն ա՛յն ատեն, Քաղաքակրթութեան Ծովին ասիական աղեղը սլտի ծաղկազարդուի, նորէ՛ն ու նորէ՛ն, հրաշագեղ քաղաքներուդ գրասանդներով և կանանչ գիւղերուդ ողկոյգներով:

Կ'ատե՛մ Եւրոպան: Ու երբ ոտքս դրի այս օտար ցամաքին վրայ, «անէ՛ծք» պոռացի մեր հին սերունդին, որ Եւրոպա կը դուլէր ճանչցած չճանչցած: Ափսո՛ս, մեր երևտասարդ բանաստեղծներն ալ հիմա սիրուն բառերով ժանեակ կը հիւսեն այստեղ, փոխան աժան համբոյրի մը ասկէ կամ անկէ: Ո՞ւր է անդնդային խորքը, ո՞ւր են գորեղ ու բիրտ գգայութիւնները, ո՞ւր է վայրենի լեզուն, ո՞ւր են կայսրեր և աստուածներ ստեղծող աւանդութիւնները խորախորհո՛ւրդ Ասիոյ: Եթէ Եւրոպա, ստանձնելով գրել Ասիոյ սրատութիւնը, ստւտ ու սխալ գրեց զայն և փառաբանեց միայն իր քաղաքակրթութիւնը, որ գողօն մըն է սլարգապէս, ինչո՞ւ Ասիոյ հացովն ու ջուրովը մեծցած տղաք ճըլմարտութիւնը չհարցուցին իրենց ներսեկ գգայութիւններուն:

Օ՛ր անգթութիւն, յարգա՛նք քեզ:

Օ՛ տիրատենչութիւն, փա՛ռք քեզ:

Հայրս մեծ ջաղացք մը կը բանեցնէր հովիտի մը խորը: Դեռ մանուկ, կը սիրէի ամառը երթալ քնանալ հօրս կողքին, ջղագար մեքենաներուն մօտիկ: Լուսնկայ գիշերները հայրս ձուկ բռնելու կ'երթար ջաղացքին

ետին, առուին բերանը: Մինակ չձգելու համար, կ'արթընցնէր զիս ու հետը կը տանէր: Լուսնկան ոչխարի պէս ինծի կը նայէր: Դաշտերը թիթեղով սլատած էին, բլուրներէն ճերմակութիւն մը կը բխար և կը հոսէր վար: Հայրս կը լարէր թակարդը, — մաղի նման հիւսւած երկար սլարկ մը բուրդի ձեւ, բերանը շրջանակ մը, որուն մէջ սլտի թափէր առուին ջուրը, — եւ քիչ մը կը հեռանար առուին երկայնքն ի վեր, «ձուկերը վախցնելու եւ վար փախցնելու համար»: Այն ատեն, զիմացի բլուրը տեղէն կը շարժէր, կարծես սլտտակ վրան մ'ըլլար, ներքեւը բաղմաթիւ վայրենիներ, կրակէ ակոսաներով, փշարձակ աղեղներով: Բարեկամ ծառերս իսկ թշնամի կը դառնային ինծի, մէկը միւսին քով կ'երթար եւ վտանգաւոր ծրագիրներու մասին կը խորհըրդակցէին, միշտ ինծի դէմ: Վախը անգթութիւն կ'արթնցնէ: Ու ես, այդ սլահուն, կ'ուզէի ըլլալ ասսլետ մը, որ, կրակի գոյն ձիու մը վրայ, գրահապատ, սլտի սուրա՛ր, սլտի սուրա՛ր, կոխկրտելով բոլորը:

Ընդհանուր Պատերազմին, սլայից վարժարան գացի:

Քրիստոնէութիւնը սլաններ էր ինչ որ բնութիւնը, խորունկ գիշերները և անտառախոյզ սլտոյտներս էին տուեր ինծի: Զինուորական մարզանքները ինծի վերադարձուցին ինչ որ կորսնցուցած էի: Առտու մը, Դ. դասի հրամանատարը փորձի համար ինծի տուալ ջոկատը, հրահանգ տալով կատարել քանի մը շարժումներ:

— Ե՛ս եմ ձեր հրամանատարը, Շաւարշ Արմաչցի:

Սովորութիւն էր, այսպէս, ներկայացնել ինքզինք, ամէն անգամ որ մէկը հրամանատար դառնար: Աղա-

դակեցի, բայց վախցայ: Զինուորներու այլ հսկայ
 դիծը շփոթութիւն պատճառեց ինծի, ես՝ կէտ մը:
 Անոնց աչքերը ինծի կը նայէին՝ հրացաններու փողի
 նման: Սակայն բոլորը պարտաւոր էին կատարել հրա-
 մաններս սխալ կամ շիտակ: Առաջին հրամանը տուի
 աղեկոտոր ճայնով մը: Դեռ քրիստոնէութիւն կար ճայ-
 նիս մէջ, և աղջիկութիւն՝ շեշտիս մէջ: Ծունկերս մոմի
 պէս կը հալէին, ու ես կարծես պիտի ծռէի, պիտի
 հակէի դետին: Քրտինքիս հոտն առի արդէն: Երկրորդ
 հրաման: Եւ ահա մարդկային դիծը հաւատարմու-
 թեամբ կը հետեւէր ինծի: Երրորդ հրաման: Ահա դիծը,
 որ կը քալէ: Պողպատէ հաստ քանակ մը, հսկայ մե-
 ծութեամբ, կը սողայ դաշտին մէջ: Հրամանատարը,
 ձիուն վրայ, կը հետեւի ինծի: Ոչ մէկ միջարկութիւն:
 Ուրեմն լաւ է: Այլ եւս քաջութիւն առած, կարծես իմս
 ըլլային զինուորները, երջանկութիւն մը ճայնիս մէջ,
 անընդհատ կը խօսիմ դիծին հետ: Ու դիծը կը հպա-
 տակի ինծի, կ'երկարի, կը կարճընայ, թեւ կ'արձակէ,
 կը տարածուի, նորէն կը շտկի, ճամբուն մէջ կը մտնէ:

— Ռա՛փ, ոա՛փ, ոա՛փ:

Ու փափաք մը կը ծնի ներսս: «Բանակս» արձակել
 դիմացի բլուրին դէմ, յառաջխաղալ արագ և ճկուն:
 Յանկարծ հրամանատարն է, որ կը պոռայ: Փորձը
 աւարտած է: Ու դո՛հ, ետ կ'առնէ «բանակս»: Այդ պա-
 հուն, դեռ կը յիշե՛մ, ի՛նչ դայրոյթ զգացի հրամանա-
 տարին դէմ: Ո՛չ մանուկը, որ իր բարկացոտ արիւնին
 խուժումովը կը կարմրի՝ երբ ձեռքէն առնեն խաղալի-
 կը, ոչ ալ կատուն, որ անմիջապէս կը ճանկէ՝ երբ
 բերնէն առնեն ձուկին փուշը, երբե՛ք չունեցան այն
 զգացումը, որ պահ մը փորձութեան մէջ ձգեց զիս:
 Կատարի՛ թշնամութիւն մը զգացի հրամանատարին
 դէմ:

**

Անցեալ տարի, տօնական օր մը ինծի յանձնուե-
 ցաւ յիմարանոցը, որուն ներքին բժիշկն էի: Տնօրէնը,
 բժշկապետը և արուեստակիցներս մեկնեցան իրենց ըն-
 տանիքին մօտ: Ես, օտարական, մնացի միւնակ: Տօնա-
 կան օրերուն դժուար է կառավարել յիմարները. այդ
 օրը ուրիշ ամէն օրէ աւելի, անոնք կը ցանկան ազա-
 տութեան: Երբեմն ըմբոստութիւն կը ծագի, ամէն
 դինով դուրս դալու համար յիմարանոցէն: Կը պոռան,
 կը կանչեն, կը կռուին, կը վերաւորուին: Ու ես մի-
 նակ, մէկ բաժինէն միւսին կը վազեմ՝ դարմանելու
 համար վէրքերը, սթափեցնելու համար նուազած լուս-
 նոտները, թմրեցնելու համար կատաղածները:

Իրիկո՛ւն էր արդէն, իրիկո՛ւն՝ մանիշակներու
 ընդարձակ դաշտի մը դոյնովը: Յողնած, սենեակս կը
 վերադառնամ: Մատուռին ետեւէն անցած պահուս,
 դիտեցի որ լոյսերը վառած են արդէն:

Լո՛ւռ էր այլեւս ամբողջ յիմարանոցը: Խաղա-
 դութի՛ւն ամէն կողմ: Քիչ մը առաջ ձեռքս էր ասեղը,
 որով թմրեցուցիչ կը ներարկէի: Հիմա սա թուրերուն
 պէս խելօք են բոլորն ալ: Եւ սպիտակ շապիկին տակ՝
 խայտաց սիրտս: Լոյսը, պատուհաններէն թափելով,
 կը կոտրէր ծառերուն ճիւղերուն մէջ: Մինչ ես կը
 մտածէի ուժին մասին: Երկու ուժեր կռուեցան: Մէկը
 յաղթեց: Փա՛ռք յաղթողին:

**

Եւ փա՛ռք քու յարութեանդ ու յաղթութեանդ,
 Մե՛ծդ Ասիա:

Ես կը սիրեմ քեզ, որովհետեւ դեռ կը կրեմ զգա-

յուլթիւնները, զորս դուն տուիր ինծի: Կը սիրեմ քեզ, որովհետեւ գիտեմ թէ քեզի կը պատկանիմ: Ու կը սիրեմ քեզ դարձեալ, որովհետեւ հիմա հոգիս բարեկամ է այն բոլոր ժողովուրդներուն, որոնք մեծցան հողերուդ վրայ:

Ահա կատարեցի և աւարտեցի մարգանքները, զորս դուն պիտի հարցնէիր ինծի: Այլ եւս քրիստոնէութենէն հետք չմնաց վրաս: Հոգիս ուժեղ է և մարմինս ճկուն: Հիմա աւելի բաւ կը հասկնամ վարդապետութիւնները քու երբեմնի իմաստուններուդ: Այլ այսուհետեւ աղջիկ մը չի կրնար ճկել զիս այնպէս, ինչպէս հովը կը ծոփ եղէ՞քը: Խրոխտ ինչպէս արձան մը, հպարտ ինչպէս լեռ մը, պատրաստ ինչպէս ձիաւոր մը, ահա ուշի ուշով կը քննեմ սահմաններդ: Եթէ դամ...: Ա՛խ, եթէ դամ, ի՞նչպէս պիտի համբուրեմ առաջին Գրտուհին կամ Ասորուհին, որոնց նախահայրերուն հետ կոտեր են իմ նախահայրերս: Ու պիտի ըսեմ թէ այսուհետեւ չպիտի բաժնուինք իրարմէ և վէճ չպիտի ունենանք: Անցեալ օր Գաղղէացի աղջիկ մը տեսայ այստեղ, և հին մտերիմի մը պէս խօսեցայ հետը: Ուղեցի պատմել այն բոլոր բաները, զորս գիտեմ քաղղէական արուեստին ու աշխարհին մասին: Ի՞նչ տաք էին անոր աչքերը...:

Ա՛խ, եթէ դամ...: Հոն ուր մտեր եմ, բան մըն է խմորուեր, հոն ուր խօսեր եմ, եօթն անգամ արձագանդ է լսուեր, հոն ուր քալեր եմ, երկար ու բազմաթիւ ոտնաձայներ են համրեր: Ասիա՛, եթէ ծոցդ մտնեմ, պիտի ուրանամ ամէն բան և թող մայրս չուշանա՛յ ուրանալ զիս:

Կը բաւէ որ, ա՛խ, կը բաւէ որ հեռացնե՛ս զիս այս օտար հողերէն:

Ասիա՛, դո՛ւն կղզի՛ լոյսի ծովու մը մէջ, դո՛ւն սեղան՝ թաղաւորներու առջեւ, դո՛ւն բնակարան բո-

ցամշուչէ ամպահովանիի մը տակ, դո՛ւն ցանկալի հող, ա՛ռ զիս, երկարէ՛ թեւդ: Տե՛ս, ի՛նչպէս կը կլորնամ, մանուկի պէս կը խփեմ աչքերս, կատուի պէս կը կծկուիմ ինքս իմ վրաս, ու կը սպասե՛մ: Թող իջնէ՛ ձեռքդ ու սեղմէ՛ մէջքէս: Եւ, այդպէս, տա՛ր զիս թըռչունի մը պէս Միջերկրականի ջուրերուն վրայէն:

Օ՛, յորդառատ հրճուա՛նքս Միջերկրականի արիքներուն երգին ի լուր...:

Ասիա՛, Ասիա՛, Ասիա՛...:

Ե Ի Ա՛, Ե Ի Ա՛...

(Ա.Ի.ԱՆԴՈՒԹԻԻՆ)

Նկար (անտառի մը մէջէն դիտուած) :

Սատափ լուսնկան կը թրջէ անտառը, որ կը դողայ Հարսանց-Պար բլուրներուն ստորոտը. երկինք կը փշրուի ծառերուն վրայ, որոնք աղօտ շամանդաղին մէջ իրարու կը փաթթուին. ցօղցօղ աստղերուն անձրեւը գուարթութեամբ կը լեցնէ անհունը :

Ու լոյսը կը լեցուի ծաղիկներու ոսկեփերթ երեւակներով բաժակին մէջ, պատրանքը տալով գինիին հեւքին, որ կ'երգէ դաշխուրաններու մէջ : Փարփառ աչուկներով, ծաղկայորդ թուփերը սարսուհար կը հեւան մեղանչումի գացող աղուոր հելլենուհիներու նման, իրենց նախորտին տակ մսկոտ և յուզումնալից :

... Ապրշում գոյներու ալիքներ, յորդառատ ու տարածուն՝ մէջքը կտարած մարմանդն ի վար, գոր կրակի պէս կը ծակծկեն ցօղերը. թմբին արծաթ բունին վրայ կտարած ճիւղի մը ցաւը, որ կուլայ հովին թեւերուն մէջ. ափ մը ջուր, հողի խորշումի մը մէջ տեղաւորուած, կը յօրանջէ լուսնկային դէմ. քիչ մը արին, որ կոկոնի մը հերձուածքէն ցայտեր է. մարգիւն պորտին վրայ դող մը, որ կը նուաղի և մերթ կ'աճի, ու կ'երթայ նետուիլ կաղնիին մութ պատմուճանին վրայ...

Անիկա, որ այս աւանդութիւնը յանձնեց նկարի մը գոյներուն, անճահ ամօթխածութիւնով մը՝ պաս-

տառին տուաւ միայն ցաւը, բխումը հեշտանքին : Այդ ցաւին արտայայտութիւնը կը մնայ տակաւին սա ձեւերուն խաղերուն մէջ :

... Մարմանդը, մէջքին վրայ թեթեւ կորացումով մը, պատրանքը կուտայ պատմուճանի մը տակ գոյգի մը գլխիքնդիւսունումին. պատաղիճը դգուտա շուլալնէրով կը դալարուի կաղնիին հասա բունին շուրջ. կուենին համբոյրի մը համար գնդիկ-հարսնուկ հագորանիին թեւ երկարած ատեն՝ ուքին տակ մթութիւնը կը բանայ վերարկուի մը նման, ուր այժմանիկը, սրտիկը դող, կը սեղմուի արուին թաթերուն մէջ :

Արբաւական բանաստեղծութիւնը Հանդէս Ստեղծագործարքեան անունը տուաւ, երբ երբայական լեզուն աճապարոտ մտերմութիւնով մը փոխ կուտար իր բառերը խորհրդապաշտ այդ նկարին, որուն գոյները կը բաժնեն Պատմութեան սկիզբը դնող ցեղերը : Այսպէս է, որ Եղեմ(1) կը կոչուի տեսարանը, որ կը բացուի յաւիտենապէս քաղցր ցանկութեան մը խորհուրդին վրայ : Բայց ինչպէս պոռնիկը վարդափոշի կ'աւելցնէ իր թառամած գեղեցկութեան, հասկաքաղ Երբայեցին՝ Մովսէս իր անճարակ վիպերգութեան օգնելու կը կանչէ այս տնօրինակ պատկերը, իրեւ նախերգանք վիրաւոր դամբելով Ծննդոց Գրքին առաջին էջին :

**

Ուր հովանաւոր կաղնիներն ու սօսիները, մեհեանի մը ներքնակողմին նման, կամար կը կապեն, ուր թեղին, յամեցած քուրմի նման, կեցեր է շուարուն, հու-

(1) Որ թարգմանի, երբայերէն, հեշտանքի տեղիք :

նա՛, դիմաստուներ մը կայ: Աւանդութիւնը դանիկա կ'անուանէ Աղամ(2):

Մինակ ու մտամոլոր: Անոր դէմքէն սրբուած է այն հիացումը, որը կ'արտայայտէր ի տես թուփէն դուրս թափող ծաղկի մը, ծառերէն կախուող դեղնաւուն ու կարմրադեղ պտուղներուն, և, ջուրին մէջ, բազերուն հեծեալ գուգաւորումին:

Ուսերն ի վար իջնող մագերուն վրայ ցօղի լուսանձրեւ մը կայ: Կոնակը, մարգաղետնին վրայ պառկած ատեն անշուշտ, ներկուեր է դունադեղ ծաղիկներու արիւննով: Անոնց բուրումն ալ կը մնայ տակաւին վրան: Ձեռքը պահած է վարդ մը, որուն թերթերը փեթթած է և ձուարանը մերկացուցած:

Ձանձրոյթի և յուսահատութեան մէջ՝ տխուր է, ինչպէս մութը մնացած մանուկ մը:

**

Եղեմի մեծ գետը, ուռիներուն արմատին շուրջ կազմուած փոքր աւազաններու մէջ, կ'ըմպէ երկինքէն իջնող լոյսը, նունուֆարներուն տակ քրքջալով մերկ աղջկան մը պէս: Փաղիս ու Ոքոս կը բաժնուին լայնեզր կայքէ մը յետոյ, ինչպէս կոնքին երկու անկիւններէն կը գատուին աղբերը մերկ կոյսին, որ պառկեր է: Եզերքին մօտ նունուֆարները կը մատնեն յաւերժահարսերու ցայգալուսային այցելութիւնը: Հոն, միջոցին մէջ, կախուած կը մնայ նարդոսեղէն իւզերու բուրում մը:

Ջրեղերքի պահերէն:

Ալիքներուն մէջ յուզում մը կայ, ինչպէս հովն է

(2) Որ թարգմանի, երբայերէն, մարդ:

ծաղիկներուն մէջ, կամ սէրը՝ աղջկան մը ծոցը: Սպիտակ փրփուրներ կ'երթան թառիլ նունուֆարներու լայն տերեւներուն վրայ: Բարակ ամպի մը մէջէն շարմաղուն լոյսին տակ, ջրանուշները՝ ծաղիկի նման՝ ջուրէն վեր կը բարձրանան, քրքջով մը գիրար կ'ողջունեն, եզերքին վրայ մահակաձեւ աստրերով իրենց վարսերը կը յարդարեն, ստինքներուն և աճուկներուն նարդոս կը քամեն, ու քրքջուն, ու ոստոստուն, քունի կ'երթան շուշաններուն մէջ, իրար գրկած: Մանիշակները, ամօթխած ու տխրադին, կ'արտասուեն, իսկ նունուֆարները, դոռոզ ու ծիծաղկոտ, կը խոխոջեն փոքրիկ ալիքները փչրելով: Քա՛ղցր է, ծաղիկներուն մէջ, յաւերժահարսերուն հրաւէրը սիրոյ և կլրքի, սպառող հեշտա՛նքը անոնց դիկընդխառնումներուն, որոնց կը գոհես անմահութիւնը:

Լուսինը թմբիին դադաթին վրայ կ'իյնայ և ձիւնի գնդակի նման փչրուելով՝ վար կը թափի: Աւազանը, հիմա մութի մէջ մնացած, կը դողա՛յ տխուր հեւքով մը:

**

Աղամ կուգայ ջուրին աղմուկին և քունի դացող ջրանուշներու քրքջին:

Ջրեղերքը, մարգաղետնին վրայ, գեղեցիկ յաւերժահարս մը, Եւա, մինակը կը սպասէ: Բերանը նման է դաշնաչափ հերձուածքին կակաչի մը բաժակին: Անիկա գետինը նստած է և տխուր երազի մը կը նայի: Կոնակը աղեղի նման թեթեւօրէն դէպի առաջ խոնարհած, ծունկերը կուրծքին և գլուխը՝ անոնց երկարած թեւերուն մէջ հանգչեցուցած է, ինչպէս երբայեցի բանաստեղծները (մարգարէ) հրեշտակներուն դերք

կուտային Աստուծոյ առջեւ, ներշնչուած՝ մեհեաններու մէջ սպասարկող հերատուկներու ձեւերէն:

Անհուն աղապատանքի շարժումով մը՝ Ադամ կը խոնարհի, երբ Յւա՝ քայլերու աղմուկէն գլուխը բարձրացնելով, կը տեսնէ ցողապսակ մաղբերով շրջանակուած արուին լուսնկա՛յ դէմքը, քաղցրութիւնով օծուն:

**

Աւանդութեան այս մասին մէջ սիրոյ անուշ հեւքեր կան, որոնց ալիքներով ջերմացած են Փարսիստանի գինով քերթողներուն երգերը. քրիստոնեայ եկեղեցին իսկ, կաշկանդուած գեղեցկութեան անօրինակ հմայքէն, անձարակ սրբազրութիւնով մը, որով Մովսէս կը մեղադրուի, աստուածերգութեան մէջ տեղ կուտայ անոր: Որովհետեւ, Արեւելքի մէջ շատ կը սիրեն սիրոյ մասին խօսիլը:

Եւ պէտք է որ, երբեմն, պատմողն ալ իր յաջողութեանը համար մտնէ այն խորութիւններուն մէջ, ուր խորհուրդը իր մերկութիւնը կը բերէ ամօթխած վարանքով մը:

**

Անտառին մէջ խորք մը:

Բարձր ծառերուն զազաթները, հովանիի նման իրարու վրայ հակած, կոնակ կուտան երկինքին:

Ադամ հոն կը բերէ Յւան, զոր առեւանդած է «թեւը անցուցած անոր ծոծրակին ու ծունկին տակէն» և ուժգին սեղմած իր կուրծքին վրայ, ինչպէս որսորդը կը գրկէ վիրաւոր եղնիկը:

Եւս ուշաթափ է, և փակած՝ աչքերը: Մտինքները

անձրեւէն դողացող ծաղիկներու բաժակին նման հակած, նունուֆարներու փունջը՝ դերկընդխառնուած պահուն քակուած ու մէջքէն վար կախուած: Եւ Ադամ, ապշահար, կը նայի հոն, ուր արձանագործները որթատուկի տերեւով մը սուլոր են դոցել:

Ադամ կը ճանչնայ ուշաբեր և հեշտագրգիւռ Ոգին, որ կը քնանայ քաղցրահամ պտուղներէն ծորած հեղուկին մէջ: Հաստաբուն թղենիին վրայ օձազալար կը բարձրանայ որթատունկը, որ մարգարտահատ ողկոյցներ կը կախէ ուռձագարդ բարունակներէն: Հրաշագոր Ոգին կը ծիծաղի՝ թափանցիկ մաշկին մէջէն պտկաշիթերուն:

Ադամ խաղողին արիւնով կը լուայ Եւայի դէմքը, սպիտակ ինչպէս լուտասին շափրակները: Աստուածաշնորհ գեղուհին կ'ուշաբերի ու կը խնդրէ այն քաղցր հեղուկը, որ, աւելի անուշ և ողեհրաւէր քան նեկտարը, պիտի շնորհէ հեշտանքը կեանքին:

... Գինով են. սիրագրգիւռ յուզումներու մէջ իրարու կը փաթթուին, ինչպէս օձազալար որթատունկը՝ հաստաբուն թղենիին:

**

Այստեղ կը դադրի աւանդութիւնը: Իրբեւ վերջաբան, աւելցուած է հետաքրքրական ծանօթութիւն մը:

Հոն, ուր որթատունկը թղենիին կը փաթթուի օձանման շուլայներով, հաստաբուն ծառ մը կայ խնկածոր: Անոր բունին վրայ կեղեւը հանուած է քառակուսի դերքի մը կողքին չափով, ու ճերմակ մաշկին վրայ դժուած է բուրդ մը, որուն խարխիւր վեր կը նայի և կոթուն մը ունի: Բուրդին եռանկիւնաձեւ միջոցը կէտ կէտ փորուած է, ծառին խէժը, գունդ գունդ, արցուն-

քի նման, խողխողուած աչքերէն հոսելով, խաղողի
ողկոյղի մը փորագրութիւնը կը ներկայացնէ :
Ներքեւը այսպէս է գրուած .

ՀՈՍ ԿԸ ՀԱՆԳՁԻ

Ես, Ադամ, անմահ հնձուորը այս յաւիտեական
պարտէզին,
Անքառամ քուփերու մէջ առեւանգեցի
Գեղեցկութեան Ոգին,
Պայծառ ու անբիծ, ինչպէս Նունուֆարներու
Աւագանը նուիրական,
Անարատ ու մաքրաբոյր, ինչպէս Նարդուր Եօթը
Գուրմերու ակունքին :
Համբոյրով մը սպաննեցի, նախ, անոր վայրենի
դիմադրութիւնը,
Եւ օձագալար որքատունկին շուփին տակ,
Երբ ստիճանները ողկոյղի նման սեղմեցի շրթներուս
մէջ, ան
Թիքեռնիկի՛ պէս քեւահարեց :
Ոսկի փոշին հո՛ւ է քաղուած .—
Յաւե՛տ քոյ պահուի անոր Յիշատակը :
Շրթներուս մէջ խաղողին բոցէ ծիծաղէն արբշիւ,
Կուրծփիս վրայ իջնող ստիճաններուն անձրեւէն
դողահար,
Ուշաքա՛փ եղայ :
Երբ արթնցայ, մեկնա՛ծ էր :
Անիկա, որ գիս այս պարտէզը բերաւ,
Ուզեց որ Նոր Տէրս փնտռելու ելլեմ,
Դուրսը՛, հո՛ն, ուր երիցուկները օրուան մը արեւ
ունին ըմպելու,
Վարդը՛ գիշեր՛ը մը միայն սոխակին տալու,

Ուր ծիրանին ու նոնենին վաղանցուկ բոցով մը
կը մարին,
Եւ կախար, աշնա՛ն, կուլայ կարօտը ձորին՝ եր-
գով ու բոյրով լեցուն :
Եւ ես դո՛ւրս ելայ անմահական պարտէզէն :
Անցո՛րդ, գիս մի՛ դատապարտեր,
Թէ ինչո՛ւ Յաւիտեականութեան պարունակները
լքեցի՛
Վայրկեանին գեղեցկութիւնը պաշտելու համար,
Որովհետեւ, կ'երդնում որ,
Անմահութեան պարտէզը լեցուն է
Զանձոյթի և Յուսահատութեան ամպերով :
Ու կ'երդուրննա՛մ բոյր ջուրերուն վրայ, որոնք
մեհեաններուն կը պարգեւեն Սրբութիւնն ու Յոյութիւնը
խորհուրդին,
Կ'երդուրննամ Աշտիշատի Մեծ Մեհեանին բար-
ձրաւանդակին վրայ, ուրկէ եօթը մեհեանաւանի արեւը
կը լրտեսեն,
Կ'երդուրննամ Անահիտի նուիրուած գինիի բա-
ժակին վրայ, կորնքարդ ու լիագունդ, ինչպէս ստիճան
հերատունկին,
Թէ հաճոյքին իմացումն ու պաշտամունքն է մի-
այն նշմարիտ,
Եւ Մահը՛ Զալին է հեշտանքին, հօօր ու տիրա-
կան,
Ինչպէս արիւնի գոյնը՛ բալին, որ հնձուորին
կրօցին կը նայի :
Օ՛, Հնձող, մե՛ծ ու հօօր,
Ահա տերեւաքափ ու ոսկրափուշ ցարասիներուն
վրայ կ'իյնամ արիւնափա՛մ :
Փշա՛տ, ու խնկեցի՛,

Գունդն արեւին փշրեցէ՛ք վրաս գինիով լեցուն
բաժակի մը նման :

Օ՛ր, ի՛նչ անուշ կը թրթռայ փառերգութիւնը
հունձֆին՝ դեղնած դաշտերէն

Եւ անդաստաններէն, ուր քուրմ ու հերատուկ
օրհնէնքի են եկեր :

Ահա, կը տեսնեմ քեզ, Եւա՛, մահուան պարու-
նակին մէջէն,

Երբ աչքերս կը գոցուին,
Եւ հրճուանքով խայտացող արիւնս, սրտիս տու-
փին մէջ,

Ցեխի կոյտի մը կը փոխուի, ահա
Ես յիշատակներով կը քնանա՛մ...

... Մարմի՛նդ, քաղցր՛ ինչպէս շնորհքն առուա-
կին,

Համբոյրդ սրբագան, ինչպէս գուր անուշահո-
տութեանց,

Ստինքներդ՝ յամպար ծաղկէ թփիկներ՝ ահած
ու յորդո՛ւն,

Դո՛ւն, երկնանուշ, հրաշագա՛ն աղջիկ,
Եւա՛, Եւա՛, Եւա՛(3)...

(3) Որ թարգմանի համոյ՛ք կամ կեանք, որ վաղանցուկ է :

ՃՈՒՐԵՐՈՒ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ

(ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ)

Երկիրը ծածկուած էր ջուրի թափանցիկ շա-
պիկով :

Ու ջուրերը խաղաղ էին :

Մազաղաթի պէս՝ մութը լոյսէն բաժնուած
պահուն :

Մեռելին միտին պէս՝ ամպերու ճերմկած պահուն,
արեւհոսէն առաջ :

Այնուհետեւ, Վահագնի դռնէն, արեւը կը թռչէր,
կ'անցնէր ջուրերուն վրայէն աղուափետուր թափելով :
Այն ատեն, ջրէ աշխարհին երեսին վրայ կը հլուսուէր
աննման հրաշանկար մը : Եւ իրիկնաժամուն, ծովուն
այդ անհուն պորտը որ ծփա՞ր՝ կը դառնար դաշտ մը,
ուր կարծես սպաննուող դոյնգոյն թիթեռնիկներ կը
դալարուին, կը թեւահարեն ցաւաղին :

Եւ ասդին, և անդին, ո՛չ ցամաք, ո՛չ բուսակա-
նութիւն :

Այն ատեն դեռ Հրէից Եհովան բաժնած չէր ցա-
մաքը ջուրէն :



Ու ջուրերու թաղաւորութիւնը լեցուած էր յա-
ւերժահարսերով :

Աւանդութիւնը կ'ըսէ թէ որձեւէդ էին անոնք :

Անոնց մագերն էին, թուփերու երկար չուքերուն պէս, թեթեւ ու մթանուչ: Անոնց աչքերն էին, Եհովային ոսկի մատներուն պէս, մոզական: Անոնց ուսերն էին, նունուֆարի սրբազան փունջի մը պէս, համբուրելի: Անոնց ստինքները նման էին սաթէ աշտանակներու, ծայրէն մետաքսեայ բոցով մը վառուած: Անոնց մատներն էին նրբատաշ աղնիւ քարերու պէս, որոնց կ'ազուցուի անլոյս աչք մը: Անոնց մարմինը նման էր կերպասի մը ետեւը վառուած ճրագի մը լոյսին: Եւ անոնց առնութիւնը՝ լիարբուն ու կայտառ:

Անոնք գեղեցիկ էին, և երբեք ցանկութիւն չունէին աւելի գեղեցկանալու: Երջանիկ էին, և չէին աղօթեր, մարդոց նման, երջանկութեան համար: Ունէին ինչ որ իրենց մէկ ընկերը ունէր, և ալ չէին նախանձեր: Անոնք չճանչցան նոյն իսկ կիրքը, անհաւասար գեղեցկութեան մը տիրացման ցաւովը: Վասնզի, աւանդութիւնը կ'ըսէ թէ, որձեւէգ էին, հաւասար և իրարու նման, ինչպէս ջուրը ջուրին է նման, ինչպէս աստղերը, իւրի փշրուած կաթիլներու այդ պատկերը, մէկ ձեռքի գործ:

Ահա թէ ինչո՛ւ խաղաղ էին ջուրերը ջրէ-աշխարհին, առանց խռովքի և այլայլութեան:

**

Ջրէ-աշխարհը գրոյց մը ունի:

Ջուրերուն յատակը, տեղ մը, ժայռերը խորը մըն են ձեւացուցեր: Հոն կ'ապրի ամբարիշտ ծերունի մը, կոյր: Անիկա ատենօք թարմատի յաւերժահարս մըն էր: Եհովա պատժե՛ր է գայն կուրութեամբ և արգելափակեր ժայռերուն կազմած այդ խորշին մէջ, որուն բերանը ծինկարի ծառին մէկ քոստոս բազուկը շանխա-

ղողի տունկ մըն է վեր բռներ: Ու Տէրոջ լոյսը, հրեղէն սուրի նման, ջուրը ճեղքեր՝ կը հսկէ դուռը: Վասնզի, ո՛վ ամբարշտութիւն, մեղապարտ յաւերժահարսը հաւատացեր է, որ գեղեցկութեան և հաճոյքի իմացումին համար տառապիլ է հարկաւոր: Ի՞նչ յիմար յղացում, մտածեր է, «ստեղծել նման իր պատկերին», և աւելի այլանդակ բան՝ քան դադափարը հաւասարութեան: Եւ անիկա, կ'ըսէ դողացող ձայնը պատմողին, շեղք քարով մը կրտեց իր ստինքները և յաւերժահարսի մը ծոցը պառկեցաւ:

Այն օրէն ի վեր, Աստուծո՛ւ կուրացած, կը հսկէ Ծանխաղողին խորշին մէջ:

**

Եւ եղաւ, որ միամիտ յաւերժահարս մը իմացաւ ճշմարտութիւնը կոյր ծերունիին խօսքերուն:

Շէկնազան էր անունն այդ ջրանուշին: Նունուֆարներու խիտ ցողուններուն մէջ հալածելու էր ելեր ջրի-թռչնիկները, որոնք վեր վեր կը բարձրանային և բուստի փրցուած ծաղիկներու պէս կը ծփային: Նարդոսներու թուփին մէջ ծփուն տերեւներ կուրծքին կը զարնուէին և, կաքաւի գեղնորակ երկու կտուցներէ, անանուն յոյգեր, կաթիլ կաթիլ, կուրծքէն ներս կ'իյնային: Խոշոր կրեայի մը ետեւէն, լայն ծերպէ մը Ծանխաղողին խորշը մտաւ:

**

Կատղեցա՛ւ Եհովան, երբ տեսաւ որ յաւերժահարսերուն աչքերը կը պղտորէին ջերմութենէ մը: Ուստի հրամայեց դեւերուն, որ մտնեն ջուրը, լեռներուն որ ճեղքեն ծովը, ցամաքին որ ծծէ ու չորցնէ:

Կործանեցա՛ւ ջրէ-աշխարհը: Դիւային գալարում-ներով ալիքները բարձրացան, զարնուեցան ու ջարդ-դուեցան: Լեռները երկնամերձ բարձրութիւններէ վար նետեցին ջուրերը և հողը, անյագ ցուլի մը նման, ծծեց ու ծծեց: Այն ատեն Յհովա կրկին հրամայեց, որ երբե՛ք չհանգչին ու չխաղաղին ջուրերը, երբե՛ք:

*

**

Մեր գիւղին տակը, Դիւրտիւրի տափակ հողերէն փախչող ձորերը երբ քչիկ մը կենան, տակաւին յաւեր-ժահարսեր կան, որ դուրս կը հանեն իրենց գեղեցկութիւնը ջուրին մաշած շղարչէն: Ու կը նային մեր հովիւներուն, արտ վարող երիտասարդներուն: Եւ ի՛նչ ցանկութեամբ, և ի՛նչ երազներով:

ՏԱԼԻԼԱՅԻՆ ԵՐԳԸ

Ով դացած է փարիզի Օվերան,

Անիկա չպիտի կարենայ մոռնալ հիացումը պերճարուեստ կերտուածքին: Մարմարեայ ճեմակ սանդուխները կ'իջնեն, վերէն, ջուրի խաղաղ սահանքի մը նման: Ու բազրիքներուն վրայ կը կենան արձաններ մերկ մանուկներու, երանքներուն արանքը ոսկեխնձորի մը հանդոյն առնանշանը վայրաճիգ: Անոնց վեր բունուած ձեռքերուն մէջ կանթեղները կը հանգչին սպիտակ աղանիւներու պէս: Ու սիւները կը կանգնին, անկիւնէ անկիւն, ինչպէս աղուոր կիներու մերկ իրաններ:

Հանդիսական սրահին ձեղունէն կը կախուի ջահը, լոյսի մէջ շողացող տապանի մը նման: Ու լոյսը կը ցողայ նարկիսի բաժակներու մէջէն, կը բիւրեղանայ կտուցի մը ծայրը, կը պսպղայ որմերուն փակած կիներու պորտին ու շրթունքին մէջ: Անկիւն առ անկիւն, ոսկի ջնարակը կը բռնկի, ու կամարը կը ծաղկի բուստի ճիւղերու պէս:

Ահա Foyerն, որուն ձեղունի պատտառը նման է բացուող ամպի մը:

Հրաշալի՛ է, հրաշալի՛ է:

Ես կը սիրեմ somptuarismeը, արեւելքի ուղղափառ դպրոցը, որ ծանր արուեստի խորհրդագեղ դորձերուն մէջ կը պահէ դեռ իր աւանդութիւնները, անեղծ ու հաւատարիմ: Ես կը սիրեմ գիծերու և ձեւե-

րու այս դաշնաւոր հէնքը, ուր կը դողան դադտիմաստ հանգոյցները խորհուրդին:

Ես կը ներեմ պերճանքին, որ կը շոռայլուի համայնապարզեւ արուեստին համար, վասնզի այդպէս է որ, ժամանակին ամպերուն մէջէն ընդնշմար, պատմութեան հարուստ դամբարանները կը դարհուրեցնեն զիս այնքա՛ն խորունկէն: Եւ այդպէս էր, որ Մակեդոնացի աշխարհակալը ծափ կը զարնէր, երբ Աղեքսանդրիոյ, — որ շինուած էր, կ'ըսեն, հելլենական քղամիդի մը շրջադիծին ձեւին վրայ, — մեհեանին ձեղունէն հին պճնապաշտ արուեստագէտը կ'իջեցնէր սատիմի փայտէ ջնարակուած օձ մը, որուն բերնին մէջ թանկագին քար մը, աղանիի հակիթի մեծութեամբ, բռնկելով ատրուշանին բոցերէն, լոյսը կը թափէր ու կը տարածէր միւռոնի նման:

Ու ես, խորունկ հիացումով, առանց երբեք տրտնջալու պճնաշողութեան դէմ, կը մտնեմ ներս Օփերայէն, որպէսզի, ի տես արուեստի խոյանքին, մտի՛ մարմինս դողերէն ու հմայքէն ծանրածանր խորհուրդին:

Այս գիշեր Սամսոն և Տալիլիան պիտի ներկայացուի:

Եբրայական աւանդութիւնները կը նմանին քամուած ողկոյցներու, որոնք գինիին բարկ բոյրը չեն տար այլեւս, — այնքա՛ն յաճախուած է անոնց երբեմնի գեղեցիկ անկողինը, որուն մէջ հնդկական ու եգիպտական շունչը ջերմութիւն ու քրտինք թափեր էր: Սակայն նոր հեղինակներ նորօրինակ յուզումներու և մտածումներու վրայ կը քաշեն պատմուածանը՝ թաղ-

ուած հարստութիւններէ և դեղեցկութիւններէ բերելով: Այնքան սքանչական է հին փառքը, որքան ծանր՝ արդի խորհուրդը:

**

Ուր Ուժը կը պայքարի Գեղեցկութեան դողերուն դէմ:

Փղշտացիները կը ճանչնան յուռութքը հրաշագոր և ճշմարիտ ուժի մը: Տխմար են անոնք, որ հաւատացեր են դնդերներու աճած ու պինդ կազմին: Ահա հիմա Սամսոն պիտի դալարուի սա աղուոր պարուհիներուն նետած բոցերէն: Սամսոն հիմա պիտի հայցէ հեշտանքը, դոր Տալիլա կը թափէ գեղեցկութեան ակունքէն, ծանր մետաղի մը նման, իր ուժերուն երբեմնի անայլալ աւագանին մէջ:

— Տալիլա՛... Տալիլա՛...

Ու Տալիլա աղուոր աղջիկ մըն է, հազած՝ քղամիդ, եգիպտական բեհեգէ, ջինջ կապոյտ, կարծես կտաւ մ'ըլլար ծովէն կտրուած: Ծուշան ոտքերը կը հանդչին մուճակներուն կրակի դոյն ծոցին մէջ: Եւ իր ստինքները կը նմանին Երիզովի պարսպադուռին ուռնակին, պսպղուն՝ առտուան արեւէն:

Ու Գագայի պերճաղիճները կը հետեւին անոր պարին, — արեւելեան նուաղկոտ, ինքնամատոյց հեշտանքի խաղն է ան: Անոնք իրենց ձեռքերը բացած, գիրկը պառկելու եկող աղջկան մը պէս, ետեւ կը կախուին, և, հունա՛, Ծօշանէմի կուրծքին վրայ՝ արբուն ծիծերը կը դծուին հայկական մանրանկար կաթուղիկէներու նման սայրեկ, և հունա՛, բարակ ու ծանրագին կտաւին տակ, յանկարծ, ջուխտակ ջուխտակ կը ծլուորին աշտանակաճեւ ստինքները Սուլա-միթի:

Սամսոն կը տառապի՛ր :

— Տալիլա՛, Տալիլա՛, քու ստինքդ նման է գլինիի սղտիկ տիկի մը . . .

Անկիւնէն, Սամսոնի ետեւէն, Իսրայելացւոց Ծերոցն է, որ կ'երդէ Չղաստութեան Խորհուրդը, սաղմոսի սկէս քնարական, ու դա՛շն, ու թա՛ւ :

Սակայն կը կաքաւե՛ն պերճաղիճները, և ի՛նչ անուշ խաղեր կ'ընեն : Ա՛հ, ի՛նչ գեղեցիկ է սիւներուն մէջէն փախչող մարմինն անոնց : Տե՛ս, Գոգոթայի մտղերը, նման թռիկի մը իրիկուան բարակ ու երկար շուքին, որ կը թափին շողակաթ մէջըն ի վար կամ կը տարածուին միջոցին մէջ : Ու պա՛րը, թեւ թեւի, գիրկ գրկի, մէջմէջի, որ կը հիւսուի, ու կը քակուի, ու կ'ոլորի, ինչպէս Գեննասարէթի լճին վրայ, ճերմակ թիթեռնիկներուն խաղը, որ կ'երկարի, կը փչրուի, կը փրփրի : Հօ՛յ, Պեղեթայի սղորտը, Սարօնի հովիտին խաղողահատն է, որ կը խայծի :

— Տալիլա՛, Տալիլա՛, քու սղորտդ կը նմանի նահլոթի(*) մը բերնին, որ կ'ուղէի ծծել դրդռուած շրթներովս, Եդովմայեցի հովիւներուն պէս :

(Աւանդութիւնը կը պատմէ թէ Սամսոն մոլորեցաւ իր կլիրքին յուսահատութենէն և ինքզինք կորսնցուց գեղեցկութեան ամպհովանիին տակ, որ մութ է հնձանին մէջի գլինիին պէս : Ու կատաղօրէն, իր անմշակ ու վայրի ուժերովը կառչեցաւ տաճարին սիւներուն, կործանելու համար տեսիլքը, ամբողջ) :

*
**

Կործանեցա՛ւ տաճարը :

(*) Երբայերէն անունն է հովուական սրինգի մը :

Եւ սպաննուեցան Իսրայելացի ծերերը, Փղշտացիները, Սամսոն ու Տալիլա :

Վախճանեցա՛ւ գիրքն ալ, հէ՞, միամի՛տ հեղինակ :

Եւ սակայն կը շարունակուի գեռ երաժշտութիւնը :

Եւ ամբոխը չի մեկնիբ : Օթեակներուն կարմիր թաւիչներուն խաղաղութեանը վրայ ու, վարը, բազկաթոռներուն վրայ, անշարժ, մաքրիկ կը մնան տակաւին անճրկած : Սա զինուորականը, որ երէկ, սրատեբազմի դաշտին վրայ, ձի հեծած, «կրա՛կ» կը հրամայէր բանակին, նստեր է հիմա գլինովի նման, կարծես անդամալոյծ : Սա յաղթանդամ մարդը, որ սովոր էր կնիկը ծեծելու բուրդի պէս, փլեր է ինքն իր վրայ : Գարացեր են նաեւ բանուորները, որ վարժ էին կառավարելու մեքենաներուն կատաղի շարժումները : Ալ մութին մէջ, գաղտագողի, չի՛ կրնար համբուրել քովի աղուոր աղջիկը սա սլարոնը աշխարհաքաղաքացի :

Եւ այս մեծ ամբոխը, արդի Սամսոնը, կը խոնարհի ու կը կքի վերէն իջնող ծանր ու խորհրդաւոր երազին տակ, որ երզն է Տալիլայի :

Միսին հեշտագրգիւտ տեսիլքը, խանձոտ ու չարատանջ, ալ չի՛ վառեր կեանքի հիւանդ դաշտը :

Հիմա Խորհուրդին ահեղ երազն է, որ կը թագաւորէ :

Անուշ բայց հզօր երաժշտութիւն մը կը ծփայ օդին մէջ, ինչպէս Եհովայի հողին կը շրջէր ջուրերուն վրայ՝ տիրապետելով տարրերուն :

Տալիլային երզն է, կամ աղերսն առ Տալիլա, որ կը ծփծփայ, կը սլալայ, լա՛, լա՛, լալի՛լա, լա՛, լա՛ . . . :

Բարակ ու նուաղուն լոյս մը, ծանրադին վաղի նման, կ'օծէ պատերն ու արձանները : Մարդոց բազ-

մութիւնը, աշնան թափած տերեւներու պէս, տարած-
ուեր է գետինը, և երաժշտութիւնը, ինչպէս հով մը,
կ'անցնի անոնց մէջէն, դաղտուկ սրսփալէն ու սար-
սուացնելով:

Կը մսի՛ն...:

Ու կարկա՛չը ստեղնաշարերուն, ու մեղեդի՛ն
տաւիղներուն, կամ բիւրեղ խա՛ղն աղելարերուն, կար-
ծես անձրեւն է հովձփուն, որ կ'իջնէ Գեղարուայ խելօք
լեռներուն վրայ, մշուշով ու շաղով ծեփած:

ԹՈՉՈՒՆ ՄԱՐԴԸ

(Հ Ե Ք Ե Ա Թ)

«Ի սկզբանէ» մարդիկ կը թռչէին միջոցին մէջ:

Անոնց թիկնոսկրերուն ազուցուած էին երկու
թռչման թեւեր, ինչպէս հովհարները Սաբայի թագու-
հիին նաժիշտներուն, և պճղնոսկրերուն ետեւօքը՝
սրունքներուն վրայ կը շարժէին սանտրածեւ թեւակներ:

Իմ գիւղս չի պատմեր թէ ինչպէս, հետզհետէ,
երկիր իջան անոնք: Սալայն մամիկիս իմաստուն չրթ-
ները ըսին ինձի թէ, ամէն անգամ որ մարդոց հոգիին
բիւր բիւր խորշերուն մէջ կաթիլ մը կ'իջնար Եօթը
Մեղքերուն քաղցր օծութենէն, ինչպէս պտուղ մը մար-
գրիտ՝ վիրաւոր խեցիին մէջ, նոր ծանրութիւն մը կ'ա-
ւելնար անոնց մարմնին և, դժբախտ գահավիժումով
մը, երկիր կ'իջնէին անոնք: Այն ատեն հովհարի ձեւ
թռչման թեւերը արմաւենիի ճիւղերու նման կը գօսա-
նային ու կը թափէին:

**

Իմ մամիկս կը կարծէ տեսած ըլլալ վերջին
թռչուն մարդը գիւղին երկնքին մէջ: Անիկա, կ'ըսէր,
յաճախ կը հանդէ՛ր արդարահոգի գիւղացիներու տա-
նիքներուն վրայ և այն տարի առատութիւնը, ինչպէս
ծննդաբերութիւնը մարդոց և անասուններուն, հարս-

նիքներն ու անպակաս տօները ուրախութեան աղաղակներ կը թուցնէին գիւղին երկնքին մէջ: Անիկա յաճախ առտուան արեւին դուրս թափելէն առաջ կ'երեւէր գիւղին աղջիկներուն ու տղոցը աչքին, կը ծիծաղէր ու կ'օրհնէր, յետոյ կ'աներեւութանար: Երբեք գետին չէր իջներ, այլ միշտ կը թառէր ծառերուն վրայ: Աւելի, գիւղին տակէն անցնող ձորի մը եզերքը, հաստարուն կաղնիի մը վրայ կը հանգչէր և ստուերոտ ճիւղերուն մէջ կը գովանար ամբան ջերմութեան դէմ:

Դժբախտ օր մը, կ'ըսէ աւանդութիւնը, վերջին թուշու մարդը կը հանգչէր այդ հաստարուն կաղնիին վրայ, որուն, յետոյ, Մարիամ-Մարին ծառը անունն է տրուած:

Առտուան կանուխ պահ մըն է: Մեղրաժայռին կողմը, ծաղկած սպիտակ խնձորենիներու պարտէզի մը նման, կը ճերմկի: Դեռ արեւը իր պաճուճանքները չէ արձրկած:

Ջրանուշ մը ձորին անկողնէն կ'ելլէ, մերկ ու գեղեցիկ, եզերքը մարդին վրայ կը նստի, ու կը նայի գիւղացի աղուոր երիտասարդին, որ հողը կը վարէ, քիչ անդին: Օ՛, ջրանուշները գեղեցիկ կ'ըլլան միշտ: Անոր կոնակը կը նմանէր ցոլացող հայելիի մը, որուն վրայ, կ'ըսես, արեւին մէկ թեւն է ինկեր: Աղեղնակի պէս սանտր մը բռնած՝ իր մաղերուն ոսկի ջուրը կը ժողվէր: Ու, սատանա՛յ, ուշադիր կը սպասէր, որ երիտասարդ գիւղացին գայ, դողով ու վախով, համբուրելու օրհնութիւնը իր մարմնին, երբ ինք, ծոծրակին վրայ այդ բոցը չինկած, քրքջալէն քրքջալէն, ջուրը պիտի նետուէր անմիջապէս, ճիշդ անկողնին փոսը գլտորուող գիւղին ճերմակ հարսին նման:

Սակայն, այս անգամ, վերէն թուշուն մարդն էր տեսեր ջրանուշը, որուն լայնալիճ կուրծքը, ծորան ծորան, կը ճըղի, և կ'ըսէր ուսերը կը հանգչին երկու քնացող աղուճակներու նման:

Թաքթաքուր թեւաբախումներով՝ կ'իջնէ վարայնքան անձայն, որքան ջուրին քալելը հողին վրայ: Ու մարդոց քայլերը ճշդելու սովոր, ջրանուշը չ'իմանար թուշուն մարդուն մօտենալը: Թուշուն մարդը շրթները կը բանայ, կը կ'ըսցնէ, բաժակ մը կը շինէ ու կը դոցէ ջրանուշին ծոծրակին վրայ, լեցնելու համար բոցով և օճադին միտով:

«Ա՛հ» կը կանչէ ջրանուշը՝ սարսափած, ու ջուրը կը նետուի թաւալելով: Ասդին, թուշուն մարդը գետին կ'իյնայ ու կը դալարուի, վիրաւոր թուշնիկի մը նման կը թսրտայ:

Ալ չէ՛ր կրնար թուշիլ:

Վասնզի քաղցր մեղքին կաթիլը ծանրութիւն մըն ալ աւելցուցեր էր իր հողիկին խորշերուն մէջ, ինչպէս իմաստութեան ցօղ: Հողին վրայ քարչ տալով կ'թոտուն, դողով և իմաստութեամբ ծանրացած մարմինը, կը հասնի հաստարուն ծառին բունին, որուն կռթնած՝ կը նուաղի:

Յաջորդ առտուն գիւղին մարդիկը ծառին տակ կը դտնեն անոր մարմինը, որուն հովահարի ձեւ թուշման թեւերը արմաւենիի ճիւղերու նման դօսացեր թափեր էին:

Եւ այդ ծառին տակ ալ կը թաղեն դայն:

Մեր գիւղին վարի դին, Մարիամ-Մարին հաստակեկ ծառը կայ, որուն տակ գերեզման մը կը հանգչի:

Կ'ըսեն թէ հող է թաղուած վերջին թռչուն մարդը, որ ճանչցաւ մեղքը: Սակայն ոմանք դեռ չեն հաւատար որ թռչուն մարդը մեռած ըլլայ: Ու ամէն տարի, Մայիսի եօթնին, երբ գիւղացին «ուխտի» կուգայ այդ կաղնիին, առտուն կանուխ հոն վազողները կը պատմեն թէ ծառին դադաթի ճիւղերուն մէջ տեսեր են երանելի թռչուն մարդը: Իրաւ ալ, այդ ծառին տակ շատ բազմութիւն կուգայ, մատաղ կը մորթեն, կերուխում կ'ընեն, աղջիկները և մանուկները կաղնիին զով սաղարթները կը համբուրեն, ու մայրերը, «ուխտ»ով մը, զոր ալ չեմ յիշեր, խատուտիկ ձորձեր կը կապեն ծառին ճիւղերուն, երախաները կը ցատկեցնեն ցած ճիւղերուն վրայէն, երիտասարդները գերեզմանին վրայ խունկ ու մոմ կը վառեն, յետոյ կ'երթան կը նային ջուրին, որ, մանուկի պէս, կը քնանայ, դադտնի նայուածքներ կը թափեն մացառին մէջ, կ'աղօթե՛ն, կ'աղօթե՛ն, ու ետ կը դառնան:

Ի՞նչ գիտնամ, թերեւս թռչուն մարդուն հրաշալի համբոյրին դողն ու քաղցրութիւնը հայցողներն են անոնք:

Մ Ո Մ Ծ Ա Ղ Ի Կ Ը

(Հ Է Ք Ե Ա Թ)

Այս հէքեաթը երգի մը պէս է, որուն ունկնդիր՝ գինով կ'ըլլան մեր գիւղին հարսները: Անիկա կը սկսի գովասանութեամբը մեր գիշերներուն: Ահա, պատմելու համար, կը կծկտիմ մանուկի մը նման, որ գերկուելու կ'երթայ իր մօրը բազուկներուն մէջ, և աչքերս կ'անուշանան ածխադոյն մորմերու պէս, կարօտէս՝ լալու տրամադիր, այլ գինովօրէն ուրախ:

Մտի՛կ ըրէք, մտի՛կ ըրէք:

**

Մեր գիշերը, թիթեռնիկի պէս անխօս ու հեհեհելի, կը թառի գիւղին արտեւանունքներուն վրայ:

Լուսնկան, թիթեռնիկի փոշի է՝ նետեր են, կ'ըսես, երկնքին վրայ, թաշկինակի մը տեղօքը, որ, սակայն, չէ նստած դեռ: Բարձունք լերան աստղերը, պտուղ պտուղ, կը շարժակին. ժամուն վրայ աստղերը, մոմի արցունքներու նման, վար կ'երկարին. հունա՛, քաղաքին դին, աստղեր ալ կան, որ փոշիի պէս դաշտին վրայ կը տեղան:

Օ՛, գիշերը, գիւղին մէջ, արեւէն ջերմոտած ջուրի յոգանքի պէս է. ու գիշերը, գիւղէն դուրս, գիշե՛րն հովիւին, հարուստի տան պէս:

Հովիւները կը պատմեն թէ անտառին առջեւ գիւ-
 շերին աղջիկները, մերկ մերկ, կը թափառին. անոնց
 կուրծքին վրայ, աջն ու ձախը, երկու պտղունց մեղր
 կայ՝ սաթի պէս վառ տեսակէն. անոնք կը փախչին
 քեզմէ, անտառ կը մտնեն, ու դուն կը տեսնես, տա-
 կաւի՛ն տակաւի՛ն, անոնց մերկ կրունկը, ձիակասկենիի
 բողբոջի նման ստիտակ ու կլոր, դոր դիտմամբ ան-
 տառէն ներս չեն քաշեր: Կ'երթաս. առջեւդ ակունքն է
 յորդեր, ու մարգագետինին վրայ կայծոռիկ կը թոցնէ:
 Դաշտին գով շունչը, կատուի մը մսած մուշտակին
 նման, երեսիդ կը քսուի: Նստէ գետինը, ու նորէն նայէ
 երկնքին, վրան՝ վաղի պէս մաքուր մշուշ մը կը ծրփ-
 ծփայ, նայէ՛ բոլորտիքդ, լուսաղբիւրին ոսկի մահիկը,
 սուրբերու լուսապսակին նման, կըսի է առեր: Ա՛յ,
 ձեռքիդ տակ՝ մարդը բացը մնացած ծիծի պէս պաղ է,
 ու հաճելի, ու թաւշունակ:

Գիւշերն է խաղա՛ղ, և այնքա՛ն խաղաղ, որ կ'ը-
 սես, երկինքն ու երկիրը կը համբուրուին, անդէնական
 կիրքով մը կը հեւան:

Բայց մեր գիւղին գիւշերը տեսակ մը դարուն է:
 Պարտէզին մէջ թուփերը յանկարծ ծիլ կուտան, մէկ
 ժամէն ցորենի չափ կտուցներ կ'ունենան: Վախվիւնով՝
 ծառերը կը բանան իրենց աչքերը՝ խղունջի պէս. ձիւ-
 դերն ի վար ցողը համբանքով կը թափթփի: Ծաղկաս-
 տանին վրայ գոյնգոյն աղ են թափեր կարծես: Մեր
 գիւղին գիւշերին մէջ ամէն բան հրաշքով կը հասուննայ
 փոթանակի: Ծիլ մը սէր դիր աղջկան մը սիրտին մէջ,
 ու թող որ, մէկ գիւշեր, տանիքին վրայ լուսնկան խնդայ
 անոր քնացող ծիծերուն, առտուն սէրը կը կախուի իր
 ներսը, ողկոյց առ ողկոյց:

Նման ու աննման գիւշեր մը, հովիւ մը, իր սիրա-
 կանին հետ, սիրոյ ջովջով աճման հրաշքը տեսած է:

**

Մեր գիւղին հովիւները բախտաւոր են, և երբե՛ք
 արհամարհելի: Բանաստեղծները, ուրիշ գիւղերու մէջ,
 դանոնք նկարագրեր են նմանօրէն խոնարհ ու անժառանգ
 արարածներու: Չէ՛, մեր գիւղին մէջ անոնք քահանայի
 պէս պատուաւոր, հարուստի պէս փորը կուշտ են, և,
 ինչպէս արհեստաւոր՝ խելացի: Եւ անոնք գիւղին ամէ-
 նէն աղուոր աղջիկները կը սիրեն:

**

Հէքեաթին հովիւը կը սիրէր աղջիկ մը:

Անոր շրթները մորմին մանիշակ արիւնովն էին
 աղուոր, և ստինքները՝ կլոր, ինչպէս կ'ըլլան հովիւ-
 ներուն պղտիկ հացերը, աղնիւ ու սպիտակ ալիւրէ:
 Չեռքերը սերկեւիլի ոսկիով անուշցած, աչքերը՝ մեղան
 ծաղիկի երկու նորարաց կոկոններ, ընքուիններ՝ ածու-
 խի պէս սեւ, ու սանտրի մը պէս կոր:

**

Կիներուն հետ, որոնք ոչխար կթելու կու դան
 առտուն կանուխ, երբ դեռ երկինքը մեղանի պէս կ'ըլ-
 լայ, անիկա հովիւին սայվանը եկեր էր, ու յանկարծ՝
 անհետացեր: Կարծեցին որ գիւղ վերադարձած է: Ու
 կիները գիւղ էին դարձեր արդէն, իսկ աղջիկը, գիւշերը,
 իր սիրականն էր գտեր:

Բարձունքին վրայ, սայվանին տակը, քա՛ղցր է
 հովուերգութիւնը ամենադեղեցիկ գիւշերուան այս պա-
 հուն:

Բլուրին ետեւ խումբ մը աստղեր, ոսկի թռչուն-

ներու նման, կը կտցահարեն ամպերը: Լուսնկան դո-
լորչի մըն է: Հեռուն, նորէ՛ն աստղերն են, բամպակի
մանր ծաղիկներու պէս: Վարը՝ գիւղը, երկու բլուր-
ներու արանքը, լոյսի դերձանով նօսր ոստայն է քաշեր,
վրան մշուշին բարակ փոշին կը դողդղայ:

Գիշերուան մէջ, սահման չունի՛ համբոյրին քաղ-
ցրութիւնը: Դուն չե՛ս գիտեր զօրութիւնը մեր գիւղին
գողտրիկ՝ համբոյրներուն: Ամէնէն ցանկալի համբոյրը
կոյսին, որ մարմինիդ վրայ ցուրտ փոշի մը կը թափէ:

Ժամու մոմ մը, քովն ի վեր անոնց, կը վառի ու
կը հսկէ:

**

Առտուն, երբ լոյսը կը ցաթէր, հրա՛ջք, մատա-
ղատի հովիւն ու աղջնակը ծերացե՛ր էին:

(Մենծ հարս մը, որ աղջիկներու և մանչերու մեր
երազահար շրջանակին մէջ է նստած, այսպէս կը
պատմէ).

— «Սպիտակ էին անոնց մաղերը, շուշանի խուրձի
մը նման, սպիտակ՝ ընքուինները, կարծես նաչի՛հ էր
իջեր երկինքէն. ու երջանիկ խաղաղութեամբ մը լեց-
ուեր էին իրենք: Մէ՛կ գիշերով ծերացեր էին, վասնզի
այնքա՛ն խոր, այնքա՛ն ճշմարիտ սիրեր ու վայելեր
էին զիրար: Այդ սէրովը դուք ալ հասնիք ճերմակ տա-
րիքին, մանչեր ու աղջիկներ»:

Յետոյ, յետոյ, ալ ի՞նչ կ'արժէ կեանքն արդէն:

Ու մոմն ալ հալեր ու հատեր էր: Կանանչ խոտին
չիւղերուն վրայ մոմին սպիտակ կաթիկթուքներն էին
ինկեր, ու ծաղիկ մըն էր ձեւացեր:

**

Այդ ծաղիկը հիմա շատ կ'աճի մեր բարձր լեռնե-
րուն վրայ, մատիկ մատիկ ճերմակ ուլունքներ կը
կախէ ցածլիկ թուփերու մէջ, ուր ելակներն ալ, մօ-
տիկը, կը կարմրին ու պղտիկ աղջիկներու լեզուի ծայր
կ'ըլլան:

Մեր գիւղին մէջ, հարսնիք երբ ըլլայ, հարսնցուին
գլխին շուրջ կ'անցընեն մոմծաղիկէ պսակ մը: Ճերմակ
արցունքներով այդ ծաղիկը, կ'ըսեն թէ, սէր կը պար-
զեւէ, և հաստատուն կը պահէ պսակը մինչե՛ւ ծերու-
թիւն՝ մէկ բարձի վրայ:

ԼԵՌՆԵՐՈՒՆ ՀԷՔԵԱԹԸ

Այն ատենները...

(Կը բաւէ ըսել այս խօսքը, որպէսզի պապիկս իր մանկութեանը անուշ յիշատակներուն հարստութենէն խանդավառուած՝ աչքերը դոցէ, իր հոգիին էջերուն նայի, և ծաղկանկար դօտիին մէջ փնտռէ համբիւճը՝ դոյնդոյն ապրում նարօտով և գաղտոսկրեայ ուլունքներով, դէմքը քաղցրացած՝ թեթեւ ջերմութեամբ մը) :

Ու այն ատենները, այս մեր երկրին թարմագեղ տեսարանը սկուտեղի մը վրայ գծուած խաղաղ բնանկարի մը տպաւորութիւնը կուտար :

Հարթ ու անծայրածիր տարածութիւն մը. չկայ լեռ, չկայ բարձունք : Անմահաբոյր ծաղիկներ, հոյլ հոյլ, հոգի մաշած շերտի մը մօտ, կամ առուններուն եղերքն փ վար, գունաղան ներկեր կը թափեն : Ա՛յ, խատուտիկ թիթեռնիկներն ալ, յարաշարժ, նման խաժուկ, կապոյտ ու բոցուն աչուկներու, որոնք իրենց թաւ թարթիչները կը բացլսփեն շարունակ, խօլ պար մը կը դառնան, վերէ՛ն, հովին հետ : Ակունքը, կարծես ծաղկած կամ բոցով լեցուած թաղար մը ըլլար, կը բանայ իր նախած երեսը հողի դորչ պաստառի մը վրայ, յետոյ մէկ անկիւնէն, արցունք թափող աչքի մը նման, գիծ մը կ'երկնցնէ մարդագետիւնին մաքուր պատ-

կերին վրայ և ջրջրկած վէրքի մը պէս կ'աղտոտէ գայն : Թուչտուն հո՛վը, բուրումնաւէտ պատմութեանի մը նման կը փոթիփոթի՝ անդաստաններուն վրայ ու կը փախչի մեղմ ալիքներով, պարիկի քալուածքով մը, որ կ'ըսես՝ ծաղիկ կը ցանէ :

Ամբողջ երկիրը տափարակ դաշտ մըն է : Կը նայի՛ս, կը նայի՛ս, ու հեռո՛ւն, ճերմակ մշուշ մը կը պղտորէ բաժանման գիծը երկրին ու երկնքին :

Ու երկինքն ալ նոյնքան խաղաղ : Աստղե՛րք, ոսկի հասկերու նման, բեկեալ քիստերով. մէջը-փորուած լուսնկայ մը, երբեմն կէսը մաշած ու սրբուած, ինչպէս պապիկիս ճակատը, երբեմն ամբողջ ու գեղեցիկ, մանր ու թանկագին աչքերով, ինչպէս լեցուն ստինք մը, որուն պտուկը նման է նուան հատիկին : Արեւին մաղմղուն ջերմութիւնը կ'իջնէ ծոծրակիդ վրայ, սիրած աղջկանդ շունչին չափ մեղմաջեր :

Սաղա՛ղ՝ մարդոց կեանքն ալ : Անոնց հոգիները կը լեցուն տկար աղօթքի մը մէկ դողովը : Անոնց հոգիները առեր են այնքան լոյս և երազ, որքան ջուր պիտի առնէր սափոր մը անձրեւէն, որ կ'իջնէ համասփի՛ւտ, առանց հաւաքման խողովակի : Չկա՛յ բարձունք մը, որուն երկարի յուզումի գիծ մը, չկա՛յ լեռ մը, որուն համար թրթռայ երազի մը շամանդաղը : Գոնէ բարկութեան ջրվէ՛ժ մը իջնէր լերի ու բարձր ժայռերն ի վար, և մարդկային արհամարհանքը բարձրանար երկինքն ի վեր. ի՛դձ մը, բաղձա՛նք մը թեւ առնէր ձանձրոյթի դաշտերուն մէջէն, ուր, իրարու մօտիկ, կը քնանան մարդիկ, առանց հետաքրքրուելու կուրի խանդավառ տեսիլքներով, առանց տենդն ունենալու տիրապաշտիկ երազներու :

Այն ատենները երկիրը տափարակ դաշտ մըն էր, չկար լեռ, չկար բարձունք :

**

Բայց վա՛յ այն հոգիներուն, որոնց մէջէն չէ ան-
ցած անհանդարտ ոգի մը, նոր պատկերներ հինելու
համար ձանձրոյթին խաղաղութեանը վրայ, ինչպէս
հովը կ'անցնի անտառներէն ու ջերմութիւնը կը տանի՝
զովութիւն բերելու, ամպը կը տանի՝ լոյս թափելու,
բոյրը կը տանի՝ երգ մը նուիրելու համար:

Մեզի պատմողը չէ անուաներ այդ ոգին: Ասորա-
կան ու երբայական դերքերը, սակայն, Բէեդգերուդ
կ'անուանեն, պարսկական հէքեաթները՝ Էթտէհար, և
հայերէն աւանդութիւնը՝ Գրող կամ Տիր: Ի՞նչ փոյթ
թէ պակասաւոր է ճանաչողութիւնը մարդոց, որ խտիր
կը դնեն չարին ու բարիին միջեւ: Ես որ կը պատմեմ,
հաւատացեր եմ թէ միշտ արժեւոր է խմաստութիւնը,
չար թէ բարի:

Ահա դիւալին այդ ոգին, — կը սկսի հէքեաթը, —
կը թափառէր երկնքին մէջ, խոնջէնքի և չարխոհու-
թեան ակնարկը յառած վարը, նորաստեղծ երկրին
վրայ, հարթ ու նկարագեղ՝ ինչպէս սկուտեղ մը:

Յանկարծ յղացաւ պատկերը, զոր ուզեց տալ եր-
կրին: Առաւ դաժան ու մութ լեռները, նազան ու
գողտրիկ բլուրները, աղօթասաց ու խելօք բարձունք-
ները, շալկեց ու քալեց: Կանգ առաւ երկնքին մէջ,
ճիշդ երկրին դէմ: Եւ բաշխեց լեռները, բուռ բուռ նե-
տելով վար:

Եւ Ելլադա, իր ժեռուտ խորշումներով, նմանեցաւ
ահարկու վազրի մը, որ կը պոստէ յօնքերը արեւելքի
դէմ: Սկիւթացիներուն երկիրը մթնեց սեւ անտառնե-
րով, ինչպէս մութ է դէմքը իր վայրենի մարդոց:
Հինդուստան, երկնակարկառ լեռներու ստուերին մէջ
ընկղմած, սկսաւ փնտռել խորհուրդին ծաղիկը: Փար-

սխտան, իր դեղազուարճ պարտէզներուն մէջ պճնուած
կանգնած, դարպաս կ'ընէր մանկամարդ ու սիրատարփ
աղջիկներուն: Եւ Հրէաստան ովսաննա կը պոռար իր
աղուոր բլուրներուն հարսնութեան:

Ոգին, յոգնած ու պարտասուն, կ'անցնէր Հայոց
երկինքէն: Վարը, Բիշունեաց լիճը, մերկ պերճաղիճի
մը նման, պորտը կը խողտացնէր արեւին դէմ: Հովիւը,
արօտներուն վրայ յորդած փրփուրի պէս ծփուն ու
ոստոստուն ճերմակ դառներու իր հօտին մէջ կանգնած,
սրինգ կ'ածէր այդ պահուն: Ապշութենէ՞ն թէ խոնջէն-
քէն, ո՞վ գիտէ, ոգին կոնակէն վար կը ձգէ լեռները,
որ կը թափին Արարատեան դաշտին վրայ:

Գեղեցիկ լեռներ, որ պար կը դառնան, յորդուն
ու թխազեղ անտառներ՝ հայ աղջիկներու ծամբուն
պէս երկար, դեղնած բլուրներ՝ ամպերու պէս շարան
շարան: Հայաստա՞ն, երկի՛ր դրախտավայր...:

Մասի՛սն է, շուրջպար բռներ՝ թեւ է տուեր
Արագածին: Առօսակները կ'իջնեն, շարական ու մեղեդի
Լանչելով, իր կողերն ի վար, գանգուր գանգուր բար-
ձունքներն ի վար լոյս ու մարդրիտ կը թափեն, կար-
ճեա մէկը գինիի անթիւ բողոզներ զարկած ըլլար լեռնա-
լանջերուն: Սարերն ի վար աղբիւրները լեզու կ'երկա-
րեն, արեւէն բոց առած՝ տեղ տեղ կը վառին երկինքէն
իջնող հարսնեւորներու կանթեղներուն սէս: Զով հո-
վերը կ'արձըկուին, պաղ պատմուճանի մը պէս հայ
աղջկան դողալիւն մարմնին կը փաթթուին: Ու նո՛ր
կենդանութիւն, նո՛ր տենչեր: Նոր հեշտանքներ նոր
Նդեմին մէջ Արարատեան աշխարհին:

Մէրը, անկարելի փեսաներու համար, հայ աղ-
ջիկներու սրտին մէջ անծիր երազներու նարօտը կը ձգէ,
և անմահական դողերով կը բացուին եարօջ շրթները:
Ու Հայոց աշխարհի բանաստեղծները, այնուհետեւ,

փառքը կ'երգեն բարձունքներուն : Ու երկրին մեծին ու պղտիկին հողույն մէջ լեռներ ու հովիտներ կը կազմուին :

Այդ օրէն կը սկսի, կ'ըսէ հէքեաթը, որ Հայերը նախանձն ունին ու սէրը բոլոր բոլոր գեղեցկութիւններուն, կարօտը՝ բարձրութեանց, տենդը՝ անհաւասարութեան, սրբազան գշացումը՝ անհունին :

ՀԱՅՐԵՆԻ ԶԱՆԳ

Հիմա, ցեղի մը պատմութեան գիրքը կը թղթատեմ :

Վասնզի, այսօր, դարձեալ հին ոճերու և հարըստութիւններու հմայքը նուիրական խանդավառութիւնով մը կը ջերմացնէ հողիս, ուր երազներուս տաղաւարին ու սրբազան խորհուրդներու դահոյքին վրայ, նորէ՛ն, երեւակայութիւնս իր պերճալոյս փառքն է փոքր, ինչպէս լեցունիկէ անտառի մը հանդիսագեղ դարունը կը լուսաւորուի, մացառներուն վրայ նոնաջուրի սրսկումին նմանող մշուշ մը կ'իջնէ փարփառ արեւէն, որ բարձր ծառերու սաղարթին մէջէն կը բխի :

*

**

Ուր սա մանտրտիկ, իմաստուն գիրերը մըջիւններու նման կը խոնուին, տողանցք մը կը ձևացնեն, ու հանդարտ կը քալեն, յանկարծ կը կենան, և, կը զգաս որ, մին կ'ելլէ հանդիսաւոր խօսք մը կ'ըսէ, հո՛ն, աղուոր նկարներ խորունկ և ուրիշ հրապոյրներ կը բերեն :

— ... Հէ՛յ հէ՛յ, արեւոտ դաշտի մը մէջ հին քաղաքի մը փլատակները... ձորի մը եզերքին վրայ գորշ քար մը, գիրով ու դիժով խոցոտուած, ու աղարտած՝ մամուռէն ու հողէն... ահա պղտիկ մատուռ մը, որուն բոլորչի դմբէթը գանկի մը նման ճաթած է...

Հունա՛ անուշ լճակ մը, սիրականիս ընքուկներովն ու ապրչում շղարչովը՝ միա՛յն անիկա իր գեղեցիկ դոյներէն բան մը չէ տուած տարիներու տաժանքին... հեռաւո՛ր լեռ մըն ալ, մշտա՛ծփիկ խորքով, հարսանեկան խորհրդաշուք տաղաւարի մը նման, խնկածեփ, խորոտիկ Ալադեա՛ղը:

Մարդիկ մեկնած են այս հարստութիւններէն: Ինչո՞ւ, երկրաշա՞րժ է պատահեր, պատերա՞զմ է տեղի ունեցեր, ժանտատե՞նդն է գարկեր: Ականջ դիր պատմութեան, կը լսե՞ս, գիրքին էջերուն վրան գիրերը կը հեւան, կը բարբխեն, դող մը կայ, տխո՞ւր, աճապարո՞տ: Ծատ դառն պատմութիւն մը ունին այդ աւերակները, բա՛ց գլուխդ, խոնարհէ՛ ու խաչ մը հանէ երեսիդ վրայ, եթէ հաւատացեալ մըն ես, բա՛ց ու սարսու՛տ, եթէ ինծի պէս՝ հաւատք չունիս աշխարհքիս վրայ: Ու կը տեսնե՞ս դեռ, բարձրաւանդակին վրայ հրաշալի խոյակներով անծեփ սիւներ տնկուեր են, ու անդին արփախանձ մամուռ հազած պատ մը, վրան՝ խոհուն դժերու ոստայն մը, ու քովընտի մարմարեայ դուռ մը, որ ետին տապալած է, կռնակէն՝ կռնածեւ բարձրութիւն մը, որուն խոյրը, եպիսկոպոսի մը չաթալթաղին պէս հին ու աղքատիկ, սարին հովերը կը ճըղէ: Այս աշտարակը ունի չորս պատուհան, ներսը կ'երեւի զանգակ մը: Մատո՞ւռ մը արդեօք...

Հոգիս ջահերով լոյս կ'առնէ այս ժամուս: Ա՛խ, կ'ուզէի ապրիլ պատմութեան այդ երջանիկ ժամանակը: Հիմա, երա՛զն է առեր զիս...:

Կը բարձրանամ ճամբայէ մը, որ ձախը, խորունկ ձորի մը դահալէժ պատին բարձունքին վրայ կազմուած

է. պղտիկ, գորշ թփիկներ հաւիալներու նման հոն թառած, դարվար կը նային: Աջ կողմը՝ դա՛շտն է, ամպի մը ստուերին տակ, աղջկան մը անդորրական քունին մէջ: Թաւ անտառին եղերքէն սկսէ, արօտին ու մարմանդին վրայէն, անհամար խնկածուխներու նման հող-վրայծաղիկի բաժակներու մէջէն կը թափի, կը հոսի գգլիւիչ բոյր մը, հազուադեպ կիզման խէժերու պէս բարկ: Ծծմօրները իրենց ճառագայթները կը բանան մեղուին, որ կուգայ քաղցր հիւթը քաղելու. գետինը զեւեղներուն կանանչ պորտին մէջ ինկած ցօղը կ'արծրթէ աղածրի ծիւերը: Հօ՛յ, գիրուկ լորամարգին ցարասիներուն մէջէն մաքրքի նման կ'անցնի ու խոյս կուտայ. պուտպուտիկը ցորենի արտերէն, անուշ անուշ, պո՛ւթ պո՛ւթ կը կանչէ: Ետ նայէ՛, ձորը, դաշտին հարթութեանը վրայէն սահած ատեն, երեսը կը բանայ, կը փռուի և իր լուսիկ մարմինը կը ցուցադրէ, թափուած մանանայի պէս սպիտակ: Հոն, անոր ջուրին մէջ գիւղին հարսներն ու աղջիկները իրենց գործած վուշէ կտաւի փաթաթները կը ջրբեն ու կը ցայեն: Է՛հ, երանութիւնը կ'իջնէ արեգնաւէտ դաշտին վրայ, ու իմ հոգիս մէջ:

Ո՛վ չէ կարօտցած, և դո՛ւք որ հեռու էք ձեր հայրենիքէն, հովուերգութի՛ւնը արեւափառ դաշտօրէին: Ու ես արեւելքի տղայ, նման մեր դարիպներուն, որոնք տուն վերադարձին, գիւղէն դուրս թափուած իրենց քոյրերն ու հարսները կը համբուրեն ճամբաներու բերանը, դեռ տուն չմտած, — քաղցրին իր տանը մէջ կ'ընէ եղեր ատիկա, — ես ալ ինչպէ՛ս չսիրեմ, ինչպէ՛՞ս չսիրեմ սա բուրուճնաւէտ հողը, որ քաղցրութիւնով մը կ'ամպոտի, ջուրը, որ կը ծաղկի կանանչ խորքի մը վրայ, մեկոնը, որ երա՛զ կը պատմէ, երբ խաղաղօրէն վեր կը բարձրանամ հանդիպելով անոնց, ու կը հաս-

նիմ, երգելէն ու խօսելէն, ծիծաղը շրթներուս, ուրախութիւնը հոգիիս մէջ, սա բարձունքը, որ, կ'ըսեն թէ, ուխտատեղի մըն է:

*
**

Գարջարուտ բլուր մը: Անցեալին մէջ երջանիկ բնակութիւն ու շէնութիւն տեսած է, ինչ որ կարելի է դատել քարայտակէն, որ փլատակներուն կը տանի և հետզհետէ կը մատնէ արուեստաւոր շարուածք մը: Այդ պատմական աւերակները կը ցերեւ եւ այսքան դիմանալ՝ շնորհիւ իրենց ժուռուտ խարխիսին: Մարմարեայ պատերը կը մնան դեռ, աղարտած՝ հողով ու բուսական գոյներով: Անոնց երեսներուն վրայ կիսովին աւրուած արձանադրութիւնները կը քանդակեն ցեղի մը պատմական գեղեցկութիւններուն ոճն ու ճաշակը: Կը մագլցիմ պատի մը եղերքէն, փլած ու հակած հեծաններու վրայէն սողալով՝ կը մտնեմ շէնքին ներքին մասը: Գմբէթին վրայ սեպածեւ լայն բացուածք մը առաջացնելով՝ փլած է հարաւի հատածը, ու վտանգած պրշակին ամուր կերտուածքը, որուն վրայ հանգչեցուցած են եղեր կամարաքարը գմբէթին, լայն ու խորունկ, որքան կը մատնէ վարը անդաստակը, ուր կը տեսնուի գունադրուած շրջանակի մը ձեւը, մէջովը՝ ներդաշնակ դիծերու աղուոր խաղ մը: Կը տեսնեմ դուռը որ երեսկուկ դահաւանդակի մը վրայ բաց կը մնայ միշտ: Ներքին պատերուն վրայ կարելի է սերտել հին արուեստը, աւելի որոշ և հաւատարիմ: Նկարներ, հարթաքանդակ, բանաստեղծութեան և նկարչութեան անպատմելի ներշնչումներով: Գրողը տանի վէճը եզիպտական, արաբական ու հելլենական ճարտարական արուեստի մարդոց, որոնք՝ մին խորհուրդներու իմաստութենէն, ու

մէկալը չափական նշաններու դիտութենէն ճառելով, կամարաքարերու և գմբէթներու հոյակապ արուեստի ծագումը, միաստուածեան կրօնքէն առաջ ու վերջ կը դնեն կամ պաշտուած երկինքի մը ամպհովանիին թելադրութեան կը տանին, ասպհովելու համար անոր սեփականութիւնը իրենց ազգային կալուածին մէջ: Հաւատա՛ որ, ներշնչական ու սքանչական է սա երկնաշնորհ կամարը, հրաշատիպ աւագանովը, ուր ցեղին հմայուած բերաններուն հեւքերն ու պաշտամունքի աղաղակները լողացեր են, անմեղ ու երկչոտ թռչունի նման թափահարե՛ր են, ալիք են նետեր պատէ պատ, ինչպէս թափուած ջուրին աղմուկը կը դարնուի բաղնիքին խորոփիքին:

Շէնքին ետեւօքը միջնաբերդի նման բարձր աշտարակ մը կայ, կոնաձեւ դադաթով, ստորոտը սանդուխի մը աստիճանամատները քանդուած են այնպէս՝ ինչպէս դանկի մը կզակին ատամնաշարքը կը փշրուի: Ու ես գմբէթին ադուցուած մասէն կը բարձրանամ վեր, աշտարակին բարձր պատուհանները: Չանդակատո՛ւն մը, այն որ կ'երեւէր վարէն, հովիտներէն ու հեռաւոր դաշտերէն:

Այս բարձր տունին չորս պատուհաններէն հովը կ'անցնի՝ մացառներէն փախչող օձի մը նման՝ սեղմ ու սուր հեւքով, և պատերէն թափած փոշին աչքերուս կը դարնէ, պզտիկ անծաղիկ բուսեղէն խուրձեր կը դողդան ու կը դալարուին անկիւնին մէջ, վերաւոր ճրնձղուկի մը նման թափահարելով:

Իրանիս չափ խոշոր դանդակ մը կը գրաւէ այս փոքրիկ խուցին միջոցին մեծ մասը: Շատ հին ըլլալու է, արիւնոտ հողի սրէս կարմրորակ ժանգ մը կը ներկէ անոր շրթները, քանի մը դիւրեր ու կիսովին մաշած թուական մը կը կորսուին ժանգին չորցած ցեխին մէջ:

Մանրագործի արմատին նմանող թակաղակը կը հանդէլի խորովիքին մէջ զանգակին, որ սրատին է յեցած:

*
**

Խենթի պէս զանգակին կը փաթթուիմ:

— Զանգա՛կս, մոռցուա՛ծ, թաղուա՛ծ Զանգակս, հնչէ՛, ալ վերջապէս հնչէ հովին հետ սա բարձունքէն, իրիկո՛ւն մը, կիրամուտքի իրիկո՛ւն մը, ու թող քու երկար զօղանջդ պտըտի՛ մեր գիւղերուն մէջ, ինչպէս սերմնացանին աղօթքովը ամսը կը դառնայ լայն արտերուն վրայ, ա՛յ իմ զանգակս, ամայի դաշտին մէջ խաղաղութիւնը կը սարսափեցնէ զիս, մարած հողիս մէջ ձանձրոյթը կը դառնայ անշուղի դեպի նման, լսէ՛ պաղատանքս, ջա՛ն ջա՛ն քաղցրաձայն Զանգակս, ու սա երկինքէն թափէ՛ վար քու հեղեղակոչ զօղանջներդ, տա՛ն տա՛ն թաւձայն Զանգակս, ո՛ւր է քու տիսուր օրհնութիւնդ, ահա մեռե՛լն է անթաղ: Օ՛հ, ես կարօտ եմ քու ուշացած ձայնիդ, չաղփաղփիդ որ առտուն լոյսերուն մէջէն կուգար, բզզան թիթեռնիկներու պէս լեցո՛ւր ականջներս, բոլորին ականջներն ալ՝ յորդ ու գահալէժ ալիքներովդ՝ ինչպէս ահաւոր ջրվէժ մը, որ դռ ու որոտուն աղմուկովը կը լեցնէ ձորերուն դարերը: Ես որ մեր գիւղին մօտիկը արածող հօտին բոժոժներուն ձայնն իսկ կարօտցած եմ, լեռներուն բարձունքը կամ խորունկ հովիտներուն մէջ մոլորած տկար զօղանջիդ մեւանուշ ալիքը լսած ատենս՝ պիտի խենթեանա՛մ ու հագագս պիտի բանամ, ծարաւէն սպառած և լերան ակունքներուն վազող տղու մը պէս, որ իր շրթունքները կը բանայ առուակին բարձրէն թափող ձայնին՝ առանց ջուրը տեսնելու, և ես քու զօղանջդ լիառատ պիտի խմե՛մ, դինովնալու և երգ մը կանչելու համար,

ուրախ ճիչերս եղանակիդ խառնելու համար, ու պիտի վազեմ դաշտերուն մէջէն, հովիտին մէջէն, ձորին ջուրերուն մէջէն, հեւ ի հեւ, բարձունքը ի վեր, որպէսզի տեսնեմ թէ ինչպէ՛ս սա ժանգոտած ծխնիներուդ վրայ, վրէժի ճոնչումով մը, անշարժ առանցքդ կը դառնայ վերջապէս, որպէսզի տեսնեմ քու թաւալումդ, որ ձորերն ու լեռները զօղանջներովդ կը բռնէ, սա քու խենթ ու խօլ գալարումդ, մեր չարչարուած ցեղին պէս տանջալից տատանումդ օղին մէջ: Ալ հնչէ՛, զի ուշացաւ ժամին մէջ պսակը նշանուոր աղջկան ու պիտիբըր ոլորած փեսացունին, օրհնութիւնը խաղողին, աւանդական մկըրտութիւնը նորածին մանուկին: Հնչէ՛ երկար, ու հեռուներէ՛ն, բոլոր հեռուներէն, պիտի գան մեր մարդիկը, ապահա՛ր մարդիկը, յուզուած ու կարօտակէզ կիները, երազկոտ տղաքը, և մամիկը, որ ուխտի՛ մը համար կը յամենայ դեռ իր կեանքին վերջացող ճամբուն մէջ: Ու քու ճանապարհներուդ վրայ զօղանջիդ պիտի խառնուին շարականը, երգն ու դովքը: Ու սա ամայի բարձունքը, էհէ՛յ, սա ամայի բարձունքը պիտի կերպարանափոխուի նմանողութեամբ Բաբելոնի աշտարակին մարդոց բաղմութեանը:

Ես կուլամ հիմա, Զանգա՛կս, գրկած պաղ ու ժանգոտ մարմինդ, ինչպէս հովը, որ կը հեծկտայ քու խորունկ ծոցիդ մէջ, այնքա՛ն շատ յուզուած եմ. դող մը կը բռնէ զիս՝ մինչե՛ւ երազներուս պաստառը, ու փշաքաղած մարմինս կը ցնցուի: Կուլա՛մ, վասնզի հողիս մէջ ա՛լ չի սեղմուիր կարօտը քու Հայրենի Զանգիդ:

ՏԱՆՁԻ ԳՈՂՈՒԹԻՒՆ

Հիւանդ եմ:

Ձե՛ր գիտեր բժիշկը, չեն գիտեր ընկերներս ալ, որոնք կը չարչրկեն ուսանողի իրենց բանիբուն ուղեղը: Հիւանդ եմ և ուրի՛շ է իմ հիւանդութիւնս, ուրի՛շ: Ու մարդ չիտէ՛ իմ հիւանդութեանս անունը:

Մեր գիւղին մէջ հիւանդութիւն մը կայ, որ ամառները, պտուղներու եղանակին, կուգայ անյապաղ, վնչպէս հարկահաւաք պաշտօնեայ մը:

Թուշերդ տաք հացի պէս վառ ու կարմիր, աչքերդ պտուղ մը ջուրի պէս պաղ ու վշտահար, այնպէս ինչպէս կը տեսնուի քսիստինին ճնճուղի բերանէն, ձեռքերդ վերմակէն ներս կ'առնես, յետոյ դուրս կը նետես, նորէն ներս ու նորէն դուրս, չես կրնար որոշել, ու սաստիկ կը բարկանաս, փատելէ մատներովդ կը շոյես վերմակին պորտին վրայի ծաղկանկարները, բայց բա՛ն մը կը մտածես ներսէդ, և յանկարծ.

— Մա՛յր, տանձ կ'ուղեմ, Պատեսին էգիլին տանձէն:

Հասկցուեցա՛ւ, տանձի հիւանդութիւն ունիս: Եթէ, վաղաժամ, սալոր ուղեցիր, սալորի հիւանդու-

թիւն, եթէ խաղող ուղեցիր, խաղողի հիւանդութիւն ունիս: Ու մեր յիմար բժիշկները միայն ու միայն հայրենաբաղձութի՛ւնը կը ճանչնան, ու կը ծիծաղի՛ն: Սակայն պտուղի հիւանդներ գիտեմ ես, որոնք, տէր-տէրէն ու բժիշկէն յուսահատ, առողջացան պարզապէս ուտելով ուղուած պտուղը:

Այս ամառ, Փարիզի մէջ, ես ալ տառապեցայ տանձի հիւանդութիւնով:

Ուժս հատած, մոմս մարած՝ պառկեր եմ պատուհանիս դէմը, դոր կը վարադուրէ երկինքը, մուշտակի մը պէս՝ պերողէ, շոյուած՝ դեղձի աղուամագով, մեր յաւերժահարսերուն մորթին նման ողջ:

. . . Սորպոնի ժամացոյցը կը գարնէ, ես ալ կը համրեմ... տասներկու՛ր: Ետեւէն Սէնթ ժընըվէվի եկեղեցիին ժամացոյցը: Ետեւէն քաղաքապետութեան ժամացոյցը: Ու Պանթէոնէն, ու հեռուէն: Իրիկուան կռնակին^օր են, — օ՛, նեղութիւն կը զգամ:

Ընկերս պիտի դայ կէս ժամէն:

Անզգա՛մ, շուտ եկուր, չե՞ս գիտեր որ հիւանդ եմ:

Դուռը կը գարնուի, ընկերս կը մտնէ ներս:

— Ա՛ռ, քիլօ մը տանձ, աղէկ տանձ չէ, աւելի աղէկը չգտայ, դեռ ժամանակը չէ: Հիւանդանոցին մէջ քեզ հարցուցին: Ռուս ընկերուհիդ ցաւեցաւ, որ հիւանդ ես, բոլոր հիւանդներդ ան կը նայի, փրոֆէսէօրը չիմացաւ որ բացակայ ես: Ռուլէն դրոշմաթուղթի կը սպասէ, խոստացեր ես...

— Լռէ՛ և մինակ ձգէ գիս, մինակ մնալ կ'ուղեմ, տանձերո՛ւս հետ: Գովի սենեակը դնա՛, Օննիկին ըսէ, որ Թայիսի Մէտիքասիոնը նուազէ, կամ Թոսքայի

Աղօթքը: Թերեւս նուազը հանդարտեցնէ զիս, ապա թէ ոչ տանձ կերած ատենս վախնամ գիւղս յիշեմ ու լա՛մ...:

**

Մինակ եմ:

Դէմս գիւղական երկինք մը, մեր Օգոստոս տանձին գոյնովը:

Ընկերս ջութակ կը նուազէ, — սիրոյ դողէն բռնուած շրթունք մը, որ քաղցր ու բարակ բիւրաւո՛ր բառեր կ'ըսէ, փնչպէս թելի մը վրայ անհամար հնչուն ուլունքներ որ կը դողան: Յետոյ կը պրկուի, փոթորիկէն դալարուած ճիւղի մը պէս ատեն ատեն կը ճուայ, յանկարծ՝ յուսահատած՝ պոռթկումով մը, կարծես դինիւրն կուժն է կտորեր, ջելի ջելի ջելի ջելի ջելի՛՛՛՛ ջելի՛ ջելի՛, հատնելու կ'ըլլայ, հատիկ հատիկ, յետոյ մեղմ հեկեկում մը, կ'ըսես կ'արտասուէ շրթներո՛վը...

Սիրտս թունդ է ելած:

Ու նուազը նորէն կը սկսի: Սակայն ալ ես ոչ մտիկ կ'ընեմ, ոչ ալ կ'ուտեմ:

Յանկարծ, անկողնէս դուրս՝ դրասեղանիս վրայ կը կախուիմ, ձեռքերս կը մխրճեմ տանձերուն մէջ, ու կը պոռամ:

— Մե՛նծ հայր, մե՛նծ հայր, տանձերու, սալորներու, կեռասներու, էգիներու, մրգաստաններու տէ՛ր մենծ հայրս, տե՛ս, թոռնիկդ հիմա քիլօ մը տանձով է մնացեր, ամէ՛նը քիլօ մը...

Ու կուլամ:

**

Ես կայնէր եմ մենծ հօրս էգիին մէջ, որուն շուքը Աստուած — երբ ստեղծեց մեր գիւղը, ինչպէս մենծ

հայրս կը պատմէր, — արտեւանունքի պէս դրեր է հոն, որպէսզի բարախէ գիւղին վրան: Դէմօքը կը շարւին թոխ-թոխ Գարեգինենց էգին, Պաղտիկ պապային էգին, Մեղատէրենց կալը, յետոյ Քանկանի կանանչ դօտին, ու գիւղին ոչխարներուն սայլանները: Ետեւօքը նորէն էգի, ձանիկենցը, Խօճա-Պըլըխին՝ բուի պէս մինակուկ այդ մարդունը, Մխճիենցը, ու բարձրաւանդակը:

Մենծ հայրս Օգոստոս ընկոյզին, Երկուն ընկոյզին, Չէթին ընկոյզին կարգին ետեւ տանձի մը ծառ ունի: Ամէնէն շատը կը սիրէ այդ ծառը: Զիս ալ կը սիրէ, բայց այդ ծառն ալ կը սիրէ: Իր առաջին նշանածին անունովը, — որ կանուխ է մեռեր, — ծառը Մարիամ անունով է կնքեր:

Մարիամ ծառը մեր ժամուն Զարխաիան Աստուածամօր մէջքին պէս մէջք ունի, ոսկի տանձերը անոր կրակէ մատներուն կը նմանին: Մանր են տերեւները, — որ Օգոստոսին դեղնի՞ն ու հովէն շարժի՞ն, աղջիկի թարթիչ կը կարծես, որ քեզի կը կանչեն: Մայիսին կը ծաղկուորի ու ճերմակ դմբէթ մը կ'ըլլայ: Յունիսին տանձերը աչք կը բանան, այն ատեն պղտիկ աղջիկի պտուկի կը նմանին անոնք, ատոր համար անշուշտ դեռ ուտելը մեղք է, կ'ըսէր մենծ հայրս: Յուլիսին քաղցրութեամբ և բոյրով լեցուն բաժակներ կը դառնան, ամբողջ էգին կը բուրէ, ճիշդ մօրս հարսնիքի անտուկին պէս: Թիթեռնիկները իր դիտուն շուրջ գոյնզգոյն ժապաւէններու նման կ'ելլեն ու կ'իջնեն. մեղունները կը բզբզան, պիծակները կը սուրան, հովերը հովհարի պէս կը ծփան, և թաղուհի Մարիամ ծառը գլուխը կը թօթվէ ու... կարծես պալատի մը մէջ՝ քալելու կ'ելլէ:

Մենծ հայրս բանաստեղծ է, միշտ հետս քիւրտե-

րէն երգով մը կը խօսի, Մարիամ ծառին հետ ալ՝ հայերէն:

— Մարիամ, դուն դառան նման, գլուխդ՝ լուսընկան, շուքդ երկնքի պէս կլոր ու լայն, ես քեզի դուրսդան:

Ու շուքին, ու բոյրին մէջ գինովցած, իր շինած նստարանէն ոտքի կ'ելլէ, հողը փորեմ կ'ըսէ, չի փորեր ու կ'երգէ, կիրամուտքի ժամու շարահանի մը եղանակովը, այսպէ՛ս, (ընթերցող, դուն ալ երգելով կարդա՛):

— Փա՛ռք քեզ, Մարիամ, հոտդ առաւ արարաշխարհ, դո՛ւն անմահական սուրբ պատկերն ջուրէն ելլող մէլէքին, ոսկի կաթող մագերով՝ արծա՛կ ու տարածեալ: Իշխանուհւոյ անկողին, ծաղկադարգեալ, բուրավառ: Օրհնեա՛լ ըլլաս, կոյս Մարիամ, պտղաւորեալ պորտդ օրհնեա՛լ:

Մենծ հայրս քովէն չի դատուիր. թռչունները կը հեռացնէ, ու կը հարածէ գիւղին լակոտները, որ հեռուի ճամբայէ մը քար կը նետեն: Երբ հովը ուժով վրէ՛, — մի՛ վախնար, Մարիամ, սուտ հով է, կ'անցնի, — կ'ըսէ ու նշանածը կ'ապահովցնէ: Երբ Օդոստոսի արեւը հալած մանանայի պէս կ'իջնէ, ձեռքերը կը տարածէ ու կ'օրհնէ. — Հրճուէ՛, Մարիամ, կը պոռայ հեռուէն: Իսկ երբ Հէլէճի կատարէն ամպ մը սեւ ուրուրի պէս երեւի, մենծ հայրս, վախցած, կը կենայ, կը մտմտայ, երկա՛ր, ու մխրջովը աղօթք մը կ'ըսէ, յետոյ սեւ ամպին կը նայի՛ ու կը նայի, մունջ բերան:

**

Ափսո՛ս, հագա՛ր ափսոս, ամպերը դարկին բարձունքէն, կայծակները կրակէ դանակներու պէս ճեղքե-

ցին երկինքն ու երկիրը, անձրեւն իջաւ ու ծեփեց մեր գիւղը:

Մարիամ տանձին ծառը ջախջախուեցաւ, ճիւղ, տերեւ ու պտուղ գետին թափեցան, ու մենծ հայրս ցեխին մէջ փռուեր կուլա՛յ...:

Մենծ հայրս, պղտիկ տղու պէս, պտղածառի հիւանդութեան մատնուած է, անմխիթար է խորապէս:

**

Արեւ կայ մեր գիւղին վրայ, ի՛նչ արեւ:
Վերի բլուրին ետեւ, խիուելու վրայ թարթիչ մը, ու այդիներն ի վար, բռնկած փոշի մը:

Բարակ շաղ մըն ալ արեւին հետ կ'իջնէ. անձրեւին կաթիլները, գոյնզգոյն դնդասեղներու նման, կ'իջնան հարսներուն ծամերուն և գիւղին ծառերուն վրայ, ու տերեւները կ'ըսես կը ծակծկին: Շատ անգամ կը կարծես որ անձրեւը չէ, այլ արեւն է, դունդ գունդ, օղի պէս կը թափի:

Գունտենց Բենիկը, Պատառիկ Մամային մշկախաղողի տունկով ծաղկահիւսուած թղենիին տակ նստեր կը խորհի, որ այս ժամուս տանձի պահապանները տուն դարձած կ'ըլլան, որովհետեւ թէ անձրեւ կուգայ և թէ իրիկուն կ'ըլլայ արդէն: Մարկոսին տղան կ'առարկէ թէ անձրեւը եղնիկի անձրեւ է, սուտ սուտ կը տեղայ ու կը դադրի շուտով. յետոյ թրջուած ծառէն պտուղ հաւաքել դժուա՛ր բան է, կ'աւելցնէ: Մանչոյ Յիւրոս մատներովը մագերը դէպի ետեւ կը սանտրէ և ուժ կուտայ Բենիկին:

— Ա՛խ, Վաննէս, Արեւին Փոսը տանձի ծառ մը կայ, հասունցեր հասունցեր պատկերք դարձեր են տանձերը: Ուղես՝ Գացախ մամային տանձը կը թօթ-

վենք, անանկ փրփրեր՝ ճեղերէն դուրս են կախուեր, որ քաղքցի աղջիկի շիւղինք կ'ըմանին, սանկ կոթին վրայ ծռած, ոմանք Փիլտիշի, ոմանք կրակի կտոր, ոմանք կատուի լեզու: Ուղես՝ մեր Անուշ տանձին գողութեան կ'երթանք, հայրս քաղաք դացած է...

Գողքը օգնեց: Սոսմբը ճամբայ կ'ելլէ. Այազմալի ակէն ջուր խմելու պատրուակով պարտէզներէն անցնելու արտօնութիւնը ունեցած ըլլալ կը կարծէ: Պածանին տղան ծառ ելլելու եօթը տեսակ մեթոտ ունի, հիմա վերջին ձեւը կը բացատրէ: Եթէ ծառին բունին փուշ կամ երկաթ փաթթած են, չուան մը կը նետուի մէկ ճիւղին, և միւս ծայրը կը կապուի մօտակայ ծառի մը արմատին: Եւ մաքրքի նման պտուղի դողերը կը բանեն չուանին վրայէն:

Ծոց, գրպան, թաշկինակ լեցուն են:

Յանկարծ սրատես Ջոնջոնը վտանգի նշանը կու տայ սուրումով մը, դիմացի բլուրէն:

Փուշ, մացառ, առուակ, թումբ ու ձոր մէկ շունչով կը կտրեն կ'անցնին: Վարը, Մուղալին ամայի ձորը կը հասնին, քիչ մը կը հանգչին, ու կը սպասեն ճամբան ետ մնացողներուն: Մէկը կը պակտի դեռ: Վախնամ բռնուած է, ծեծին տակ լղլղալէն մեռնի՛, կ'ըսէ Բենիկ: Սողիթը, անպիտան բոյս մը, ամբողջ հագածնին վերէն վար ծեփեր է: Յանկարծ Քացախ մաման ճամբու մը ծայրէն կը փրթի:

— Ծօ՛ տղաք, որո՞ւն տանձին գողութեան գացիք, մեր տանձը չըլլա՞յ, տեսնեմ, ես կը ճանչնամ:

— Վարժապետենց տանձը, կ'ուղէ խաբել Բենիկ:

— Վարժապետենց հա՛րս, վաղէ՛, տանձիդ գողերը հոս են:

— Քացախ մամա, սուտ է, մեր տանձն է:

— Վո՛ւյ, շըլիդ բարկ արեւին դայ, տղա՛յ,

օտարին տղաքը ժողվեցիր, հօրդ տանձերուն վրայ գողութեան տարիր, մեղայ տէ՛ր, խելքէ պակաս տղան ալ փորձա՛նք է եղեր:

— Մ'ըսեր, Քացախ մամա, մ'ըսեր, վաղն ալ քու տանձիդ գողութեան կու դամ:

— Փատօ կտոր, դուն ընտո՞ր մեր տանձին գողութիւն կրնաս ընել: Գնա՛, աղջիկս Վարսենը պահապան է:

— Կ'երթամ ու աղջկանդ ծոցի տանձերն ալ կը թօթվեմ, դիտցած ըլլաս:

— Լէշդ վերնայ, շան դաւակ, օտարին տանձին գողութեան երթալու չափ սիրտ որ ունենաս, աշխարհք վայր չ'առներ, բայց հօրդ տանձերուն վրայ օտարին տղաքը գողութեան որ կը բերես, տէրտէրն ալ կ'անիծէ քեզ, վարնո՛ց, մայրդ ալ: Հայրդ ինմէի՞ պիտի բերես: Վո՛ւշ, խժումի դայ քեզի պէս տղան, դժոխքին կրակը փորդ լեցուի, ոսկորներդ ծծումբի պէս էրին վառին...:



Կ'արթննամ:

Քրտներ եմ: Ձութակը դադրած է: Սիրտս ուժգին կը բարախէ:

Գիւղիս տանձերուն կարօտը ա՛լ աւելի կը վառէ հոգիս, ու տազնապ մը կ'ունենամ:

Ընկերներուս կը բացատրեմ, ջերմէն հոգիս բոցավառ.

— Տղա՛ք, դիւղիս տանձը որ չուտեմ, կը մեռնիմ: Քսանըմէկ տեսակ տանձ կը ճանչնամ, — թեփիկ տանձը, գոր եթէ ակռաներովդ ճեղքես, չորցած մանանայի քաղցրահամ փոշի կը դառնայ բերանիդ մէջ, — կաթնատանձը, սպիտակ ու կակուղ խմորի պէս է, և սեխի

հոտ ունի, — քովուզ տանձը, որ հոլի կը նմանի, — ջրտանձը, դաւաթ մը ջուրի հետ չես փոխեր, — քարտանձը, որ փուռը կը դնես և խնձոր կը դառնայ, — կապուտ տանձը, որ լորամարգիտի կը նմանի, քաղցր, քաղցր, կրկին քաղցր, — Թուրքին տանձը, որ քոտոտ կ'ըլլայ, — քարքրուկ տանձը, որ լեռներուն մէջ կ'աճի, — այլատ տանձը, սլաքի սրուակի մը պէս բուրմանաւէտ, — ձմեռտանձը, իլիկի պէս, — կէլրէկ տանձը, ապրչումի կծիկ է, որ ոսկի ջուր թաթխած էս, — ո՞րը ըսեմ, ո՞րը չըսեմ, շատերուն անունն ալ դեռ մոռցեր եմ: Օ՛, ես դիւզի տանձը կ'ուզեմ, գողցուած տանձ մը: Ըսէ՛ք, չէ՞ք դիտեր պարտէզ մը, ուր տանձի ծառ մը էր փէշերը ցանկապատէն դուրս կախէ. կը մեռնի՞մ եթէ գողցուած տանձ մը չուտեմ հիմա: Քացախ մամային անէ՛ծքը վրաս: Ես պէտք է երթամ, սարտէզներէն անցնիմ, ցոյր ոտքերս թրջէ, ջերմէն այրող երեսներս խոցէ, պէտք է ցատկեմ ցանկապատէն, ու տանձ մը գողնամ, և այնպէ՛ս պիտի կրծեմ, ուտե՛մ, ուտե՛մ, որ դուք ալ պիտի դարմանաք թէ ի՞նչպէս աղէկցայ յանկարծ: Մի՛ փախաք, չեմ գառանցեր, իրական կարօտս է, որ կ'ըսեմ: Դարմա՛ն, օ՛, տանձ մը, գիւղիս տանձերուն նմա՛նը կ'ուզեմ:

Ջերմէն կը տառապիմ: Տաղնապալից նոպայի մը մէջ, կուլամ, կը բողոքեմ, թէ երազ չեմ տեսներ, այլ խոտիահար՝ կարօտս կը սրտամ:

Ու տեսիլքի մէջ, կ'երեւի դեռ աչքիս. —

Մենձ հայրս, որ ցեսին մէջ փուռեր կուլայ իր կորսուած տանձերուն համար:

Քացախ մաման, որ շաղէն թրջած ճերմակ մաղերով դուլիս կը թօթվէ ու կ'անիծէ:

Ու դիւզի տանձերը, որ բռնկեր են եկեղեցիին ճիւղ ճիւղ մոմերուն բոցին պէս:

«Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ...»

Եւ ետու գտնու իմ գիտել զիմաստութիւն եւ զգիտութիւն, զանմտութիւն եւ զյիմարութիւն. զիտասցի ես՝ զի սակայն եւ այս աշխատութիւն ողոյ է:

Ձի ի բաղմութեան իմաստութեան՝ բազում տրամութիւն, եւ որ յսլովեաց ի գիտութիւն՝ յաւելցէ ի ցաւս:

ԺՈՂՈՎՈՂ, ԳԼ. Ա. 7—18

Կը ձանձրանա՛մ, կը ձանձրանա՛մ...:

Ոչ միսս կը ցաւի, ոչ ալ ոսկորս, տենդ չունիմ և առողջ են դործարաններս: Սակայն կը տապալտկիմ տառապանքի մը մէջ, որ անուն չունի: Ի՞նչ հիւանդութիւն է այս, անծանօթ և անհանդուրժելի:

Դժբա՛խտ ուղեղս, յոգնած ես և թունաւորուած: Եւ ես անճրկեր մնացեր եմ, ու չեմ դիտեր թէ ի՞նչպէս փարատեմ ձանձրոյթի փոշին, որ կ'անձրեւէ հոգիիս վրայ:

**

Կը ձանձրանա՛մ...:

Ա՛խ, բարդ ու խրթին, հետաքրքրական ու գարմանալի վի՛նչ կայ արդեօք, որ դրաղեցնէր զիս, և ես խաղաղէի քիչ մը ու նուազ տառապէի: Ո՛չ, սովորական զբաղում մը չի կրնար արգիլել ձանձրոյթը, զոր

կը զգամ տառապանքով: Հանդո՛յց մը կ'ուղեմ, հան-
գոյց մը, որուն մէջ մոլորիմ:

Կը ձանձրանա՛մ, որովհետեւ գանկիս մէջ պարապ
կը դառնայ մեքենան: Անոր կապուած չեն բազմաթիւ
անիւներ, մեծ ու փոքր: Աշխատեցայ, գիտութիւն
հաւաքեցի, օգտակար և անօգուտ բաներ սորվեցայ,
մտքիս մեքենան շտկեցի: Ու հիմա, երբ կատաղու-
թեամբ և ուժգնութեամբ կ'աշխատի մեքենաս, արտ
չունիմ հերկելու, ցորեն չունիմ ազալու, ժողովուրդ
չունիմ մրցակցութեան տանելու ուրիշ ժողովուրդներու
դէմ:

Կը ձանձրանա՛մ, վաանդի մեքենաս կը դառնայ և
ես չեմ կրնար կեցնել զայն: «Երբ երկանքի քարերուն
մէջ ցորեն չկենայ, քարերը կ'աւրին», կ'ըսէր մամիկս:
Երբ միտքս աշխատի այսպէս, պարա՛պ, ինքն իրեն,
ապահովաբար կ'աւրի: Կը ձանձրանա՛մ, որովհետեւ
ուժերս պարպելու տեղ չունիմ: Որո՞ւ համար ամբա-
րեցինք այսքան ուժ, եթէ չպիտի դործածէինք: Կը
խեղդէ գիս երիտասարդական անսովոր եռանդը, որ կը
յորդի:

Մանկութեանս օրերուն, հայրս մեծ ջաղացք մը
կը դարձնէր: Ու ես յաճախ կը պառկէի ջաղացքին մէջ:
Կը յիշե՛մ, ի՞նչ կատաղի հեշտանք կը զգայի, երբ
փոքրիկ անիւ մը փոթորիկ կը հանէր ջաղացքին մէջ:
Նախ հսկայ անիւ մը իր դանդաղ թեւերը կը զարնէր
առուին ջուրերուն, և առանցքին վրայ կը դարձնէր
փոքրիկ անիւը, որ կը բազմապատկէր շարժումը, փոկի
մը միջոցաւ վերի սրահը կը տանէր ուժը, կը թաւալէր
ուրիշ բազմաթիւ անիւներ: Երկաթեայ գլաններ լուս-

նտութեան կը բռնուէին, մաղերը դիւահարի պէս կը
տանջուէին, կաշիները ծերպերուն մէջէն կը փախչէին
ու կը վերադառնային, տախտակամածը կը դողար:
Սրահին օդին մէջ անտեսանելի բան մը կար, որ կը
դալարուէր, կատաղութեամբ կուլար: Յուրտ հով մը
կը զարնէր երեսիս: Աղմուկը կը խլացնէր ականջներս:
Աչքերս պինդ ուղղած երկաթներու այդ շարքին, կը
լողնայի սարսուռի և երագանքի մէջ:

Պզտիկ անիւ մըն եմ: Դիւային մղումով մը կը
դառնամ, բայց փոկս կապուած չէ իմ ժողովուրդիս:
Ա՛խ, որքա՛ն կ'ուզէի ժողովուրդ ունենալ, փոկով մը
կապուել անոր, դարձնե՛լ, դարձնե՛լ, անխնա՛յ դար-
ձնել: Կը ձանչնամ միմոսի պէս օտար երիտասարդներ,
որոնք իրենց ետեւէն կը դարձնեն ժողովրդային հսկայ
բազմութիւններ: Ինչո՞ւ չունիմ բազմութիւն, որպէսզի
շարժում խաղայի, ե՛ս ալ:

Տիրելու դադափարը ամէնէն գեղեցիկն է մարդ-
կային դադափարներուն մէջ: Առանց տիրապետումի
դադափարին՝ պիտի ձանձրանային մարդիկ: Անհատ-
ները զայն կը սնուցանեն դադտնօրէն, և բազմաթիւ են
անոնք, որ կը նախանձին Աստուծոյ: Քրիստոնեայ
փիլիսոփայութիւնն իսկ չուրանար այդ դադափարը,
զոր կ'անուանէ libido domimandi: Այդ կիրքը, մինակը
կը ախրէ միւս բոլոր կիրքերուն: Կիրքերուն Աստուածն
է ան, կիրքերուն ամէնէն մեծը և հզօրը: Աստուած
կիրք մըն է:

Այս վարդապետութիւնը զանազան ձեւով ներկա-
յացուցած են Փրանսացի և գերմանացի փիլիսոփաները,
որոնք պարզապէս նոր նոր անուններ տուած են դերա-

գոյն կիրքին, տիրապետելու ցանկութեան: Էրնէսթ Սէյլէր աւելի արդիական անուն մը կուտայ անոր: «Կայսերականութիւն» կ'անուանէ զայն: Գեղեցիկ բառ, սակայն շիտթութեան տեղի չտալու համար՝ անհրաժեշտ է առնել միայն հոգեբանական իմաստով:

Կայսերականութեան այդ կիրքն է, որ մարդիկը կը կապէ կեանքին: Եւ այդ կիրքին պատճառաւ է, որ շատեր, երբ տիրապետելու ժողովուրդը չունին իրենց ոտքին տակ, ազդ կը փոխեն, միջավայր կը փոխեն և կ'աշխատին բարձրանալ՝ կոխելով տկարին վրայ: Անոնք կը վախնան ձանձրոյթէն: Բայց անոնք կը վախնան նաեւ մահէն: Վասնզի ձանձրոյթը, յաճախ, կը քալէ դէպի մահ:

Իմ ձանձրոյթս միայն հոգեբանական «չար ծաղիկ» մը չէ: Այլ նաեւ բնախօսական է ծագումով: Կը զգամ որ զգայարանական հիւանդութիւն ունիմ: Եւ այդ հիւանդութիւնը շատ կը նեղէ զիս: Պօսլէր ձանձրախտ (spleen) ունէր, որովհետեւ թոյնը և մանրէն դերադոյն սրութիւն մը տուած էին իր զգայարանքներուն:

Ահա քիթս, որ չափազանց կը տառապեցնէ զիս: Հասարակ հոտ մը ինծի կը յիշեցնէ հայրենի տեսիլ մը, և ես յանկարծ կը դողամ երկար ատեն: Դեռ շաբաթ մը առաջ, ձմերուկի հոտ առի և տաղնապ մը ունեցայ: Ուղեցի նորէն ունենալ դիւզս, մանկութիւնս, արտերու կեանքը, որոնց կը կապէր զիս ձմերուկը: Տխրութիւն մը սեղմեց մարմինս ու հողիս:

Մորթս իսկ զգայնիկ ծաղիկի մը պէս է: Կիրակի առտու մը, յիմարանոցին մէջ, ուր կը պաշտօնավարեմ, աչքէ կ'անցընէի բժշկա-մանկավարժական բաժինը:

Սիրուն աղջնակներու բոյն մըն է այս բաժինը: Առտուն կանուխ մատուռ մեկներ էին բոլորը, աղօթելու: Անոնց երամէն, վիրաւոր աղաւնիի մը պէս բաժնուեր՝ իր սենեակն էր քաշուեր աղջնակ մը, որ գլխու ցաւ ունէր և անսովոր ջերմութիւն: Երբ քննելու համար կախեցի գլուխս, ծաղիկի բուրումով խառն — աղջիկները մինչև իրենց անկողինը կը տանին անուշահոտութիւնները, — ջերմութեան դու մը զարնուեցաւ երեսիս, տաք թաւելի մը պէս շոյեց դէմքս: Ոտքի վրայ կէս նուաղում մը ունեցայ, արագ ու կարճ երագ մը տեսայ: Իմ մորթս վարժուած է այդ զգայութիւններուն, շատ կանուխէն: Պատիկուց կը պառկէի կատուներու հետ: Սիրական կատուս կը դնէի մերկ թեւերուս և կուրծքիս վրայ: Անոր տաք մուշտակը անհասկնալի հեշտանք մը կ'արթնցնէր մէջս: Լուերուն համար, մայրս կ'արդէլէր պառկիլ կատուներուն հետ: Ու երբ վերմակիս տակէն լսէր ուն-ոտնը, ծոցէս կ'առնէր կատուն, փրցնելու աստիճան կամթելով միտս: Այն ատեն, առանց յուսահատելու, կատուն կը պառկեցնէի անկողինիս տակ, ոտքերուս կողմը: Մէկ ոտքս դուրս կը հանէի վերմակին տակէն և կը մխրճէի կատուին մուշտակին մէջ: Նախ ցուրտ, յետոյ տաք այդ թաւալին մուշտակը կը գինովցնէր զիս:

Բերանս անգամ հիւանդ է: Կը սիրեմ ջուրը խմել՝ բերնիս մէջ պարպելով սրուակ մը կամ կուժ մը: Գիւղացիի պէս: Մեր գիւղին մէջ ջուրը այդպէս կը խմեն: Պոլիսէն մեկնած օրս, բարեկամ աղջիկ մը ինծի նուէրեց փոքրիկ մանրանկար սափսր մը, զոր կը լեցնեմ ջուրով ու կը պարպեմ բերանիս մէջ: Երբ ջուրը պտուղի պէս կը թափի լեզուիս վրայ, երբ կը զգամ ջուրին ցուրտ համը, երբ գլխուն ձայնը կը խնդայ շրթներուս մէջ, ամբողջ դիւզս և իր լեւները կ'անցնին աչքերուս

առջեւէն: Մինչե՛ւ հիմա, այսպէ՛ս կը խմեմ ջուրը, ես:

Այո՛, հիւա՛նդ են զգայարանքներս: Ահա թէ ինչո՛ւ, առանց երեւութական պատճառի, տխուր եմ և լալու յանկարծական փափաքներ կ'ունենամ: Այս տառապանքը խո՛ր է, անհունապէս խոր, և չկա՛յ դարմանը:

Կը ձանձրանամ և կը տառապիմ, որովհետեւ սիրեցի բարդութիւնները, դարգացուցի ճաշակս, սրեցի զգայարանքներս, և գիտուն դարձայ:

Ընդհակառակն, յիմա՛ր տղայ, երջանիկ ըլլալու համար՝ պէտք էր մնալ պարզամիտ, անզգայ, անճաշակ և տգէտ: Պէտք էր խփել զգայարանքներուն բերանը, պէտք էր չճանչնալ հաճոյքներուն աղբիւրները: Այնքան համոզուած եմ այս ճշմարտութեան, որ կ'ուզեմ ետ դառնալ: Բիթացնել զգայարանքներս, եղծել ճաշակս և մոռնա՛լ, մոռնա՛լ, ամէ՛ն բան: Երբեմն կը մտածեմ մեծ ոճիր մը դործել և բանտ երթալ: Վասնզի բանտը հակառակն է դպրոցին: Ինչ որ կը սորվինք դպրոցին մէջ, կը մոռնանք միայն բանտին մէջ: Գողերու, աւաղակներու, խմաններու, ոճրագործներու հետ, սղոցելով ծառերը, փոքելով հանքերը, լուալով նաւերը, կռնակիս վրայ կրելով ծանրկեղ քարերը, հեռո՛ւ քաղաքակրթութենէն, թերեւս մոռնամ որ ժամանակին մտաւորական մըն էի:

Այդ տարապարհակ աշխատանքները պիտի արդիւնեն, որ բանի մտքիս մեքենան: Եւ այն ատե՛ն միայն պիտի խաղաղի հոգիս: Պիտի դադրի զգայարանքներու կեանքը, պիտի մարի երազներու շարժապատկերը, և լուութիւնը պիտի տիրէ ներսիդիս:

Իմ այս ցաւս կը կոչուի «դարուս ցաւը», ուրիշ անունով մը՝ «քաղաքակրթութեան ֆրանկախտը»:

Անհանդուրժելի այս ցաւին դարմանն է տգիտութիւնը: Փա՛ռք տգիտութեան, որ պիտի խաղաղեցնէ փոթորիկը դանկլու մէջ: Այդպէ՛ս միայն, դանդաղելով դանդաղելով՝ կանգ պիտի առնէր մտքիս մեքենան:

Օ՛ր ադամական տգիտութիւն, լքեցի քեզ՝ շլանալով գիտութեան ծառին պտուղներէն: Կերայ պտուղը և հիմա կը տանջուիմ: Վասնզի թունաւորուեցաւ հոգիս: Մանարտիկ ու բարակ օճեր կը պտըտին հիմա ուղեղիս մէջ, և զգայարանքներուս մէջ: Արիւնս տաք է բոցի նման: Զգայարանքներս կը պոռան իրենց անօթութիւնը, մինչդեռ ես կը վախնամ սնունդ հայթայթելէ անոնց: Աչքերս անհանդուրժելի և գերահարաչ լոյսի մը կարօտն ունին, մինչդեռ ես կը փնտռեմ դիշերը:

Հա՛յր, հա՛յր, ինչո՞ւ սորվեցուցիր ինծի քաղաքակրթութեան ճամբան, ինչո՞ւ մղեցիր զիս զգացումներու և դադափարներու ճանաչման մէջ: Մի՞թէ լաւ էր տգէտ մնալ: Գիտե՛մ, գիտե՛մ, գիւղին հովիւը ինձմէ հազար անգամ աւելի երջանիկ է:

Ու տակաւին ականջիս մէջ կը հնչէ տիկին Տփրուհիին խօսքը.

— Աղջնակս պիտի մեծցնեմ բոլորովին տգէտ, ոչ դպրոց պիտի զրկեմ, ոչ ալ դիտութիւն պիտի սորվեցնեմ:

Լա՛ւ կ'ընես այդպէս, տիկի՛ն, շատ լաւ կ'ընես: Տե՛ս, որքա՛ն կը տառապիմ ես: Զիդերուս ուժէն վեր է այս տառապանքը: Եւ աւելի կը սարսափեցնէ զիս, երբ կը խորհիմ որ տանջանքս պիտի շատնայ գետի պէս, քանի յառաջանամ:

Օ՛ր, ի՞նչքան կ'ուզէի պոռալ աշխարհք մը մարդոց երեսին.

— Ունայնութի՛ւն ունայնութեանց... :

Մտիկ ըրէք, ժողովողն է, որ կը շարունակէ.

— «Արեւուն տակը բոլոր դորձուած բաները տեսայ. և ահա ամէնն ալ ունայնութիւն, ու հողիի տանջանք է :

« Ես իմ սրտիս մէջը խօսեցայ ու ըսի. Ահա ես մեծցայ, ու իմաստութիւն ստացայ Երուսաղէմի մէջ ինձմէ առաջ եղողներուն ամէնէն աւելի. և իմ սիրտս շատ իմաստութիւն ու զփտութիւն տեսաւ :

« Եւ իմ սիրտս՝ իմաստութիւնը ճանչնալու, ու խենթութիւնը և յիմարութիւնը գիտնալու տուի. հասկըցայ որ ասիկա ալ հողիի տանջանք է :

« Վասնզի շատ իմաստութեան մէջ շատ տրամուծիւն կայ. ու իր զփտութիւնը աւելցնողը իր վիշտը կ'աւելցնէ » :

ՆԻԹԵՐՈՒ ՑԱՆԿ

	Էջ
ՄԵՂԵԳԻՆԵՐՐ, ՄԵՂԵԳԻՆԵՐՐ...	5
ԼՃԻՆ ԺԱՄԸ (հէֆեսք)	11
ԱՆՁՐԵԻԻՆ ՁՈՐԸ (աւանդութիւն)	16
ԱՍՏՈՒԱԾ ԻՋԵՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ	20
ԱՍՏՂԻԿ (հէֆեսք)	29
ԿԱՐՄԻՐ ՎԱՐԳԵՐ (հէֆեսք)	32
ՓԱՂՈՔ ԿԵՌԱՍԻՆ	35
ՍՈՒՐԲ ՇՈՒՐՋԱՌԸ (աւանդութիւն)	40
40 ԱՍՏԻՃԱՆ ՏԱՔՈՒԹԻԻՆ	43
ԵԼԱԿԸ (աւանդութիւն)	48
ԱԶՔԵՐՍ ԽՈՒՓ	52
Ո՛Վ ԿԱՂԱՆԴ...	56
ԳԻԻՂԻՍ ՍՈՒԳԸ	70
ՋԱՆ ԳԻԻԼԻԻՄ (աւանդութիւն)	74
ՄՈՐԹ ԿԸ ԳՆԵՄ	82
ԼՆՐԱՆ ԲԱՐԿՈՒԹԻԻՆԸ (հէֆեսք)	87
ՆՈՐ ՀԷՔԵԱԹ	93
... ԱՄԷՆ ԲԱՆԷ ՎԵՐ	95
ՍԵՆԵԱԿԻՍ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻԻՆԸ	103
ԶՐՈՅՅ ԿՈՎԻ ՄԸ ՀԵՏ	108
ՄԵՐ ԳԻԻՂԻՆ ԼՃԱԿԸ (հէֆեսք)	116
ԶԱՏԻԿ (քանաստեղծութիւն)	120
ԲԱՔԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ	125
ՍՈՆԱԿՆԵՐԸ (հէֆեսք)	133

Ինտերնոնոն ՏՐՏՄՈՒԹԻՒՆ	140
ԱՆՎԱՍՏԱՆ	144
ԿԱՐՕՏ ՀԱՅ ԼԵԶՈՒԻՆ	147
ԱՍԻԱ՛, Ո՛Վ ՄԵԾԳ ԱՍԻԱ	154
ԵՒԱ՛, ԵՒԱ՛... (աւանդութիւն)	162
ԶՈՒՐԵՐՈՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ	171
ՏԱԼԻԼԱՅԻ ԵՐԳԸ	175
ԹՈՋՈՒՆ ՄԱՐԳԸ (հէֆեաք)	181
ՄՈՄԾԱՂԻԿԸ (հէֆեաք)	185
ԼԵՌՆԵՐՈՒՆ ՀԷՔԵԱԹԸ	190
ՀԱՅՐԵՆԻ ԶԱՆԳ	195
ՏԱՆՁԻ ԳՈՂՈՒԹԻՒՆ	202
Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ	211



Ձյուշ 16. (անշուստ/բաժնի 14), 52, 55, 57, 67, 116/31 (պարտա)

հանձնարար - 17, 20,

զար - 17, Արցախի 4 / 26, 29,

Արցախի 18.

Բնակարանային և Արցախային - 29.

Բնակարանային - 36 (բնակարանային)

զար - Արցախի 1, Կարախանյան (Գրախանյան / 7-27) 58, 122,

արեց - 57, 68, 123,

Հյան, բնակարանային - 57

Արցախի - 67 (բնակարանային), 100-101

Կարախանյան - 67 (Կարախանյան / 7-27), 69, 70, 72, 103,

Գրախանյան, 133

Բնակարանային - 136

Արցախի - 142, 152,

արեց - 140,

Բնակարանային - 183,

„ՄԱՏԵՆԱՇԱՐ ՅԱՌԱԶ“

Այս անունին տակ պարբերաբար լոյս պիտի տեսնեն գրական եւ ուսումնասիրական հաստորներ, իբրեւ հրատարակութիւն ՅԱՌԱԶ օրաթերթին:

Լոյս տեսած են արդէն.—

Առաջինը

ՄԵՂԵԴԻՆԵՐ, ՄԵՂԵԴԻՆԵՐ...

Շ. Նարդունի

Երկրորդը,

ԱՐԵԻ, ԱՐԵԻ...

Փ. Միքայէլեան

Դիմել Direction du journal „Haratch“

17, rue Damesme. Paris (13).

« Ազգային գրադարան »



NL0350770

„ՄԱՏԵՆԱՇԱՐ ՅԱՌԱԶ“

1. ՄԵՂԵԴԻՆԵՐ, ՄԵՂԵԴԻՆԵՐ... 15 ֆր:
 գրեց՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ
2. ԱՐԵՒ, ԱՐԵՒ... (վէպ) 10 ֆր:
 գրեց՝ Փ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Պատրաստութեան մէջ են ուրիշ հատորներ

ԳԻՆ 15 ՅՐԱՆՔ